

դրամատուրգիա

գրական-գեղարվեստական հանդես

42²⁰¹⁵43

ՊԻԵՍՆԵՐ

ՆՈՐԱՅՐ ԱԳԱԼՅԱՆ	2	ՊԱՏԸ
ԿԱՐԻՆԵ ԽՈԳԻԿՅԱՆ	12	ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՔ ԾՆՈՒՆԳԻ
ԳԵՎՈՐԳ ՍԱՐԳՍՅԱՆ	39	ՀՐԵՇՏԱԿԸ
ԱՍՏԳԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ	79	ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀՈՎՏՈՒՄ
ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍԻՍՅԱՆ	96	ՍՊԱՆԵԼ ԵՎ ՄՈՌԱՆԱԼ
ՍՈՖԻ ՄԻՐԶՈՅԱՆ	108	ՏՈՒՆՆ ՈՒ ԽԻՂՈՔ ԾԱԽՈՒՉԷ
ԱԳՈՏԱ ԿՐԻՍՏՈՅ	134	ՀԱՄԱՃԱՐԱԿ

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Նորայր ԱԴԱԼՅԱՆ

*Կյանքը երկխոսություն է,
որն արտահայտվում է նաև
մենախոսությամբ: Նույնիսկ
միայնակը բանտախցի չորս
պատերի քառակուսում՝*

*երկխոսում է իր հետ, հոգու լուռ բառերով ապրում աշխար-
հի կան ու չկան, իր տարիների դատարկությունը:
Ժամանակների պատմությունը կարդացեք գրավոր թե
անգիր երկխոսական տեքստերում ավելի, քան այլուր:
Երևելի դրամատուրգիան՝ իբրև կառուցվածք, ամենաճշմա-
րիտ ու վավերական ժանրն է մարդու էության մասին:*

*Այսպես եմ կարծում, թեև ոմանք,
գուցե շատերը, կարող են ինձ ընդդիմանալ:*

ՊԱՏԸ

Մեկ գործողությանը բեմախաղ

Գործող անձինք

ՌՈՄԵՈ

ՋՈՒԼԻԵՏ

ԲԱՆՎՈՐՆԵՐ

Թարթոնի միանման հագուստով չորս բանվորները, հրելով, դարարկ բեմ են քերում աղյուսաշեն պատը և կենտրոնը բաժանում աջ ու ձախ հավասար մասերի:

Ա ԲԱՆՎՈՐ - Ժամը յոթն անց է տասնհինգ րոպե, ներկայացումը սկսեք, անբաններ:

Հանդիսատեսի անհամբեր ծափողույնները: Ընդհանուր կիսամթում պատը դանդաղ լուսավորվում է՝ վրան հայերեն ու օտար տառեր, մաքենատիկական բանաձևեր, ավտոմեքենաների ու ծխնելույզների ստվերագծեր և պարզ, ընթեռնելի մի նախադասություն. «Ամեն սկիզբ վերջ ունի»:

Բ ԲԱՆՎՈՐ - (զննելով գրությունը):

Ես վերջ չունեմ:

Գ ԲԱՆՎՈՐ - Դու հարբեցող ես:

Դ ԲԱՆՎՈՐ - Վատ օղի չի լինում, կա վատ խմող:

Բանվորները հեռանում են: Հագիվ լսելի ձայնանշաններ, որ մնան են և մնան չեն երաժշտության: Պատը խփում են: Լռություն: Ապա՝ ավելի ուժգին:

Դարձյալ երկար ու սպասողական լռություն է: Անընդհատ խփում են: Լռությունը հասնում է վախի աստիճանին:

ՋՈՒԼԻԵՏ - (ծախակողմյան կուլիսից): Ո՞վ է:

Շեփորի նյարդային ձայն: Թավջութակի կարճատև մեղեդի:

ՋՈՒԼԻԵՏ - (կուլիսից): Ո՞վ է թակում դուռը:

ՌՈՄԵՈ - (աջակողմյան կուլիսից մոտենում է պատին): Երեքը մեծ է երկուսից:

ՋՈՒԼԻԵՏ - (մոտենում է պատին): Ո՞ւմ ձայնն եմ լսում:

ՌՈՄԵՈ - Սա դուռ չէ, այլ՝ պատ:

ՋՈՒԼԻԵՏ - Հեռացիր: Ես տանը չեմ:
ՌՈՄԵՈ - Հեռացողը դարձյալ մոտենում է, անկախ իմ ու քո կամ որևէ մեկի ցանկությունից:

ՋՈՒԼԻԵՏ - Տղամարդ ես, թե՛ կին:

ՌՈՄԵՈ - Ասացի՛ երեքը երկուսից մեծ է:

ԶՈՒԼԻԵՏ - Հասկացա, տղամարդ ես:

ՌՈՄԵՆ - Իսկ դո՞ւ...

ԶՈՒԼԻԵՏ - Երկուսն է երեքից մեծ:

ՌՈՄԵՆ - Ամբողջ կյանքում երազել եմ հանդիպել քեզ պես գեղեցիկ կնոջ: Անունդ տուր ինձ:

ԶՈՒԼԻԵՏ - Ծատ չուզեցիր:

ՌՈՄԵՆ - Խնդրում եմ:

ԶՈՒԼԻԵՏ - Զուլիե՛տ:

ՌՈՄԵՆ - Իտալացի՞ ես:

ԶՈՒԼԻԵՏ - Ֆրանսիացի էլ չեմ:

ՌՈՄԵՆ - Եթե անգլիացի չես, ուրեմն հայ ես:

ԶՈՒԼԻԵՏ - Իսկ ինչո՞ւ քո անունը ինձ չես նվիրում, արժանի չեմ:

ՌՈՄԵՆ - Ես Ռոմեոն եմ, ոչ իտալացի, ոչ անգլիացի, ոչ ֆրանսիացի և ոչ իսկ աֆրիկացի:

ԶՈՒԼԻԵՏ - Դու էլ ես հայ:

ՌՈՄԵՆ - Արարատն է իմ հայրենիքը:

ԶՈՒԼԻԵՏ - Բեզ ինչ-որ տեղ տեսել եմ:

ՌՈՄԵՆ - Զո ձայնն էլ ինձ է ծանոթ:

ԶՈՒԼԻԵՏ - Որտե՞ղ եմ տեսել:

ՌՈՄԵՆ - Այս աշխարհում ամեն ինչ սխալ է:

ԶՈՒԼԻԵՏ - Մի տխրեցրու ինձ:

ՌՈՄԵՆ - Մեր միջև պատ կա:

ԶՈՒԼԻԵՏ - Տեսել եմ, եթե նույնիսկ այդպես չէ:

ՌՈՄԵՆ - Դա շատ վաղուց էր, տասներեքերորդ դար, Վերոնա քաղաք, ես քո պատշգամբի տակ երգում էի իմ սերը...

ԶՈՒԼԻԵՏ - Ես քեզ սիրահարվեցի, Ռոմեո, օր ու գիշեր քեզ էի երագում: Երբ դու ինձ առաջին անգամ գիրկդ առար, համբուրում էիր շուրթերս, ես երջանկությունից խելագարվեցի: Դու ինչո՞ւ չէիր գժվում, անխիղճ:

ՌՈՄԵՆ - Ինչ կարձ հիշողություն ունես, քեզ սիրելուց մեռա:

ԶՈՒԼԻԵՏ - Ճի՞շտ...

ՌՈՄԵՆ - Հարցրու Ծեքսպիրին:

ԶՈՒԼԻԵՏ - Ասում է՝ երկուսդ էլ մեռած եք: Ասում է՝ մահը սիրո երջանկությունն է:

ՌՈՄԵՆ - Հիմա դու մեռած ես:

ԶՈՒԼԻԵՏ - Առանց քեզ չեմ ուզում ապրել:

ՌՈՄԵՆ - *(կամաց ծեծում է պատը):* Զուլիե՛տ... *(Դարձյալ թակում է:)* Ձայն հանիր, ախչի:

ԶՈՒԼԻԵՏ - Մի՞ մեռիր, խնդրում եմ: *(Պատը թեթևակի ծեծում է:)*

ՌՈՄԵՆ - Բարև:

ԶՈՒԼԻԵՏ - Ինչ գեղեցիկ բառ արտասանեցիր:

ՌՈՄԵՆ - Բարև, սիրելիս:

ԶՈՒԼԻԵՏ - Հիշեցի, ես քեզ տեսել եմ Երևանի դրամատիկական թատրոնի բեմում:

ՌՈՄԵՆ - Այդտեղ դու հանդիպել ես դերասան Հրաչ Հարութին, նա ինձ մի քիչ նման էր, բայց նա՛ ես չէի: Ես մեռա, իսկ նա մինչև այժմ էլ ապրում է և կատարում զանազան ու զարմանազան դերեր, օրինակ՝ հիանալի է ներկայացնում Անտոնիոսին:

ՋՈՒԼԻԵՏ - Բարև, Անտոնիոս:

ՌՈՄԵՆ - Եթե ես Անտոնիոսը լինեի, կամուսնանայի Կլեոպատրայի հետ:

ՋՈՒԼԻԵՏ - Ինձ մի դավաճանիր, Ռոմեո, ես քեզ երկնքի չափ սիրում եմ:

ՌՈՄԵՆ - Երազում եմ մի օր քեզ տեսնել, ոնց որ Ջուլիետ լինես:

Պատը կամաց քակում են աջ ու ձախից, ցնցում, ուժեղ քակոցներ: Շեփորի սրոցող ձայնը: Թավջութակի տևական մեղեդին աղավաղվում է սաքսոֆոնի հնչյուններով: Մալատղական լռություն: Փողոցային շների զզվառոտ:

ՋՈՒԼԻԵՏ - Մեր քաղաքում անհաշիվ շներ կան:

ՌՈՄԵՆ - Աղվեսներն էլ քիչ չեն:

ՋՈՒԼԻԵՏ - Հապա օձերը...

ՌՈՄԵՆ - Մենք շրջապատված ենք բորենիներով, նրանք զզվելի գազաններ են, լուռ հոտոտում են գեղեցիկ կանանց, բայց ամենասարսափելին պատն է, որն ինձ բաժանում է քեզնից:

ՋՈՒԼԻԵՏ - Ո՛վ շինեց...

ՌՈՄԵՆ - Մարդը:

ՋՈՒԼԻԵՏ - Ելիր պատի վրա, դեմքդ տեսնեմ:

ՌՈՄԵՆ - Շատ բարձր է:

ՋՈՒԼԻԵՏ - Եթե չես ուզում բարձրանալ, ուրեմն մտածում ես Կլեոպատրայի մասին:

ՌՈՄԵՆ - Ասացի՛ ես Անտոնիոսը չեմ:

ՋՈՒԼԻԵՏ - Ինձ մենակ մի թող այս գազանանոցում:

ՌՈՄԵՆ - Հիմա դ՛ր թվականի մեջ ենք:

ՋՈՒԼԻԵՏ - Կարծեմ քսանմեկերորդ դարն է:

ՌՈՄԵՆ - Դու իմ ժամանակն ես ու տարածությունը:

ՋՈՒԼԻԵՏ - Երդվիր:

ՌՈՄԵՆ - Արև ու լուսին:

ՋՈՒԼԻԵՏ - Ինչո՞ւ ես ինձ սիրում:

ՌՈՄԵՆ - Որովիետև կին ես:

ՋՈՒԼԻԵՏ - Ի՞նչ է կինը:

ՌՈՄԵՆ - Գաղտնիք:

ՋՈՒԼԻԵՏ - Ոնց որ փիլիսոփա լինես, Ռոմեո Անտոնիոս:

ՌՈՄԵՆ - Եթե սերը մեռնի, աշխարհը կվերանա:

Պատի միջնամաս անկյունից մի աղյուս է ընկնում: Բացված անցքից դուրս է գալիս Ջուլիետի նուրբ և հողանի ձեռքը՝ կապույտ ուլունքաշար ապարանջանով: Ռոմեոն ձեռքը չի նկատում:

ՋՈՒԼԻԵՏ - Տուր ձեռքդ, վախենում եմ առանց տեսնելու կորցնել քեզ:

ՌՈՄԵՆ - Գտածը կորցնում են, կորցրածը՝ գտնում և մի օր դարձյալ կորցնում, կյանքի օրենքն է:

ՋՈՒԼԻԵՏ - Մի քիչ մարդ եղիր, տես, ձեռքս ինչ կարոտով է ձգտում քեզ:

ՌՈՄԵՆ - Զզվում եմ փիլիսոփաներից:

ԶՈՒԼԻԵՏ - Ո՛վ ես:

ՌՈՄԵՆ - Դրամատիկական թատրոնի մի պարզ դերասան, շատ էի ցանկանում Օթելլո լինել և խեղդել սիրելի Դեզդեմոնային, բայց ռեժիսորը, ինչպիսի անարդարություն, ինձ ստիպեց Ռոմեո խաղալ:

ԶՈՒԼԻԵՏ - *(ձեռքը որոնում է Ռոմեոյին)*: Ի՛նձ խեղդիր, ի՛նձ:

ՌՈՄԵՆ - Դու Դեզդեմոնա չես:

ԶՈՒԼԻԵՏ - Եթե ինձ չես խեղդում, ուրեմն ինձ չես սիրում: Քիչ առաջ Կլեոպատրան էր, հիմա էլ՝ Դեզդեմոնան...

ՌՈՄԵՆ - Որտե՞ղ ես, ախչի...

ԶՈՒԼԻԵՏ - Ես Դեզդեմոնա եմ, ինձ սպանիր, Օթելլո, գոնե մեկ րոպե երջանիկ լինեմ:

ՌՈՄԵՆ - Կա րոպե, որ դարից երկար է:

ԶՈՒԼԻԵՏ - Սիրում եմ քեզ:

ՌՈՄԵՆ - Երբ կինն ու տղամարդը հայտնվում են անանցանելի պատի տարբեր կողմերում, սկիզբ է առնում նրանց սիրո հեքիաթը:

ԶՈՒԼԻԵՏ - Այդ հեքիաթը մե՛նք ենք:

ՌՈՄԵՆ - Դու ես, ես եմ, ես և դու:

ԶՈՒԼԻԵՏ - Ինձ մի խաբիր:

ՌՈՄԵՆ - Հարցրու պատին:

ԶՈՒԼԻԵՏ - Պատ, ինչո՞ւ ես կանգնել իմ և Օթելլոյի միջև, չքվիր ասքիցս, որ ես նրան տեսնեմ:

ՌՈՄԵՆ - Ես Օթելլոն չեմ:

ԶՈՒԼԻԵՏ - Գիտեմ, Անտոնիոսն ես:

ՌՈՄԵՆ - Ինձ մեռած ես կարծում:

ԶՈՒԼԻԵՏ - Անցած գիշեր երազ տե-

սա, դու ինձ սեղմել էիր կրծքիդ, դու ինձ ասացիր՝ Զուլ, ես սիրում եմ քեզ, այդ խոսքի վրա մարմնիս կայծակ խփեց, և ես զգացի երջանիկ մահվան շունչը:

ՌՈՄԵՆ - Հիմա մեռած ես:

ԶՈՒԼԻԵՏ - Դու ես մեռած, որ միայն երազիս ես գալիս: Թռիր պատի վրայով այս կողմ:

ՌՈՄԵՆ - Մեռածներն էլ են ողջ:

ԶՈՒԼԻԵՏ - Ես քեզ ողջ եմ ուզում:

ՌՈՄԵՆ - Սիրտս դողում է քո ձայնից:

ԶՈՒԼԻԵՏ - Դուռը բաց և ներս արի, ես տանն եմ:

ՌՈՄԵՆ - Ոտքերս շղթայված են:

ԶՈՒԼԻԵՏ - Ձեռքերիցդ հանիր շղթան և գիրկդ առ ինձ:

ՌՈՄԵՆ - Դու իմ գրկում ես:

ԶՈՒԼԻԵՏ - Ձեռքերով ամուր շղթայի մեջքս, որ չկարողանամ քեզնից փախչել:

Պատն այս ու այն կողմից թափում-ցնցում են: Մեկ թե երկու աղյուս է թրմփում հատակին: Պատի մյուս ծայրի միջնամասում գոյացած անցքից պարզվում է Ռոմեոյի ձեռքը՝ կարմիր վարդով: Զուլիեռը շարունակում է իր ձեռքով որոնել Ռոմեոյին:

ՌՈՄԵՆ - Որտե՞ղ ես, Զուլի, քիչ առաջ այս վարդը քաղեցի դրախտի պարտեզից, քո չափ գեղեցիկ է ու բուրավետ:

ԶՈՒԼԻԵՏ - Դու ինձ չես տեսել, ի՛նչ գիտես՝ գեղեցիկ եմ:

ՌՈՄԵՈ - Զեզ տեսնելու համար աց-
քեր պետք չեն:

ԶՈՒԼԻԻԵՏ - Ինձ չես էլ հոտոտել:

ՌՈՄԵՈ - Զո վարդաբույրը բռնել է
ամբողջ բեմն ու դահլիճը:

ԶՈՒԼԻԻԵՏ - Հոգնեցի բեմից, ուզում
եմ ապրել իմ կյանքը և ոչ՝ Զուլիե-
տի:

ՌՈՄԵՈ - Բա ես ինչ ասեմ, որ միա-
ժամանակ Օթելլո եմ, Մարկոս
Անտոնիոս ու Ռոմեո, և միաժա-
մանակ սիրում եմ Դեզդեմոնա-
յին, Կլեոպատրային ու
Զուլիետին:

ԶՈՒԼԻԻԵՏ - Ինձ չես սիրում, մի խա-
բիր:

ՌՈՄԵՈ - Կյանք...

ԶՈՒԼԻԻԵՏ - Կնամո՛ղ:

ՌՈՄԵՈ - Ի՛նչ գրգռիչ ես հայիոյում:

ԶՈՒԼԻԻԵՏ - Բիչ է մնում քեզ ատեմ:

ՌՈՄԵՈ - Ատում է նա, որ սիրում է:

ԶՈՒԼԻԻԵՏ - Արի վերջ տանք այս
թատրոնին և մարդ լինենք, ես՝
կին, դու՝ տղամարդ:

ՌՈՄԵՈ - Հիանալի դերասանուհի
ես, Կլեոպատրան քեզ կնախան-
ձեր, եթե ողջ լիներ, Դեզդեմոնան
շատ կցանկանար նմանվել քեզ:

ԶՈՒԼԻԻԵՏ - Լա է՛լ է մեռած:

ՌՈՄԵՈ - Ես նրան սպանեցի չորս
հարյուր տարի առաջ:

ԶՈՒԼԻԻԵՏ - Մարդասպան:

ՌՈՄԵՈ - Եթե երեքը մեծ չէ երկու-
սից, ուրեմն՝ երկուսն է երեքից
մեծ: Իսկ երկուսին գումարած ե-
րեք հավասար է յոթի:

ԶՈՒԼԻԻԵՏ - Երբեք չեմ սիրել մաթե-
մատիկոսներին, նրանք միայն
ճիշտ հաշվել գիտեն, իսկ ես ու-
զում եմ մի օր հանդիպել այնպի-
սի մարդու, որն ինձ մի սխալ բան
ասի, օրինակ, ասի՝ արևը ծագում
է արևմուտքից և մայր է մտնում
արևելքում:

ՌՈՄԵՈ - Վան Գոգ:

ԶՈՒԼԻԻԵՏ - Լա ստեղծեց բնությու-
նից տարբեր իր բնությունը:

ՌՈՄԵՈ - Աստիճանաբար մոտենում
եմ մի սխալ տպավորության:

ԶՈՒԼԻԻԵՏ - Ավելի մոտեցիր:

ՌՈՄԵՈ - Դու Զուլին չես:

ԶՈՒԼԻԻԵՏ - Վերջապես մարդ ես
դառնում: Տուր վարդը հոտոտեմ:

ՌՈՄԵՈ - Որտե՞ղ ես:

ԶՈՒԼԻԻԵՏ - Պատի իմ կողմում:

ՌՈՄԵՈ - Որքան մոտիկ ես և հեռու:

ԶՈՒԼԻԻԵՏ - Բանդիր պատը:

ՌՈՄԵՈ - Դու քանդիր:

ԶՈՒԼԻԻԵՏ - Տղամարդը դու ես:

ՌՈՄԵՈ - *(բռննցքով խփում է պա-
տին):* Չի ուզում քանդվել:

ԶՈՒԼԻԻԵՏ - Ախր ինչո՞ւ... *(Ամբողջ ու-
ժով ցնցում է պատը:)*

ՌՈՄԵՈ - Պատը՝ մարդիկ են, նրանք
սիրել չգիտեն:

ԶՈՒԼԻԻԵՏ - Ի՛նչ են ցանկանում կյան-
քից:

ՌՈՄԵՈ - Փող, ապրանք, փող:

ԶՈՒԼԻԻԵՏ - Իզուր ծնվեցի:

ՌՈՄԵՈ - Այդպես մի խոսիր, արևը
կնեղանա:

ԶՈՒԼԻԻԵՏ - Դու է՛լ ես ապրանք սի-
րում:

ՌՈՄԵՆ - Զեզ:

ԶՈՒԼԻԵՏ - Ես ապրանք չեմ:

ՌՈՄԵՆ - Դու սեր ես՝ վարդի բուր-
մունքով ու գեղեցկությամբ:

ԶՈՒԼԻԵՏ - Նկարիր ինձ:

ՌՈՄԵՆ - Ժպտա:

ԶՈՒԼԻԵՏ - Ես էլ քեզ եմ նկարում:

ՌՈՄԵՆ - Ինչ քաղցր շուրթեր ունես:

ԶՈՒԼԻԵՏ - Աչքերդ ծովի պես կա-
պույտ են:

ՌՈՄԵՆ - Մենք ծով չունենք:

ԶՈՒԼԻԵՏ - Դու ես իմ ծովը:

**Պատի միջնամասից մի քանի
աղյուս է ընկնում: Թավջութակի
մեղմ ու զմայլելի երաժշտություն:
Բացված անցքից դուրս է գալիս
Ջուլիետի ձեռքը, շատ չանցած՝
Ռոմեոյի: Ձեռքերը շոյում են ի-
րար:**

ԶՈՒԼԻԵՏ - Բարև, կարմիր վարդ:
(*Վերցնում է վարդը և հոտ քա-
շում:*)

ՌՈՄԵՆ - Ես ինձ նվիրում եմ քեզ:

ԶՈՒԼԻԵՏ - Զեզ կպահեմ սրտիս
ծաղկամանում: Հազար տարի
կապրես ու չես թառամի:

ՌՈՄԵՆ - Աստված դժոխքը ստեղծել
է անսեր մարդկանց համար, ո-
րոնք շինեցին այս պատը:

ԶՈՒԼԻԵՏ - Մենք որտեղ ենք ապրե-
լու:

ՌՈՄԵՆ - Մերը դրախտն է, ծովերից
այն կողմ, տիեզերական սիրո
դաշտում: Ինչո՞ւ տխրեցիր...

ԶՈՒԼԻԵՏ - Ծատ հեռու է: Վերացա-

կան ու անշոշափելի: Ես ուզում եմ
այրվել, մոխրանալ, մեռնել քո
գրկում:

ՌՈՄԵՆ - Չեմ կարող քեզ սպանել:

ԶՈՒԼԻԵՏ - Խնդրում եմ...

ՌՈՄԵՆ - Ինչ նուրբ ձեռք ունես:

ԶՈՒԼԻԵՏ - Դրախտում ես կդառնամ
հեքիաթ և կկորցնեմ իմ մարմինը:

ՌՈՄԵՆ - Հոգիդ կմնա:

ԶՈՒԼԻԵՏ - Մի՞թե հնարավոր է սիրել
հոգին՝ առանց մարմնի:

ՌՈՄԵՆ - Կյանք:

ԶՈՒԼԻԵՏ - Ատում եմ այս պատը, որ
կանգնած է իմ ու քո մարմինների
միջև:

ՌՈՄԵՆ - Մարդիկ չգիտեն՝ ինչ են
անում:

ԶՈՒԼԻԵՏ - Ինչ տաք է ձեռքդ:

**Պատի նույն միջնամասից դարձ-
յալ մի քանի աղյուս է ընկնում
հատակին: Ավելի ընդարձակ
բացվածքից ելնում են Ռոմեոյի
ու Ջուլիետի զույգ ձեռքերը, ո-
րոնց բավականին երկար շարու-
նակվող սիրային մնջախաղն
ուղեկցվում է թավջութակի մեղ-
մաձայն մվագակցությամբ՝ ա-
ռարկայացնելով պատկերի
զգացմունքայնությունը:**

ՌՈՄԵՆ - Դեզդեմոնա, ես քեզ թաշ-
կինակ տվեցի՝ ի նշան քո հան-
դեպ իմ համաշխարհային սիրո,
հոր է թաշկինակը, ցույց տուր, թե
չէ խանդից կմեռնեմ:

ՋՈՒԼԻԵՏ - Դու ինձ կարմիր վարդ նվիրեցիր:

ՌՈՄԵՆ - Ո՛ր է թաշկինակս, պոռնիկ, ո՞ր է սպիտակ վարդը:

ՋՈՒԼԻԵՏ - Վերջացրու կեղծ թատրոնդ, Մարկոս, մի խելագարեցրու ինձ, մի՞թե սիրելը պոռնկություն է, եթե կուզես իմանալ՝ դու առաջին տղամարդն ես, ում սիրեցի առանց տեսնելու: Բանդիր պատը, դուրս գանք թատրոնից, դու ինձ սիրես, ես՝ քեզ: Ձեռքդ դիր ձախ կրծքիս, տես՝ ոնց է սիրտս սիրուց դողում, շոյիր կուրծքս, համբուրիր, կծիր, անխիղճ մարդ...

ՌՈՄԵՆ - Աղավնի կրծքեր ունես:

ՋՈՒԼԻԵՏ - Ի՞նչ գույնի են:

ՌՈՄԵՆ - Կարմիր կտուցով, սպիտակ թևերով:

ՋՈՒԼԻԵՏ - Պատը քարուքանդ արա, որ գամ քո գիրկը:

ՌՈՄԵՆ - Ծատ ամուր է:

ՋՈՒԼԻԵՏ - Ինձ տար անմարդաբանակ կղզի անսահման օվկիանոսի մեջ:

ՌՈՄԵՆ - Մարդիկ ամեն տեղ են՝ ինչպես մրջյուններն ու թունավոր սողունները:

ՋՈՒԼԻԵՏ - Երանի ձուկ լինեի:

ՌՈՄԵՆ - Նայիր հայելուն, քո նմանը չկա:

ՋՈՒԼԻԵՏ - Երբ ծնվեցի, մտքովս չանցավ, թե մի օր հանդիպելու եմ քեզ:

ՌՈՄԵՆ - Զանի տարեկան ես:

ՋՈՒԼԻԵՏ - Զո տարիքին:

ՌՈՄԵՆ - Որքան սառն ու անտարբեր ես եղել իմ հանդեպ: Իսկ ես քսանյոթ տարի ամեն րոպե քեզ հետ եմ:

ՋՈՒԼԻԵՏ - Ծնվածդ օրից:

ՌՈՄԵՆ - Ավելի վաղ:

ՋՈՒԼԻԵՏ - Չեմ հավատում:

ՌՈՄԵՆ - Հարցրու Վիլյամ Ենքսպիրին:

ՋՈՒԼԻԵՏ - Ո՛վ է:

ՌՈՄԵՆ - Մեր հայրը:

ՋՈՒԼԻԵՏ - Իմ հոր անունը Արտավազդ է: Հին աշխարհում նա թագավոր էր: Երբ ես ծնվեցի, մի քանի օր հետո նա մեռավ ավտովթարից: Ես միայն նրա լուսանկարն եմ տեսել: Ես նման եմ նրան: Մայրս շատ գեղեցիկ էր: Ինձ հանձնեց մանկատուն և Ժորժի հետ փախավ Լոս Անջելես: Ես նրան այլևս չհանդիպեցի: Ժորժից հետո նա երեք թե չորս անգամ էլ ամուսնացավ: Անցյալ տարի նրանից հիսուն դոլար ստացա: Ուզեցի ինձ համար ծմեռային կոշիկ գնել: Կոշիկի խանութի դռան մոտ մի մուրացկան էր նստած՝ բջջային հեռախոսը ականջին: Երբ խոսակցությունն ավարտեց, ես կռացա և դոլարը դրեցի գետնին՝ նրա ոտքերի արանքում գտնվող գլխարկի մեջ, որտեղ կային մի քանի մետաղադրամներ: Նա հարցրեց՝ շա՛տ ես գողացել: Հաստատական

շարժեցի գլուխս: «Բա ինչի՞ ես քիչ տալիս», - ասաց նա:

ՌՈՄԵՆ - Այսքան տարի ո՞նց մտքովս չի անցել, որ թագավորի աղջիկ ես:

ՋՈՒԼԻԵՏ - Եթե իմանայիր, ինձ ավելի էիր սիրելու:

ՌՈՄԵՆ - Ի հարկե:

ՋՈՒԼԻԵՏ - Դու ինձ չես սիրում, դու սիրում ես իմ թագավորական ծառը:

ՌՈՄԵՆ - Սիրում եմ, թագուհի, ուզում ես՝ պատն այնպես քանդեմ, որ մարդիկ այլևս երբեք չկարողանան շինել:

ՋՈՒԼԻԵՏ - Թատրոնը քանդիր, պատը հիմնահատակ քարուքանդ արա, եթե ինձ իսկապես սիրում ես:

Ռոմեոն ոտքերով, գլխով, բռունցքներով խփում է պատին: Փողոցային շները ոռնում են: Ջուլիետը հուսահատ ոգևորությամբ հրում-ցնցում է պատը: Ամբոխի հայեցակից գոռգոռոցներ: Թմբուկի ու շեփոթի աղմուկ: Խավար մթություն, որը երբեմն լուսավորվում է ամպրոպի վայրկենական փայլատակումով: Պատի տարբեր կողմերից բազմաթիվ աղյուսներ են թափվում:

ՋՈՒԼԻԵՏ - Տեսնում եմ՝ ինձ սիրում ես, բայց ես քեզ՝ ավելի շատ:

ՌՈՄԵՆ - Որքան անարդար ես, թագուհի:

ՋՈՒԼԻԵՏ - Լրիվ քանդիր պատը, թող մեր միջև ոչ մի մարդ չմնա, լինենք միայն ես ու դու:

Շարունակում են պատը տապալել առավել մեծ եռանդով՝ գրեթե մույն մթության և աղմուկ-աղաղակների մեջ: Վառվող մոմերով բեմ են գալիս չորս բանվորները:

Ա ԲԱՆՎՈՐ - Թատրոն եք քանդում, անտաղանդ դերասաններ:

Բ ԲԱՆՎՈՐ - Ձեզ կողարկեմ հազար տարվա հանգուցյալների մոտ:

Գ ԲԱՆՎՈՐ - Պատը շինեք, թե չէ՝ ձեզ կշինեն:

Դ ԲԱՆՎՈՐ - Վատ օղի չի լինում, կա վատ խմող:

ՋՈՒԼԻԵՏ - Ես ու Ռոմեոն իրար սիրում ենք:

Գ ԲԱՆՎՈՐ - Մեռած մոդա:

Դ ԲԱՆՎՈՐ - Եթե հարբեցող չեք, ուրեմն միասեռական եք, ես ձեր մերը...

ՌՈՄԵՆ - Կսպանեմ... *(Աղյուսներ է նետում բանվորների վրա, որոնք լեղապատառ փախչում են:)*

ՋՈՒԼԻԵՏ - Աշխարհն էլ քանդենք, սիրելիս, մեզ այսպիսի աշխարհ պետք չէ:

Բեմը դանդաղ լուսավորվում է: Պատը վերածվել է ավերակա-կույտի, որից որոշ ժամանակ թանձր փոշի է բարձրանում: Ռոմեոն և Ջուլիետը հիացած նայում են իրար և չեն համարձակվում մոտենալ: Թավջութակի մեղեդին

ասես ելնում է դրախտի բուրավետ ու ծաղկուն աշգիներին և շարունակվում ամբողջ տեսարանի ընթացքում:

- ՌՈՄԵՈ** - Բարև, թագուհիս:
- ՋՈՒԼԻԵՏ** - Ինչքան նման ես Ռոմեոյին:
- ՌՈՄԵՈ** - Ես Ռոմեո չեմ: Իմ անունը Հայկ է: Ես արժանի չեմ քեզ:
- ՋՈՒԼԻԵՏ** - Դու ինձ ավելի ես արժանի, քան Ռոմեոն:
- ՌՈՄԵՈ** - Ես մի հասարակ մահկանացու եմ, անհայտ նկարիչ, որը ոչ մի նկար չի նկարել:
- ՋՈՒԼԻԵՏ** - Դու քանդեցիր պատը, որ մենք իրար մոտենանք:
- ՌՈՄԵՈ** - Սերը քանդեց:
- ՋՈՒԼԻԵՏ** - Սերը դու ես:
- ՌՈՄԵՈ** - Եվ դու, թագուհի:
- ՋՈՒԼԻԵՏ** - Իմ հայրը թագավոր չէր, նրան աքսորեցին Սիբիր՝ ճշմարիտ մարդ լինելու մեղադրանքով:
- ՌՈՄԵՈ** - Դու ավելի գեղեցիկ ես, քան գեղեցկությունը:
- ՋՈՒԼԻԵՏ** - Սիրտս փակիր սրտիդ մեջ: Այլևս ինձ Ջուլիետ չասես, ոչ էլ Անգլիայի թագուհի: Ինձ սիրիր իբրև քեզ կարոտած կնոջ: Կարդա աչքերիս երջանկությունը և խոսիր անունս:

- ՌՈՄԵՈ** - (երկար նայում է Ջուլիետի աչքերին): Ոսկե աստվածուհի...
- ՋՈՒԼԻԵՏ** - Ամեն վերջ ունի նոր սկիզբ և շարունակություն: Հիվանդ եմ քեզանով և չեմ ցանկանում բուժվել:
- ՌՈՄԵՈ** - (գրկում է Ջուլիետին): Անահիտ... որտեղ էիր մինչև հիմա...
- ՋՈՒԼԻԵՏ** - Դու ինձ կանչեցիր քո գիրկը:
- ՌՈՄԵՈ** - Սա թատրոն չէ, այլ երանելի կյանք:
- ՋՈՒԼԻԵՏ** - Համբուրիր կուրծքս, համբուրիր անունս, համբուրիր շուրթերս:
- ՌՈՄԵՈ** - Ծաղիկ ծովային:
- ՋՈՒԼԻԵՏ** - Իմ տղամարդ:
- ՌՈՄԵՈ** - Մարմինդ երգում է:
- ՋՈՒԼԻԵՏ** - Ո՞ւմ համար են դողանջում քո զանգերը:
- ՌՈՄԵՈ** - Ամենակին կնոջ:
- ՋՈՒԼԻԵՏ** - Մի՞թե ես եմ:
- ՌՈՄԵՈ** - Ջուլին չէ: Ոչ էլ Կլեոպատրան:
- ՋՈՒԼԻԵՏ** - Ես երեխա կծնեմ: Նա նման կլինի քեզ:
- ՌՈՄԵՈ** - Թատրոն ես, թե՛ իրականություն:
- ՋՈՒԼԻԵՏ** - Թատրոնը վերջացավ:

Համր տեսարան: Բենը ողորված է արևաշող լույսով: Փակ վարագույր, որի վրա խոշոր տառերով գրված է. «Երկուսից հասած երեք հավասար է հինգի»:
 Հանդիսատեսի ծափահարությունները:

ՄԵՐ ՆԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՆԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ՆԵՂԻՆԱԿԸ



Կարինե ԽՈՂԻԿՅԱՆ

*Այս պիեսը գրվեց մեն-մի մտքի համար, որը ընթացքում
բանաձևեց Էմման. «Ինչո՞ւ մարդուն սկսում ենք ճանաչել
նրա մահից հետո»...*

ՀՐԱՎԻՐՎԱԾ ԵՔ ԾՆՈՒՆԴԻ

Գործող անձինք

ԱՐՄԵՆ - 19 սարեկան

ԱՆԱՀԻՏ - 55 սարեկան

ԷՍՄԱ - 67 սարեկան

ՀԱՄՄԻԿ - 17 սարեկան

Ներսէս է գալիս Արմենը: Ուսով պահած հեռախոսը՝ քերում, սեղանին է հասցնում սրվարաքղթէ փուփ՝ դեղին գույնի:

ԱՐՄԵՆ - *(հեռախոսի մեջ):* Ստացվեց, ինչ անեմ... Հասկանում եմ, բայց դու էլ ինձ հասկացիր... Մի ժամ ուշանամ՝ աշխարհը չի քանդվի... *(Մոայլվելով):* Էլ չի քանդվի, որովհետև պապի համար միևնույն է... Ինձ համար միևնույն չէ, բայց դա ո՞ւմ է հետաքրքրում... Մամ, էլ ո՞նց բացատրեմ... Ո՞վ է ասում, դու աշխարհի ամենահասկացող մայրն ես, որ դեռ փորձում ես ինձպեսին հասկանալ... Էլի՛ ասեմ՝ Սուրոյի հետ շատ կարևոր հանդիպում ունենք... չէ, ինստիտուտում ամեն ինչ օքեյ է, ուզում եմ գործ գտնել, որ ամեն անգամ սիգարետի փող չուզեմ... Դասերիս չի խանգարի... Մի խոսքով, էստեղ ամեն ինչ կարգավորում ենք, ու գալիս եմ... *(Փորձելով*

թաքցնել դժգոհությունը): Չէ, Սուրոն չի գա, նա... էլի գործեր ունի: Դե լավ, դուք սեղան նստեք՝ ես կգամ:

Հեռախոսը դնում է սեղանին, շոշափում է տուփը:

ԱՐՄԵՆ - Պապ, այ պապ, ինձ լսում ես... *(Դադար:)* Զարմանում ես, որ էստեղ եմ... *(Դադար:)* Բա որ հանկարծ պատասխանես... *(Դադար:)* Դու էիր ինձ հասկանում, դու էլ... հիմա իմ էստեղ լինելն էլ կհասկանայիր... *(Դադարը քմծիծաղով):* Զե՞զ եմ համոզում, թե՛ ինձ... *(Դադար: Կարծես ներքուստ դաժանանալով):* Օ՛ն առաջ, ինչպես կասեիր դու... Եվ ուրեմն, սա քո տուփերի կոլեկցիայից է, գրասեղանիդ կողքը իրար վրա շարել ես՝ ծիածանի գույներով ներկ-

ված: Խոստովանեմ՝ մինչև սրանց հասնելը գրասեղանիդ դարակներն եմ նայել... կամ խուզարկել եմ, քեզ ո՞րն է դուր գալիս: Ի՞նչ... իհարկե, նայելը, որովհետև թոռդ եմ ու դրա իրավունքն ունեմ: Կարծում եմ՝ ունեմ: Դարակներում չգտա, անցա սրանց...

Քացում է տուփը, զննում է պարունակությունը, երկարաձիգ սուլում է:

ԱՐՄԵՆ - Ջար-թու-ցիչ... Մի քսաներեսուն հատ կլինի՞... *(Հանում է մեկը, զննում:)* Պապ, բայց ինչի՞նք զարթուցիչ... Որ անկանխատեսելի մարդ էիր՝ բոլորս գիտեինք, բայց հիմա մտքովս անցավ... ոնց որ քեզ էնքան էլ չենք հասկացել: Ճանաչողները շատ էին՝ քո փաստաբան ու ոչ փաստաբան ընկերները, հարազատներից մի երկուսը... Ես ուրիշ բան նկատի ունեմ, լավ գիտես՝ ինչ... *(Մեկ այլ զարթուցիչ հանելով:)* Բայց ընկերներդ լավն էին... Որ հիշում եմ ձեր քեֆերը մեր այգում, ձեր սարքած խորովածը, ընկերոջդ՝ Վարդանի քաշած խնձորի օղին, որ խմում էիք որպես կավադոս ու Արսենը անպայման պիտի հիշեր Ժոանին ու սրտանց քֆրտեր՝ թե ոնց Ռավիլի պես տղուն թողեց ու... իրան հասնում էր, որ մեռավ... *(Դադար:)* Պապ... պապ-պապ... *(Քմծիծաղով:)* Ինչից

սկսեցի՝ ուր հասա: Ասենք՝ ոչ մի տեղ էլ չեմ հասել ու դեռ հարց է՝ երբ կհասնեմ:

Գնում, բերում է կապույտ գույնի տուփ, բացում, դուրս է բերում խոշորացույց, հաջորդում է հանում, նայում տուփի մեջ:

ԱՐՄԵՆ - Էսքան խոշորացույց... Բար ասում էի՝ ինչ կա տուփերի մեջ, ինչի՞նք չէիր բացում, ցույց չէիր տալիս, որ հիմա չհարցնեի՝ ինչի՞նք հատկապես խոշորացույց...

Ջանգ: Նայում է համարին, մտայլվում է:

ԱՐՄԵՆ - *(լսափողի մեջ):* Ես եմ, ով պիտի լինի... Գարեջուր եմ խմում ֆուտբոլի հետ... Ինչի՞նք ես ապուշ հարց տալիս, որ համարժեք պատասխան ստանաս... Փնտրում եմ, ուրիշ ի՞նչ պիտի անեմ էստեղ... Զեզ թվում է՝ դժվար բան չէ՞... ուրեմն արի ու գտիր: Դե, որ էդպես է՝ չխանգարես: Ու չզանգես:

Հեռախոսը զարթուցիչի հետ դնում է սեղանին, զննում, վերադառնում է կարմիր գույնի տուփով: Դնում է սեղանին:

ԱՐՄԵՆ - Սրա մեջ ինչ կլինի: Ջար-թուցիչից ու խոշորացույցից հետո ի՞նչ կարող է լինել... Գրիչ, շերեփ կամ իմ փնտրածը: *(Քացում է, նայում, հուսախաբ:)* Պապ եմ

ասել... *(Հանում է մկրատ, խառնշտորում տուփի պարունակությունը:)* Տեսնես քանի հատ է... Պապ, կարո՞ղ է՝ մկրատ սրողի ես թալանել... *(Կտրուկ շրջվում, գնում է դեպի դուռը, կեսձամփա կանգ է առնում:)* Արդեն վախենում եմ, ինչ իմանամ՝ մյուսի մեջ ինչ կլինի: Պապ, հասկացանք, անհանգիստ բնավորություն ունեիր, «բազմակողմանի հետաքրքրություններով», ինչպես կասեր սիրելի զոքանչդ ու իմ տատը՝ տիկին Էլեոնորան: Բայց լավ էիք խաղում փեսա-զոքանչ թատրոնը՝ «Էլեոնորա Միսակովնա-Արմեն, սիրելիս»: Կարծում էի՝ խաղում եք, մինչև տատիս մեռնելը: Հոգեհանգստից հետո սրահը դատարկվեց, մնացինք մենք մերոնցով, մոտեցար, կանգնեցիր գլխավերևում ու կամաց՝ «Շնորհակալ եմ, մայրիկ»: Ես էլ հիշեցի, որ առանց մայր ես մեծացել... առանց հայր: *(Դադար: Այլ տոնով:)* Պապ, կարո՞ղ է՝ հատուկ խանգարում ես: Մտքերս խառնում ես, չես թողնում՝ կենտրոնանամ: Ասում են՝ մեռածի հոգին քառասուն օր երկրի վրա է... Տասնչորս օր է, որ չկաս: Գուցե կաս, մենք քեզ չենք տեսնում: Իսկ դու տեսնում ես ու գիտես՝ ինչ եմ անում էստեղ... Պապ... պապ-պապ... Արի պայմանավորվենք՝ իրար չենք խանգարում:

Գնում, գալիս է կանաչ տուփով:

ԱՐՄԵՆ - Ոնց որ սիստեմը հասկացա, դեղին տուփերում զարթուցիչ է, կապույտում՝ խոշորացույց, կարմիրում՝ մկրատ... *(Մտազբառ:)* Ինչո՞ւ մկրատն է կարմիրի տակ, հը՞, պապ, էդպես էլ չասիր... Հիմա տեսնենք՝ կանաչն ինչ է:

Բացում է տուփը, դեռ չհավատալով աչքերին, դողացող ձեռքով հանում է այրում:

ԱՐՄԵՆ - Փաստորեն, ճիշտ են ասում՝ կանաչը հույս է: Փրկություն: Մնում է՝ ինձ չմեղադրես: Ասենք, որ մեղադրես՝ ինչ է փոխվելու...

Բացում է այրումը, նորից չհավատալով տեսածին՝ տեմորեն թերթում է էջերը՝ կատաղության հասցնելով իրեն:

ԱՐՄԵՆ - Բացիկ... Էն էլ նոր տարվա՞... Ձմեռ պապ ու տոնածա՞ն... *(Շարտում է այրումը, միջից մի քանի բացիկ սահուն թափվում են հատակին:)* Մե՞ծ մարդ ես, ձանաչված փաստաբան, որ մի գործ տանուլ չես տվել ու բացիկ... տոնածառի խաղալիքներով... Պապ, կարո՞ղ է, ձեռ ես առնում...

Դռան կամաց, կարճ զանգ:

ԱՐՄԵՆ - Էն ով է... *(Լսում է: Լռություն:)* Թվաց: *(Հատակից վերցնում է այրումը:)* Թե՛ երկնային

զանգ էր, նշան ես տալիս, բայց ինչ նշան... (Նորից է ստուգում էջերը:) Բացիկներ... Ընկերս ու ապագա հոգեբան Վահեն կասեր. «Էստեղ մանկության մեծ կոմպլեքս է թաղված»: Պապ, ինչ կոմպլեքս, դու կոմպլեքս ունեցել ես: Փաստորեն, չգիտեմ, համարյա չգիտեմ քեզ... Ես էլ կարծում էի՝ ամենամոտիկդ եմ: (Բացում է մի էջ:) Ծնորհավոր նոր տարի, ու եղևնու գլխին՝ կարմիր աստղ: (Զննում է բացիկը:) Հազար ինն հարյուր...

Դռան զանգ:

ԱՐՄԵՆ - Էլի նշան ես տալիս... (Անընդմեջ զանգ:) Չէ, սա արդեն դուռն է: (Գնալով դուրս:) Բայց ո՞վ է...

Վերադառնում է Անահիտի հետ:

ԱՐՄԵՆ - Ձեր ասածից բան չհասկացա:

ԱՆԱՀԻՏ - Կրկնեմ...

ԱՐՄԵՆ - Բայց՝ ավելի պարզ ու հասկանալի:

ԱՆԱՀԻՏ - Ծնորհավորեմ ու գնամ:

ԱՐՄԵՆ - Ո՞ւմ եք շնորհավորելու:

ԱՆԱՀԻՏ - Իմ վաղեմի... (փնտրում է բառը) բարեկամին:

ԱՐՄԵՆ - Մի հատ էլ՝ սկզբից... Ում եք շնորհավորելո՞ւ:

ԱՆԱՀԻՏ - Արմենին: Այսօր նրա ծննդյան օրն է, այդպես չէ՞:

ԱՐՄԵՆ - (դադարից հետո:) Արմենի...

ԱՆԱՀԻՏ - Այո: Իսկ դուք... ո՞վ եք:

ԱՐՄԵՆ - Արմենը:

ԱՆԱՀԻՏ - Ամեն ինչ հնարավոր է, բայց իմը Արմենյան Արմենն է:

ԱՐՄԵՆ - (հոգոց հանելով): Ես էլ... Արմենյան Արմենն եմ:

ԱՆԱՀԻՏ - Ինչպե՞ս գլխի չընկա... Արմենի թոռնիկն եք:

ԱՐՄԵՆ - Եմ: Հատկապես թոռնիկը:

ԱՆԱՀԻՏ - (ժպտում է): Իրավացի եք... թոռը:

ԱՐՄԵՆ - Իսկ դո՞ւք...

ԱՆԱՀԻՏ - Արդեն ասացի՝ վաղեմի...

ԱՐՄԵՆ - (ընդհատելով): ...բարեկամը: Բայց մեր բարեկամության մեջ ոնց որ ձեզ տեսած չկամ:

ԱՆԱՀԻՏ - (վերջնականապես շփոթվելով): Չէ... պարզապես բարեկամ:

ԱՐՄԵՆ - Պարզապես... Պարզ է:

Լռություն:

ԱՆԱՀԻՏ - Չներկայացա... Անահիտ:

ԱՐՄԵՆ - Անահիտ... (Սպասողական նայում է:)

ԱՆԱՀԻՏ - Պարզապես Անահիտ:

ԱՐՄԵՆ - Պարզ է: Ոչ մի բան էլ պարզ չէ: Ինչո՞ւ եք եկել:

ԱՆԱՀԻՏ - (սթափեցնող սառնությամբ): Ներեցեք...

ԱՐՄԵՆ - (հրեն ուղղելով): Ուզում եմ ասել՝ ով է ձեզ հրավիրել:

ԱՆԱՀԻՏ - Ինչպես թե՛ ով: Արմենը... ձեր պապիկը:

ԱՐՄԵՆ - Իմ պապիկը... (Մեկուսի):
Պա՛պ, էս ի՞նչ է... (Անահիտին.)
Հրավիրել է... ո՞նց...

ԱՆԱՇԻՏ - Բացիկով: (Պայուսակի միջից բացիկ հանելով): Խնդրեմ:

ԱՐՄԵՆ - (անտեսելով նրա կծու շեշտը): Բացիկով...

ԱՆԱՇԻՏ - Բացիկով: (Ասում է տեքստը՝ բացիկին չնայելով):
Լոյեմբերի 19-ին հրավիրում եմ իմ ծնունդին: Եվ հասցեն՝ Ամառանոցային...

ԱՐՄԵՆ - (ընդհատում է): Կարելի՞ է... (Առանց սպասելու վերցնում է բացիկը): Հասցեն ձիշտ է...

ԱՆԱՇԻՏ - (վիրավորված շեշտով): Անտարակոյս:

ԱՐՄԵՆ - (մտամիտ): Անտառի կոյս: (Իրեն ուղղելով): Ներեցեք... գրականության ուսուցչուհի եք:

ԱՆԱՇԻՏ - Ճարտարապետ եմ: (Լոր միայն շուրջը նայելով, տեսնելով սեղանի տուփերը): Օհո՛...

ԱՐՄԵՆ - Ոնց հասկացա՝ հին ծանոթներ եք:

ԱՆԱՇԻՏ - (շեշտով): Պատկերացնել չեք կարող՝ ինչքան հին... Իսկ ո՞ր է Արմենը:

ԱՐՄԵՆ - (որոշման հանգելուց հետո): Էստեղ չէ:

ԱՆԱՇԻՏ - Որտեղ է:

ԱՐՄԵՆ - Որոշել ենք 65-ամյակը ուրիշ տեղ նշել:

ԱՆԱՇԻՏ - Ուզում եք ասել, որ այստեղ չի՞ լինելու:

ԱՐՄԵՆ - Լույսիսկ չի գալու:
ԱՆԱՇԻՏ - Չեմ հասկանում... այսքան լուռությունից հետո հրավիրելու...

ԱՐՄԵՆ - (ժամացույցին նայելով): Ո՛ւ... Ինչպես կասեր իմ ընկեր Սուրոն՝ կյանքը անակնկալներով լիքը չէ, կյանքն ինքն է պատրաստում անակնկալները:

ԱՆԱՇԻՏ - (առաջին անգամ ուշադիր նայելով Արմենին): Լման եք:

ԱՐՄԵՆ - Ինչո՞վ:

ԱՆԱՇԻՏ - Ճարտար լեզվով:

ԱՐՄԵՆ - Միայն...

ԱՆԱՇԻՏ - Առայժմ: Լա, օրինակ, վաղուց առաջարկել էր նստել:

ԱՐՄԵՆ - (փորձելով արդարանալ): Հասկանո՞ւմ եք...

ԱՆԱՇԻՏ - Հասկանում եմ, ուզում եք րոպե առաջ իմ ներկայությունից ազատվել: Կգնամ: Բայց մինչ այդ... (Վերցնում է Արմենի ձեռքից բացիկը, պայուսակից հանում գրիչն ու ինչ-որ բան է գրում):

ԱՐՄԵՆ - (հետևելով նրան ու փորձելով թաքցնել դժգոհությունը): Ներեցեք, հա՛մ...

ԱՆԱՇԻՏ - (գրելով): Ձեր անունի՞ց եք ներողություն խնդրում:

ԱՐՄԵՆ - Ոչ միայն...

ԱՆԱՇԻՏ - Էլի բան է:

Այն է՝ բացիկը պիտի տա Արմենին՝ դռան զանգ:

ԱՆԱՀԻՏ - (հաղթական): Տեսա՞ք...

ԱՐՄԵՆ - Ի՞նչը...

ԱՆԱՀԻՏ - Եկավ:

ԱՐՄԵՆ - (նրա ասածը «մարտելուց» հետո): Ես այդքան վստահ չէի լինի:

ԱՆԱՀԻՏ - Դուռը բացեք, դուք ի՞նչ գիտեք վստահության մասին: (Բացիկը դնում է պայուսակը:)

Արմենը դուրս է գնում: Անահիտը մոտենում, սկսում է տնողել ու շոյել տուփերը՝ ասես իսկապես հին ծանոթների է հանդիպել:

Վերադառնում է Արմենը. մի ձեռքում տպավորիչ չափերի տոպրակ է, մյուսով թևանցուկ է արել ձեռնափայտին հենված էմմային:

ԷՄՄԱ - Ջահել, ո՞ր ես շտապում, տեղ հասանք: (Անահիտին.) Բարով տեսանք:

ԱՆԱՀԻՏ - Բարև ձեզ:

ԷՄՄԱ - (Արմենին): Տա՛նող է:

ԱՐՄԵՆ - Չէ: Տատս անցած տարի է մահացել:

ԷՄՄԱ - Չեմ իմացել, ներող կլինեք: Արմենին կանչեք:

ԱՆԱՀԻՏ - Ինչո՞ւ կանչենք, ուր որ է՝ կգա: Իսկ դո՞ւք ով եք:

ԷՄՄԱ - Ես... Երկար պատմություն է:

ԱՐՄԵՆ - Իսկ եթե կա՞րձ...

ԷՄՄԱ - Կարձը միայն ջահել աղջիկների ծնկներին է հարմար: Դու լավ կանես՝ բազկաթողը մոտ քերես...

Արմենը, հասկանալով, որ այլ ելք չունի՝ կատարում է էմմայի հրահանգը:

ԷՄՄԱ - (Արմենին): Օգնիր, բայց տակտով... (Միացյալ ուժերով նստում է: Ակնարկելով ձեռնափայտը:) Էս էլ անկյուն կանգնեցրու: (Հետևելով, թե Արմենը ինչպես է կատարում նաև այս հրահանգը:) Արմենի թոռն ես:

ԱՐՄԵՆ - (իբր՝ զինվորավարի): Ճի՞շտ այդպես:

ԷՄՄԱ - (շեղ նայելով Անահիտին): Դո՞ւ...

ԱՐՄԵՆ - Վաղեմի բարեկամը:

ԷՄՄԱ - Համարյա ինձ պես... (Ի պատասխան Անահիտի համր հարցի:) Ես բարեկամուհին եմ: Վաղեմի:

ԱՐՄԵՆ - Պապի վաղեմի բարեկամուհիների թիվը էս ինչ տեմպերով է աճ տալիս:

ԱՆԱՀԻՏ - (նրա կծու ակնարկն ուղղված է էմմային): Ձեր զարմանքը տեղին չէ, որովհետև մեր տարիքում աճն իրոք ավելանում է:

ԷՄՄԱ - (Անահիտին): Զո անունից խոսի:

ԱՆԱՀԻՏ - Չէի ասի, որ գոնե հիսուն տարեկան եք:

ԷՄՄԱ - 67:

ԱՐՄԵՆ - Հաստամտ...

ԷՄՄԱ - Հաստատ՝ ի՞նչ...

ԱՐՄԵՆ - Երբեք չես ասի: (Շեղ հա-

յացք նետելով Անահիտին:)
Շատ-շատ՝ հիսուն:

ԷՄՄԱ - (*ակնհայտ շոյված*): Պապիդ թոռն ես:

ԱՐՄԵՆ - Մի երկու տարի էլ չպակասեցրիք:

ԷՄՄԱ - (*արժանապատիվ լրջութեամբ*): Երբեք տարիքս չեմ թաքցրել: (*Մատն ուղղելով դեպի Անահիտը:*) Իսկ նա ճիշտը չի ասի: (*Ակնարկելով սեղանի տուփերը:*) Ինչ կուրիկ-ոուրիկ է:

ԱՐՄԵՆ - (*տուփերը հավաքում, դնում է մի կողմ*): Փաստորեն, սրանք ձեր հին ծանոթները չեն:

ԱՆԱՇԻՏ - (*ակամա պաթոսով*): Դա ամեն մեկին հասու չէ:

ԱՐՄԵՆ - Բայց դուք լավ գրականության ուսուցիչ կլինեիք:

ԷՄՄԱ - (*Անահիտին*): Թող էդ մի բանն էլ հասու չլինի, փոխարենը ուրիշ բան գիտեմ:

ԱՆԱՇԻՏ - Բայց ո՞ւմ է հետաքրքիր՝ ինչ գիտեք:

ԷՄՄԱ - Հետաքրքիր չլինե՞ր՝ մեր խոսակցությանը չէիք խառնվի...

ԱՐՄԵՆ - Տիկնայք, բրե՛կ:

ԱՆԱՇԻՏ - Ինչ...

ԷՄՄԱ - (*քամահրանքով*): Չգիտե՞ս, բրե՛կն ինչ է: (*Ցույց է տալիս*): Մեկ-մեկ բոքս նայիր...

ԱՆԱՇԻՏ - (*ոչ պակաս քամահրանքով*): Առանց բոքս նայելու էլ գիտեմ, դրա համար եմ հարցնում՝ ինչ տոնով է ինձ հետ խոսում:

ԷՄՄԱ - (*անցնելով Անահիտի կողմ*

մը՝ Արմենին): Ճիշտ է ասում, սա՞ ինչ տոն է... (*Անահիտին*.) Անո՞նդ...

ԱՆԱՇԻՏ - Անունս ձեզ ոչինչ չի ասի:

ԱՐՄԵՆ - Նա արդեն գնում է: (*Անահիտին*.) Գնում եք, չէ՞...

ԷՄՄԱ - Ո՞ր է գնում... չիմանանք՝ ով է, ինչի էր եկել...

ԱՆԱՇԻՏ - (*զայրացած*): Դե, գիտեք... բառեր չեմ գտնում...

ԷՄՄԱ - Բառեր պետք չեն, անունդ ասա:

ԱՐՄԵՆ - (*Էմմային*): Անունը որ ասեմ, դուք էլ կգնաք:

ԷՄՄԱ - Դեռ կարգին չեմ եկել, որ արդեն գնամ: (*Անահիտին*.) Ես էմման եմ, դու... դուք...

ԱՆԱՇԻՏ - (*ստիպված*): Անահիտ:

ԷՄՄԱ - (*սևեռուն նայում է, դադարից հետո, փոխված ձայնով*): Ճարտարապետը...

ԱՐՄԵՆ - Ի՞նչ...

ԷՄՄԱ - (*Արմենին*): Մեջ մի ընկնի: (*Անահիտին՝ զննելով*): Ուրեմն՝ դու ես:

ԱՆԱՇԻՏ - (*կասկածով*): Մենք ծանոթ ենք...

ԷՄՄԱ - (*դեռ զննելով նրան*): Արմենն է պատմել քո... ձեր մասին:

ԱՆԱՇԻՏ - Ինչ...

ԷՄՄԱ - (*անթաքույց հաճույքով*): Կապույտ քարփինջ:

ԱՐՄԵՆ - (*իր ներկայությունը հիշեցնելու մղումով*): Ըր... տիկին էմմա...

ԷՄՄԱ - (նրան հայացքի չարժանացնելով): Ջահել, ո՛չ մի տիկին, ու քանի որ Էմուլիկ էլ չես կարող ասել, ուրեմն՝ սուս մնա: Բայց նրան (ակնարկելով Անահիտին) անպայման տիկին կասես:

ԱՆԱՀԻՏ - (պայուսակը վերցնելով): Իմ գնալու ժամանակն է:

Շփոթահար՝ գնում է խոհանոց, Արմենը հետևում է նրան: Էմման հանում է գլխարկը, ջահելավարի քափ տալիս մագերն ու գլխարկը ծնկներին՝ համբերատար սպասում է: Հայտնվում են՝ Անահիտի ձեռքում ջրով լի բաժակ է, Արմենը պահել է նրա պայուսակը:

ԱՆԱՀԻՏ - Որտեղ է ձեր դուռը...

ԷՄՄԱ - (որ անվրդով հետևում է նրանց): Բաժակը թող, հետո գնա: (Ի պատասխան Անահիտի հարցական հայացքին:) Ջուրը խմիր, բաժակը դիր սեղանին...

Անահիտը հիպնոսավաժի պես կատարում է նրա հրահանգները. ջուրը խմելուց ու բաժակը սեղանին դնելուց հետո սպասում է հաջորդ հրահանգին:

ԷՄՄԱ - (նույն տոնով): Դե, հիմա նստիր ու չհամարձակվես գնալ առանց նրան տեսնելու:

ԱՐՄԵՆ - (որ այդ ընթացքում փորձում էր Անահիտին ուղղորդել դեպի դուռը՝ հուսահատ): Էմմա՛...

ԷՄՄԱ - Հա՛:

ԱՐՄԵՆ - Էմուլիկ...

ԷՄՄԱ - Ջանիկ: Բայց դա չի նշանակում, որ նրան էստեղից քշելու ես: Թե չէ տեղիցս որ ելնեմ... (Իբր ուզում է ոտքի կանգնել:)

ԱՐՄԵՆ - Հասկացա: (Անահիտին.) Լավ, մի երկու րոպե նստեք... Էմմա, նստեց, հիմա՛ ինչ անեմ:

ԷՄՄԱ - Ինչ որ մինչև հիմա մտքովդ չի անցել: (Դադար:) Սուրճ: Դառը:

ԱՐՄԵՆ - (համակերպված շեշտով՝ Անահիտին): Ձեզ է՛լ...

ԱՆԱՀԻՏ - Ես չեմ խմում, ուրիշներին էլ խորհուրդ չեմ տալիս: Մեր տարիքում...

ԷՄՄԱ - Չասի՛, իմ տարիքի հետ գործ չունես:

ԱՐՄԵՆ - (Էմմային): Սուրճը երեք րոպեից պատրաստ կլինի, բայց... որտեղի՞ց գիտեք Անահիտին:

ԱՆԱՀԻՏ - Տիկին Անահիտին:

ԷՄՄԱ - (Արմենին՝ կծու): Տիկինը նրա համար կոչումի պես բան է:

ԱՆԱՀԻՏ - (նույն տոնով): Բա չէ՛՝ Էմուլիկ...

ԱՐՄԵՆ - Աղջիկներ ու տիկնայք, բրէկ: (Էմմային.) Սպասում եմ...

ԷՄՄԱ - (դադարից հետո): Ջահել, նա քո պապի մեծ սերն է եղել:

Համր տեսարան:

ԱՐՄԵՆ - (մեկուսի): Պապ... պանպ... պանպ...

ԱՆԱՀԻՏ - (դառնություն): Դրա

համար է կանչել ու ինքը գնացել է:

ԷՄՄԱ - Ասինք՝ սերն ես եղել, չասինք՝ հիմա էլ կաս:

ԱՐՄԵՆ - (*ուշքի գալով*): Էմուլիկ, որտեղից գիտեք:

ԷՄՄԱ - Երկար պատմություն է:

ԱՆԱՀԻՏ - (*Արմենին*): Ինչը նշանակում է, որ պատասխան չեք ստանա:

ԷՄՄԱ - (*հրք՝ ինքն իրեն*): Բայց քեզ ավելի լավիկն էի պատկերացնում:

Արմենը փոքկացնում է ու ծիծաղը ցույց չտալու համար այն քողարկում է կեղծ հագով, ինչն ավելի է շեշտում իրավիճակի հեզմանքը:

ԱՆԱՀԻՏ - (*անուժ զայրույթով՝ Էմմային*): Դե, գիտեք... չգիտեմ՝ ով եք, ինչ եք ձեզ թույլ տալիս...

ԱՐՄԵՆ - Բայց ձիշտ է ասում... Էմմա, դո՞ք ով եք:

ԷՄՄԱ - Ջահել, էլի՛ ասեմ...

ԱՐՄԵՆ - Հասկացա: Ես՝ խոհանոց:

ԱՆԱՀԻՏ - Իսկ ես՝ տուն:

ԷՄՄԱ - Ուզում ես ասել, որ չես ուզում նրան հանդիպել: Գոնե համոզվելու համար, որ ինքն էլ առաջվանը չէ: Հաստատ փոխված կլինի, կնձիռներ, սպիտակ մազեր... Զեզ պես չի կարող ներկել, եթե, իհարկե, էն խիտ մազերից մի բան մնացել է...

ԱՐՄԵՆ - (*վիրավորված*): Ինչքան

պետք է՝ էնքան մնացել է... (*Ու նոր միայն հիշելով՝ մռայլվում է:*)

ԷՄՄԱ - Ապրես, ջահել, պապիդ պատվին կանգնեցիր, բայց դե, մինչև չգա ու ինքներս չիմանանք...

ԱՐՄԵՆ - Իմանա՞ք... Դուք եք ուզում իմանա՞լ: (*Դաժանացած:*) Պապս...

Դռան զանգ:

ԱՐՄԵՆ - Ջանգերն էսօր շատ չեղան...

ԷՄՄԱ - Թե որ պապդ է՝ քիչ է ու շատ չէ: Դուռը բաց:

ԱՆԱՀԻՏ - Եվ առանց նրան չվերադառնաս: (*Ի պատասխան Էմմայի զարմացած-հեզմանական հայացքին:*) Հենց այնպես եմ ասում, համոզված եմ, որ ինքը չէ:

ԷՄՄԱ - Ջահել, ինչի՞ ես սպասում, գնա:

ԱՐՄԵՆ - (*գնալով*): Եթե իմանաք՝ ինձ ուր եք ուղարկում...

ԷՄՄԱ - Պապիդ մոտ: Անահիտ, մազերդ ուղղիր:

Անահիտը սկսում է սանրվածքն ուղղել, բայց ցկատելով Էմմայի սատանայական ժպիտը՝ ձեռքերն իջեցնում, քարանում է տեղում, դեմքին անթափանց արտահայտություն տալով:

Արմենը գալիս է Հասմիկի հետ:

ԱՆԱՀԻՏ - (*հիասթափությունը թաքցնելու համար՝ համարյա ուրախ*): Որ ասում էի՞...

ԷՄՄԱ - Բայց ինչի՞ն էդպես ուրախ:
ԱՆԱՀԻՏ - Ոչ թե ուրախ, այլ հաղթական:
ԷՄՄԱ - Գլխի չես, որ էդ տեսակ հաղթականը հարյուր պարտվել է: Ասենք, ո՞ւմ եմ ասում, էդքան բանը որ հասկանայիր, 20 տարի առաջ...
ԱՆԱՀԻՏ - Լռեք: Էլ ոչ մի բառ...
ԱՐՄԵՆ - (որ այդ ընթացքում *Հասմիկի հետ կանգնած լսում էր*): Հասկանո՞ւմ եք, նրանք այդպես են քննարկում:
ՀԱՍՄԻԿ - (վեհերոտ): Բարև ձեզ:
ԱՆԱՀԻՏ - (դեռ իր ապրումների մեջ): Բարև:
ԷՄՄԱ - (գննելով նրան): Հազար բարի: (Արմենին.) Ընկերուհի՞դ է:
ԱՐՄԵՆ - (համենայնդեպս մեկ անգամ էլ նայելով Հասմիկին): Չէ:
ԷՄՄԱ - (Հասմիկին): Մնում է ասես, որ եկել ես Արմենի ծնունդին:
ՀԱՍՄԻԿ - (նեղ զգալով նրանց ուշադիր հայացքներից, հազիվ լսելի): Հա:
ԷՄՄԱ - Ի՞նչ, բարձր ասա:
ՀԱՍՄԻԿ - Այո:
ԷՄՄԱ - Ի՞նչը՞ այո:
ԱՆԱՀԻՏ - (կամաց): Եկել է Արմենի ծնունդին:
ՀԱՍՄԻԿ - (Անահիտին): Ես չե՞ տառա:

Համր տեսարան:

ԷՄՄԱ - (կծու-քաղցր): Ջահել, տատին դռան հետևո՞ւմ ես թողել:

ԱՐՄԵՆ - Գժի տե՞ղ եք դրել: Ինքը մենակ էր: (*Հասմիկին.*) Խոսիր, է...
ՀԱՍՄԻԿ - (Արմենին): Չիրամայես, հա՛... (*Էմմային.*) Տատիս փոխարեն եմ եկել:
ԷՄՄԱ - Տատդ ո՞վ է, աչոն ջան:
ՀԱՍՄԻԿ - Հասմիկը:
ԱՆԱՀԻՏ - Իսկ դո՞ւք...
ՀԱՍՄԻԿ - Ես էլ եմ Հասմիկ:
ԱՐՄԵՆ - Ոնց որ սերիալ լինի, հորս արև... ես՝ պապիս անունով, դու՝ տատիդ...
ՀԱՍՄԻԿ - Եթե պապիդ անունից դժգոհ ես, դա քո պրոբլեմն է, ես շատ էլ գոհ եմ: Բա որ անունս Հոռոմսիմ լինե՞ր...
ԷՄՄԱ - Չէր կարող: Արմենը Հոռոմսիմի հետ... (*Մտքում համենայնդեպս տալ-առնելուց հետո:*) Անհնար է:
ԱՐՄԵՆ - Ի՞նչ գիտես:
ԷՄՄԱ - Լսիր, ջահել, դու անընդհատ փորձում ես քիթը խոթել՝ ուր պետք չէ: Էդ, իբր թե միամիտ հարցերդ առ ու՝ խոհանոց:
ԱՐՄԵՆ - Մո՞րձ...
ԷՄՄԱ - Թեկու՞զ:
ԱՆԱՀԻՏ - Գուցե Հասմիկին էլ խոհանոց ուղարկեք:
ԷՄՄԱ - Հասմիկը կմնա էստեղ: (*Արմենին.*) Խոհանոց:
ԱՐՄԵՆ - (*Հասմիկին*): Քիչ առաջ կարծում էի, որ իմ պրոբլեմը Սուրոն է: (*Գնում է խոհանոց:*)
ՀԱՍՄԻԿ - (*հենց Արմենը մտնում է*

խոհանոց, նրա հասցեին): Ներվերը բանի պետք չեն:

ԱՆԱՇԻՏ - Հոգեբան էք:

ՀԱՍՄԻԿ - Բալետի պարուհի: Դուք գրականության ուսուցչուհի էք:

ԱՆԱՇԻՏ - Ճարտարապետ: *(Ժպտում են թեթև համակրանքով):*

ԷՄՄԱ - *(որ խանդով հետևում է նրանց)*: Տատդ իր գալը շատ համարեց:

ՀԱՍՄԻԿ - *(ընդվզումով)*: Տատս չորս տարի է՝ հիվանդ է:

ԱՆԱՇԻՏ - Ներեցեք, Էմման ու տակտը իրար չեն ձանաչում:

ԷՄՄԱ - *(Անահիտին՝ երկիմաստ)*: Ժամանակին լավ էլ ձանաչել ենք, հետո բաժանվեցինք... ու մանց նման: *(Ցուցադրական շրջվելով Հասմիկի կողմը, հազար տարվա մտերմությամբ)*: Տատդ ինչ հիվանդ է:

ԱՆԱՇԻՏ - *(Էմմային՝ կանխելով Հասմիկի պատասխանը)*: Ձեր ինչ գործն է... *(Հասմիկին.)* Ձեր տատն ինչ կապ ունի Արմենի հետ:

ԳԱՅԱՆԵ - *(հերթով գննելով նրանց, հանգիստ)*: Ձեզնից ո՞վ է Արմեն պապի կինը... *(Նրանք լուռ են)*: Դուք ո՞վ եք, որ ձեր հարցերին պատասխանեմ...

ԱՆԱՇԻՏ - Տրամաբանական է: Հարցս հետ եմ վերցնում:

ԷՄՄԱ - Մտքովս էլ չի անցնում: Երեքս էլ եկել ենք Արմենի ծնունդին... *(Հասմիկին.)* Տատիդ

նկատի ունեմ, դու սուս մնա... Ու երեքս էլ անորոշ լուվել-մնացել ենք էս ծակուռում, մինչև կամ ինքը հայտնվի, կամ իմ պատվիրած տաքսին վերադառնա: *(Հասմիկին.)* Հիմա քեզ նկատի ունեմ, որովհետև էստեղից ոչ թե տատդ պիտի քաղաք հասնի, այլ դու:

ՀԱՍՄԻԿ - Իսկ դո՞ւք ով եք:

ԱՆԱՇԻՏ - *(Հասմիկին)*: Կարևոր չէ:

ԷՄՄԱ - *(Հասմիկին)*: Բո գործը չէ:

Անահիտն ու Էմման իրար են նայում ու դժգոհ՝ հայացքները շրջում են:

ՀԱՍՄԻԿ - *(նստում, ծխախոտ է վառում)*: Գոնե ասեք՝ ուր է հոբելյարը:

ԱՆԱՇԻՏ - Կասեինք, եթե...

ԷՄՄԱ - Եթե իմանալիք:

ՀԱՍՄԻԿ - Տասը րոպե կսպասեմ ու՛ by:

ԷՄՄԱ - *(Անահիտին)*: Սովորի ջահելից, թե չէ մենք՝ գնալու միտք չունենք:

ԱՐՄԵՆ - *(ներս գալով)*: Սուրճը թափվեց: Լավ նշան է, այսինքն՝ գնալու ժամանակն է:

ՀԱՍՄԻԿ - *(ծուխը օղակ-օղակ դուրս փչելով)*: Չէի ասի, որ հյուրասեր մեռնում ես:

ԱՐՄԵՆ - Ես եմ հրավիրել... *(Ցուցադրական նայում է ժամացույցին)*: Ժամանակ չունեմ...

ԷՄՄԱ - *(Հասմիկին)*: Էդ օղակները էդպես էլ չկարողացա... *(Արմե-*

նին՝ խիստ:) Զեզ հյուր չենք եկել, հանգիստ կարող ես գնալ քո ժամանակի հետևից:

ԱՐՄԵՆ - Երևի թե սկզբից պիտի ասեի՝ պապը չի գալու:

ԷՄՄԱ - Հողացավս առած էստեղ եմ հասել, որ գնամ: Ես կսպասեմ, մինչև ինքը գա, երբ էլ որ գա, ու կասեմ՝ ինչ մտածում եմ էս ամենի մասին: Ճիշտ չեմ ասում, Անահիտ:

ԱՆԱՀԻՏ - Անտարակոյս... (Խեթ նայելով Արմենին:) Ես էլ պիտի սպասեմ ասելու՝ ինչ մտածում եմ...

ԳԱՅԱՆԵ - Միտքս փոխեցի, մնում եմ՝ հետաքրքիր կինո է լինելու:

ԱՐՄԵՆ - (պայթում է): Դե հերիք եղավ... Պապս չկա: Մահացել է: Տասնչորս օր է՝ մահացել է... (Գնում է դեպի պատուհանն ու դուրս է նայում:)

Համր տեսարան: Անահիտը ձեռքը տանում է կոկորդին, ասես խեղդվում է: Էմման գլխարկը դնում է գլխին, հետո հանում է, զարմացած նայում է վրան՝ սա ի՞նչ էր, ու շարտում է հատակին: Հասմիկը վախվորած հայացքն ուղղում է մեկից մյուսին:

ԱՆԱՀԻՏ - (խուլ): Մահացել է...

ԷՄՄԱ - Սա նրա ամենաանհաջող կատակն էր... (Դադարից հետո, Արմենին:) Զուր բեր: (Տեսնելով, որ Արմենն անհաղորդ է, ձայնը

բարձրացնում է:) Զուր բեր, հիմա կվատանա:

Արմենը տեղից չի շարժվում:

ՀԱՍՄԻԿ - Ես կբերեմ: (Վազում է խոհանոց:)

Հասմիկը բերում, բաժակը տեղավորում է Անահիտի փայտացած ձեռքերի մեջ, հետո տեսնելով, նա անկարող է՝ ինքն է խմեցնում: Մի կումից հետո Անահիտը վազում է Հասմիկին ու բաժակը ձեռքերի մեջ՝ քարանում: Դեմքը դիմակ է հիշեցնում:

ՀԱՍՄԻԿ - (անօգնական): Բայց դա... արքունի է...

ԷՄՄԱ - Աբսուրդից կյանք՝ մի վայրկյան է:

ԱՆԱՀԻՏ - (մեկուսի): Զանգեց՝ թե դուրս արի: Նոր էի տուն մտել, բայց պայուսակս վերցրի ու դուրս նետվեցի: Սպասում էր մեքենայի մոտ... Դուռը բացեց, նստեցի, իջանք Հրազդանի ձոր... Չէր խոսում, ես էլ լուռ էի... Հասանք...

ԱՐՄԵՆ - (չորջվելով): Մանկական երկաթուղի:

ԷՄՄԱ - (Հասմիկին): Բա՛...

ԱՆԱՀԻՏ - (ասես չի լսել): Գնացք նստեցինք, հինգ անգամ գնացինք ու եկանք: Մարդ չկար, երկուսս էինք: Հետո ասաց, որ ծննդյան օրն է... (Ուշացած զարմանքով՝ Արմենին:) Ինչպե՞ս իմացաք...

ԱՐՄԵՆ - Կարծում եք, մանկական երկաթուղին միայն ձեզ համար է:

ԷՄՄԱ - Էլի ծննդյան օրը...

ԱՐՄԵՆ - Չէ... Դատը շահել էր, բայց տուն եկավ մթնած, դեմքը ոնց որ սևացած լիներ... Կաթինետում քայլում էր էս պատից էն պատը... Հետո դուրս եկավ, հայացքով ինձ ասաց՝ գնացինք: Իջանք ձոր: Գնացքով գնացինք ու եկանք... Ծխում էր... ասաց՝ «Հիմա այդ սրիկան տոնում է իր հաղթանակը»: Փողատեր մեկին էր պաշտպանել...

ԷՄՄԱ - Մանկական երկաթուղու մասին հիշել է ուրախ ու տխուր ժամանակ... *(Արմենին.)* Խմիչք կա՞մ:

ԱՐՄԵՆ - *(մտքերի մեջ, մեխանիկորեն):* Պիտի լինի:

ՀԱՍՄԻԿ - Խմիչքն ինչ եք անելու:

ԷՄՄԱ - Հոգու հանգստության համար չխմենք:

Անահիտը փղձկում է, Արմենը շրջվում, նայում է սակված կանանց, կրկին շրջվում է դեպի պատուհանը:

ՀԱՍՄԻԿ - Ինչ մարդ էր... Երբ բացիկը ստացանք, որոշեցի գալ:

ԱՆԱՀԻՏ - Ինչո՞ւ:

ՀԱՍՄԻԿ - Տառս մինչև հիմա հիշում է նրան: Արմենին ու նապուլեոնը:

ԷՄՄԱ - Նապուլեոնին որտեղից է հիշում:

ՀԱՍՄԻԿ - *(անվրդով):* Խոսքը թխվածքի մասին է:

ԷՄՄԱ - Թխվածքը հասկացանք, Արմենին ինչի է հիշում:

ՀԱՍՄԻԿ - Տատիս առաջին անգամ համբուրել է Արմենը:

ԱՐՄԵՆ - *(դիրքը չփոխելով):* Պատկերացնում եմ՝ ոնց է համբուրել...

ՀԱՍՄԻԿ - *(ասես չլսելով, բայց վրեժխնդիր շեշտով):* Արմենն էլ առաջին անգամ տատիս է համբուրել:

ԷՄՄԱ - *(Անահիտին):* Չգո՞ւմ ես, ինչ կամպանիա է հավաքվել:

ԱՆԱՀԻՏ - Նաև տեսնում եմ:

ԷՄՄԱ - Արմեն Արմենյանի ակումբի անդամներն ենք:

ԱՐՄԵՆ - Ես ամեն ինչ լսում եմ:

ՀԱՍՄԻԿ - Հետո՞ ինչ...

ԱՐՄԵՆ - Հետո՞... *(Շրջվում, նայում է նրանց):* Գուցե ձեր զրույցը մի ուրիշ տեղ շարունակեիք: Վերջապես մեռած մարդու մասին եք խոսում...

ԱՆԱՀԻՏ - Ներեցեք, մենք...

ԷՄՄԱ - *(Անահիտին):* Լռիր, հա՛, քո ներողություններով արդեն հոգնեցրիր... *(Արմենին.)* Զեզ հասկանում եմ:

ԱՐՄԵՆ - Կասկածում եմ:

ԷՄՄԱ - Մահը քեզնից շատ հեռու է, դրա համար էլ էդպես վախով ու հարգանքով ես խոսում նրա մասին: Բայց արդեն իմ կողքին է, ձեռքս մեկնեմ, մեկ էլ տեսար՝ բռնեցի...

ՀԱՍՄԻԿ - Դրա համար էլ չեմ վախենում...

ԱՆԱՀԻՏ - Վախենում է, բայց հարգանք չկա:

ԷՄՄԱ - Վերջապես խելքը գլխին մի բան լսեցի քեզից:

ԱՐՄԵՆ - *(զանգում է հեռախոսը, սեղանից վերցնում, նայում է էկրանին, մոայլվում, անջատում է):* Դու էիր պակաս... *(Նորից զանգ: Հեռախոսն անջատում, շարտում է բազմոցին):* Էմմա, պապս ինչ մարդ էր:

ԷՄՄԱ - Մարդ էր:

ՀԱՍՄԻԿ - *(իբր՝ քթի տակ):* Հորացիո՛... Մարդ էր նա:

ԱՆԱՀԻՏ - *(Հասմիկին՝ կամաց):* Եթե «Համլետը» կարդացել ես, ուրեմն պիտի կարողանաս լռել:

ՀԱՍՄԻԿ - Ֆիլմն եմ նայել, բայց ձենս կկտրեմ:

ԷՄՄԱ - *(ասես նրանց չլսելով):* Ամբողջ կյանքս առևտրի մեջ եմ եղել: Սովետի ժամանակ մինչև խանութի վարիչի աթոռին հասա, հետո, կապիտալիզմին որ անցանք՝ խանութը սեփականաշնորհեցի... մինչև կոտորն ընկա:

ՀԱՍՄԻԿ - Ուր ընկա՞ք:

ԷՄՄԱ - «Համլետ»-ում էր բառը չկա՞:

ԱՆԱՀԻՏ - Սնանկացավ:

ՀԱՍՄԻԿ - *(հարգանքով նայելով Էմմային):* Զցել են:

ԱՐՄԵՆ - Ի՞նչ արեց պապս:

ԷՄՄԱ - Փրկեց: Ումից էր իմացել,

էդպես էլ չասաց... *(Փորձում է հուզմունքը զսպել):* Կաթինետում փակվել, չգիտեմ՝ կախվեմ, թե՞ բանկ թալանեմ, մեկ էլ դռան հետևից լսում եմ. «Էմմուլիկ»... *(Դադարից հետո, հայացքով ցույց տալով տոպրակը):* Հասմիկ, մոտ բեր:

Հասմիկը քարշ տալով նրան է մտնեցնում տոպրակը: Էմման տոպրակում ինչ-որ բան է փնտրում:

ՀԱՍՄԻԿ - Եթե չգար, կախվելու էիք, թե՛...

ԱՐՄԵՆ - *(Հասմիկին):* Լեզուդ քեզ պահիր...

ՀԱՍՄԻԿ - *(դանդաղ, կոնքերը ծոծելով մոտենալով Արմենին):* Թե չէ՞ ինչ կանես:

ԱՐՄԵՆ - Որ շարունակես՝ կիմանա:

ԱՆԱՀԻՏ - Էրեխեք, բրէկ... *(Արմենն ու Հասմիկը զարմացած նայում են նրան):* Ի՞նչ եք այդպես նայում...

ԷՄՄԱ - *(տոպրակի միջից):* Ավելի լավ է քեզ նայեն, քան իրար ուտեն... *(Հանում է թանկարժեք կոնյակի շիշը):* Չէ, ավելի լավ է՝ բաժակները բերեն:

Արմենն ու Հասմիկը, իրար չնայելով, բայց միաժամանակ գնում են խոհանոց:

ԱՆԱՀԻՏ - *(դժվարությամբ է հարցը*

տալիս): Ինքն է պատմել իմ... մեր մասին:

ԷՄՄԱ - Էլ ո՞վ:

ԱՆԱՇԻՏ - (*ավելի կամաց*): Ե՛րբ...

ԷՄՄԱ - Բարձր ասա, չեմ լսում:

ԱՆԱՇԻՏ - Զիչ առաջ լսում էիր:

ԷՄՄԱ - Հիմա չեմ լսում:

ԱՆԱՇԻՏ - (*խոհանոցի կողմը նայելով, քիչ բարձր*): Ե՛րբ է ասել:

ԷՄՄԱ - Էդ դեպքից հետո...

Գալիս են Արմենն ու Հասմիկը՝ երկուական բաժակ ձեռքներին:

ԷՄՄԱ - (*առարկություն չհանդուրժող տոնով*): Զահելներ, խոհանոց, ու մինչև չկանչեմ՝ չերևաք:

ՀԱՍՄԻԿ - (*Արմենին՝ չնայելով նրա կողմը*): Տանտերն ո՞վ է:

ԱՐՄԵՆ - Ով ասես՝ ըստ սիտուացիայի: Գնացինք:

ՀԱՍՄԻԿ - Ուրիշ ի՞նչ կարող ենք անել էս սիտուացիայում: Գնացինք:

Իրար չնայելով գնում են խոհանոց:

ԱՆԱՇԻՏ - (*նայելով նրանց հետևից*): Լավն են, չէ՛:

ԷՄՄԱ - Մի շեղվիր, նրանց քշեցի, որ հարցիդ պատասխանեմ:

ԱՆԱՇԻՏ - Ներիր...

ԷՄՄԱ - Օրը քանի՞ անգամ ես ներողություն խնդրում: Հարցս հռետորական էր, կարող ես չպատասխանել: (*Դադարից հետո*): Էդ դեպքից հետո մի օր տուն

հրավիրեցի, բա ընտանիքս չիմանա՞ր, թե ով է իր փրկիչը:

ԱՆԱՇԻՏ - Ներիր, որ ընդհատում եմ... Ինչպե՞ս փրկեց:

ԷՄՄԱ - Փող չտվեց, եթե դա նկատի ունես: Մեծ շրջապատ ունե՛ր՝ գողն ու իշխանավորը մեկտեղած: Մի շեղիր... Լավ քե՛ֆ արեցինք, հետո, ուշ գիշեր էր, միասին դուրս եկանք: (*Կանխելով Անահիտի հայացքը*): Ընդամենը ուղեկցելու: Էդ ժամանակ էլ սիրտը բացեց...

ԱՆԱՇԻՏ - (*խայթող*): Եվ ո՞ւմ առաջ սիրտը բացեց...

ԷՄՄԱ - Չհասկացա՞մ...

ԱՆԱՇԻՏ - Դու է՛լ նրա մեծ սերն ես եղել:

ԷՄՄԱ - Ավելին եմ եղել:

ԱՆԱՇԻՏ - Դա ո՞րն է...

ԷՄՄԱ - Ստիպում ես, որ ասեմ... դե... առաջին կինը ես եմ եղել: Իրար չխառնվես, էդ ժամանակ ամուսնացած չէի: (*Շտապով, բարձրաձայն*): Զահելներ, մուտքն ազատ է:

Ներս են մտնում Հասմիկն ու Արմենը:

ՀԱՍՄԻԿ - Ասեմ, որ սառնարանը դատարկ է:

ԱՐՄԵՆ - Պապից հետո տունն է դատարկ: (*Առիթը բաց չթողնելով*): Հյուրի սպասող չկա:

ԷՄՄԱ - Դո՞ւ ինչ ես անում դատարկ տանը:

ԱՐՄԵՆ - Պիտի ասեմ...

ԷՄՄԱ - Որ չասիր՝ հարցը փակվեց:
Պայուսակում լիմոն կա, ամեն ինչ էլ կա, գործի անցեք:

ԱՆԱՀԻՏ - Պատրաստված եք եկել:

ԷՄՄԱ - Ես միշտ էլ պատրաստված եմ: Ի տարբերություն շատ շատերի...

Անահիտը չլսելու է տալիս, Արմենը ձեռքերը գրպանը՝ մի կողմ է քաշվում լուռ դիտորդի դերում: Էմման հայացքով կառավարում է Հասմիկին՝ ինչը ուր դնել: Լսվում է Անահիտի ոչ այն է՝ ծիծաղը, ոչ այն է՝ լացը:

ԷՄՄԱ - Ինչ պատահեց:

ԱՆԱՀԻՏ - Ինչ ենք անում այստեղ... հասկանում եք, նա չկա, նրան չենք տեսնելու... Իսկ ես սպասում էի... Ու հիմա պիտի խմենք... Ծնունդի ու հոգու համար: (Արմենին.) Ինչո՞ւ միանգամից չասացիք:

ԷՄՄԱ - Ջահելը ձիշտ է արել: Վերջին հրաժեշտը չենք տվել, բայց կարող ենք էս օրով իր կենացը խմել... հոգու հանգստության համար էլ պիտի խմենք:

ԱՆԱՀԻՏ - (Արմենին): Չգիտեմ՝ դրա իրավունքն ունենք, թե ոչ... ինչպես կասեք...

ԱՐՄԵՆ - Պապս մի բան գիտեր, որ հրավիրել էր... Սեղանն էլ պատրաստ է:

ԷՄՄԱ - (նմանակելով): Սեղանն էլ պատրաստ է... Էմման որ չլիներ... Արի, օգնիր: (Արմենի օգնությամբ նստում է սեղանի մոտ:) Էրեխեք, նստեք, Անահիտ, քեզ ենք սպասում...

Անահիտը գալիս, միանում է նստածներին: Մի պահ լուռ են, հետո Արմենը կոնյակ է լցնում բաժակներն ու միայն դրանից հետո բարձրացնում հայացքը՝ երեք կանայք սպասողական նայում են նրան:

ԱՐՄԵՆ - (տեղից բարձրանալով): Մեզնից ամեն մեկի Արմեն Արմենյանի կենացը: (Խմում, նստում է:)

ԷՄՄԱ - (լիմոնը խցկելով Արմենի բերանը): Կենաց ասել գիտես՝ կարճ ու բովանդակային: (Դադարից հետո:) Միակ տղամարդն էր, որ կարողացավ մարդ մնալ իմ կյանքում: (Խմում է:)

ԱՐՄԵՆ - Դուք էլ պակաս կենաց ասողը չեք:

ՀԱՍՄԻԿ - (Էմմային): Ծատ կարևոր բան ասացիք, թեև լրիվ չհասկացա: (Արմենին.) Եթե Էմմայի պես կինն է էդպես ասում, ուրեմն՝ պապիդ կենացը: (Բաժակը թափով տանում է դեպի բերանը:)

ԷՄՄԱ - (Հասմիկի ձեռքից վերցնելով մի քիչ խմված բաժակը): Չափով... (Անահիտին.) Զո հերթն է:

Անահիտը մինչև վերջ խմում է,

հետ վանում Արմենի մեկնած լի-
մոնի կտորը, գլուխն առնում է
ձեռքերի մեջ:

ԱՐՄԵՆ - *(Անահիտին):* Ինչո՞ւ
չամուսնացաք: *(Հասմիկը
փոթկացնում է:)* Բե՞զ ինչ եղավ:

ՀԱՍՄԻԿ - Տատդ լսեր... Պատկե-
րացնում եմ՝ ինչ է քաշել խեղճը
նրանց ձեռք...

ԱՐՄԵՆ - Ձենդ կտրիր, գոնե տա-
տիդ փոխարեն:

ՀԱՍՄԻԿ - Տատս՝ ի՞նչ... 16 տարե-
կանում անմեղ համբուրվել է, էս-
քան բան:

ԱՆԱՀԻՏ - *(իր մտքերի հետ):* Դրա
համար էլ հիշում է...

ՀԱՍՄԻԿ - Իսկ դուք էդպես վախե-
ցած էլ պիտի ապրեք:

ԷՄՄԱ - Աչոն ջան, դատելու համար
մի քիչ պիտի մեծանաս:

ԱՆԱՀԻՏ - Թող խոսի, իր ասելով
պիտի իմանամ՝ ինչպես եմ ապ-
րել իմ... մեր կյանքը:

ԱՐՄԵՆ - Տատս գիտեր:

ԱՆԱՀԻՏ - Մենք ոչ մեկին ցավ չենք
պատճառել:

ԷՄՄԱ - Մարդդ գիտեր:

ԱՆԱՀԻՏ - Ոչ... անհնար է...

ԷՄՄԱ - *(Արմենին):* Տատդ էլ կուրսի
մեջ էր:

ԱՆԱՀԻՏ - Որտեղի՞ց գիտեք:

ԷՄՄԱ - Արմենն է ասել:

ԱՐՄԵՆ - Չեմ զարմանում, որ ձեզ է
ասել:

ԱՆԱՀԻՏ - Էլ ի՞նչ է ասել:

ԷՄՄԱ - Դու ես որոշել, որ վերջաց-
նեք այդ պատմությունը:

ՀԱՍՄԻԿ - Բա չէիք ափսոսում:

ԱՆԱՀԻՏ - Արդեն չգիտեմ... Բայց
չեմ զղջում:

ԱՐՄԵՆ - Իսկ տատս... սպասել է, թե
ուրիշները ոնց են որոշելու իր
կյանքը:

ԱՆԱՀԻՏ - Ինչ էլ ասեք, իրավունք
ունեք...

ԱՐՄԵՆ - *(Անահիտին):* Որ էդպես է՝
ներողություն խնդրեք:

ԷՄՄԱ - Բեզնի՞ց...

ԱՐՄԵՆ - Տատիցս:

ԷՄՄԱ - Էդ մեկը՝ կարելի է: Անահի-
տի խելքն էլ իրենը չէ ներողույթ-
յուն խնդրելու համար:

Երեքը նայում են Անահիտին:

ԱՆԱՀԻՏ - *(դադարից հետո, զգաց-
վում է, որքան դժվար է խոսելը):*
Երբեք:

ԷՄՄԱ - *(Արմենին):* Սխալ հետևույթ-
յուն չանես, որովհետև կյանքն
ապրելը ուղիղ գիծ գծել չէ:

ԱՐՄԵՆ - Համոզեցիք: *(Հասմիկին:)*
Դ՞ու ինչ կասես:

ՀԱՍՄԻԿ - Հավեսդ չունեմ: *(Անահի-
տին՝ անսքող հետաքրքրույթ-
յամբ:)* Բաժանվելուց հետո
հանդիպել եք:

ԱՆԱՀԻՏ - Երբեք: *(Հանկարծ հիշե-
լով:)* Ո՞վ էր նրանց ասել... մեր
մասին:

ԷՄՄԱ - Արմենը:

Համր տեսարան:

ԱՐՄԵՆ - Պապս էս ինչեր է արել...
ինչի համար:

ԱՆԱՀԻՏ - Չես հասկանա: (Հասմի-
կին.) Սիգարետ տուր:

ԷՄՄԱ - (Հասմիկին): Չտաս: (Անա-
հիտին.) Քո տարիքում ծխելը
թողնում են:

ԱՆԱՀԻՏ - Ո՞վ է խոսում տարիքի
մասին... (Տեղից բարձրանում,
գնում-նստում է բազկաթոռին):
Բախտը բերեց, որ մինչև գալս էր
մահացել:

ԱՐՄԵՆ - Էդ մեկը՝ չեղավ... (Շեռա-
խոսը զանգում է: Բազմոցից
վերցնում, նայում է համարին,
գնում է խոհանոց: Ընթացքում):
Նա հենց էսպես ոչինչ չէր անում:
Մ'ում է՝ հասկանանք:

ՀԱՍՄԻԿ - Մի բան ասեմ... (Երկու
կանանց լռությունից համարձա-
կություն ստացած՝ Անահիտին):
Լավ է, որ չամուսնացաք, հիմա
էսպես չէիք տառապի: (Էմմային.)
Ի՞նչ եք աչքերով ուտում, սխալ եմ
ասում:

ԷՄՄԱ - Ուտելու բան լինեիր, էստեղ
չէիր լինի: Բայց լավ ասիր տա-
ռապելու մասով: Աղջիկներ... (Ի
պատասխան Հասմիկի սատա-
նայական հայացքի:) Հա, հենց՝
աղջիկներ, խմենք մեր կենացը:
(Հասմիկին.) Տատիդ նկատի ու-
նեմ:

ՀԱՍՄԻԿ - Ում էլ նկատի ունենաք,

խմողը ես եմ: (Արագ, որ Էմման
չխանգարի, խմում է:)

ԷՄՄԱ - Քեզ չասի՞նք՝ չափով:

ՀԱՍՄԻԿ - Գուցե տատս ավելի շատ
խմեր: (Հասցնում է բաժակը նո-
րից լցնել-խմել:) Ա՛յ էսպես... Աղ-
ջիկներ... հա, հենց՝ աղջիկներ,
մի բան չեմ կարողանում հասկա-
նալ. որ տատս 16 տարեկանում է
առաջին անգամ համբուրվել, էլի
ոչինչ, բայց որ Արմենը 18 տարե-
կան ու ինքն էլ առաջին անգամ...

ԷՄՄԱ - Աչոն ջան, էն թվերին սեքս
բառն էլ բառարաններում չկար:
(Քննախոյզ նայելով նրան:) Տա-
տիդ սխրանքը քանի՞ տարեկա-
նում կրկնեցիր:

ՀԱՍՄԻԿ - Համբուրվելը... չեմ հի-
շում, բայց 16-ում արդեն հոգնել
էի սեքսից:

ԱՆԱՀԻՏ - Ինչից...

ՀԱՍՄԻԿ - Ջուլիետը ո՞ր դարում
պառկեց Ռոմեոյի հետ, ինքն էլ՝
կաթնակեր:

ԱՆԱՀԻՏ - Դա... Ծեքսպիրն է:

ՀԱՍՄԻԿ - Իմն էլ Ծեքսպիր էր: Ջու-
լիետի պարտիայի խաթեր, ինչ-
պես դուք ասացիք՝ սեքս արեցի
Մերկուցիոյի հետ: Նա՝ չգիտեմ,
բայց արվեստը շահեց, ասացին՝
հերոսուհուս հոգեվիճակը ճիշտ
եմ մեկնաբանել:

ԱՆԱՀԻՏ - Դո՞ւ ինչ շահեցիր:

ՀԱՍՄԻԿ - Ոչ էլ կորցրի:

ԷՄՄԱ - Տատդ իմանար...

ՀԱՍՄԻԿ - (անսպասելի փլվում է):

Թող առողջ լինե՛ր՝ իմանար: Գիտե՛ք, ինչ սարսափելի աշխարհում է ապրում, ոչ մեկիս չի ծանաչում... մենք օտար, անծանոթ ենք, ինձ թվում է, նույնիսկ վախենում է մեզնից: Բայց որ իմանայիք՝ ինչ գեղեցկուհի է եղել... ու հիմա ինչ է դարձել:

ԱՆԱՇԻՏ - Դա նրա ծակատագիրն է: Ոչ ոք չգիտի, թե ինչպես է գնալու:

ՀԱՍՄԻԿ - *(արդեն մի քիչ գինով):* Իսկ ես ոչ առաջին համբուրածին կհիշեմ, ոչ էլ Մերկուրիոյին...

ԷՄՄԱ - Ու ծիշտ կանես, բոլորն էլ սրիկա են: Բայց որ բախտդ բերի ու սիրես մե՞ծ սիրով, որոշ ժամանակ կմտածես, որ ինքն ուրիշ է:

ՀԱՍՄԻԿ - Մխիթարեցիք...

ԷՄՄԱ - Էդ գործում լավ եմ: Միայն ինձ չեմ կարող մխիթարել, դրա համար էլ տղայիս անունը դրեցի Մխիթար:

Ժպտում են, ներս է մտնում մռայլված Արմենը:

ԱՐՄԵՆ - Խմում եք...

ԷՄՄԱ - Զիչ հետո էլ լաց կլինենք:

ԱՐՄԵՆ - Որտեղ ուզում եք լացեք, բայց հիմա ինձ մենակ թողեք:

ԷՄՄԱ - Զահել ջան, չե՞ս կարծում, որ բոպեն մեկ տնից դուրս հրավիրելը մի տեսակ էն չէ:

ՀԱՍՄԻԿ - Տունն էլ իրենը չէ... թե՛ իրենն է արդեն: Կտակի համաձայն:

ԱՆԱՇԻՏ - Ի՞նչ եք վրա տվել... *(Արմենին.)* Բա՛ն է պատահել:

ԱՐՄԵՆ - *(նստում է):* Հավատացեք, մի ուրիշ անգամ էսպես չէի լինի...

ԷՄՄԱ - Էս անգամ ի՞նչն է խանգարում:

ՀԱՍՄԻԿ - Խանգարելը կապ չունի, դա նրա բնույթն է:

ԱՐՄԵՆ - Հավեսդ չունեմ... Տաքսի եմ կանչել: *(Խմում է:)* Ու շնորհակալ եմ, որ չեք մերժել պապիս հրավերը:

ԷՄՄԱ - *(երկուսին):* Դե որ տաքսի է կանչել... էստեղից գնանք մեր տուն:

ԱՐՄԵՆ - Երեք տաքսի եմ պատվիրել:

ԷՄՄԱ - Ուրեմն՝ ամեն մեկս իր ծամփով: *(Արմենին.)* Փայտս տուր: *(Հասմիկին.)* Սեղանը թեթև հավաքիր:

ՀԱՍՄԻԿ - Էդ էր պակաս...

ԱՐՄԵՆ - Էդ էր պակաս...

Մոտեցող մեքենաների աղմուկ:

ԷՄՄԱ - *(տեսնելով, որ Արմենն ուզում է տեղից բարձրանալ):* Նստիր: *(Հասմիկին.)* Աչոն ջան, օգնե՛ս:

Անահիտը սենյակի անկյունում ընկած գլխարկը վերցնում է, մոտենում, տալիս է Էմմային, թևանցուկ տանում է դեպի դուռը:

ԱՆԱՇԻՏ - *(շեմի մոտից):* Մնացեք բարով:

ԷՄՄԱ - Լավ է՝ ներողություն չխնդրեցիր...

Դուրս են գնում:

ՀԱՍՄԻԿ - Քեզնից գոհ ես: (Գնում է:)

ԱՐՄԵՆ - Ըհը, գոհ մեռնում եմ: (Չանգում է:)
Սուրո... Ինչ ես վրա տալիս, չեմ գտել... Ժամանակ չունեի, հյուր էի ընդունում: Հետո կասեմ...
Կուշանամ: (Անջատում է:)

Բազմոցի վրայից վերցնում է կամաչ տուփը, միջից ուրիշ արքում է հանում:

ԱՐՄԵՆ - Պապ, կներես, հյուրերիդ քեցցի, բայց ուրիշ ձև չկար... Տեսնում ես, սիստեմդ հասկացել եմ, բոլոր կանաչ տուփերը պիտի նայեմ, սրանց մեջ արքումներ են, մեկ էլ տեսար՝ նամականիշներն էստեղ են: (Բացում է:)
Էլի տոնածառ ու Ձյունանուշ... Չեմ հասկանում, ինչի՞ ես սրանք հավաքել... Վահեի ասած՝ մանկությունդ քննենք: Թե՞ն էդպես էլ քեզ չհասկացած՝ սրանք արխիվ հանձնենք... կամ աղբանոց: (Տենդագին թերթում է արքումները, մեկը մյուսի հետևից շարտում չորսդին:)

Ներս և մտնում Էմման, որոշ ժամանակ հետևում է նրան:

ԷՄՄԱ - Ինչ ես փնտրում:

ԱՐՄԵՆ - (արքումը ձեռքից ընկնում է): Ի՛...

ԷՄՄԱ - Համլետի հոր ուրվականի տեղը չդնես:

ԱՐՄԵՆ - Բայց շատ եք նման... (Ալքումը բարձրացնելով:)
Բենզալցակայանի մոտ պիտի հասած լինեիք:

ԷՄՄԱ - Հիշողությունս որ տեղը լիներ՝ դրանից էն կողմ կլինեի:

ԱՐՄԵՆ - Ի՛նչ եք մոռացել:

ԷՄՄԱ - Օգնիր՝ նստեմ: (Արմենը, հասկանալով, որ ծար չունի՝ օգնում է:)
Էս փայտն էլ անկյուն կանգնեցրու:

ԱՐՄԵՆ - Տաքսին...

ԷՄՄԱ - Սպասում է:

ԱՐՄԵՆ - Ես էլ եմ սպասում:

ԷՄՄԱ - Հույս չունենաս, որ կասեմ՝ ինչ եմ մոռացել: Հիշողությունս... դրան սկզբնորոգ են ասում, դավաճանեց, տաքսու մեջ հիշում էի, հիմա՝ չէ-է... Դու գործը շարունակիր, ես էլ կարող է՝ հիշեմ:

ԱՐՄԵՆ - Ձեզնից պրծում չկամ:

ԷՄՄԱ - Ինչի՞ չկա: Հենց ուզեմ գնալ՝ կգնամ: Ի՛նչ արքում է:

ԱՐՄԵՆ - (անփույթ շոջելով թերթերը): Ձեր գործը չէ:

ԷՄՄԱ - Բայց քո պրոբլեմն է: Աչքերիս նայիր, կարծում ես՝ պառավ է... ու մտքովդ չանցնի ասել՝ ցնդած պառավ... ոչինչ չեմ տեսնում ու չեմ հասկանում: Ի՛նձ ես համոզելու, որ հենց էնպես արքում ես նայում... Խոսիր:

ԱՐՄԵՆ - Բայց ինչնու պիտի խոսեմ անծանոթի հետ:

ԷՄՄԱ - Ես անձանոթ չեմ:

ԱՐՄԵՆ - Հա՛, պապիս նանարներից եք: Ձեր ժամանակ դրան ո՞նց էին ասում:

ԷՄՄԱ - (*շփոթվելով*): Տես, է, ծաղրում է... Բայց թե պապդ ինչ մարդ է եղել, որ առաջին կանչով ծանր տեղներս թեթևացրել ու էկել ենք՝ դա չես կարող հասկանալ:

ԱՐՄԵՆ - Ինչ հայտնվեցիք էստեղ՝ փորձում եմ հասկանալ...

ԷՄՄԱ - Մինչև հասկանալդ խոստովանիր:

ԱՐՄԵՆ - Իզուր ժամանակ եք կորցնում:

ԷՄՄԱ - Ես մեռած լինեի ու Արմենը թողիս տեսներ քո վիճակում, ինչ կաներ:

ԱՐՄԵՆ - (*ակամա գոռոզամտությամբ*): Համեմատեցիք՝ պապս ու դուք:

ԷՄՄԱ - (*չլսելու տալով*): Պապդ թողիս պատին դեմ կաներ ու մինչև ամեն ինչ չիմանար՝ բաց չէր թողնի: Ես էլ նույնը անեմ, թե՛ ինքնակամ ցուցմունք կտաս:

ԱՐՄԵՆ - Լավ ասիք՝ ցուցմունք... (*Դադարից հետո*): Փող եմ պարտք:

ԷՄՄԱ - Լարկոտիկ: (*Արմենը վրդովված օրորում է գլուխը*): Էդ լավ է: Խաղացել ես: (*Լռություն*): Կազմիտյում: (*Լռություն*): Անպետք տղա:

ԱՐՄԵՆ - Պապիս սիրած խոսքն էր:

ԷՄՄԱ - Ինձնից է սովորել: Երբ ես տալու:

ԱՐՄԵՆ - Երեկ:

ԷՄՄԱ - Դանակը հասցրել ես ոսկորին... Ծնողներիդ չես ասել:

ԱՐՄԵՆ - Չեմ էլ ասի:

ԷՄՄԱ - Իզուր:

ԱՐՄԵՆ - Իմ գործն է:

ԷՄՄԱ - Ինչ ես փնտրում:

ԱՐՄԵՆ - Պապս նամականիշների հավաքածու պիտի ունենար... Կարող է իմանաք, որտեղ պահած կլինի:

ԷՄՄԱ - Արմենը քեզ անօգնական չէր թողնի, էդ մեկը հաստատ գիտեմ, ուրեմն հանգիստ խղճով կարող եմ հանցանքի մասնակից դառնալ: (*Արմենի դեմքը պայծառանում է*): Բայց տեղը չգիտեմ: (*Արմենը մոայլվում է*): Տրամաբանությունից ո՞նց ես:

ԱՐՄԵՆ - Comsi comsa.

ԷՄՄԱ - Ես՝ գերազանց: Արի տրամաբանորեն շարժվենք:

Ներս է ընկնում Հասմիկը:

ԱՐՄԵՆ - (*նայելով նրան*): Ծարժվեցինք:

ՀԱՍՄԻԿ - (*Էմմային*): Վա՛յ, դուք չգնացիք:

ԷՄՄԱ - Գնացի, բայց քեզ պես էստեղ եմ:

ԱՐՄԵՆ - Դո՛ւ ինչ ես մոռացել:

ՀԱՍՄԻԿ - Ոչ մի բան էլ չեմ մոռացել: (*Էմմային*.) Տաքսին թողել եք,

չէ... (Չսպասելով նրա պատասխանին՝ դուրս է վազում:)

ԷՄՄԱ - (կանխելով Արմենին): Չհամարձակվեն... ձենդ չլսեմ:

ԱՐՄԵՆ - Ինչի՞ որ...

ԷՄՄԱ - Որովհետև նրա վերադառնալն էլ տրամաբանական է:

ԱՐՄԵՆ - Փաստորեն՝ մնացել եմ ձեր տրամաբանության հույսին:

ԷՄՄԱ - Որ լավ մտածես՝ վատ չէ:

Ներս է գալիս Հասմիկը:

ՀԱՍՄԻԿ - Ես էլ իմ տաքսին թողեցի:

Համր տեսարան:

ԷՄՄԱ - (բազմանշանակ): Աչոն ջան, դիստանցիա պահիր:

ՀԱՍՄԻԿ - Ինչ եք հնարում... մնում է՝ ներվային անկուտուրականի համար...

ԱՐՄԵՆ - Բա ինչի՞ վերադարձար:

Հասմիկն արագ գնում է խոհանոց: Երկուսը մայում են իրար:

ԷՄՄԱ - Ա՛յ, հիմա հասկացա, թե ինչպիսին է եղել էն մի Հասմիկը:

ԱՐՄԵՆ - Սա ո՞վ է, որ Հասմիկ դառնա... Պապս գիտեր՝ ում էր համբուրում:

Ներս է գալիս Հասմիկը՝ այրված էլեկտրական թեյնիկը ձեռքին:

ՀԱՍՄԻԿ - Ուզում էի թեյ հյուրասիրել, չէ՞ր կարելի...

ԱՐՄԵՆ - (նրա ձեռքից վերցնելով թեյնիկը): Հյուրասիրեցիր: Վնասը ո՞վ պիտի հատուցի:

ԷՄՄԱ - Բրէկ: Աչոն ջան, էդ գոհվածին տար խոհանոց ու վերջապես սուրճ բեր: (Հասմիկը Արմենի ձեռքից մի կերպ պոկում է թեյնիկն ու փնջացնելով գնում է խոհանոց:): Իսկ մենք փորձենք գտնել... (Շուրջը նայելով): Որտեղի՞ց գիտես նամականիշի մասին:

ԱՐՄԵՆ - Պապս է ասել: Դետեկտիվ ֆիլմ էինք նայում... հազվագյուտ նամականիշ էին գողացել... Ասաց. «Ես էլ դրա պես մի բան ունեմ»:

ԷՄՄԱ - Ավելի կոնկրետ...

ԱՐՄԵՆ - Հայտնի «Լիմոնկա» է, չեք իմանա... Ասաց, որ լավ բարեկամն է նվիրել:

ԷՄՄԱ - (հրաշալի արհամարհանքով): Իսկ եթե ասեմ, որ էդ բարեկամը...

ԱՐՄԵՆ - Չի կարող պատահել:

ԷՄՄԱ - Պատահել է...

Ներս է մտնում Հասմիկը՝ սրճեփո ձեռքին, մյուս կողմից ներս է գալիս Անահիտը:

ՀԱՍՄԻԿ - (ամենևին չզարմացած): Ձեզ սուրճ չեմ եփել:

ԱՆԱՀԻՏ - Ես սուրճ չեմ խմում:

ԷՄՄԱ - Մտածում էի՝ գնաց իր, ու վերջ: (Արմենին.) Տեսա՞ր, նորից հավաքվեցինք: (Անահիտին.) Նստիր, ու կարող ես ասել վերադարձիդ պատճառը:

ՀԱՍՄԻԿ - (Անահիտին): Տաքսին սպասում է: (Անահիտը գլխով դրական նշան է անում: Դուրս է վազում:)

ԱՐՄԵՆ - Կարո՞ղ է՝ զատանցում եմ:
ԱՆԱՀԻՏ - (մոտենում, ստուգում է ծակատը): Զերմություն չունե՞ք: (Լստում է: Էմմային.) Հասմիկին՝ հնարավոր էր, բայց որ ձե՞զ կտեսնեմ... Չէի սպասում:

ԷՄՄԱ - Ես սպասում էի քեզ:
ՀԱՍՄԻԿ - (ներս գալով): Տաքսին... (Բոլորն անթաքույց հետաքրքրությամբ սպասում են նրա խոսքին:)
Ասացի՛ սպասի: Վերջապես տուն գնալու ենք...

ԱՐՄԵՆ - Վերջապես մի խելացի բան ասացիր:

ԷՄՄԱ - Դեռ ո՞ր ես: Լա դեռ շատ կզարմացնի քեզ: (Անահիտին.) Եվ...

ԱՆԱՀԻՏ - Մոռացել էի... (Տեսնելով, որ բոլորն սկսեցին ժպտալ:)
Կարծեմ ծիծաղելի բան չասացի:

ԷՄՄԱ - Օրիգինալ բան էլ չասիր:

ԱՆԱՀԻՏ - Մոռացա Արմենի նվերը տալ... Արմենին:

ԷՄՄԱ - Լվերը հետո կտաս, հիմա օգնել է պետք:

ԱՆԱՀԻՏ - (Արմենին): Ահա թե ինչու էիր այդպես լարված...

Արմենը հայացքը փախցնում է:

ՀԱՍՄԻԿ - Զեզ էլ են քցել... Էմմայի պես:

ԷՄՄԱ - Բաժակները սուրճ լցրու... ու սուս:

ԱՆԱՀԻՏ - Զգում էի, որ մի բան այնպես չէ... ախր, Արմենի թողը չէր կարող այդպես...

ԷՄՄԱ - (Անահիտին): Հետո կհուզվես: Դու լավ գիտես... գիտեիր Արմենին, ուրեմն կարող ես հուշել: Մենք փնտրում ենք...

ԱՆԱՀԻՏ - (ընդհատում է): Արմենը ոսկի չէր կարող ունենալ: Չէր սիրում:

ԷՄՄԱ - Բայց կոլեկցիոներ էր:

ԱՆԱՀԻՏ - Այդ մեկը՝ հա: Զարթուցիչներ, մկրատներ, բացիկներ... (Արմենին.) Գիտես, որ պապիդ ծնողները ավտոմեքսիկոս են մահացել, տասներկու տարեկան որբացել է... Պատմում էր՝ որբանոց պիտի տանեն, շփոթված, իրեն կորցրած՝ ձեռքն ինչ ընկել, դրել է պայուսակն ու միայն հետո է տեսել, որ տնից վերցրել է մոր մկրատը, հոր զարթուցիչն ու խոշորացույցը... Մի անգամ ասաց, որ ամեն նոր տարի տոնական բացիկի վրա նամակ էր գրում ծնողներին ու հավատում էր, որ նրանք ստանում են այդ բացիկները: Հիմա էլ աչքիս առաջ է նրա ժպիտը, երբ ասում էր, որ միայն ամանորյա բացիկների հրաշքին է հավատացել...

ԱՐՄԵՆ - (նորովի զննելով տուփերը): Ուրեմն սրանք...

ԱՆԱՀԻՏ - Երբ որբ մանկության ցավերն են:

ԷՄՄԱ - Ինչո՞ւ մարդուն սկսում ենք ծանաչել նրա մահից հետո...

ՀԱՍՄԻԿ - (*Արմենին*): Էդ պապն ունեցողը էս օրն ընկնի՛ր...

ԷՄՄԱ - Անահիտ, էդքանը որ գիտես, գուցե, թե ավբոմը որտեղ կլինի:

ԱՆԱՀԻՏ - Ալբոմ չկա:

ԱՐՄԵՆ և ԷՄՄԱ - Ո՞նց թե...

ԱՆԱՀԻՏ - Մի նամականիշ ուներ, ասում էր՝ լավ բարեկամից է ստացել...

Արմենն ու Էմման մայրում են իրար:

ԱՐՄԵՆ - (*հուսահատ*): Ուրեմն՝ վերջ:

ԱՆԱՀԻՏ - Ինչքան է պարտքը:

ԱՐՄԵՆ - 3000 դոլար:

ԱՆԱՀԻՏ - Նամականիշը շատ ավելին արժե:

ՀԱՍՄԻԿ - Ի՞նչ գիտեք:

ԱՆԱՀԻՏ - Ինձ մոտ է:

Համր տեսարան:

ԱՆԱՀԻՏ - Բաժանվելուց առաջ տվեց:

ԷՄՄԱ - Իմ նվիրամձը... Նվիրել է քեզ:

ՀԱՍՄԻԿ - Վայ, Արմեն պապ, էս ի՞նչ դեմք ես եղել:

ԱՆԱՀԻՏ - (*Էմմային*) Հանգստացե՛ք... վերցրել եմ մի պայմանով՝ եթե ինձ կանչի, նամականիշը կվերադարձնեմ: (*Պայրուսակից հանում է ծրարը:*)

ՀԱՍՄԻԿ - (*վերցնում, բացում է*

ծրարը, նայում է մեջը, տալիս Էմմային): Ոնց որ կինո լինի:

ԷՄՄԱ - Ամենամեծ կինոն կյանքն է, աղջիկս: (*Արմենին*) Վերցրու սա, զանգիր՝ ում պիտի զանգես:

Արմենը վերցնում է ծրարը, գնում է խոհանոց:

ԷՄՄԱ - Քանի՞ անգամ համբերությունս սպառվեց, արդեն գնում էի, բայց ամեն անգամ ինձ ասում էի՝ Էմմա աղջիկ, էս տղան իրեն նման չէ, մի քիչ էլ համբերիր... Տեսա՞ք, ինչ եղավ:

ԱՆԱՀԻՏ - Աղջիկներ, գիտե՞ք, ինչ մտքովս անցավ... Միայն չծիծաղեք: Գուցե Արմեն պապի սիրտը վկայել է, դրա համար է մեզ կանչել:

ԷՄՄԱ - Ամեն անգամ կարողացել է ինձ զարմացնել: Բայց էս վերջինը... (*Անսպասելի հեծկլտում է, արագ կարողանում է վերագտնել իրեն: Հասմիկին.*) Արմենին ես ասում, բա իմ ներվերը... բանի պետք չեն:

ՀԱՍՄԻԿ - Բա որ տատս էստեղ լիներ, պատկերացնո՞ւմ եք, ինչ կլիներ... Իսկ եթե Արմեն պապը լիներ... ինչ, հակասական մարդ է եղել: Ափսոս, չեմ ծանաչել:

ԷՄՄԱ - Պապին կարող ես փոխարինել թոռով: Աչքերով մի ուտի: Առաջին սերը փոխանցվում է ժառանգաբար:

ԱՆԱՀԻՏ - Նոր տեսությունն է:

ԷՄՄԱ - Իմ տեսությունն է:

ՀԱՍՄԻԿ - Ինձ հանգիստ թողեք, բայց խոստանում եմ ձեր ասածի մասին մտածել: Միայն մի բան եմ խնդրում... բայց խոստացեք, որ կանեք:

ԱՆԱՀԻՏ - Ինչպե՞ս կարող ենք խոստանալ, չիմանալով՝ ինչ:

ԷՄՄԱ - Պարզ չէ՞, որ դա էր ասելու: Անահիտ, բայց դու լավ գրականության ուսուցչուհի կլինեիր: Ախր, շատ ծիշտ մարդ ես: Աչոն ջան, ես կանեմ, ասա:

ՀԱՍՄԻԿ - (*Անահիտին*): Մի հատ բացատրեք՝ ինչն էր ձեր մասին Արմեն պապն ասել իր կնոջն ու ձեր... ըր... ամուսնուն:

ԷՄՄԱ - Էդ մեկը չեմ կարող բացատրել, կներես:

ՀԱՍՄԻԿ - (*Անահիտին*): Ես ուզում եմ հասկանալ...

ԱՆԱՀԻՏ - Չգիտեմ... Բայց եթե ասել է, ուրեմն լռել չէր կարող:

Գալիս է Արմենը:

ԷՄՄԱ - Խոսեցիր:

ԱՐՄԵՆ - Խոսեցի: Հորս հետ: Փողը կտա: Կաշխատեմ, կվերադարձնեմ:

ԷՄՄԱ - Ապրեն:

ՀԱՍՄԻԿ - Լավ է, որ հորդ ասացիր, բայց այդ նամականիշը տնօրինելու իրավունք ունես: Արմենն էլ նույնը կասեր:

ԱՐՄԵՆ - Պապս կասեր, բայց... Էսքանից հետո ձեռքս չի գնում...

ՀԱՍՄԻԿ - Թթո՞ւ ես դնելու:

ԱՐՄԵՆ - Պահելու եմ: Սա կմնա մեր ընտանիքում... մկրատների, զարթուցիչների ու մնացածի հետ:

Տեղից բարձրանում, սկսում է խնամքով տեղավորել տուփերը: Հասմիկը միանում է նրան: Էմման ու Անահիտը հետևում են նրանց: Դռան զանգ: Բռլորը մի պահ քարանում են:

ԱՐՄԵՆ - Ո՞վ կարող է լինել...

ԷՄՄԱ - Ծառ-շատ՝ Արմենի հրավիրած հյուրը:

ԱՆԱՀԻՏ - Կարծում եք:

ՀԱՍՄԻԿ - Հարց տալու փոխարեն... (*Դուրս է վազում:*)

Մպաստողական նայում են դռանը:

ՀԱՍՄԻԿ - (*ներս գալով*): Տաքսիստն է, ծարավ է...

Սկզբում անվստահ, հետո բարձր ծիծաղ: Մենյակը թաղվում է խավարի մեջ, միայն վերևում աղոտ լույս է երևում, որն ուժգնանում է մարող ծիծաղին հընթացս:

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Գևորգ ՍԱՐԳՍՅԱՆ

Պիեսը նվիրում եմ այն երիտասարդ կանանց ու աղջիկներին, որոնք հանգամանքների բերումով երեկոները կանգնում են մայթերին կամ զբոսայգիների ծառուղիներում: Այդ գիշերային թիթեռնիկներին հայիտյում են, ծեծում, ստորացնում, հալածում, բայց ոչ ոք չի փորձում օգնել: Վաղը նրանց տեղում կարող են կանգնել մեր թոռնուհիները, քույրերն ու դուստրերը: Նրանք մեր կյանքից դուրս քշվածներն են, թշվառներ և հոգատարության ու օգնության կարիքն ունեն, որ կարողանան հետ կանգնել այդ ճանապարհից:

ՀՐԵՇՏԱԿԸ

(Գրամա երկու մասից)

Գործող անձինք

ՀՐԱԶՅԱ - 37 տարեկան

ՇՈՂԻԿ - 25 տարեկան

ԳԱՅԱՆԵ - Հրաչյայի հարևանուհին, 65 տարեկան

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԹԻԹԵՌՆԻԿ

ԵՐԵՔ ԵՐԻՏԱՍԱՐԳ

ԵՐԵՔ ԱՆՑՈՐԳ

*Ժամանակը՝ այսօր, վաղը, մյուս օրերին և հաջորդ օրերին ու փարիներին:
Վայրը՝ Երևանում կամ մեր փոքր երկրի
որևէ քաղաքում:*

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Առաջին պատկեր

Նկարիչ Հրաչյայի բնակարանը Երևանի բարձրահարկերից մեկում: Հյուրասենյակի լայն դռնից երևում է արվեստանոցի մի մասը: Հրաչյան արվեստանոցում նկարում է: Ընդհարելով աշխարհները՝ ծածկոցը գցում է նկարի վրա և շրտապում հյուրասենյակ, հեռախոսի մոտ: Հագին ներկուր խալաթ է, գլխին՝ բերեպ: Մինչ մոտենալը հեռախոսը զանգում է:

ՀՐԱԶՅԱ - Այո... Բարև, Անուշավան, բարև, սիրելի ընկեր և սիրելի խաբեբա: Ձեր գյուղը գնալու համար պայմանավորվել էինք... Ձեկար, չէ՞, ոչ էլ զանգեցիր: Ոչ, խաբեցիր: (Ծիծաղում է:) Մի փշիր, զանգեցի գյուղ, տատո էլ, պապո էլ հիվանդ չէին: Նրանց էլ ասել ես, որ ես եմ հիվանդ... Ձեներում եմ, հետո կխոսենք... հա, կարևոր մեկին եմ զանգելու... Թագուհուն: Այս երկու օրը կորո-

շենք: Թագուհին հիանալի աղջիկ է, իհարկե, սիրում եմ... Ձե, այս անգամ գտել եմ, ազնվագույն աղջիկ, գեղեցիկ, խելոք, արվեստասեր, լավ ընտանիքից: Հա, հարսանիք կանենք... թող լինի ձեր գյուղի տանը: Հարսի ուսերին գցած լավաշով, ափսե կոտրելով, հարբած երգելով ու գիշերով խորը ձորերում թափառելով, բայց եթե էլի չխաբես՝ մենք հասնենք գյուղ, իսկ դու գյուղից փախչես:

Դե, ես զանգեմ, սպասում է: Ասա... Ի՞նչ է ուզում այդ «շատ լավ մարդը», ինչո՞ւ չի գնում լուսանկարչի մոտ, իրեն շատ նման կլինի... (*Հուսահատ:*) Թագուհին իմ զանգին է սպասում... Պետք է այդ «հիանալի մարդուն» ծանաչեմ, որ կարողանամ նկարել, նրա քիթուբերանը չեմ նկարելու, այլ՝ հոգին... Հա, լավ է, որ բարեգործ է... չէ, ես մեծահարուստներին ու բարեգործներին հարգում եմ... Լավ, մի երկու անգամ քո բարեկամի հետ գազանանոց կգնամ, երթուղային կնստեմ, փողոցներում կքայլեմ, հետո կնկարեմ... Նրա մեքենան չեմ ուզում նստել, գազանանոցում կտեսնեմ, թե ինչպես է վերաբերվում կենդանիներին, երթուղայինում էլ՝ ինչպես է վերաբերվում մարդկանց: Ո՞վ է այդ հիանալի մարդը... սրիկա, ինչո՞ւ սկզբից չասացիր, որ փեսադ է: Բայց գազանանոցը, երթուղայինն ու փողոցով քայլելը մնում են ուժի մեջ: Վերջ, անջատում եմ... հա, երեխաներիդ մասին էլ կհարցնեմ, նրանց շատ եմ սիրում, բայց հետո... (*Դնում է լսափողը:*) Այդքան խոսել կլինի... (*Զանգ:*) Թագուհի... Անուշավան, էլի դո՞ւ... Ի՞նչ հեռախոսահամար... փեսայիդ... ասա... (*Գրում է:*) Երբ գա՞մ... Երկու շաբաթից... Տոնեսություն: (*Անջատում, համար է հա-*

վաքում: Սպասում է, դնում է լսափողը: Զանգ:) Մամ... չէ, դեռ չեմ զանգել: Ծատախոս Անուշավանն էր հոգիս հանում: Թագուհուն հիմա կզանգեմ, կպարզենք նշանդրեքի օրն էլ, հարսանիքի օրն էլ, տեղն էլ, նաև՝ քանի մարդ ենք հրավիրելու: Հա, նաև՝ քանիսն են պարելու, քանիսն են ծափ տալու, քանիսն են բամբասելու, հարսին ինչ պոզ ու պոչ են կպցնելու... Թագուհուն կբարևեմ: (*Անջատում, համար է հավաքում, սպասում է:*) Պատասխանիր, Թագուհի... Ինչ խորն է քնել... (*Դնում է լսափողը, զանգում բջջայինով:*) Այ, հիմա չես կարող չվերցնել... Վերջապես... ես եմ... Դե լավ, քնիր, կես ժամից կզանգեմ... լավ, մի ժամից: (*Անջատում է հեռախոսը, ժպտալով ուղղվում արվեստանոց, բայց... վերադառնում ու զանգում է քաղաքային հեռախոսով: Սպասում է, դնում լսափողն ու զանգում է բջջայինով:*) Ուզում եմ գալ քեզ մոտ... Չէ, մեքենայով կգամ, որ շուտ հասնեմ... Ի՞նչ պատահեց, ինչո՞ւ ձայնդ խլացավ... Ի՞նչ տղամարդ է կողքիդ... գոմալով համբուրում է քեզ: Ո՞վ... հեռուստացույցի մեջ են համբուրվում, իսկ մեքենան, որի դուռը փակվեց՝ ձեր տան մեջ է կանգնած... Լսիր, ուրեմն՝ դու ոչ թե կեսօրից, այլ առավո-

տից տանը չես: Լռիր, դու հար-
բած ես... Երկու օրից գրանցվելու
էինք, նշանդրեքի ու հարսանիքի
էինք նախապատրաստվելու, իսկ
դու... Լռիր, ասում եմ, անառակ...
ինչո՞ւ մայթերին կանգնած թիթեռ-
նիկ չես դառնում... Դեռ փորձում
ես արդարանա՞լ: *(Անջատում է,
զանգ, լսելուց հետո:)* Բացատ-
րություն չեմ ուզում լսել, չզանգես,
եթե չես ուզում, որ... *(Անջատում
է հեռախոսը:)* Սա իմ ճանաչած
աղջիկն էր... *(Չանգում է քաղա-
քային հեռախոսը, վերցնում է
լսափողը, գոռում:)* Ասացի՞ չզան-
գես: *(Անջատում է քաղաքային
հեռախոսը: Չանգում է բջջայինը:
Տայում է էկրանին, անջատում:
Նոր զանգ: Տայում է էկրանին:)*
Մամ... տանը չէր, դուրս է եկել...
Հենց որ խոսեմ հետը՝ կզանգեմ:
Քաղաքային հեռախոսը փչացել
է, ձեռքիս զանգիր մինչև սար-
քեմ... Ջղայնացած չեմ, դուրս
կգամ, կքայլեմ, երկար աշխատե-
ցի... Հա, գլխացավի դեղ էլ
կառնեմ: Վաղը կերևամ, անպայ-
ման... *(Անջատում է հեռախոսը,
դնում խալաթի գրպանը, խալա-
թով ու բերետը գլխին դուրս է
գնում:)*

Երկրորդ պատկեր

Քաղաքային զբոսայգու ցանկա-
պատի մոտ կանգնած զիշերային

թիթեռնիկը սպասում է «հաճա-
խորդի»: Նկատելով մոտեցող
տղամարդուն, պայուսակից սի-
գարետ է հանում, ընդառաջ
զնում ու պարզում է սիգարետը՝
վառիր: Անցորդն անտարբեր
շրջանցում է, զնում: Թիթեռնիկը
սիգարետը պայուսակի մեջ է
դնում: Հայտնվում է Հրաչյան:
Թիթեռնիկը նույն կերպ մոտե-
նում է նրան: Հրաչյան գրպանից
վառիչը հանում, տալիս է նրան,
ով արագ հասկանալով, որ նա
«հաճախորդ» չէ, վառիչը վերա-
դարձնում, վերադառնում է տեղը:
Գալիս է Շողիկը՝ առաջին ան-
գամ է «թիթեռնիկի» դերում:
«Հանաբնակ» թիթեռնիկը հայաց-
քով խեթում է՝ «Ավելորդ ես»: Շո-
ղիկը անտեսում ու տեղից չի
շարժվում: Թիթեռնիկն արդեն
նոր «հաճախորդ» է տեսել ու ըն-
դառաջ է զնում նրան՝ ավելի
խիստ խեթելով Շողիկին, որն
այս անգամ վախեցած հեռանում
է: «Հաճախորդն» ու թիթեռնիկը
բանակցում են: Հայտնվում է Շո-
ղիկը, հեռվում կանգնում: Չհա-
մաձայնվելով թիթեռնիկի «զմին»,
«հաճախորդն» ուզում է հեռա-
նալ, բայց նկատում է Շողիկին ու
զնում նրա կողմը: Տեսնելով մո-
տեցողին՝ Շողիկը փախչում է:
«Հաճախորդը» ծիծաղելով
թևանցուկ է անում թիթեռնիկին ու

տանում է: Հայտնվում է Շողիկը: Կանգնում է՝ փորձելով կրկնօր- մակել թիթեռնիկի կեցվածքը, հա- նում է սիգարետը, կանգնում պատի տակ: Հրաչյան, որ ան- տարբեր դիտում էր տեսարանը, լսելով զանգը, նայում է էկրանին ու միացնում բջջայինը:

ՀՐԱՉՅԱ - Փողոցում եմ... Դեղ չեմ առել... մոռացել էի, հիմա կառ- նեմ: Հետո կգնամ տուն: Ես լավ եմ... Ասում եմ՝ մոռացիր այդ Թա- գուհի կոչվածին: Մամ, դու հա- վատում ես նրան... Ես քեզ պատմեցի՝ ինչ եղել է: Մի հավա- տա... հետո կխոսենք, հիմա չեմ կարող... հա, ասա, լսում եմ...

Գալիս է հարբած տղամարդ, գրկում է Շողիկին, նա ճչալով հետ է քաշվում: Տղամարդը բարձր ծի- ծաղում է: Հրաչյան հեռանում է: Տղամարդը մատով մոտ է կան- չում, Շողիկը ընկրկում է, նա օրոր- վելով հեռանում է: Շողիկը նորից կանգնում է սովորած «կեցված- քով»: Հայտնվում է Հրաչյան:

ՀՐԱՉՅԱ - (լսափողի մեջ): Մի պա- տասխանիր, իսկույն անջատիր: Լա ինձ համար գոյություն չունի: Չեմ հուզվում, մի անհանգստա- նա...

Գալիս են երեք երիտասարդ: Շո- ղիկը ժպտում է:

1-ին ԵՐԻՏԱՍԱՐԴ - Պահո, տղերք, էս գեղեցկուհուն չտանճնք:

2-րդ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Չէ, բանի նման չի:

3-րդ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ինչի՞... մի լավ վազվի՝ լավ էլ բանի նման կլինի: Հը, ինչ եք ասում...

1-ին ԵՐԻՏԱՍԱՐԴ - (Շողիկին): Գնացինք:

ԵՈՂԻԿ - Ես... դե... հա, գնանք, բայց... հենց հիմմ...

1-ին ԵՐԻՏԱՍԱՐԴ - Հա, բա ո՞նց: Մի րոպե: (Մոտենում է ընկերներին):

ՀՐԱՉՅԱ - Լսում եմ, մամ... Ոչինչ մի ասա նրան, ամեն ինչ արդեն ա- սել եմ: Արդեն ասացի՝ նայիր հե- ռախոսի համարին և անջատիր...

1-ին Երիտասարդը վերադառ- նում, Շողիկին քևացուկ է ա- նում: Երկուսը մոտենում են նրանց:

1-ին ԵՐԻՏԱՍԱՐԴ - Գնացինք, սի- րուն ջան:

ԵՈՂԻԿ - (վախեցած): Չէ:

2-րդ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Սիրուն ջան, մի վախենա, մենք խելոք տղերք ենք:

ԵՈՂԻԿ - Չէ... մեկդ...

3-րդ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Մի վախենա, կգնանք, սուրճ կխմենք, գինի, կոնյակ, մի քիչ կպարենք, կուրա- խանանք...

1-ին ԵՐԻՏԱՍԱՐԴ - էս կողմերում ենք ապրում, արի:

ԵՈՂԻԿ - Չէ... (Հետ-հետ է գնում):

Տղաները սկսում են քաշքշել ցրան:

1-ին ԵՐԻՏԱՍԱՐԴ - Ուզում ես փողդ հիմա տանք:

ԵՈՂԻԿ - (բռնում է նրա թևից): Չէ, միայն քեզ հետ...

2-րդ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Չեղանվ, երեքով ենք գնում, առ, ըիր քու փողը... բռնի, փողդ հիմա եմ տալիս, ինչ ես ուզում...

Նրանց քաշքշուկը թեժանում է: Լսվում է Շողիկի ձայնը՝ «Չեմ գա... թողեք, ես գնում եմ տուն... թողեք...»: Տղաները ծիծաղում են: Հրայյան անջատում է հեռախոսն ու մոտենում ցրանց:

ՀՐԱԶՅԱ - Տղերք, մի չարչարեք աղջկան, չի ուզում:

1-ին ԵՐԻՏԱՍԱՐԴ - Բաշվի էստեղից:

ՀՐԱԶՅԱ - Եթե չի ուզում, մի ստիպեք:

3-րդ ԵՐԻՏԱՍԱՐԴ - Էյ, մայրառ, գնա, քու պատերը ներկի:

2-րդ երիտասարդը հրում է Հրայյան:

ՀՐԱԶՅԱ - Տղերք, թողեք, տեսնում եք, վախենում է, մի ուրիշի գտեք:

1-ին ԵՐԻՏԱՍԱՐԴ - (բաց թողնելով Շողիկի ձեռքը): Զեզ չասին՝ փախի, թե՛ ուզում ես մոռութիդ հասցնեն:

Հրայյան հարվածում է, տղան ընկնում է: Շողիկը կանգնում է Հրայյանի թիկունքում: Երկուսը դանակ են հանում ու հարձակվում: Կարճ մարտից հետո եռյակը թողնում է մարտադաշտը: Հրայյան նրանցից զավթած դանակները շարտում է ցանկապատից այն կողմ, շրջվում, տեսնում է իր խալաթի փեշն ամուր բռնած Շողիկին:

ՀՐԱԶՅԱ - Ինչ ես կանգնել, գնա տուն: (Շողիկը թողնում է խալաթի փեշը, մի քանի քայլ հետ է գնում ու կանգնում): Էլի մնալու ես այստեղ:

ԵՈՂԻԿ - Ես... չէ:

ՀՐԱԶՅԱ - Եթե էլի կանգնելու ես, ուրիշ փողոցում կանգնիր, կարող են հետ գալ:

ԵՈՂԻԿ - Ընկերուհուս եմ սպասում, բայց էլ չեմ սպասի: Երթուղայինը գա՛ կգնամ:

ՀՐԱԶՅԱ - Էդ տեսքով... տաքսի նստիր:

ԵՈՂԻԿ - Չէ, ոտքով կգնամ:

ՀՐԱԶՅԱ - Տաքսու փողը կտամ:

ԵՈՂԻԿ - Ես փող ունեմ:

ՀՐԱԶՅԱ - (գրպանից դրամ է հանում): Չունես: Առ, տաքսիով գնա: (Զանգ:) Հա, մամ... ընկերոջս հանդիպեցի: Դեղն էլի մոռացա, հիմա կառնեն: (Անջատում է հեռախոսը:) Էստեղ մի մնա, ասում եմ՝ էլի կգան, չե՛ս լսում:

Շողիկը «Հա, գնում եմ... գնում եմ» ասելով գնում է: Հակառակ կողմ է գնում Հրաչյան: Քիչ անց վերադառնում է Շողիկը, հանում է հայելին, կարգի բերում իրեն և նորից «կեցվածք» է ընդունում: **Գալիս է Հրաչյան:**

ՀՐԱՉՅԱ - Արի... ես տանում եմ քեզ:

ԵՈՂԻԿ - Ես ընկերուհուս եմ սպասում:

ՀՐԱՉՅԱ - Պատուհանից կնայենք՝ ընկերուհիդ երևա, կգնաս:

ԵՈՂԻԿ - Չէ:

ՀՐԱՉՅԱ - Եկել ես, որ մեկը քեզ տանի, չէ... Ես եմ տանում:

ԵՈՂԻԿ - Դուք տանող չեք:

ՀՐԱՉՅԱ - Տանող եմ, արի, փողդ կտամ:

ԵՈՂԻԿ - Ձեզ հետ չեմ գա:

ՀՐԱՉՅԱ - (գրպանից փող է հանում): Մի քանի օր կբավականացնի, մինչև գործ գտնես: Ու էս կողմերում էլ չերևաս: Զեզ հայելու մեջ նայել ես, կապիկ, նրանք այդպե՛ս են ներկվում՝ ցեխ ես սարքել երեսդ: Վերցրու փողը, մի գործ գտիր ու թող էս բանը:

ԵՈՂԻԿ - Կսովորեմ:

ՀՐԱՉՅԱ - Ձենդ, էս սովորելու բան է: Դպրոցդ ավարտելու մասին մտածիր: Եթե դպրոց չես գնալու՝ աշխատիր: Աշխատանք չգտնես՝ կգաս ինձ մոտ... Եթե ձայն չես հանում, ուրեմն՝ էլի մայրերին ես կանգնելու: Գնանք:

ԵՈՂԻԿ - Տանում եք էդ բանի համար... ուրիշների նման:

ՀՐԱՉՅԱ - Չէ, առանց էդ բաների... հենց էնպես: Եկել ես փող աշխատելու, չէ:

ԵՈՂԻԿ - Ձեր գործը չի:

ՀՐԱՉՅԱ - Լավ, էդ բաների համար էլ կտամ: Արի:

ԵՈՂԻԿ - Չէ:

ՀՐԱՉՅԱ - Լսիր, բալիկս, աղջիկս, քույրիկս, մամայի բալիկ, դու ուզում էիր նրանցից մեկի հետ գնալ:

ԵՈՂԻԿ - Ձեր գործը չի:

ՀՐԱՉՅԱ - Թուղթ-գրիչ ունե՛ս, որ գրես հասցես ու հեռախոսի համարս... Չունես: Գնանք տուն, այցեքարտս տամ: Տունս, այ, էն շենքում է, առաջին մուտք, իններորդ հարկ, դիմացի դուռն է:

ԵՈՂԻԿ - Ձեզ հետ չեմ գա:

ՀՐԱՉՅԱ - Ուրեմն՝ տուն կգնաս: Վերցրու փողը, ասում եմ:

ԵՈՂԻԿ - (վերցնում է): Լավ, մեկ է, թող ձեզ հետ լինի, գալիս եմ: Բայց...

ՀՐԱՉՅԱ - Ի՛նչ բայց:

ԵՈՂԻԿ - Էդ բանի ժամանակ... լույսը կհանգցնեք:

ՀՐԱՉՅԱ - Լսիր... մտքիցդ հանիր «էդ բանը»:

ԵՈՂԻԿ - Բա փողն ինչի՞ եք տալիս:

ՀՐԱՉՅԱ - Որ տուն գնաս, որ տաքսիով գնաս, վաղն էլ մի քիչ փող լինի ձեռքդ, մինչև... երեսդ կմաք-

րես: (Գրպանից ծալված կտոր հանելով:) Վերցրու, մաքուր է... Ու ներքև չգնաս, որ նրանց չհանդիպես: Դե, գնա:

Շողիկը գնում է: Հակառակ ուղղությամբ հեռանում է Հրաչյան:

Երրորդ պատկեր

Հրաչյայի բնակարանը: Հրաչյան գալիս, միացնում է քաղաքային հեռախոսագիծը: Չանգում է բջջայինը:

ՀՐԱՉՅԱ - (էկրանին նայելուց հետո): Չզանգես: (Անջատում է: Չանգում է քաղաքային հեռախոսը: Համարին նայելուց հետո վերցնում է լսափողը:) Հա, մամ, նոր ներս մտա: Դեղ առա: Հիմա լավ եմ... Դու մեղավոր չես, նա կարողացել էր քեզ էլ խաբել: Երևի ես եմ մեղավոր, չեմ կարողանում ծանաչել: Բայց սա երրորդն է, չէ... Բայց պետք է փորձեմ հասկանալ, թե ինչն է ինձ հետ այդպես վարվում: Գուցե իմ մեջ է գաղտնիքը: Լա՛ց ես լինում... Հա, վիրավորական է, բայց եղել է, ի՛նչ անենք, ես չեմ ուզում մտածել եղածի մասին, դու էլ մոռացիր: Խաղաղվիր, դեղերդ ժամանակին խմիր, որ լավանաս, իսկ հիմա հանգիստ պառկիր, վաղը կզանգեմ... ոչ, կգամ:

(Դռան զանգ:) Հա, դռան զանգն է, բարի գիշեր: (Բացում է դուռը, զարմացած:) Ներս արի:

Ներս է գալիս Շողիկը:

ՇՈՂԻԿ - (շնչակտոր): Մի մարդու հարցրի, ասացի՝ իններորդ հարկում է ապրում, ինքն է կանչել... բերետով, ներկոտ խալաթով, մորուքով մարդ է: Ասաց՝ երեսունութ համարն է... Ես եկա...

ՀՐԱՉՅԱ - Տեսնում եմ: Դե որ եկել ես, առաջ արի: Ծեծե՛լ են... Ծենքի մո՛տ են:

ՇՈՂԻԿ - Չեն ծեծել, դեմքս մաքրել եմ ձեր տված շորով, բայց երևի քսմսել եմ... Ինձ որ տեսան, վազեցի շենքի կողմը... Էդ մարդուն տեսա, ասացի՝ մորուքով, բերետով մարդը, ներկոտ խալաթով, որ իններորդ հարկում է, ինքն է կանչել...

ՀՐԱՉՅԱ - Դա ասել ես:

ՇՈՂԻԿ - Որ հեռանան՝ կզնամ:

ՀՐԱՉՅԱ - Հիմա մուտքի մո՛տ են:

ՇՈՂԻԿ - Չտեսան, որ ներս մտա... մուտքում էլ այդ մարդուն որ հարցրի՝ մորուքով, ներկոտ խալաթով մարդը...

ՀՐԱՉՅԱ - Դա էլ ես ասել... Նստիր, հիմա կգամ:

ՇՈՂԻԿ - Չէ, չզնաք, ես մի րոպեից կզնամ: Հա, հետո այդ մարդն ասաց՝ դու ի՛նչ նկարելու բան ես, որ կանչել է...

**Հրաչյան գնում է արվեստանոց:
Շողիկը հետևում է նրան: Պատուհանից նայում են:**

ՀՐԱՉՅԱ - Նրանք են:

ԾՈՂԻԿ - Զգույշ, չտեսնեն...

**Հրաչյան գալիս է հյուրասենյակ,
Շողիկը հետևում է նրան:**

ՀՐԱՉՅԱ - Դուրս չգաս: (Գնում է դեպի դուռը:)

ԾՈՂԻԿ - Նրանց ձեռքին էլի դանակ կար...

ՀՐԱՉՅԱ - (Շողիկին նստեցնում է բազմոցին): Չշարժվես մինչև վերադառնամ:

ԾՈՂԻԿ - (ժշում է): Չգնաք, աղաչում եմ, իմ պատճառով ձեզ կխփեն...

ՀՐԱՉՅԱ - Լավ, չեմ գնա... մենակ լաց չլինես: (Շողիկը լալիս է: Հրաչյան փորձում է աննկատ դուրս գնալ, նա ընդդիմանում է:)
Չեմ գնում, դուռը փակեմ: (Շողիկը նրա խալաթից բռնած՝ հետևում է նրան, միասին գնում ու վերադառնում են:) Նստիր: Թող խալաթս... Զուր ուզում ես... (Շողիկը լուռ է:)
Հիմա կբերեմ: (Գնում, ջուր է բերում:)

ԾՈՂԻԿ - (խմում է): Հիմա կգնամ: Բայց դուք մի երկու օր տնից դուրս չգաք:

ՀՐԱՉՅԱ - Դուրս չեմ գա: (Բաժակը դնում է սեղանին: Զանգ: Ասես չեն լսում:)
Գնա լվացվիր:

ԾՈՂԻԿ - Հիմա... (Գնում է... կանգ-

նում:)
Չեմ փողը մնաց ինձ մոտ, հիմա... հանեմ պայուսակից:

ՀՐԱՉՅԱ - Չհանես:

ԾՈՂԻԿ - Չէ, հիմա... (Պայուսակից հանում է դրամը, դնում սեղանին:)

ՀՐԱՉՅԱ - Պահիր... ու գնա լվացվիր: Մազերդ էլ պետք է մաքրել, ներկոտ են: Սրբիչ կա, օժանելիք, սանր... (Շողիկը գնում է:)
Չէ, հետ արի: Փողը դիր պայուսակ:

ԾՈՂԻԿ - Որովհետև, եթե...

ՀՐԱՉՅԱ - Արդեն ասացի՝ առանց «եթե»-ի եմ տալիս: Լվացվիր, որ տաքսի կանչեմ:

ԾՈՂԻԿ - Թող մնա, վաղը կգամ:

ՀՐԱՉՅԱ - Ինչո՞ւ վաղը գաս:

ԾՈՂԻԿ - Որ փողն էլ վաղը տաք:

ՀՐԱՉՅԱ - Ինչո՞ւ վաղը, այսօր եմ տալիս:

ԾՈՂԻԿ - Որովհետև փողը վերջում պետք է տան:

ՀՐԱՉՅԱ - Վերջ չի լինելու, սկիզբ էլ չի լինելու, էլ դրա մասին չխոսես: (Շողիկը փողը դնում է պայուսակը:)
Հիմա գնա լողասենյակ և գլուխդ լվա: Ինչո՞ւ ես կանգնել: Ը... գնա աջ, դռան վրա ցնցուղ կա նկարած, տաք ջրի սարքը միացնել կարող ես:

ԾՈՂԻԿ - Եթե ինձ ծանոթ սարքերից լինի՝ գլխի կընկնեմ:

ՀՐԱՉՅԱ - Հասկացա, ուզում ես շենքը պայթեցնել: Ես կօգնեմ, որ արագ լինի:

ԵՈՂԻԿ - Չէ, դուք մի եկեք:

ՀՐԱԶՅԱ - Էդ խելքով էլ դուրս ես եկել փող աշխատելու: Քանի տարեկան ես, տասնչորս կամ... Ինչ ես կանգնել, արի:

ԵՈՂԻԿ - (գնալով նրա հետևից): Ես մենակ կանեմ...

Գնում են: Չանգում է քաղաքային հեռախոսը, հետո՝ բջջայինը: Չանգերը կրկնվում են: Գալիս է Գայանեն:

ԳԱՅԱՆԵ - Պարոն նկարիչ... պարոն Հրաչյա... Հրաչյա... դուռն էլ բաց է թողել: Տանը մարդ չկա... Ցնցողի ծայնն է: Լողանում է: Լավ, հետո կգամ:

Գայանեն գնում է: Գալիս են Հրաչյան և Շողիկը, որի գլուխը սրբիչով այնպես է փաթաթված, որ ոչինչ չի տեսնում, բռնել է Հրաչյայի ձեռքը:

ԵՈՂԻԿ - Ասում եմ՝ «վառում եք», չէիք լսում... չէիք թողնում՝ շնչեմ...

ՀՐԱԶՅԱ - Էլ չեմ անի: Այստեղ նստիր, բազմոցն է... Հիմա զանգիր ու ձերոնց ասա, որ կես ժամից... չէ՛ մի ժամից տանը կլինես: Ո՞ւմ ես սպասում, զանգիր:

ԵՈՂԻԿ - Ո՞ւր է հեռախոսը;

ՀՐԱԶՅԱ - Սրբիչը բարձրացրու, որ տեսնես: (Նստում է, աչքերը փակում: Զանգ:) Եթե 88-55-64 է, վերցրու լսափողը, արագ ասա՝ սխալվել եք ու անջատիր:

ԵՈՂԻԿ - (առանց համարին նայելու վերցնում է լսափողը): Ալո... (Լսափողը հեռացնում է ականջից:) Գոռում է: (Լսափողի մեջ:) Ալո... (Լսելուց հետո:) Ոնց որ հայիոյում է, ասում է...

ՀՐԱԶՅԱ - (աչքերը փակ): Չկրկնես:

ԵՈՂԻԿ - Տիկին, սխալվել եք: (Դնում է լսափողը, Հրաչյային:) Ձեր գլուխը ցավո՞ւմ է: (Հրաչյան չի պատասխանում:) Ներեցեք:

ՀՐԱԶՅԱ - Գնա, չորացրու մազերդ:

ԵՈՂԱԿԱԹ - Չէ, լավ է, այսպես էլ կարող եմ գնալ... հիմա կգնամ...

ՀՐԱԶՅԱ - Սպասիր, թող չորանան: (Զանգ:) Վերցրու, ասածդ կրկնիր:

ԵՈՂԻԿ - Ալո... Նույն կին է... (Լսափողի մեջ:) Սխալվել եք: Ո՞ւմ... ես նրա անունը չգիտեմ: Գիշերային թիթեռնիկ... այո, փողը տվել է: Նախօրոք է տվել: Ոչ, դեռ ոչինչ չի եղել... Ինձ դրա համար չի բերել: Իմ հետևից տղաներ էին ընկել, ես վազեցի շենքի կողմը, հարցրի մի մարդու, նա էլ ասաց՝ իններորդ հարկի դիմացի դուռն է... Ես պատասխանում եմ ձեր հարցին: Ծենքի մոտ մի մարդու հարցրի, ասաց՝ իններորդ հարկում է, դիմացի դուռն է... Ես ձեր գլուխը չեմ ուզում տանել, ասում եմ, ինչ եղել է: Ես տհաս չեմ... Նա չի ուզում ձեզ հետ խոսել: (Դնում է լսափողը:) Ինչո՞ւ եք այս տեսակ

կանանց հեռախոսի համար տալիս: (Դադարից հետո, կամաց:) Կարող եմ ձնշում իջեցնելու դեղ տալ:

Հրաչյան գնում, պահարանից կոնյակի շիշ է հանում, բաժակը խմիչք ւցնում:

ԵՈՂԻԿ - Չի կարելի, ավելի կբարձրանա, ձեր ձնշումը շատ բարձր է:

ՀՐԱՉՅԱ - Ի՞նչ իմացար:

ԵՈՂԻԿ - 180-ից ավելի կլինի:

ՀՐԱՉՅԱ - Ասում եմ՝ ինչից իմացար:

ԵՈՂԻԿ - Ձեր քունքերակը շատ արագ է խփում: (Հրաչյան չի խմում, նստում է: Չանգ: Հրաչյանի նշանով վերցնում է լսափողը:) Այո... (Հրաչյային.) Էլի այդ... կինն է:

ՀՐԱՉՅԱ - Անջատիր, գնա մազերդ չորացրու:

Շողիկը դնում է լսափողը, գնում է լողասենյակ: Հրաչյան զանգում է:

ՀՐԱՉՅԱ - Մամ, ես եմ, հեռախոսը գբաղված էր... Հա, էլի նա: Չէ... գլուխս է ցավում, բայց կանցնի: Տիկին Գայանեն: Չեմ տեսել, տանն էի, բայց՝ լողասենյակում: Լյարդդ էլի նեղում է, ասում եմ՝ մի ուշացրու, դեղերդ ժամանակին խմիր, չես լսում... Հասկացա,

սրանից հետո ծանոթանալիս ուշադիր կլինեմ՝ հոր, մոր, հարևանների ու ապուպապերի մասին էլ կհարցնեմ: Հա, ծիծաղում եմ, բա ի՞նչ անեմ: Մի նեղվիր, հիմա մի բան կուտեմ: Իհարկե, խանութ կգնամ, կառնեմ... բարի գիշեր:

Հրաչյան գնում է արվեստանոց: Բջջայինի զանգ: Շտապով գալիս է Շողիկը, նայում համարին, գնում արվեստանոց, վերադառնում, միացնում է, լսում և խկույն էլ անջատում է: Չանգում է քաղաքային հեռախոսը:

ԵՈՂԻԿ - (լսափողի մեջ): Ձեզ խնդրեցի չզանգել: Ձեր գործը չէ, թե ով եմ... Արդեն ասացիք, որ գիշերային թիթեռնիկ եմ, այդպես էլ իմացեք... (Շփոթված:) Դուք նա չե՞ք, որ քիչ առաջ... Այո, նկարիչի բնակարանն է: Ես նրա անունը չգիտեմ... Հիմա: (Գնում է արվեստանոցի դռան մոտ:) Ձեր անունը Հրաչյամ է: (Լսելով պատասխանը՝ վերադառնում է:) Այո... այո, անունը Հրաչյա է: Ներեցեք, որ գոռացի, քիչ առաջ մի կին էր զանգում, գոռում էր, ինձ էլ ասաց, որ... Նկարիչը հիմա արվեստանոցում է: Չգիտեմ, աչքերը փակ նստած է: Հիմա կնայեմ, եթե արթուն լինի... (Գնում է արվեստանոց, վերա-

դառնում է: Ծշուկով:) Այո, աչքերը փակ նստած է, գուցե քնել է: Եթե աչքերը փակել է, ուրեմն՝ վատ է զգում: Ճնշումն էլ շատ բարձր է... 180-ից ավելի կլինի, ես զգում եմ... Հիմա կկանչեմ:

ՀՐԱԶՅԱ - (գալով): Անջատիր:

ԵՈՂԻԿ - (շշուկով): Նա չէ... հարազատի նման է խոսում, երևի ձեր մայրն է:

ՀՐԱԶՅԱ - (լսափողի մեջ): Մամ, ինչո՞ւ քնած չես... արդեն լավ եմ... (Ծողիկը դժգոհ շարժում է անում:) Հաց կերա: (Ծողիկը դժգոհ շարժում է անում:) Երևի ճնշումն է մի քիչ... դեղերն արդեն խմել եմ...

ԵՈՂԻԿ - Ձեր ճնշումը բարձր է... տվեք լսափողը՝ բացատրեմ...

ՀՐԱԶՅԱ - (Ծողիկին՝ լռելու նշան է անում): Հարևանի երեխան է, ճնշումից բան չի հասկանում... (Ծողիկը զարմացած նայում է:) Կերել եմ: Ինչո՞ւ հարցնես, նա ուտելս չի տեսել, ի՞նչ կարող է ասել... Հա, էլի նա է եղել, երեխային էլ կոպտել է: Ինքը քեզ ասաց, որ գիշերային թիթեռնիկ է ասել... (Ծողիկը գլխով է անում:) Հիմա տեսնո՞ւմ ես՝ ով է, որքան շուտ մոռանանք նրան, այնքան լավ: Ի՞նչ ես հարցնելու այս երեխային... Լավ, հիմա... (Ծշուկով:) Կարձ կխոսես, իմ մասին՝ ոչ մի խոսք, ես լավ եմ, ճնշում չունեմ, հաց կերել եմ, դեղ խմել եմ, շատ հանգիստ և ուրախ եմ:

ԵՈՂԻԿ - (լսափողի մեջ): Այո, ոչ, հարևանի երեխան չեմ... (Անտեսելով Հրաչյայի արձագանքը:) Այնքան էլ երեխա չեմ, քսանհինգ տարեկան եմ... Որոշ բան հասկանում եմ, երեք տարի բուժքրոջ եմ փոխարինել: Ինքը չի կանչել, ես եմ եկել... (Հրաչյան փորձում է վերցնել լսափողը՝ ապարդյուն:) Չէ, տանն էինք, գլուխս էինք լվանում... Ճնշումի մասին չասաց, որ ձեզ չվախեցնի: Հա, իմ գլուխն էր լվանում... ես ներկոտվել էի: (Հրաչյան վրդովված հեռանում է:) Այո, շատ տխուր է, կարծում եմ՝ նյարդային սթրես է ապրում, անհանգիստ է... Չի ցույց տալիս, բայց զգում եմ... Այո: Տխուր մտքերը ցրելու կամ գլխացավը թեթևացնելու համար ուրիշ միջոցներ կան... նաև մանկական երգերը: Իսկ ձեր լյարդի համար կարող եք ձարձատուկ օգտագործել: Ես կարող եմ բերել, հենց վաղը... Ոչ, այստեղ չեմ կարող մնալ, գնալու եմ... Հիմա, մեկ-երկու րոպեից: Հրաչյային... խնդրեմ:

ՀՐԱԶՅԱ - (լսափողի մեջ): Գնալու է: Ոչ, քո գալու կարիքը չկա, ինձ խնամել պետք չէ... Նյարդային վիճակում չեմ: Ընկերս շտապօգնություն կանչեց, որ ճնշումս ու գլխացավս... բժշկի հետ, որպես բուժքույր է եկել: Բժիշկը քիչ ա-

ոաջ գնաց... (Ծողկեր դժգոհ շար-
ժումներ է անում:) Բուժքրոջը թո-
ղեցին, որ եթե վատանամ... չե,
լավ եմ, չեմ վատանա, թող գնա:
Կխանգարի ինձ, աշխատելու
եմ... Չասացի՝ բուժքույր է, որ
չանհանգստանաս: Անունը չգի-
տեմ, կհարցնեմ, դու քնիր... Լավ,
թող մի քիչ էլ մնա, բայց դու
քնիր... Բարի գիշեր: (Դնում է
լսափողը, խիստ:)

Բուժքույր,
խնդրում եմ, հարդարվեք, որ
տաքսի կանչեմ, գնաք տուն, ուշ
է:

ԾՈՂԻԿ - (պայուսակից հաբեր է հա-
նում, սեղանի վրայից թուղթ
վերցնելով՝ գրում է): Սա՝
ձնշման...

ՀՐԱԶՅԱ - Այդ թղթին չէ... (Ուրիշ
թուղթ է տալիս:)

ԾՈՂԻԿ - (գրում է): Սրանք՝ ձնշումն
իջեցնելու համար: Սրանք՝ զլխա-
ցավի, իսկ սրանք՝ խոր և հան-
գիստ քնելու համար: Այս
ջրամանի ջրով էլ կխմեք, թող գոլ
լինի: Տաք ջուր էլ կբերեմ:

ՀՐԱԶՅԱ - (խուժապով): Տաք ջուր
պետք չէ, ջրամանի ջուրը բավա-
կան է, շտապեք, որ գնաք:

ԾՈՂԻԿ - Տաք ջուրը խմելու համար
չէ:

ՀՐԱԶՅԱ - Բա ինչի՞ համար է:

ԾՈՂԻԿ - (ասես նոր տեսնելով ի-
րեն): Տեսնլ եք, ինչ եք արել... շո-
րերով եք լողացրել ինձ: Լրիվ

թաց եմ... կոշիկներս էլ... ինչպե՞ս
եմ փողոց դուրս գալու, այն էլ՝
կարձ շրջագգեստով և այս վեր-
նաշապիկով...

ՀՐԱԶՅԱ - Կարծեմ այդ շորերն ու
կոշիկները ես չեմ նվիրել:

ԾՈՂԻԿ - Բայց տեսեք՝ ինչ եք արել:

ՀՐԱԶՅԱ - Անընդհատ թռչկոտում
էիք, ոտքերս տրորում ու ճշում
էիք:

ԾՈՂԻԿ - Որովհետև վառում էիք:

ՀՐԱԶՅԱ - Բայց հետո լռեցիք ու
չէիք ասում, որ ջուրը տաք է: Ին-
չո՞ւ էիք լռում:

ԾՈՂԻԿ - Որովհետև բերանս
փրփուր էիք լցրել:

ՀՐԱԶՅԱ - Կարող էիք հրել ինձ,
փրփուրն էլ՝ դուրս փչել:

ԾՈՂԻԿ - Վզիցս այնպես պինդ էիք
բռնել, քիչ էր մնում՝ աչքերս
դուրս թռչեին... Դո՞ւք ինչու չէիք
հարցնում, թե ինչու եմ լռել, գուցե
մեռնլ էի:

ՀՐԱԶՅԱ - Կարծում էի՝ տաք ջրի
հաճույքից թմրել եք...

ԾՈՂԻԿ - Մեռնելու հաճույքից
թմրո՞ւմ եմ... Հիմա որ գնամ տուն
ու ընկերուհիս տեսնի ինձ... այ-
սինքն՝ տնեցիք տեսնեն, չե՞ն
հարցնի՝ որ գետն եմ ընկել: Ի՞նչ
պատասխանեմ նրանց, դե, ա-
սեք:

ՀՐԱԶՅԱ - (շփոթվում է): Բայց
դուք...

ԾՈՂԻԿ - Ոչ թե ես, այլ դուք ասեք,

թե հիմա ինչ անեմ, սա ձեր տունն է:

ՀՐԱԶՅԱ - Փռեք ձեր շորերը, թող չորանան, առավոտյան հազեք ու գնացեք:

ԵՈՂԻԿ - Որտեղ փռեմ:

ՀՐԱԶՅԱ - Պատշգամբում:

ԵՈՂԻԿ - Ու կփռեմ... Իսկ հետո՞, տան մեջ առանց հագուստի ման գամ, ոտաբոբիկ... շորերս հանեմ, ուրեմն՝ պատշգամբում մերկ կանգնեմ... ու շո՞ր փռեմ...

ՀՐԱԶՅԱ - Իմ տանը կնոջ շոր չկա:

ԵՈՂԻԿ - Ձեր մայրն ասում էր, որ հարևանուհի ունեք:

ՀՐԱԶՅԱ - Ուզում եք, որ ձեզ համար շո՞ր ուզեմ տարեց հարևանուհուց:

ԵՈՂԻԿ - Թող պառավի շոր լինի, ո՞վ է ինձ նայելու: Դուք ասեք՝ որ հարևանուհուց՝ ես կգնամ-կուզեմ:

ՀՐԱԶՅԱ - Դե... գիտեք ինչ...

ԵՈՂԻԿ - Լավ, այս տանը ծածկո՞ց էլ չունեք:

ՀՐԱԶՅԱ - Սեղանի՞ ծածկոց:

ԵՈՂԻԿ - Սեղանի ծածկոցին էլ համաձայն եմ, բայց... լավ, ձեր ներկոտ խալաթը տվեք:

ՀՐԱԶՅԱ - Ուրիշ խալաթ էլ ունեմ, չնայած դա էլ ներկոտ է, բայց... գուցե փորձե՞ք:

ԵՈՂԻԿ - Ինչու՞ «գուցե», տվեք:

ՀՐԱԶՅԱ - Միջանցքի պահարանում է:

Շողիկը գնում է, Հրաչյան մոտեցնում, գնում է սեղանին դրված

հաբերը, կարդում գրվածը, ամեն մեկից մեկական հաբ է խմում ու նստելով բազմոցին՝ փակում է աչքերը: Ջանգ: Հրաչյան նայում է համարին, վերցնում լսափողը:

ՀՐԱԶՅԱ - Մի գանգիր: Այո, գիշերային թիթեռնիկն ավելի մաքուր ու ազնիվ է... Վերջին անգամ եմ զգուշացնում... (Դնում է լսափողը: Դադար:) Ինչ է անում այսքան ժամանակ, մի խալաթ չի՞ կարողանում հագնել... (Գնում է արվեստանոց, նայում է միջանցքի կողմը, շփոթված հետ է գալիս): Տեր Աստված... (Լսում է բազմոցին, փակում աչքերը: Ջանգում են երկու հեռախոսները: Չի վերցնում: Հետո ինքն է գանգում:) Մամ, դո՞ւ էիր գանգում... Գուցե շտապօգնություն գանգեմ... չէ՞... Ես էլ լավ եմ... Հասկացա, որ դու էիր գանգում, բայց մինչև մոտեցա... Ասա, լսում եմ...

Գալիս է Շողիկը՝ տաք ջրի թասով: Հագել է Հրաչյայի խալաթը, գոտի կապել, որ խալաթի փեշերը ոտքերի տակ չընկնեն: Թափերը ծալած են, ուսին սրբիչ կա, հագել է Հրաչյայի կոշիկները, որոնք մեծ են, դժվար է քայլելը, նաև՝ թխկթխկում են: Տեսնելով, որ Հրաչյան խոսում է, զգուշությամբ է քայլում: Հրաչյան չի նկատում նրան:

ՀՐԱԶՅԱ - Այստեղ է... երևի բուժ-
քույր է աշխատել, տեսքից չի
երևում, որ բժշկությունից մի բան
հասկանում է... Ծատ է խեղճուկ-
րակ: Ծնշում իջեցնելու դեղ
տվեց... գլխացավի էլ, քնաբեր
էլ... Չէ, նրա մնալու կարիքը
չկա... *(Կամաց է խոսում:)* Ծատ
ձանձրալի երեխա է... Հա, քսան-
հինգ է, բայց իննսունհինգ տարե-
կան պառավի տեսք ունի:
Արտաքինն էլ շատ տհաճ է... մի
քիչ էլ անդաստիարակ է... Բեզ
հետ ստիպված քաղաքավարի
խոսեց, բայց եթե նրան տեսնես՝
դու էլ կասես, որ վրան նայել
հնարավոր չէ... Բժշկությունից էլ
բում-բում է: Ես լավ եմ, հուսա-
հատված չեմ... գլուխս մի քիչ ցա-
վում է, բայց կանցնի... Ինչո՞ւ
ոտքերս տաք ջրի մեջ դնի, նա
ջուր տաքացնել չի կարող, ասում
եմ, չէ՛, բում-բում է... Դու մի հուզ-
վիր, լավ, թող մի քիչ էլ մնա...
Մինչև առավոտ, բայց ինչո՞ւ...
Լավ, լավ, միայն թե հանգիստ ե-
ղիր, որ քո ծնշումն էլ չբարձրա-
նա: Եթե ուզում ես, թող մնա:
Առավոտյան կգամ, էլ չզանգես,
աշխատիր քնել, բարի գիշեր:
*(Շրջվում է, որ լսափողը դնի,
տեսնելով Ծողիկին՝ լսափողը
մնում է ձեռքում:)* Հարևանի աղջ-
կա մասին ասածներս լսեցիք:

ԵՈՂԻԿ - Լսեցի:

ՀՐԱԶՅԱ - Դպրոցական է, բայց
պառավի նման է: Որ տեսնեմ,
կրերեմ, դուք էլ կտեսնեք: Եթե ու-
զում եք, կարող եք գնալ նրանց
տուն, որ տեսնեք իրեն, շատ հյու-
րասեր մարդիկ են... մոտ են ապ-
րում, կողքի շենքում: Մի տեսակ
տարօրինակ պառավ է այդ երե-
խան...

ԵՈՂԻԿ - *(լսափողը վերցնում, դնում
է հեռախոսի վրա, նստում է: Մա-
տով ցույց է տալիս թասը):* Բում-
բում:

**Շփոթված Հրաչյան բարձրաց-
նում է ոտքերը, Շողիկը ձեռքի
կտրուկ շարժումով օդում քարա-
ցած նրա ոտքերից հանում է կո-
շիկներն ու կիսագուլպաները,
նստում ու ցույց է տալիս թասը:**

ԵՈՂԻԿ - Բում-բում:

ՀՐԱԶՅԱ - *(ժպտալով ոտքերն ի-
ջեցնում է ջրի մեջ, անմիջապես
դուրս հանում ու գոռում է):* Վա-
նեց:

ԵՈՂԻԿ - Բիչ առաջ էլ ինչ-որ մեկը
վառում էր ինչ-որ մեկի գլուխը:
(Ցույց տալով թասը:) Բում-բում,
և՛ տասնհինգ րոպե:

**Հրաչյան ոտքերը դնում է ջրի մեջ
և գսպելով տաք ջրի ցավը՝ փա-
կում է աչքերը: Հենվելով բազկա-
թռի թիկնակին, աչքերը փակում
է նաև Շողիկը: Լռություն:**

ՀՐԱԶՅԱ - Ես տասը րոպե չեմ դիմանա, վառում է:

ԵՈՂԻԿ - Ուղիղ տասը րոպե առաջ էլ ոմանք հեռախոսով էին վառում ինձ... շիկացած բառերով... բայց ես դիմացա:

Լռություն: Գալիս է Գայանեն:

ԳԱՅԱՆԵ - (դրան մոտից) Կարելի՞ է: (Լռություն: Ներս է մտնում, զարմացած:) Զնամձ եք... ուրեմն՝ հետո կգամ:

ՀՐԱԶՅԱ - (բացում է աչքերը): Բարև ձեզ, տիկին Գայանե:

ԳԱՅԱՆԵ - Խանգարեցի՞... քնեք, ես հետո կգամ:

ՀՐԱԶՅԱ - Զնամձ չենք, տիկին Գայանե, նստեք: Ես տասը րոպեից վեր կկենամ:

ԵՈՂԻԿ - (արթնանում է): Զնել էի... ներեցեք: Բարև ձեզ:

ՀՐԱԶՅԱ - Տիկին Գայանե, բուժքույրն է:

ԵՈՂԻԿ - Ներեցեք...

ԳԱՅԱՆԵ - Ոչ, ոչ, քնեք, բարի երեկո... չէ, ի՞նչ եմ ասում՝ բարի գիշեր... ոչ, իհարկե, ցտեսություն... Ամեն ինչ խառնեցի... ես գնամ:

ԵՈՂԻԿ - (նոքի է կանգնում): Տիկին Գայանե, նստեք, չեք խանգարում: Ես հիմա գնալու եմ:

ՀՐԱԶՅԱ - Նստեք, տիկին Գայանե, ձեզ համար թեյ կպատրաստեմ:

ԵՈՂԻԿ - Ես կարող եմ թեյ պատրաստել, հետո գնալ: (Ուտի սրբի-

չը պոչում է աթոռի թիկնակին, նայելով ժամացույցին:) Մնաց յոթ րոպե, հետո կարող եք ոտքերը հանել ջրից: Հիմա կլվացվեմ ու թեյ կպատրաստեմ:

ԳԱՅԱՆԵ - Ոչ, հիմա թեյ չեմ ուզում:

ԵՈՂԻԿ - Ուրեմն՝ ես կարող եմ լվացվել ու գնալ: (Գնում է դեպի լողասենյակ:)

ԳԱՅԱՆԵ - (զարմացած նայում է Շողիկի խալաթին ու կոշիկներին): Սպասիր, աղջիկս: (Շողիկը կանգնում է:) Ես Սաթենիկի հարևանուհին եմ: Միասին ենք ստացել մեր բնակարանները, որովհետև այս շենքի տեղում մեր տներն էին: Սաթենիկը հիմա հեռու է ապրում, բայց մենք մնացել ենք բարեկամներ: Մոտ արի, աղջիկս: (Շողիկը մոտենում է:) Հեչ էլ տգեղ չեք, ոչ էլ պառավի տեսք ունեք, նույնիսկ այս խալաթով եք գեղեցիկ: Ուրեմն՝ դուք եք այդ բուժքույրը... Սաթենիկն ինձ ամեն ինչ պատմել է: Պարոն Հրաչյան է նրան ասել...

ԵՈՂԻԿ - Ես գիտեմ՝ ինչ են ասել տիկին Սաթենիկին և ժամանակն է, որ գնամ:

ԳԱՅԱՆԵ - Ո՞ր եք ուզում գնալ այդ ներկոտ խալաթով:

ԵՈՂԻԿ - (հրր՝ զարմացած): Սրանք է՞րբ եմ հագել... Պարոն Հրաչյա, ի՞նչ շոր եք տվել ինձ: Տիկին Գայանե, իմ շորերը թաց են, հանել

եմ, որ չորանան և... բաղնիքում գլուխս լվանալու ժամանակ ինձ թրջել են: (Նայում է Հրաչյայի կողմը:)

ԼՐԱԶՅԱ - Ուրիշ շո՞ր... այստեղ ինչո՞ւ պետք է ուրիշ շոր ունենայիք:

ԾՈՂԻԿ - Ես էլ դա եմ ասում՝ չունեմ:

ԳԱՅԱՆԵ - Ո՞վ է թրջել ձեզ... բաղնիքում մենակ չե՞մք:

ԼՐԱԶՅԱ - Ըր... մենակ էր, բայց... այսինքն՝ ցնցուղը պատահաբար իմ ձեռքում հայտնվեց... պատահաբար փախավ ձեռքիցս ու թրջեց իրեն էլ, ինձ էլ: Չէ, միայն իրեն է թրջել, ես այնտեղ չեմ եղել...

ԾՈՂԻԿ - (կշտամբանքով Հրաչյային նայելով): Տիկին Գայանե, ներեցե՞ք, պետք է թաց շորերս վերցնեմ... թաց կոշիկներս էլ...

ԳԱՅԱՆԵ - Սպասիր, աղջիկս, Սաթենիկը որոշ բաներ ինձ ասել է, արդեն գիտեմ...

ԼՐԱԶՅԱ - Տիկին Գայանե, մորս ասածները բուժքրոջը չեն վերաբերվում, այլ մեր կողքի շենքում ապրող մի երեխայի: Բուժքույրն ինձ շատ է օգնում, ահա, սեղանին դրված դեղերը... շատ էին, մեծ մասն արդեն կերել եմ...

ԾՈՂԻԿ - Խմել եք:

ԼՐԱԶՅԱ - Ներեցե՞ք, այո, խմել եմ: Տաք ջրով թասն էլ ինքն է բերել... հիմա վեր կկենամ... ոչ, յոթ բուսակից, իհարկե, ես կարող եմ

գուլպաներս էլ հագնել, կոշիկներս էլ, միշտ էլ հագել եմ... ինչո՞ւ հիմա չեմ կարող հագնել:

ԾՈՂԻԿ - (խիստ): Առանց ինձ վեր չկենաք, ձեզ կռանալ չի կարելի: Սպասե՛ք, մինչև վերադառնամ: (Նայում է ժամացույցին:)

Ժամանակն է: Ձեր ոտքերը... երկուսը միասին բարձրացրե՛ք: (Սրբիչով չորացնում է Հրաչյայի ոտքերը և չնայած նրա բողոքին՝ հագնում է կիսագուլպաներն ու կոշիկները:)

ԳԱՅԱՆԵ - Մի խանգարե՛ք բուժքրոջը, Հրաչյա, դուք չպետք է կռանաք: (Հիացած նայում է Ծողիկի վարժ շարժումներին:)

Հրաշալի է: Մայրդ ասաց, որ նա համաձայնվել է այսօր մնալ ձեր տանը:

ԼՐԱԶՅԱ - Այո, բայց կարիք չկա, ինչո՞ւ տանջենք խեղճ բուժքրոջը, ես արդեն լավ եմ:

ԾՈՂԻԿ - Ժիշտ է ասում, իմ մնալու կարիքը չկա: (Գնում է լողասենյակ:)

ԳԱՅԱՆԵ - Հիմա կգանգեմ Սաթենիկին, ինձ խնդրեց, որ թույլ չտամ բուժքույրը գնա...

ԼՐԱԶՅԱ - Մի գանգե՛ք, համաձայն եմ, թող մնա: Մայրս հիվանդ է, նա չպետք է հուզվի:

Հայտնվում է Ծողիկը՝ ձեռքին ցելոֆանե տոպրակ: Տոպրակը դնում է դռան մոտ, գալիս պայուսակը վերցնելու:

ԵՈՂԻԿ - Յտեսություն, տիկին Գայանե: Յտեսություն, պարոն Հրաչյա: Առավոտյան կվերադարձնեմ ձեր խալաթն ու կոշիկները: Ծնորհակալ եմ, որ ձեր կյանքը վտանգեցիք ու փրկեցիք ինձ...

ՀՐԱԶՅԱ - (ընդհատում է): Տիկին Գայանե, սա քաղաքավարական խոսք է՝ «Ծնորհակալ եմ, որ ձեր կյանքը վտանգեցիք»... (Թոյլ չտալով, որ Ծողիկը խոսի:) Սպասեք, մայրս... ես էլ... մնացեք, խնդրում եմ:

ԳԱՅԱՆԵ - Ուրեմն՝ ես գնամ: Բարի գիշեր:

ԵՈՂԻԿ - Բարի գիշեր, տիկին Գայանե:

Հրաչյան Գայանեին ուղեկցում է, հետո տոպրակն ուզում է տանել լողասենյակ, Ծողիկը վերցնում, տոպրակն ավելի մոտ է դնում դռանը: Նստում են: Ջանգ: Հրաչյան չկամ գնում է դեպի հեռախոսը:

ՀՐԱԶՅԱ - (նայում է գրանցված համարին, վերցնում լսափողը): Մամ... դեղ տվել է, ոտքերս դրել է տաք ջուրը... Այո, վրդովված եմ, որովհետև ինձ ամաչեցրեց տիկին Գայանեի մոտ... Որովհետև չթողեց՝ ես հանեմ կոշիկնես ու գուլպաներս, հետո էլ՝ հագնեմ... Այո, ես օգնեցի, որ գլուխը լվա-

նա, բայց... Ոչ, տիկին Գայանեն ճիշտ է ասել, բուժքույրն առաջ էլ գեղեցիկ էր... ըր... ոչ, առաջին անգամ եմ տեսնում նրան, բայց ուզում եմ ասել, որ... նա առաջ էլ գեղեցիկ եղած կլինի... Հիշում եմ ասածներս, բայց չգիտեմ ինչու ասացի այդ հիմար բառերը՝ պառավ կին, տգեղ...

ԵՈՂԻԿ - Տիկին:

ՀՐԱԶՅԱ - (ակամա կրկնում է): Տիկին:

ԵՈՂԻԿ - Անդաստիարակ:

ՀՐԱԶՅԱ - Անդաստիարակ:

ԵՈՂԻԿ - Բում-բում:

ՀՐԱԶՅԱ - Բում... (Սթափվում է, նայում Ծողիկին:) Հիշեցի, կողքի շենքում դպրոցական աղջիկ կա... նրա մասին էի պատմում, որ իննսունհինգ տարեկան պառավի նման է, տգեղ, անդաստիարակ և...

ԵՈՂԻԿ - Եվ՝ բում-բում:

ՀՐԱԶՅԱ - Այստեղ է, բայց ուզում է գնալ... չեմ նեղացրել... տրամադրությունը շատ բարձր է, ժպտում է, ծիծաղելի բաներ պատմում: Տիկին Գայանեն այստեղ էր, միասին զրուցում էինք ու ծիծաղում...

ԵՈՂԻԿ - Ծիծաղելի բաներ եմ պատմում... տվեք լսափողը:

ՀՐԱԶՅԱ - Չէ, բարկացած չի խոսում...

ԵՈՂԻԿ - Ես այնպիսի վիճակում եմ,

որ կարող եմ ծիծաղելի բաներ պատմել... Տվեք լսափողը:

ԼՐԱԶՅԱ - Ինքն էլ շատ է ուզում խոսել քեզ հետ, բայց... հիմա կտամ: *(Տալիս է լսափողը և ցույց տալիս ժամացույցը, հասկացնելով, որ գնալու ժամանակն է:)* Խնդրեմ, բուժքույր, խոսեք:

ԾՈՂԻԿ - Տիկին Սաթենիկ, ուզում եմ ասել, որ ձեր որդին իմ խնամքի կարիքը չունի և... Այո, լսում եմ... Կատակ է արել... Այս շենքում ապրող հարևանի աղջկա մասին: Բայց ասաց, որ աղջիկն ապրում է կողքի շենքում: Ինձ հարզում է... ինչից է երևում, որ հարզում է, եթե իմ մասին էր ասում՝ տհաճ, պառավ, անդաստիարակ, բուժքում...

Ձանգում է քջջայինը: Հրաշյան ինչ-որ բան է ասում, անջատում է հեռախոսը: Հաբեր է խմում:

ԾՈՂԻԿ - Ընկերուհուց բաժանվելը ծանր չի տանում, արդեն մոռացել է... Իհարկե, ես տեսնում եմ... *(Հրաշյան հուսահատ նստում է:)* Ոչ, չի կեղծում, չի տխրել... Ինչո՞ւ իմ շնորհիվ... ոչ, իր շնորհիվ, նա կարողացավ վերլուծել պատահաճը, հասկացավ, որ... Այո, ցույց չի տալիս, բայց զգում եմ, որ դեռ նեղված է, հուսահատ... Իհարկե, դա էլ կանցնի, նյարդային վիճակից է, եթե մեկ-երկու օր

խաղաղվի... Այո, լավ կլինի, որ մենակ չմնա... այո... *(Հրաշյան ոտքի է կանգնում:)* Բայց հիմա գուցե հանդիպեն, բացատրվեն և այդ կինն այլևս չգանգի: Լուրջ հարցեր կան... ոչ, կարիք չկա, որ իմանամ, դա նրանց հարցերն են: *(Հրաշյան նորից նստում է:)* Ես կարող եմ մնալ, բայց... ոչ թե մի օր, մի ամիս էլ, մի տարի էլ կմնամ ու կխնամեմ նրան, որքան ինքը կամենա, որովհետև նա ինձ համար... իմ պատճառով... *(Հուզվում է: Հրաշյան հասկացնում է, որ չշարունակի:)* Ես ինձ այնպիսի վտանգից է փրկել... այո, շատ եմ հուզվում, ներեցեք, հետո կասեմ... Այո, ուզում եմ գնալ... Հիմա շորերս կհագնեմ ու կգնամ... Որովհետև ինձ լողացնելու ժամանակ... *(Հրաշյան հուսահատ նստում է:)* Գլուխս լվանալու ժամանակ շորերս թրջել էր... Ոչ, հիմա նրա խալաթն եմ հագել ու կոշիկները... Բայց նա ձեզ ասում էր, որ... Ոչ, տիկին Սաթենիկ, իմ վարքը նրան իրավունք է տալիս այդպես խոսելու, որովհետև... *(Հրաշյան վախեցած ոտքի է կանգնում:)* Որովհետև այգու ցանկապատի մոտ էի կանգնել... որ երբեմն ստիպված են լինում կանգնել ու սպասել...

ԼՐԱԶՅԱ - *(խլում է լսափողը):* Սպասում էր այգու ցանկապատի մոտ,

որ շուտ տեսնեմ իրեն: Բժիշկը զանգեց, ասաց, որ բուժքույրն արդեն ցանկապատի մոտ սպասում է... Որովհետև բնակարանիս համարը չէր հիշում, հարկն էլ... Ես շտապ պետք է նրան տունը բերեի, որ ինձ խնամեր... Այո, ցանկապատի մոտ... Մեր շենքի դիմացի այգու ցանկապատի մոտ էր կանգնել...

ԵՈՂԻԿ - Տվեք լսափողը, որ ձեր մորը բացատրեմ, թե ինչու էի կանգնել և ում էի սպասում...

ՇՐԱՉՅԱ - (լսափողը հետ է քաշում: Ծողիկը նստում է): Երեք տղա էին կանգնած մայթին, փողոցի տղաներ... Միայնակ կանգնած գեղեցիկ բուժքույր, սպիտակ խալաթով... կարող էին նեղացնել... Չէ, երբ մոտեցա, տղաներն արդեն... Այդ ժամանակ էլ վատ զգացի, մի կերպ հասա բուժքրոջ մոտ... Իսկ երբ տուն էի վերադառնում՝ հենվել էի նրա ուսին, որ չընկնեմ... (Ծողիկը զարմացած լսում է): Եթե նա չլիներ... Ինչո՞ւ ես լաց լինում... ծիշտ է, նա ինձ փրկեց, երախտապարտ եմ նրան...

ԵՈՂԻԿ - (խլում է լսափողը): Լա ծիշտ չի ասում, նա է ինձ փրկել... նա ծեծեց այդ... երեք հոգի էին, դանակ ունեին... Լա ինձ ոչ միայն այդ խուլիզաններից է փրկել, այլ... (Լաց է լինում): Եթե

ինձ չհանդիպեր ու չբերեր այստեղ, ես... ես... կարող էի...

ՇՐԱՉՅԱ - (խլում է լսափողը): Մամ, հիմա էլ կարող եմ վատանալ, եթե նա գնա, զգում եմ, որ արդեն վատանում եմ... Ճնշումս էլ կարծես սկսում է բարձրանալ, իսկ նա ուզում է թողնել ինձ այս վիճակում, երբ գլխապտույտից, վատ տրամադրությունից, նաև հուսահատությունից ու հոգեկան ծանր խռովքներից դեռ չեմ սթափվել, չեմ կարողանում ոտքի վրա կանգնել... (Ծողիկը սպասում է հարմար պահի, որ խլի լսափողը): Բայց կանցնի, բուժքույրը ծիշտ էր ասում, կարծես արդեն կարողացել եմ մոռանալ կատարվածը...

ԵՈՂԻԿ - (խլում է լսափողը): Տիկին Սաթենիկ, նա լավ է զգում իրեն... Հիմա գնում եմ, թաց շորերս վերցնեմ ու կգնամ... Մի հուզվեք, ես... Լավ, կմնամ, կյանքը վտանգելով փրկել է ինձ, մի՞թե կարող եմ չմնալ... Բայց ինձ տեսնել չի ուզում, ի՞նչ անեմ... (Հրաշյան հուսահատ շարժումներ է անում): Ոչ, ես դա զգում եմ ու հասկանում նրա հայացքներից... Չեմ ուզում մնալ, որ սեռաբաժնի չպատճառեմ նրան... Մի՞թե այն ամենից հետո, ինչ արեց ինձ համար՝ կարող եմ հակառակվել ու նեղություն տալ... Ասեք, լսում եմ...

(*Հրաշյան հուսահատ ետուառաջ է անում սենյակում:*) Ինձ չի թվում, ես տեսնում եմ, նա արիամարհում է ինձ... (*Լաց է լինում:*) Լաց չեմ լինում... այո, ձեզ հավատում եմ... այո, հասկանում եմ, հիմա նրան մենակ չի կարելի թողնել... Հիմա... (*Արտասովոր ծողկեր լսափողը տալիս է Հրաշյանին:*)

ՀՐԱՉՅԱ - Նրան է թվում, որ իրեն տեսնել չեմ ուզում... Մամ, եթե այսքան բան է արել ինձ համար... Չէ, մի գա, առավոտյան ես կգամ... Չէ, շշմած չեմ... Առավոտյան իրեն էլ կբերեմ, որ տեսնես... Կմնա, չեմ թողնի, որ գնա, դու մի հուզվիր... Հյուրերի սենյակում կարող է քնել, ինչո՞ւ ամբողջ գիշեր նստի իմ կողքին... տխուր չէ, ուրախ է, արդեն ժպտում է... Դեռ անունը չգիտեմ... Չեմ մոռանա, կհարցնեմ՝ քեզ կասեմ... Բարի գիշեր: (*Չայրացած:*) Մայրս հիվանդ է, իմ միակ հարազատն է: Երբեք սուտ չեմ ասել նրան, բայց ստիպում եք, որ անընդհատ ստեմ... Մի քանի րոպեում քանի սուտ ասացի... (*Օրորվելով է քայլում:*)

ԾՈՂԻԿ - Վա՛ստ եք զգում:

ՀՐԱՉՅԱ - Ոչ... Ի՞նչ է ձեր անունը:

ԾՈՂԻԿ - (*զսպելով լացը*): Ինչո՞ւ եք ուզում իմանալ անունս, եթե գնալու եմ, եթե ինձ ատում եք, արիա-

մարհում եք և ուզում եք վայրկյան առաջ դուրս անել, իսկ երբ ես եմ ուզում գնալ՝ խանգարում եք...

ՀՐԱՉՅԱ - Ներեցեք, չեմ կարողանում ինձ կառավարել, ես դա զգում եմ... չեմ կարողանում խաղաղվել, բայց խնդրում եմ, ասեք... (*Լռում է:*)

ԾՈՂԻԿ - Մի նեղվեք, անունս իմանալու կարիքը չկա:

ՀՐԱՉՅԱ - Մայրս է ուզում իմանալ ձեր անունը, տասներորդ անգամ է հարցնում... Դե՛, ինչո՞ւ եք լռում:

ԾՈՂԻԿ - Գլխապտույտ ունեք, ինչո՞ւ չեք ասում...

ՀՐԱՉՅԱ - Երբ նորից հարցնի ձեր անունը, նրան ի՞նչ ասեմ:

ԾՈՂԻԿ - Ոչինչ էլ մի ասեք, ես գնում եմ: (*Գնում է դեպի դուռը:*)

ՀՐԱՉՅԱ - Սպասեք... (*Օրորվում է, նստում:*)

ԾՈՂԻԿ - Ի՞նչ պատահեց:

ՀՐԱՉՅԱ - Ոչինչ, գլուխս պտտվեց:

ԾՈՂԻԿ - (*ստուգում է զարկերակը, վախեցած*): Ինչո՞ւ է ձնշումն այսքան իջել: (*Նայում է դեղերի տուփերին:*) Ինչո՞ւ միանգամից այսքան դեղ եք խմել... Երբ եք խմել:

ՀՐԱՉՅԱ - Զիչ առաջ...

ԾՈՂԻԿ - (*կոնյակ է բերում*): Խմեք:

ՀՐԱՉՅԱ - (*խմում է*): Բուժքույր, եթե շատ եք ուզում գնալ՝ գնացեք:

ԾՈՂԻԿ - Կգնամ, երբ ձեր ձնշումը վերականգնվի:

ՀՐԱՉՅԱ - Չեմ ուզում, որ գնաք...

ԾՈՂԻԿ - Լռեք... տասնհինգ րոպե, խնդրում եմ:

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Չորրորդ պատկեր

Նույն տեսարանը:

ԾՈՂԻԿ - *(ստուգում է Հրաչյայի զարկերակը)*: Կարգավորվում է: Քիչ հետո կչափեք, ցածր լինի՝ ոչ թե կոնյակ, այլ մուգ թեյ կխմեք: Բարի գիշեր և առողջություն:

ՀՐԱՉՅԱ - Մորս խոստացաք...

ԾՈՂԻԿ - Չեմ կարող, իրավունք չունեմ...

ՀՐԱՉՅԱ - Ուզում եք փախչել, որովհետև... ուզում եք փախչել...

ԾՈՂԻԿ - Ես եմ փախչում:

ՀՐԱՉՅԱ - Դուք:

ԾՈՂԻԿ - Ինչո՞ւ...

ՀՐԱՉՅԱ - Որովհետև արդեն հասկանում եք, որ ուզում եք գնալ, բայց անկեղծ չեք, չեք խոստովանում, որ ուզում եք գնալ...

ԾՈՂԻԿ - Ես անկեղծ չեմ, այսինքն՝ ստո՞ւմ եմ:

ՀՐԱՉՅԱ - Մորս ասում եք՝ «չեմ գնում», ինձ ասում եք՝ «գնում եմ»... Դա սուտ չէ... ոչ, դա սուտ չէ: Դուք լավ եք հասկանում, որ դա վատ բան է՝ շատ վատ բան:

ԾՈՂԻԿ - Ինչ «շատ վատ բան»:

ՀՐԱՉՅԱ - Մարդկանց խաբել:

ԾՈՂԻԿ - Դա խաբել չէ, ընդամենը...

ձեր մորը չնեղացնելու համար եմ այդպես ասում, դա բարի մտադրությամբ ասվող հնար է, դա կարելի է:

ՀՐԱՉՅԱ - Ուրեմն՝ աշխարհում կա բարի սուտ ու չար սո՞ւտ:

ԾՈՂԻԿ - Չգիտեմի՞ք:

ՀՐԱՉՅԱ - Կարո՞ղ եք գոնե մի օրինակ բերել:

ԾՈՂԻԿ - Խնդրեմ. ձեր ստերը չար են, որովհետև խաբում եք ինձ, ձեր մորը, տիկին Գայանեին... Եթե այդպես շարունակեք, էլի քանիսին կարող եք խաբել:

ՀՐԱՉՅԱ - Ես խաբել եմ...

ԾՈՂԻԿ - Հենց նոր նրան չասացիք, թե ինչու էի մայթին կանգնել, որ կռվեցիք նրանց հետ...

ՀՐԱՉՅԱ - Մորս ասեի, թե կանգնել էիք, որ... ո՞ր...

ԾՈՂԻԿ - Հենց այդ «որ»-ը պետք է ասեիք:

ՀՐԱՉՅԱ - Մայրս չէր ասի՝ ուրեմն տուն ես բերում...

ԾՈՂԻԿ - Բայց բերեցիք, չէ՞, ձեր հասցեն ասացիք, ես էլ եկա: Այստեղ չեմ...

ՀՐԱՉՅԱ - Դուք... նրանցից չեք:

ԾՈՂԻԿ - «Որոնցի՞ց» չեմ:

ՀՐԱՉՅԱ - Եթե նրանցից չեք, ինչո՞ւ ասեի... մայրս էլ մտածե՛ր՝ ամեն օր տուն եմ բերում... *(Վերջնականապես շփոթված:)* Մայրս չգիտե՛ երբ ու որտեղ եմ գտել ձեզ... այսինքն, դուք որտեղ եք դրանց գտել ու բերել իմ տուն:

ԾՈՂԻԿ - Ես եմ դրանց գտել ու բերել ձեր տոնն:

ՀՐԱԶՅԱ - Դա չէի ուզում ասել, այլ... Ինչ-որ մեկն ինձ ասաց՝ «Լա ի՞նչ նկարելու բան է, որ կանչել ես»:

ԾՈՂԻԿ - Ոչ, այդ մարդն ինձ է ասել՝ «Դու ի՞նչ նկարելու բան ես, որ կանչել է»:

ՀՐԱԶՅԱ - Մի խանգարեք... երբ մտա տուն... ոչ, երբ հեռախոսը ձեռքիս դեղատնից դուրս եկա, արդեն դեռ չկայիք:

ԾՈՂԻԿ - Ինչպե՞ս թե՛ «արդեն դեռ չկայիք»... Ինչպե՞ս կարող էի «արդեն դեռ չլինել», երբ այնտեղ կանգնած էի, ծխախոտն էլ մատներիս մեջ:

ՀՐԱԶՅԱ - Ոչ թե դուք, նրանք դեռ չկային, իսկ դուք կայիք, իսկ ես... Այո, նրանց ես եմ տուն բերել, իսկ դուք նրանց տարել եք... (Լռում է, սևեռուն նայում Ծողիկին:)

ԾՈՂԻԿ - Ո՛ր եմ տարել նրանց:

ՀՐԱԶՅԱ - (հուսահատ): Ինչե՞ր եմ դուրս տալիս... վերջ տվեք, ուզում եք, որ խելքս թոցնեմ: Լստեք ու լռեք: (Ծողիկը նստում է, ինքը ետուտառաջ է քայլում: Հետո, տեսնելով վախից կծկված աղջկան՝ զղջումով:) Ներեցեք, չեմ հասկանում, ինչ է կատարվում ինձ հետ: (Դադարից հետո:): Հիշեցի... ի՞նչ է ձեր անունը, որ մորս ասեմ:

ԾՈՂԻԿ - Մի քանի անգամ ասել եմ,

բայց նորից կասեմ իմ գրողի տարած անունը միայն ձեր մոր նկատմամբ ունեցած իմ հարգանքից: (Հուզվում է:) Որ առանց ինձ ճանաչելու այդպես սիրալիր է վերաբերվում:

ՀՐԱԶՅԱ - Մի քանի անգամ չեք ասել ձեր անունը:

ԾՈՂԻԿ - Ծողիկ է անունս:

ՀՐԱԶՅԱ - Դա ի՞նչ գրողի տարած անուն է: (Ի պատասխան աղջկա զարմացած հայացքին:) Ուզում էի ասել՝ դա գրողի տարած անուն չէ, ինչո՞ւ եք ասում «գրողի տարած»:

ԾՈՂԻԿ - Լավ, թող գրողի տարած չլինի: Հիմա թույլ տվեք գնամ:

ՀՐԱԶՅԱ - Թույլ չեմ տա... էլի նեղացրի: Ծողիկ, վայրենու նման եմ խոսում ձեզ հետ, ներեք:

ԾՈՂԻԿ - Սովորական բան է:

ՀՐԱԶՅԱ - Սովորական...

ԾՈՂԻԿ - Ձեր վերաբերմունքից չեմ վրդովվում, իմ ձակատագրից եմ նեղացած: Ինձ ոչինչ չի հաջողվում, դուք էլ տեսաք, նույնիսկ նրանց պես չկարողացա դառնալ: Ծնորհակալ եմ, փրկեցիք, բայց հիմա էլ ձեզ հետ եմ կռվում ու... (Անսպասելի:) Դուք եք մեղավոր, որ ամեն ինչ այսպես եղավ:

ՀՐԱԶՅԱ - Ե՛ս...

ԾՈՂԻԿ - Ինչո՞ւ չթողեցիք, որ մնայի այնտեղ... (Անձայն լալիս է:)

ՀՐԱԶՅԱ - Ամեն ինչ կարող է փոխվել... դեպի լավը:

ԾՈՂԻԿ - Ոչինչ չի փոխվի, իմ մեջ է պատճառը...

**Գալիս է Գայանեն, մատուցա-
րանի վրա բերում է երկու բաժակ
մածուն, ափսեով կարկանդակ:**

ԳԱՅԱՆԵ - *(շփոթված):* Հարմար պահի չեմ եկել... *(Մատուցարանը դնում է սեղանին, ուզում է գնալ:)*

ՀՐԱՉՅԱ - *(ուրախացած):* Ծատ հարմար պահի եք եկել: Հենց նոր ձեր մասին էինք խոսում:

ԳԱՅԱՆԵ - Բայց նա լաց է լինում:

ՀՐԱՉՅԱ - Հիմա է լաց լինում, քիչ առաջ այնքան ծիծաղելի բաներ պատմեց դպրոցական կյանքից, ընկերներից, որ լացը եկավ: Ըիշտ չեմ ասում, Ծողիկ: *(Ծողիկը անսպասելի բարձր ծիծաղում է:)* Տեսնո՞ւմ եք:

ԳԱՅԱՆԵ - Ծողիկ... հիանալի անուն է, Սաթենիկին ասեմ... Հրաչյա, մայրդ ասաց, որ սոված եք, թեև խոստացել եք գնալ խանութ, բայց անպայման մոռացած կլինեք: Խանութ չեք գնացել, չէ՞:

ՀՐԱՉՅԱ - Զիչ առաջ կերանք, միասին էլ խանութ էինք գնացել:

ԾՈՂԻԿ - Տիկին Գայանե, ձիշտ չի ասում՝ ոչինչ չի կերել ու խանութ էլ չենք գնացել: Իսկ նա սոված չպետք է մնա՝ գլխացավը կարող է կրկնվել:

ՀՐԱՉՅԱ - Ներեցեք, Ծողիկը ձիշտ է ասում՝ չենք կերել:

ԾՈՂԻԿ - Տիկին Գայանե, գլխացավից աշխատունակությունը թուլանում է, դա ազդում է տեսողության վրա, ձեռքերն սկսում են դողալ... Դրանք աննկատ են տեղի ունենում, իսկ նկարիչի համար, գիտեք, որ տեսողությունն ամենակարևորն է, որովհետև գույնի զգացողությունը... Ես գրքերում կարդացել եմ, բայց դուք էլ ասեք իրեն:

ԳԱՅԱՆԵ - Ես էլ եմ այդպես կարծում: Ուրեմն՝ կերեք: Հետո էլ սուրճ կբերեմ: Պարոն Հրաչյա, ինչո՞ւ էր Ծողիկը լաց լինում, գուցե ես կարողանամ օգնել...

ՀՐԱՉՅԱ - Ծողիկը լաց եղավ, որովհետև...

ԳԱՅԱՆԵ - Հիշել է իր մանկությունը, ընկերներին...

ՀՐԱՉՅԱ - Այո, նա շուտ-շուտ է հիշում իր մանկությունը և շուտ-շուտ էլ լաց է լինում:

ԳԱՅԱՆԵ - *(Ծողիկին):* Ես էլ որ հիշում եմ մանկությունս, լացս գալիս է, բայց դուք երիտասարդ եք, երջանիկ, եռանդուն, հաջողակ...

ԾՈՂԻԿ - Հաջողակ... եթե ձեզ պատմեմ, թե այսօր որտեղ էի կանգնած, դուք կհասկանաք, թե որքան էի երջանիկ և... որովհետև, եթե այսօր պարոն Հրաչյան...

ՀՐԱՉՅԱ - *(ընդհատում է):* Պետք չէ... Տիկին Գայանե, Ծողիկը շուտ է հուզվում:

ԳԱՅԱՆԵ - (*Ծողկկին*): Չպետք է հուզվեք, որ խնամեք հիվանդին: Տեսնում եմ, որ նա գունատվել է:

ՀՐԱԶՅԱ - Այո, շատ եմ գունատվել:

ԾՈՂԻԿ - Հիվանդն արդեն լավ է և... ուզում է, որ գնամ:

ԳԱՅԱՆԵ - (*Հրաչյային*): Ուզում եք, որ գնամ:

ՀՐԱԶՅԱ - Ոչ մի դեպքում: Սկսում եմ վատ զգալ, ծնշումս էլ բարձրացել է... ոչ, իջել է, բայց շուտով կսկսի բարձրանալ:

ԳԱՅԱՆԵ - Ուրեմն՝ բուժքույրը կմնա: Իսկ ես գնամ: Բարի գիշեր:

ԾՈՂԻԿ - Բարի գիշեր:

Հրաչյան ուղեկցում է Գայանեին, վերադառնում:

ՀՐԱԶՅԱ - (*կեղծ վրդովմունքով*): Եթե վաղն ամբողջ քաղաքն իմանա, որ ընկերուհիս լքել է ինձ, բնական է, որ ես էլ, անպայման, հուսահատությունից ինքնասպան պետք է լինեմ՝ ինչպես ընդունված է նման դեպքերում: Դուք ջանք պետք է գործադրեք, որ քաջություն ձեռք բերեմ ու ինքնասպան լինեմ: Հակառակ դեպքում վաղը կլինի իմ համաշխարհային խայտառակության օրը, որովհետև մեր փողոցի կանայք, տեսնելով, որ դեռ ինքնասպան չեմ եղել, ընկերուհուս կհամարեն զարգացած, ինձ՝ հետամնաց, անկիրթ, ստոր, վայրենի,

նի, արնախում ու փոքրոգի, այնքան փոքրոգի, այնքան վայրենի ու անկիրթ, որ նույնիսկ ինքնասպանության ընդունակ չէ:

ԾՈՂԻԿ - Ծիծաղելի չէ:

ՀՐԱԶՅԱ - Ասեք տան հեռախոսի համարը, կխոսեմ ձեր մոր կամ հոր հետ:

ԾՈՂԻԿ - Ոչ: Հայրս քնած կլինի, մայրս էլ... քնած էլ չլինեն, չեն համաձայնվի, որ գիշերը տուն չգնամ:

ՀՐԱԶՅԱ - Իսկ եթե ծնշումս նորից բարձրանամ... կամ էլի շատ դեղ խմեմ ու նորից իջնի, ի՞նչ անեմ:

ԾՈՂԻԿ - Գիտեմ, որ հանգիստ կքնեք: (*Տոպրակն ու պայուսակը գրկած գնում է դեպի դուռը*):

ՀՐԱԶՅԱ - (*իբր՝ հուսահատ*): Ուզում եք, որ վաղն ամբողջ քաղաքն իմանա իմ ինքնասպան լինելու մասին...

ԾՈՂԻԿ - Դուք ինքնասպան լինել չեք կարող, պարոն Հրաչյա, իմ փրկարար, իզուր եք ինձ ծաղրում: Հանգիստ եղեք, որովհետև... որովհետև... ուշ է, ես գնամ...

ՀՐԱԶՅԱ - Ասացիք «որովհետև»... շարունակեք:

ԾՈՂԻԿ - Որովհետև... եթե ասեմ պատճառը, լավ չի լինի...

ՀՐԱԶՅԱ - Ասեք, թող լավ չլինի:

ԾՈՂԻԿ - Որովհետև այդ կնոջը չեք սիրել... էլ ոչինչ չեմ ասի:

ՀՐԱԶՅԱ - Ինչո՞ւ եք այդպես կարծում:

ԵՈՂԻԿ - Որովհետև... Առաջին. նրա խաբեության լուրն առնելուց հետո շատ հեշտ անցաք առօրյա հոգսերին: Երկրորդ. հենց առիթ եղավ, փողոցային տղաների հետ կոիվ սարքեցիք ու այդ կովում... ոչ, դրանից հետո ձեր «վիշտը» կարողացաք մոռանալ ու նույնիսկ ուրախ էիք... Ինչո՞ւ եք լուր, արդարացեք:

ՀՐԱԶՅԱ - Զգում եմ, երրորդ պատժառ էլ կա:

ԵՈՂԻԿ - Երրորդն էլ այն է, որ... դուք ընդհանրապես սիրել չեք կարող: Բացատրե՛մ: Խնդրե՛մ, բայց դա չորրորդը կլինի, և՛ նախորդներից ամենակարևորը. ձեր կյանքը վտանգելով փրկեցիք ինչ-որ մեկին, հետո կարողացաք նրան արհամարհել ու չարախոսել... պառավ, անդաստիարակ, բումբում... Դուք չեք կարող սիրել, որովհետև սիրում եք, որ միայն ձեզ սիրեն, միայն ձեզնով հիանան... Ներեցեք, ավելորդ բաներ ասացի: Հիմա տեսնո՞ւմ եք, ինչ հեշտ եմ թշնամիներ ձեռք բերում: *(Գնալով դեպի դուռը:)* Ասացի, չէ՞, հիմար եմ: Էլ հարց չտաք, գնում եմ:

ՀՐԱԶՅԱ - Հինգերորդ պատժառ չկա:

ԵՈՂԻԿ - Չկա: Հիմա ձեր հերթն է,

ուզում եք կոպտել, զգում եմ... Ասեք, մի վախեցեք, այս երեկո շատ լսեցի: Արդեն ընտելացել եմ: Ո՞վ է ուզում ձշմարտություն լսել իր մասին՝ ոչ ոք, բայց ես ասում եմ, որովհետև հիմար եմ, որովհետև ինձ թվում է, թե դրանով կարող եմ օգնել, բայց միշտ սխալվում եմ: Սկսեք, ես արժանի եմ դրան, արդեն ասացի, որ մարդկանց ինձ հետ թշնամացնելու մեծ տաղանդ ունեմ: Համբերությամբ կլսեմ և առանց պատասխանելու կգնամ:

ՀՐԱԶՅԱ - Իսկ եթե այդ բոլորն անում եմ կորուստս մոռացության տալու համար: Գուցե ուզում եմ մնաք, որ զբաղեցնեք ինձ, եթե մենակ մնամ, գուցե դավաճանության ցավին չդիմանամ: Դա հնարավոր չէ՞:

ԵՈՂԻԿ - Հնարավոր չէ: Ես տեսել եմ սեր կորցրած մարդկանց՝ տղամարդ, թե կին: Ամեն օր տեսնում էի՝ նրանք ինչպես են տանջվում, որ ստիպեն իրենց մոռանալ եղածը, որ կարողանան խաղաղվել, բայց չէին կարողանում: Գիշերները չէին կարողանում քնել, որովհետև միայն մտածում էին՝ ինչպես սիրելիին հետ բերեն: Ես երկար ժամանակ չէի կարողանում հասկանալ նրանց... Հասկացա, երբ գիշերները ինձ պատմում էին իրենց հիվանդութ-

յան իսկական պատճառի մասին, ինչը ոչ մի պայմանով չէին ուզում խոստովանել ոչ բժիշկներին, ոչ հարազատներին: Ես զգում ու հասկանում էի նրանց ցավը, նրանք էլ վստահում էին ինձ: Երանց հետ անքուն լսում էի պատմածները, տեսնում նրանց արցունքները, նրանք էլ՝ իմը: Երանք ծիծաղում էին ինձ վրա, մի քիչ հանգստանում, քիչ անց նորից սկսում էին լաց լինել: Առավոտյան, երբ հարազատները գալիս էին, իմ հիվանդների հետ ծիծաղով էի դիմավորում նրանց: Իսկ երբ հարազատ դարձած հիվանդներից մեկը դուրս էր գրվում, նրանից չէի կարողանում բաժանվել, նա էլ՝ ինձնից: Հարազատները, ոչինչ չհասկանալով, նայում էին, գրկախառնվում մեզ հետ ու լաց լինելով տանում իրենց՝ արդեն առողջ հիվանդին: (Դադար:)

ՀՐԱԶՅԱ - Այդպիսի սեր եք կորցրել:

ԵՈՂԻԿ - Չեմ ուզում այդ հարցին պատասխանել:

ՀՐԱԶՅԱ - Մի պատասխանեք: Առաջին անգամ եմ այդքան անկեղծ խոսքեր լսում իմ մասին: Գուցե իրո՞ք նրան էլ, այն երկուսին էլ չեմ սիրել, գուցե նրանք էլ ինձ չեն սիրել... Չե՞ք բարկանա, եթե մի տխուր ու ոչ բարեկիրթ խոստովանություն անեմ:

ԵՈՂԻԿ - Չեմ բարկանա:

ՀՐԱԶՅԱ - (հքր՝ տխուր և հուսահատ): Ինձ մի համեմատեք խելոք, շնորհալի, կիրթ ու զգայուն մարդկանց հետ, ես հիմա... շատ սոված եմ:

ԵՈՂԻԿ - (անսպասելի շրջադարձից շփոթված ծիծաղում է): Ահա, տեսնո՞ւմ եք, ինչ եք անում, սա եղա՞մ, հիմա ինչպե՞ս հասկանամ ձեզ: Այս վիճակում սով եք զգում... Զիչ առաջ արվեստանոցում նայում էի ձեր նկարած երեխաների դեմքերին... Հիմա նայում եմ ձեզ, լսում ձեր բառերն ու չեմ կարողանում հասկանալ՝ արդյո՞ք երեխաներին նկարող այս մարդն էլ մի երեխա չէ: Ու չեմ կարողանում հավատալ, որ այդ երեխան մի քանի ժամ առաջ իր կյանքը վտանգելով փրկեց ինձ: Նայում եմ ձեզ ու մտածում՝ դուք է՞լ մի... (Լռում է:)

ՀՐԱԶՅԱ - Ավարտեք ձեր խոսքը:

ԵՈՂԻԿ - Կնեղանաք:

ՀՐԱԶՅԱ - Եթե սիրել չկարողանալու մեղադրանքից չնեղացա, ուրիշ ոչ մի բան ինձ չի կարող նեղացնել: «Ես է՞լ մի...»...

ԵՈՂԻԿ - Մի խենթ չեք:

ՀՐԱԶՅԱ - Չեմ կարող չհամաձայնվել ձեզ հետ, բայց կարող եմ ասել, որ հիմա ես էլ ինձ չեմ հասկանում: Չեմ հասկանում, որովհետև հիմա միայն մի բան եմ

զգում, որ... շատ եմ սոված, որ հիմա պետք է գնանք խանութ և ուտելիք գնենք... Շատ ուտելիք, որ դրանից հետո կարողանանք իրար հասկանալ:

ԵՈՂԻԿ - Ձեզ հետ լուրջ խոսել հնարավոր չէ... ու մի փորձեք նայել ինձ խեղճացած դեմքով... (Ծիծաղում է:) Այս ինչ եք անում ինձ հետ... ես տուն եմ գնալու, այդպես լավ կլինի և ձեզ համար, և ինձ համար:

ՀՐԱՉՅԱ - (խիստ): Ո՞ր եք ուզում գնալ... Գնում եք, որ վաղը նորից մայրերին կանգնեք, գուցե այսօր եք կանգնելու:

ԵՈՂԻԿ - (ժշում է): Ոչ:

ՀՐԱՉՅԱ - Իսկ եթե՝ «այո՞», ինչպե՞ս ստուգեմ, ձեզ որտե՞ղ փնտրեմ, այս մեծ քաղաքի ո՞ր մայրի վրա:

ԵՈՂԻԿ - Ոչ, մայրի վրա չէ... երբեք... (Հուսահատ:) Ինչո՞ւ ասացիք...

ՀՐԱՉՅԱ - Մի խաբեք ձեզ, ինձ, որովհետև... Էլի հարցեր ունեմ, բայց դրանք տալու իրավունքը չունեմ:

ԵՈՂԻԿ - Էլ ոչ մի հարց մի տվեք:

ՀՐԱՉՅԱ - Հասկացեք, այսօրվա արածս հետագա ամբողջ կյանքում լուսավորելու է հոգիս, բայց մեծ ցավ կլինի ինձ համար, եթե ձեզ էլ, ինձ էլ հուսախաբ անեք: Գուցե էլ չտեսնեմ ձեզ, բայց այն միտքը, որ կարող եք նորից

կանգնել մայրերին, կտանջի, ինձ չեմ ների, որ չկարողացա այնպես անել, որ դուք չվերադառնաք այդ...

ԵՈՂԻԿ - Ոչ, հավատացեք:

ՀՐԱՉՅԱ - Չեմ կարող հավատալ... Եթե մի օր նորից ձեզ տեսնեմ մայրին կամ հյուրանոցի պատի տակ կանգնած, հերթական «հաճախորդի» սպասելիս... հերթական, հասկանում եք: Ի՞նչ անեմ, ի՞նչ ասեմ, բայց ձեզ մայրին թողնելու և փախչելու իրավունքն էլ չունեմ:

ԵՈՂԻԿ - Թվում էր, մոռացել եմ ժամեր առաջ ինձ հետ պատահածը, բայց հիշեցրիք եղածն ու մոռացության երջանիկ ժամերից ոչինչ չմնաց, ոչինչ... Հիմա ինձ թվում է, որ նորից մայրին եմ կանգնած... Իսկ եթե չգայիք...

ՀՐԱՉՅԱ - Վերջին հարցը: Մի բան էլ ձշտեմ... թեև քիչ առաջ իմ կասկածը հաստատեցիք:

ԵՈՂԻԿ - Ի՞նչ կասկած:

ՀՐԱՉՅԱ - Երբ ասացի ձեր ծնողների մասին... չուզեցիք, որ գնանք ձեր տուն, չուզեցիք, որ խոսեմ նրանց հետ... Չեք ուզում պատասխանել:

ԵՈՂԻԿ - Չեմ ուզում պատասխանել: Էլ հարց չտաք, չեմ դիմանում, ուզում եմ հեռու փախչել այստեղից, ձեզնից, ձեր մորից, բուրից, ինձնից... հեռու, ինչքան հնարավոր է հեռու...

Շողիկը վագում է դեպի դուռը, Հրաչյան նրան հետ է բերում: Աղջիկը մատում է բազմոցին, Հրաչյան նրա ձեռքը բաց չի թողնում, մատում է կողքը... զգույշ համբուրում է ձեռքը: Շողիկը ձեռքը վախեցած հետ է քաշում և ոտքի է կանգնում:

ԾՈՂԻԿ - Ի՞նչ եք անում...

Քաղաքային հեռախոսագանգ: Ուշադրություն չեմ դարձնում: Ձանգը լռում է:

ՀՐԱՉՅԱ - Էլ հարց չեմ տա: Դուք որոշեք ձեր անելիքը: Ես ուզում եմ, որ մնաք, եթե չեք ուզում... *(Ձանգ: Նայում է գրանցված համարին:)* Պատասխանեք, խնդրում եմ:

ԾՈՂԻԿ - *(վախեցած):* Ոչ:

ՀՐԱՉՅԱ - Մայրս է:

ԾՈՂԻԿ - Ոչ:

ՀՐԱՉՅԱ - Ձեզ հետ է ուզում խոսել... խնդրում եմ:

ԾՈՂԻԿ - Ոչ: Ասեք՝ գնացել է: Ի՞նչ երեսով խոսեմ, ես խաբեցի նրան...

ՀՐԱՉՅԱ - Չեք խաբել:

ԾՈՂԻԿ - Ուզում էի խաբել... Ոչ, խաբեցի, եթե որոշել էի խաբել, ուրեմն՝ արդեն խաբել եմ:

ՀՐԱՉՅԱ - Ձեզ ավելի է հավատում, քան՝ ինձ: Պատասխանեք: Կմտածի, որ ասել եմ՝ գնացեք, դուք էլ... Եթե ուզենա՝ ինչպե՞ս ստուգի, որտե՞ղ գտնի ձեզ:

ԾՈՂԻԿ - *(վերցնում է լսափողը):*

Լսում եմ, տիկին Սաթենիկ... *(Հրաչյան աննկատ վերցնում է տոպրակը, տանում լողասենյակ և վերադառնում:)* Այո, տիկին Գայանեն այստեղ էր, կարկանդակ բերեց, գրուցեցինք... նա անսահման բարի է, հոգատար... Ուզում է խանութ գնալ... դեռ չի գնացել: Ոչինչ չի կերել, կարկանդակներն էլ մնացել են... Ես էլ չեմ կերել, ժամանակ չեղավ: Հիմա կասեմ, որ գնա... Այո, դա էլ կասեմ... Ես էլ եմ ուզում խոսել ձեզ հետ: Դա էլ կասեմ նրան, բարի գիշեր: *(Դնում է լսափողը, նայում Հրաչյային:)*

ՀՐԱՉՅԱ - Ի՞նչ եք ուզում խոսել մորս հետ:

ԾՈՂԻԿ - Ինձ թվաց՝ նա գիտե, որ իրեն բան ունեմ ասելու:

ՀՐԱՉՅԱ - Մի հնարեք, ոչինչ չգիտե ու չի ուզում իմանալ: Ու ոչինչ չի եղել, որ ուզենա իմանալ: Չի եղել, չէ՛, էլ ի՞նչ եք ուզում ասել:

ԾՈՂԻԿ - Դեռ ոչինչ չեմ ասել:

ՀՐԱՉՅԱ - Դե՞ռ... ուրեմն որոշել եք ասել: *(Աշխատում խաղաղվել:)* Ի՞նչ էր ուզում, որ ինձ ասեք:

ԾՈՂԻԿ - Ասում էր, որ շատ գոհ է ձեզնից:

ՀՐԱՉՅԱ - Որ ձեզ դուրս չեմ արել:

ԾՈՂԻԿ - Այդպիսի բան չասաց:

ՀՐԱՉՅԱ - Բայց կես ժամից էլի կզանգի, նա արդեն կասկածում է՝ մի բան եղել է, և այդ մի բանի

մեղավորը ես եմ: Լա անընդհատ կստուգի՝ այստեղ եք: Մորս վստահությունն էլ կորցրի: Հիմա մի բան ասելու համար պետք է խնդրեմ, որ դուք միջնորդեք...

ԵՈՂԻԿ - Խնդրում եմ, լռեք:

ԸՐԱԶՅԱ - Գնում եմ խանութ, իսկ դուք զանգեք տուն, ասեք, որ հիվանդի մոտ եք ու չեք կարող գալ: Զանգեք:

ԵՈՂԻԿ - (շփոթված): Չեմ կարող զանգել, նրանք ձիշտ չեն հասկանա տուն չգնալս: Անպայման պետք է գնամ, ինձ կսպասեն... արդեն սպասում են, ուշացել եմ:

ԸՐԱԶՅԱ - Իմ մեքենայով կգնանք, ձեր տնեցիներին կբացատրեմ, որ գիշերը հիվանդի մոտ եք լինելու և միասին կվերադառնանք:

ԵՈՂԻԿ - Միասին... ոչ: Ընկերուհիներս... մեր տնեցիք... ուզում եք մերոնք տեսնեն, որ ձեզ հետ եկա ու ձեզ հետ էլ գնում եմ: Ավելի լավ է ձեր մորն ասեք, որ փախել եմ... կամ էլ ասեք... ինչ ուզում եք՝ ասեք, ես չեմ դժգոհի: (Ժպտում է:) Ուզենամ էլ՝ չեմ կարող դժգոհել, որովհետև էլ ձեզ չեմ տեսնի:

ԸՐԱԶՅԱ - Լրիվ մոռացել էի... չեք ուզում, որ ձեզ համար աշխատանք գտնեմ:

ԵՈՂԻԿ - Իհարկե, ուզում եմ, բայց այս ուշ ժամին...

ԸՐԱԶՅԱ - (ծոցատեսքով համար է փնտրում, զանգում է): Ալո, բարև

ձեզ, բժիշկ Տարոնյանին եմ խնդրում: (Դադար:) Բարև, ես եմ, ներիր, որ ուշ ժամի եմ զանգում... Իհարկե, բժշկի համար ինչ ուշ ժամ: Լավ եմ, դո՛ւ... Ինչո՞ւ չես գալիս՝ նկարդ կիսատ է: Բայց դու էլ ծերանում ես, նորից սկսեմ նկարել... Հիմա ասա, երբ ես գալու՞ օր, ժամ ասա... մի շաբաթ անց այս օրը: Լավ, կսպասեմ, բայց նախօրոք կզանգես: Հիմա էլ իմ խնդիրքն ասեմ. բուժքրոջ տեղ ունե՞ս: (Ծողիկը վախեցած ոտքի է կանգնում:) Փորձ ունի՞ երեք տարվա... (Ծողիկը գլխի շարժումով «այո» է ասում:) Զեզ կնկարեմ զենք ու զրահով, բեղերով, խռիվ, երկար մազերով, քարանձավի առաջ, մահակն էլ ձեռքիդ... (Ծիծաղում է: Ծողիկը լարված է:) Բուժքրոջը... կրակի կտոր է, խելքի տոպրակ, սիրուն, եռանդուն... այնքան սիրուն, որ սրկելիս հիվանդներդ կժպտան: Բայց մի մեծ թերություն ունի՝ անկեղծ և ճշմարիտ է խոսում, եթե նրա ներկայությամբ աննշան սուտ ասեք՝ կխայտառակի ձեզ: Եվ առաջին հերթին՝ քեզ: Համաձայն ես... շնորհակալ եմ, երբ կարող է գալ: Վա՛ղը... ժամը տասին: (Ծողիկը նորից «այո» է ասում:) Միանգամից աշխատանքի կգա: Ինչո՞ւ ես ցտեսություն ասում, ես դեռ... կանչո՞ւմ եմ... լավ են անում, ո-

րովհետև արդեն հոգնեցի քեզ-նից, գնա ու շարունակիր քո խեղճ հիվանդներին խաբել, իբր՝ լավ բժիշկ ես... Ոչ մի ցտեսություն, արդեն ինձ պետք չես: (Դնում է լսափողը: Ծողիկը գրկում է նրան: Հրաչյան ձեռքերը կողմ տարածած հանգիստ սպասում է: Ծողիկը, շփոթված իր արածից՝ նստում է:)

ԵՈՂԻԿ - Ներեցեք, հանկարծ եղավ:

ԼՐԱԶՅԱ - Ես վազեցի խանութ, զանգեք ձեր ամենամտերիմ ու շատ սիրելի, բայց և՛ շատ բամբասկոտ ընկերուհուն, մի լավ բամբասեք, քամուն տվեք ինձ, որ ժամանակ անցնի՝ մինչև վերադառնամ: (Գնում է, կեսժամփա՝ կանգնում:)

Մի բան էլ. մայրս զանգելու է: Կպատասխանեք, բայց շատ անկեղծ չխոսեք: Իսկ մայրս կզանգի՝ հենց ոտքս դռնից դուրս դնեմ: Չե՞ք հավատում: Ստուգե՛նք: (Ծողիկ գլխով «այո» է ասում: Հրաչյան դուրս է գնում: Զանգ: Դուռը բացվում է, երևում է Հրաչյան, նայում ծիծաղող Ծողիկին և մատնացույց անում հեռախոսը:)

Վերցրեք լսափողը... և հիշեք, որ շատ անկեղծանալ պետք չէ: (Հրաչյան գնում է:)

ԵՈՂԻԿ - Այո... (Ծիծաղում է:)

Ձեր որդին ասաց, որ մինչև ինքը դուրս գա դռնից՝ կզանգեք: Այդպես էլ եղավ: Գնաց խանութ...

տրամադրությունը լավ է... Ինչո՞ւ չեք քնում, տիկին Սաթենիկ, լյարդը չի թողնում... լավ է, որ չի ցավում... Իհարկե, կարելի է, հարցրեք: Ամուսնացած չեմ, բայց... չգիտեմ ինչպես ասել... ԶԱԳՍ-ով ամուսնացել եմ, բայց ամուսնացած չեմ եղել, որովհետև... (Դադար:)

Կարող եմ ասել, գաղտնիք չէ, հարսանիքի նախորդ օրը փեսացուս մահացավ, երեք տարի առաջ: Վթարից: Ես ընդունվել էի բժշկական... (Դադար:)

Հիմա կհանգստանամ... մի ուրիշ անգամ խոսենք, լավ: Տիկին Սաթենիկ, նա աշխատանք գտավ ինձ համար, պատկերացնո՞ւմ եք, թե դա... (Ծփոթվում է:)

Չէ, ես աշխատանք ունեի, բայց սա ավելի լավ է: Իհարկե, այսօր կմնամ... Այո, այդ աղջկա պատճառով չի վշտանում: Չեմ կարծում, որ թաքցնում է: Եթե չկարողանա՝ քնաբեր կտամ. քնելը շատ է անհրաժեշտ: Չեմ նկատել, որ ծխում է, սենյակում հոտ չկա... Մի հուզվեք, արդեն հասկացա, որ Հրաչյան ձեր միակ զավակն է... Դուք շատ սիրալիր եք վերաբերվում, իսկ ես ուզում եմ հանդիպել ձեզ... (Հուզվում է:)

Չնայած խոստացել էի, որ կմնամ, բայց ուզում էի առանց ձեզ ասելու գնալ... ինձ մեղավոր եմ զգում ու ներողութ-

յուն եմ խնդրում: Բայց խնդրում եմ, իմ ասածը նրան չհայտնեք... Ծնորհակալ եմ: Բարի գիշեր: (Դնում է լսափողը, գնում է լողասենյակ, բերում է տոպրակը, ժամացույցին ու դռանը նայելով զանգում է:) Մարիամ, ներիր, որ ուշ եմ զանգում... Չգիտեմ՝ որտեղ եմ... Չգիտեմ՝ ինչպես եմ, միայն գիտեմ, որ հաջողություն ունեցա, աշխատանք գտա: Կես ժամից քո տանը կլինեմ: Ինչո՞ւ չգամ... Բարեկամներ են եկել, բայց ո՞ր գնամ: Լավ, կզանգեմ Անուշին... ամուսնացել է... մի շաբաթ կլինի, որ չեմ խոսել, ինձ չի զանգել, բան չի ասել: Տաթևին կզանգեմ ու կխնդրեմ, որ... Այստեղ չեմ կարող մնալ: Հետո կպատմեմ, հիմա ժամանակ չունեմ, շտապում եմ... հա, ասա...

Գալիս է Հրաչյան ուտելիքով տոպրակը ձեռքին: Կաղում է, ձեռքը սեղմել է աչքին: Աննկատ մնալով՝ լսում է:

ԾՈՂԻԿ - Նկարիչ է... պատահաբար, փողոցում... ինձ փրկեց երեք խուլիզաններից ու տունը բերեց: Հա, կոհիվ եղավ... դանակներով էին, բայց նա ծեծելով քեց... Մայթին էի կանգնել, որ... երթուղայինի էի սպասում: Թեզ ասել էի, որ Տաթևի տուն կգնամ, բայց ուրիշ բան եղավ: Գիտես, որ ամեն օր

ձեզնից մեկի տանն եմ գիշերում: Իսկ վարձով ինչպես ապրեմ... Եղբորս վիրահատությունը, նրա մահը, մորս մահը, վաճառված տան փողից բան մնաց... Աշխատանքից էլ, գիտես, ինչու էին հեռացրել: Նոր եկած գլխավորը սկսեց... դե, մի օր համբերեցի, երկու օր, հետո սկսեցի կոպտել, իսկ ապտակից հետո սպառնաց, որ եթե իր ուզածով չլինի՝ բոլորին կասի, որ գիշերները մտնում եմ հիվանդների վերմակի տակ ու փող եմ աշխատում: Ասածն արեց... Ո՞վ կպաշտպաներ, վախենում էին, նախարարությունից էր եկել: Ճիշտ է, մի անգամ մտել եմ... ապտակից երեք ամիս առաջ: Յոթանասունն անց ուսուցիչ էր, դողացնում էր, երեք վերմակով ծածկեցի, չօգնեց, նոր էին վիրահատել, ստիպված մեջքը գրկեցի, տաքացավ, քնեց: Ես էլ որ տաքացա՝ քնեցի: Ծատ էի հոգնած: Առավոտյան գլխավորը տեսավ, ծիծաղեց, բայց հետո սկսեց ձեռքերին ազատություն տալ... Ո՞նց չապտակեի, եթե քաշքշում էր: Վերջը՝ ինձ հեռացրեց, նույն մեղադրանքով ինստիտուտից էլ հեռացնել տվեց՝ երրորդ կուրսից... Երկու տարի է, շաբաթը մեկ, հագուստներիս ծամպրուկը մեկիդ տունն եմ բերում: Հա, օգնում եք, իսկ եթե մի

օր չկարողանաք՝ ինչ եմ անելու: Այսօր... այսօր չդիմացա ու որոշեցի... մայթին էի կանգնել... (Հրաչյան հետ-հետ է գնում, թաքնվում է:) Տունը ո՞նց չծախեինք, եղբորս վիրահատել էր պետք... Մարիամ, եթե այս աշխատանքը չգտնվեր, էլի մայթին էի կանգնելու... չէ, չկարողացա, մայթին էլ չկարողացա հարմարվել... Ինչ՝ «առիթից օգտվել»... Մարիամ, նա զգվում է ինձնից... փող տվեց, որ գնամ տուն... Ես նրա ոտքերը պետք է համբուրեի... հիմա էլ կհամբուրեմ, բայց վախենում եմ՝ բարկանա... Գուցե հենց վաղը համբուրեմ, երբ ինձ տանի աշխատանքի... Լավ, շտապում եմ, զանգեմ Տաթևին, գուցե այս գիշեր տեղ տա: Վաղը ծամպրուկիցս մի երկու շոր բեր, հագնեմ... Ձեր տնից մի կանգառ ներքև լողավազան կա, ժամը իննին, դարպասի մոտ, որ տասին աշխատանքի հասնեմ: Ծտապում եմ, խանութ է գնացել... պետք է փախչեմ մինչև նրա վերադառնալը, բարի գիշեր... (Դնում է լսափողը, զանգում:) Տաթև, ես եմ, Ծողիկը... Այսօր Մարիամի մոտ չեմ կարող գիշերել... Խնդրում եմ, Տաթև ջան, երկու օրով տեղ տուր, մինչև մի բան անեմ... ապրես. քույրիկս, շնորհակալ եմ, քիչ հետո կգամ,

մայրիկիդ բարևիր: (Դնում է լսափողը, վերցնում տոպրակն ու պայուսակը, գնում է դեպի դուռը:) Միայն չհանդիպեմ նրան: (Ձանգ:) Ինչո՞ւ զանգեց, հիմա ինչ անեմ, ինչ ասեմ այս կնոջը... չեմ վերցնի... չեմ վերցնի... (Իրերը դնում է հատակին, մոտենում հեռախոսին:) Դեռ չի եկել, երևի խանութում հերթ է... Իմ մասին պատմեմ... հիմա... բայց... չէ, չեմ հուզվում, կպատմեմ... Ես էլ էի ուզում, որովհետև լավ կլինի, որ հիմա պատմեմ...

Հրաչյան բացում ու փակում է դուռը, հագում է:

ՀՐԱՉՅԱ - Ես եկա...

ԾՈՂԻԿ - Այո, եկավ, տիկին Սաթևնիկ:

Հրաչյան առաջ է գալիս, անընդհատ փոխում է դիրքը, որ Ծողիկը չտեսնի վնասված աչքը և չնկատի կաղալը:

ՀՐԱՉՅԱ - Ծանո ուշացա, մեծ հերթ էր:

ԾՈՂԻԿ - (լսափողի մեջ): Հիմա կմոտենա...

ՀՐԱՉՅԱ - (վերցնում է լսափողը: Ծողիկը ուտելիքի տոպրակները խոհանոց է տանում, վերադառնում ու հարմար պահի է սպասում, որ վերցնի իրերն ու գնա: Բայց Հրաչյան նրան տեսադաշ-

տում է պահում:) Որոշել ես այս գիշեր չքննել... ուրախ եմ, որ տրամադրությունդ բարձր է... լավ է, որ լյարդդ չի ցավում: Ծողիկի տրամադրությունն էլ բարձր է: Ինչո՞ւ հաց չենք կերել... Ժամանակ չեղավ, բայց հիմա շատ ուտելիք եմ առել և շատ էլ սոված ենք: Հիմա կզանաք խոհանոց, բայց դու նորից չզանգես, քնիր... Ինչո՞ւ զանգես... լավ, զանգիր: (Դնում է լսափողը, հեռախոսահամարների գրքույկն է թերթում:) Մայրս լյարդի ցավը մոռացել է: Ինչո՞ւ է այդքան ուրախ, չգիտե՞ք... Եթե երկուսդ էլ լռում եք, ուրեմն՝ կանանց գաղտնիք է, իմանալը՝ անհնար, նաև՝ շատ վտանգավոր: Ինչո՞ւ եք կանգնել, նստե՞ք, ընկերոջս հետ կխոսեմ ու կվազենք խոհանոց: Ծողիկ, ի՞նչ է պատահել:

ԵՈՂԻԿ - Ոչինչ չի պատահել: Տոպրակը տանեմ լողասենյակ: (Նայում է ժանացույցին և մնում կանգնած:)

ՀՐԱԶՅԱ - Ինչպե՞ս անցկացրեցիք ժամանակը: (Զանգում է:)

ԵՈՂԻԿ - Ինչպես որ ասացիք՝ բամբասանքով: Նաև զանգեցի ընկերուհուս, որ վաղը ընկերուհուս տնից շորերս վերցնի... (Եփոթվում է:) Մյուս ընկերուհիս մեր տան մոտ է ապրում, շորերս կվերցնի մեր տնից, կբերի մոտիկ

ապրող ընկերուհուս տունը, ես էլ նրանից կվերցնեմ, կհագնվեմ ու աշխատանքից չեմ ուշանա:

ՀՐԱԶՅԱ - (դնում է լսափողը, շարունակելով նայել գրքույկի մեջ): Ինչո՞ւ այդքան երկար ծանապարհ կտրի ձեր ընկերուհին, կարող ենք իմ մեքենայով գնալ ու ձեր շորերը վերցնել:

ԵՈՂԻԿ - Ես... արդեն պայմանավորվել եմ...

ՀՐԱԶՅԱ - Այդ խալաթո՞վ եք գնալու, այդ կոշիկներո՞վ:

ԵՈՂԻԿ - Չէ... առավոտյան կարդուկեմ չորացած շորերս:

ՀՐԱԶՅԱ - Կարձ շրջագետո՞վ, այն վերնաշապիկո՞վ:

ԵՈՂԻԿ - Մեքենայով գնալը ճիշտ է, ուրեմն՝ շորերս լողասենյակ տանեմ, այստեղ բերեցի, որ առավոտյան չմոռանամ: (Տոպրակը տանում է:)

ՀՐԱԶՅԱ - (բարձր, որ Ծողիկը լսի, մոռանալով աչքի վնասվածքն ու ոտքի կաղալը՝ ոգևորված խոսում է ու կաղալով քայլում): Ձեզ կտանեմ աշխատանքի: Չմոռանամ, բջջային հեռախոս տալ, երկուսն ունեմ: Աշխատանքի տեղից միշտ էլ կարիք կլինի զանգել այստեղ, կամ ձեր տուն: Իմ ու մորս հեռախոսահամարները կան:

Գալիս է Ծողիկը, տեսնում չքայայի կաղալն ու վնասված աչքը՝

զարմացած կանգնում է նրա դիմաց:

ՀՐԱԶՅԱ - Ինչո՞ւ եք այդպես նայում:

ԾՈՂԻԿ - Նրանք են արել:

ՀՐԱԶՅԱ - Ո՞ւմ նկատի ունեք:

ԾՈՂԻԿ - Ինչպե՞ն նրանք կարողացան... ինչո՞ւ չեք կռվել... Ծա՛տ էին, քանի՞ հոգի էին... *(Աշխատում է հուզմունքը զսպել:)* Դե, մի բան ասեք...

ՀՐԱԶՅԱ - Նկատի ունեք կաղա՛լը... դատարկ բան է, ոտքս խփեցի վերելակի դռանը, բան չկա:

ԾՈՂԻԿ - Իսկ ա՛չքը:

ՀՐԱԶՅԱ - Աչքիս բա՛ն է պատահել... երևի ընկել եմ, չեմ հիշում: Հա, ընկել եմ՝ սանդուղքների վրա:

ԾՈՂԻԿ - Բայց նրանք... լավ, հասկացա, սանդուղքների վրա եք ընկել: Նստեք, զանգեք մեկին, գրուցեք, ես գնամ խոհանոց, ամփսեներ բերեմ, նաև՝ բաժակ, գդալ... ու մյուս բաները... հացը, ուրիշ բաներ էլ կվերցնեմ ու կվերադառնամ... շուտ կվերադառնամ: *(Գնում է խոհանոցի կողմը:)*

ՀՐԱԶՅԱ - *(բարձրաձայն):* Իսկ ես զանգեմ Անուշավանին, ասեմ, որ փեսան ավելի ուշ գա, ժամանակ չունեմ: *(Զանգում է, սպասում:)* Էլի մեկին մի բան է խոստացել, չի կատարել, այդ մեկն էլ բարկացել է, իմ շատախոսն էլ փչելով ուզում է արդարանալ: *(Լսափողը դնում է, շրջվում ու տեսնում է Ծողիկին,*

որը զգույշ գնում է դռան կողմը, աշխատելով ձեռքի փայտե ձողը թաքցնել թիկունքում: Հասնում, բռնում է նրան): Ո՞ր եք գնում:

ԾՈՂԻԿ - Գործ ունեմ: Զանգեք, գրուցեք, մինչև գամ: Ծուտ կգամ:

ՀՐԱԶՅԱ - Տվեք ձողը:

ԾՈՂԻԿ - Ես ուրիշ տեղ եմ գնում:

ՀՐԱԶՅԱ - Տվեք ձողը:

ԾՈՂԻԿ - Ուզում եմ տեսնել նրանց:

ՀՐԱԶՅԱ - Ուր եք ուզում գնալ և ինչի համար:

Ծողիկը նստում է բազմոցին, Հրաչյան վերցնում է ձողը, բայց Ծողիկը ձողի մյուս ծայրը բաց չի քողմում:

ԾՈՂԻԿ - Տվեք ձողն ու ինձ մի խանգարեք:

ՀՐԱԶՅԱ - Եկեք խոսենք, հետո ձողը կտամ:

ԾՈՂԻԿ - *(թողնում է ձողն ու վազում դեպի դուռը):* Առանց ձողի էլ կգնամ:

ՀՐԱԶՅԱ - *(մի կերպ հասնում, բերում է բազմոցի մոտ):* Նստեք, ձեզ բան ունեմ ասելու: Նստեք ու լսեք:

ԾՈՂԻԿ - Էլի իմ իմ պատճառով վտանգել եք ձեզ, իսկ ես նստեմ ու լսեմ ձեզ: Իսկ եթե վաղն էլի հանդիպե՛ն, եթե վաղն էլ դանակով հարձակվե՛ն... Թող ինձ էլ ձե՛ծեն, ձե՛զ ինչ... Ինչո՞ւ դուք կարող եք կռվել ինձ համար, իսկ ես ձեզ համար՝ չեմ կարող:

ՀՐԱԶՅԱ - Կարող եք, շնորհակալ եմ, բայց նախ լսեք ինձ, երկու ժամ առաջ կռիվը ձեր պատճառով չեղավ, այլ իմ պատճառով, իմ սխալի...

ԵՈՂԻԿ - Սխալ արեցիք, որ պաշտպանեցիք ինձ...

ՀՐԱԶՅԱ - Հիշեք, թե ինչ վիճակի մեջ էի, երբ նրանց ու ձեզ տեսա... Ընկերուհուս դավաճանությունը հունից հանել էր, շատ վրդովված էի: Հիշեք, ինչ կատաղությամբ էի նրանց խփում: Նրանք տասնհինգ-տասնվեց տարեկան տղաներ էին, փողոցում լկտիացած, բայց՝ տղաներ: Ես կարող էի նրանց միայն վախեցնել, բայց չարեցի, որովհետև վրեժ էի ուզում լուծել: Ինձ մերժող կնոջ վրեժն էի ուզում լուծել փողոցային տղաներից, որոնք միշտ եղել են ու կլինեն, նրանց հետ զվարճանալու գնացող աղջիկներ էլ միշտ եղել են ու կլինեն: Դաժան վարվեցի նրանց հետ ու քիչ առաջ, մեղքս քավելու համար, թոյլ տվեցի, որ նրանք էլ ինձնից վրեժ լուծեն՝ մի երկու հատ խփեն: *(Ի պատասխան Շողիկի հայացքի:)* Ինչո՞ւ եք այդպես նայում:

ԵՈՂԻԿ - Ծարունակեք:

ՀՐԱԶՅԱ - Ասելիքս վերջացրի, հույս ունեմ, որ իմ արածը հասկացաք: Իսկ հիմա մոռացեք ասածներս ու հիշեք, թե ինչ էի ասում ձեզ, երբ

տոպրակը տարաք լողասենյակ: Չեք հիշում...

ԵՈՂԻԿ - Չեմ հիշում:

ՀՐԱԶՅԱ - Ասում էի, որ ձեր հեռախոսի մեջ գրանցված են համարների ինձ կամ մորս զանգելու համար:

ԵՈՂԻԿ - Ես հեռախոս չունեմ:

ՀՐԱԶՅԱ - Ուրեմն՝ նորից եմ սկսում, ուշադիր լսեք, երբ առավոտյան ձեր ընկերուհի Մարիամի մոտից վերադառնանք, հագնեք նրա բերած շորերը, ձեզ պետք է տանեմ աշխատանքի: Իսկ աշխատանքի տանելուց առաջ բջջային հեռախոս կտամ: Կարող եք զանգել մորս, ձեր տուն, այստեղ: Բայց... *(Լռում է, խորը շնչում:)* Շողիկ, հիմա չեմ կարող հեռախոսը ձեզ տալ ու բացատրել, որովհետև այստեղ չեք, ձի՞շտ է: *(Պահարանից հեռախոս է հանում, դնում սեղանին:)* Ահա, դնում եմ այստեղ, որ չմոռանամ բացատրել, երբ կկարողանաք վերևից իջնել ցած՝ այստեղ:

ԵՈՂԻԿ - Ոչինչ չհասկացա, խնդրում եմ, մի անգամ էլ...

ՀՐԱԶՅԱ - Գրողը տանի, որտե՞ղ եք թափառում, ինչո՞ւ ինձ չեք լսում:

ԵՈՂԻԿ - Ես ձեզ լսում եմ:

ՀՐԱԶՅԱ - Ի՞նչ ասացի:

ԵՈՂԻԿ - «Գրողը տանի, որտե՞ղ եք թափառում, ինչո՞ւ ինձ չեք լսում»...

ՀՐԱԶՅԱ - Բայց չեք հասկանում ձեր

ասածի իմաստը: Սարսափելի քաննր ասացի... վախեցնել եք:

ԵՈՂԻԿ - Ծարունակեք... չէ, ոչինչ մի ասեք, մի քիչ լռենք... *(Դադար:)* Ուրեմն՝ դուք գնացիք, որ ձեզ ծեծեն, որ կարողանաք հանգիստ ապրել:

ԼՐԱԶՅԱ - Դուք էլ նույնը կանեիք:

ԵՈՂԻԿ - Չէի կարողանա:

ԼՐԱԶՅԱ - Դուք էլ ինչ-որ մեկին օգնելու պատճառով պատժվել եք ու հետևանքները մինչև այսօր կրում եք, չէ՞... *(Հասկանում է, որ դա չպետք է ասեր:)* Այսինքն, կարծում եմ, որ նման բան արած կլինեք:

ԵՈՂԻԿ - Չգիտեմ, սպասեք մտածեմ:

ԼՐԱԶՅԱ - Չմտածեք, համոզված եմ, որ արած կլինեք: Իսկ հիմա ուզում եք, որ ուշաթափվեմ:

ԵՈՂԻԿ - Ինչո՞ւ:

ԼՐԱԶՅԱ - Սոված չե՞ք, չե՞ք զգում, որ մեր ապրելակերպը նորմալ մարդու ապրելակերպ չէ: Որովհետև մենք արդեն սով էլ չենք զգում: Տասներկու ժամ սոված էի ու չէի զգում, միայն հիմա զգացի... գիտե՞ք՝ ժամը քանիսն է: Տասներկուսին տաս է պակաս, շուտով կեսգիշեր է, իսկ ես առավոտից ոչինչ չեմ կերել ու հիմա էլ չեմ ուզում ուտել: Հասկանո՞ւմ եք, որ նորմալ չէ: Դուք է՛լ սով չեք զգում:

ԵՈՂԻԿ - Չեմ զգում:

ԼՐԱԶՅԱ - Ուրեմն՝ հիվանդ ենք:

ԵՈՂԻԿ - Ժամը քանիսն է:

ԼՐԱԶՅԱ - Ժամը... Ժամացույց եթե չլինի, սով չե՞ք զգա: Ինչո՞ւ եք ժպտում, ծիծաղելի բան ասացի: Սով զգո՞ւմ եք:

ԵՈՂԻԿ - Չեմ զգում:

ԼՐԱԶՅԱ - Բայց արդեն կեսգիշեր է:

ԵՈՂԻԿ - Հիմա սով զգացի: *(Ուռքի է կանգնում:)*

ԼՐԱԶՅԱ - Փառք Աստծո: Գնանք: *(Շողիկը նստում է:)* Ինչո՞ւ նստեցիք:

ԵՈՂԻԿ - Դուք էլ նստեք:

ԼՐԱԶՅԱ - *(նստում է):* Առավոտյան... չէ, աշխատանքից հետո կգնանք բժշկի, թող անպայման ձեզ քննեն, իսկ հետո... Շողիկ, ուշքի գալո՞ւ եք:

ԵՈՂԻԿ - Չեմ կարողանում:

ԼՐԱԶՅԱ - Ինչի՞ մասին եք մտածում:

ԵՈՂԻԿ - Ընկերուհիս՝ Մարիամը, ճիշտ էր ասում:

ԼՐԱԶՅԱ - Մարիամը... հա, Մարիամը... Ի՞նչ էր ասում:

ԵՈՂԻԿ - Մարիամին խոստացել եմ, վաղը անպայման պետք է համբուրեմ... Ծուտով վաղը կլինի, բայց հիմա կարելի՞ է համբուրել:

ԼՐԱԶՅԱ - *(շփոթված նայում է շուրջը):* Ի՞նձ... համբուրեք, իհարկե, կարելի է, միայն արագ, էլ չեմ դիմանում:

ԵՈՂԻԿ - Ձեր ոտքը...

ԼՐԱԶՅԱ - Ոչ:

ԵՈՂԻԿ - Նրան խոստացել եմ...

ԼՐԱԶՅԱ - Ոչ:

ԵՈՂԻԿ - Դա ինձ է պետք:

ՀՐԱԶՅԱ - (*Խիստ*): Ուրքի ելեք:

ԵՈՂԻԿ - Մարիամն ասաց՝ «Շողիկ, նա անհրական մարդ է, բայց քանի որ անհրական մարդիկ չեն լինում, ուրեմն սուրբ է: Իսկ սուրբ մարդկանց ոտքը կարելի է համբուրել»:

ՀՐԱԶՅԱ - Ձեր ընկերուհին է անհրական ու ընկնավորի մեկը, դուք էլ նրա հետ... (*Բարձրացնում է նրան, նստեցնում բազմոցին: Զանգ:*) Հանգիստ նստեք, մայրս է: Մամ, էլի՞ քնած չես, մենք լավ ենք: Չի գնացել, այստեղ է... Չի կարող հիմա խոսել, մտքերի մեջ է... Հիվանդ չենք, գրուցում ենք: Առավոտյան կգանք, չէ, առավոտյան չենք կարող, նրան աշխատանքի եմ տանելու, իսկ հիմա ուշ է, նա պետք է քնի, արդեն կեսգիշեր է: (*Ժպտում է:*) Իհարկե, նա էլ սովորական մարդկանց նման պետք է քնի... Արդեն կերել ենք: (*Շողիկը զարմացած նայում է: Խիստ նայելով նրան:*) Իհարկե, կերել ենք, բարի գիշեր: (*Դնում է լսափողը, նայում ժամացույցին:*) Քսան թոպեից էլի կգանգի: (*Ժպտացող Շողիկին:*) Հա, ասացի, որ կերել ենք, բայց սա օգտակար սուտ է: Գնանք խոհանոց: Էլի՞ սովը մոռացաք... (*Տեսնելով, որ Շողիկը*

դարձյալ «մի ուրիշ» տեղ է, նստում է, սպասում:) Բան եք ուզում ասել: (*Շողիկը գլխով «այո» է ասում:*) Ասեք:

ԵՈՂԻԿ - Երբ ասացիք՝ «Իհարկե, նա էլ սովորական մարդկանց նման պետք է քնի», ինչո՞ւ ծիծաղեցիք:

ՀՐԱԶՅԱ - Նա ասաց՝ «Այդ հրեշտակն էլ է ուզում քնել»:

ԵՈՂԻԿ - Էլի՞ հրեշտակ ասաց:

ՀՐԱԶՅԱ - Ինչո՞ւ եք լաց լինում, վատ բան է ասել:

ԵՈՂԻԿ - Այո, որովհետև ես հրեշտակ չեմ, այլ...

ՀՐԱԶՅԱ - Լռեք: Ուրեմն եթե ասեր՝ «Այդ զգվելին էլ է ուզում քնել», լավ կլիներ:

ԵՈՂԻԿ - Ուզում եմ ասել, որ երբ...

ՀՐԱԶՅԱ - Ոչինչ չասեք:

ԵՈՂԻԿ - Ինչո՞ւ չասեմ:

ՀՐԱԶՅԱ - Որովհետև էլի կխժժվենք, որովհետև զգում եմ, որ այստեղ ուղարկված եք ինձ խելագարեցնելու համար, որովհետև խոսում եք ինչ-որ մի անհայտ երկրի բնիկների տրամաբանությամբ, որից ես ոչինչ չեմ հասկանում: (*Զանգ:*) Դեռ քսան թոպե չի անցել... դե, լավ էլի...

ԵՈՂԻԿ - Ես կխոսեմ:

ՀՐԱԶՅԱ - Ինչո՞ւ:

ԵՈՂԻԿ - Դուք հուզված եք:

ՀՐԱԶՅԱ - Հենց ես եմ խոսելու: Ին-

չո՞ւ չի ուզում քնել, չի՞ խղճում իրեն, ուզում է մի հիվանդություն էլ ձեռք բերել: (Լսափողի մեջ:) Ալլո... դուք քնելու կարիք չունե՞ք, ուզում եք էլի՞ հիվանդանալ, դուք խիղճ չունե՞ք, այս մեկն ինձ քիչ է, որ բնիկների լեզուներով է խոսում հետս, հիմա էլ դո՞ւք, ձեզ չեք խղճում, որ կեսգիշեր է ու դեռ քնած չեք, ուրիշներին էլ չեք խղճում: Ո՞նց թե՛ «դուք ով եք»... Լավ, վաղը կգամ, կխոսենք... ոչ մի բան էլ չեմ խոսի, այս ի՞նչ կրակների մեջ եմ ընկել: Մի կողմից նա, մյուս կողմից՝ դու, իսկ ես... Ի՞նչ, ո՞նց թե՛ ով է... (Սթափվում է:) Մամ... ես եմ: (Դնում է լսափողը, շփոթված է:)

ԵՈՂԻԿ - Ի՞նչ ասաց:

ՀՐԱԶՅԱ - «Ո՞վ է այս խեղճ գիժը»:

ԵՈՂԻԿ - Որ ասում եմ՝ կամաց-կամաց ամեն ինչ պետք է անկեղծորեն խոստովանել՝ չեք հավատում ինձ:

ՀՐԱԶՅԱ - Ինչ ասացի՞ք, խոստովանել: Ի՞նչ պետք է խոստովանենք, այն էլ՝ «կամաց- կամաց»... Էլի ի՞նչ եք ասել մորս:

ԵՈՂԻԿ - Ասացի, որ ուզում էի փախչել:

ՀՐԱԶՅԱ - Ո՞նց թե՛...

ԵՈՂԻԿ - Լաս ասացի, որ չէիք ուզում իմ փախչելու մասին ասեմ իրեն:

ՀՐԱԶՅԱ - Բայց ձեզ զգուշացրի, չէ՞... (Հուսահատ:) Հիմա՞ ինչու եք վախեցած նայում, էլի՞ բան եք ասել... մի քանի անգամ զգուշացրի չասել, դա՞ եք ասել:

ԵՈՂԻԿ - Դա էի ուզում ասել, բայց խանութից եկաք ու խանգարեցիք:

ՀՐԱԶՅԱ - Դա խանգարել է, դա մեծ փորձանքից ազատվել է նշանակում: Փառք Աստծո, որ զգացի ու ճիշտ ժամանակին դուրս եկա... (Դադար:) Այսինքն՝ ներս եկա դրսից: Ինչո՞ւ եք այդպես նայում, էլի բան ունեք ասելու:

ԵՈՂԻԿ - Ունեմ:

ՀՐԱԶՅԱ - Սպասեք նստեմ: (Լստում է:) Ասեք ու գնանք խոհանոց, բայց ոչ թե սով եմ զգում, այլ սովորության ուժով եմ ուզում գնալ խոհանոց, որովհետև գիտեմ, որ ստամոքս ունեմ և այնտեղ շտապ ինչ-որ բան պետք է լցնեմ: Կարող եք համարձակ ասել ձեր ամենավերջին քաջագործության մասին: Դե, ասեք, չեմ ընկնի:

ԵՈՂԻԿ - Իսկ ձեռքը կարելի է...

ՀՐԱԶՅԱ - Վերջ տվեք, ես քահանա չեմ: Վաղն անպայման կգնանք պոլիկլինիկա, ինձ էլ թող քնեն: Ծատ վատ եմ, արդեն սով էլ չեմ

զգում, ինչ օրը զցեցիք ինձ: Ինչո՞ւ եք ուզում լաց լինել, հենց այնպե՞ս, սովորության համաձայն: (Դադար:)

ԵՈՂԻԿ - Ունեմ:

ՏՐԱԶՅԱ - (նստում է): Արդեն հասկացա. եթե ուզում եք լաց լինել, ուրեմն էլի մի վատ բան ասելու եք: Ասելու եք, ձիշտ է:

ԵՈՂԻԿ - (լացը զսպելով): Իսկ պոլիկլինիկայից հետո ձեռքը կարելի է... Ո՞չ: Ուրեմն՝ փողոցում, մարդկանց ներկայությամբ... Կանեմ, և ոչ թե ձեռքը, այլ՝ ոտքը: (Հեկեկոցով լաց է լինում:)

ՏՐԱԶՅԱ - (մոտենում, նստում է կողքին, գլուխը սեղմում է կրծքին): Հանգստացիր, վաղը կխոսենք, հիմա հոգնել ես, պետք է քնես: Ոչինչ մի ասա, խաղաղվիր, վաղը աշխատանքից հետո կխոսենք և կանենք՝ ինչպես դու կուզես, խաղաղվիր... (Լռություն: Ծողիկը խաղաղվում է: Չանգ:

Հրաչյան ձեռքը երկարում, դժվարությամբ վերցնում է լսափողը և գլուխը մի կողմ թեքած, խոսում է շշուկով:)

Ես եմ, ասա... Մեզ զանգող չի եղել: Ո՞վ էր այդ խեղճ գիժը... Չեմ լսել ձեր խոսակցությունը, բայց կարծում եմ, մի խեղճ գիժ եղած կլինի: Նստած քնել է, չեմ կարող բարձր խոսել՝ գլուխս ուսիս է: Հոգնել է, թող քնի: Մենք առավոտ շուտ աշխատանքի ենք գնալու... Չէ, չեմ շարժվի... Հա, վաղը նրան կբերեմ, կտեսնես... մամ, դրո՞ւ ինչու ես լաց լինում... Չասես, խնդրում եմ, էլ իրեն հրեշտակ չասես... Հուզվում է, սկսում է լաց լինել: Մի ժամ առաջ էլ հրեշտակ էիր ասել՝ լաց եղավ... Չէ, խնդրում եմ... Նրան չհարցնես, թե ինչու է լաց լինում, երբ հրեշտակ են ասում: Չգիտեմ, երևի բոլոր հրեշտակները շուտ հուզվող են: Էլ չզանգես, վաղը, աշխատանքից հետո կզանք, բարի գիշեր... (Դնում է լսափողը և անշարժ նստում:)

Սկզբում անվստահ, հետո բարձր ծիծաղ: Մեկնակը թաղվում է խավարի մեջ, միայն վերևում աղոտ լույս է երևում, որն ուժգնանում է մարող ծիծաղին հընթացս:

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Աստղիկ ՄԻՄՈՆՅԱՆ

...Ամենավտանգավոր բանը մտքերն են, որոնք հայտնվելով մեր ուղեղի էներգետիկ դաշտում, սկսում են միս ու արյուն ստանալ: Դրանք այնքան կենդանի են դառնում, որ սկսում են ոչ միայն կառուցել մեր կյանքը, այլև՝ ղեկավարել: Դրամատուրգիան ծնվում է մի փոքր ուշ, մոտավորապես այն ժամանակ, երբ մտքերը հասնում են իրականի ու հորինվածքի վտանգավոր սահմանագծին ու ջնջում այն...

ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀՈՎՏՈՒՄ

Մոնոդրամա

Առաջին գործողություն

Պատկեր առաջին

Բեմում անկանոն «դասավորված» են ուղղանկյունաձև՝ մարդու հասակին մոտ, «սրենդեր»՝ անիվների վրա: Դրանցից երկուսը իրար մոտ են ու յուրօրինակ քաքսարոց են սրեղծել հասրակին նստած դերասանուհու համար: Դերասանուհին նստած է շար հանգիստ, կողքին՝ հասրակին դրված պայուսակի մեջ ինչ-որ բան է փնտրում: Ի վերջո կգտնի և կհանի սիգարետն ու կրակայրիչը: Դրանք հանելուց հետո նույն պայուսակից կհանի նաև փեքսար: Ուրնաշայներ են լսվում ու փղամարդկանց քայլեր: Հեղինամասում երևում են նրանց քայլող սրվերները:

Ա ՏՂԱՄԱՐԴՈՒ Ծայն - (բարձրա-
ծայն): Բոլորը գնացին, չէ...

Բ ՏՂԱՄԱՐԴՈՒ Ծայն - (ավելի
բարձր): Ժողովո՞ւրդ...

Մի պահ լռություն, ասես տղամարդիկ արձագանքի են սպասում: Դերասանուհին այդ ընթացքում տուփից սիգարետը ատամներով հանել, կենտրոնացած սպասում է՝ կրակայրիչը ձեռքին: Իրեն զբաղեցնելու և ավելորդ ձայն չհանելու համար տեքստն է աչքի անցկացնում՝ էջերը զգուշորեն թերթելով: Տղամարդկանց ձայնը շատ լավ էլ լսել է, հասկանում է՝ ինչ է կատարվելու, բայց նաև հասկանալի է, որ դա նրան չի վախեցնում, ընդհակառակը, հույս ունի, որ իս-

կապես կկատարվի այն, ինչին տանում են գործողությունները:

Բ ՏՂԱՄԱՐԴՈՒ Ծայն - Գնացել են, մարդ լինե՞ր՝ ձայն կհաներ: Տո՛ր, տո՛ր բանալին:

Հետամասի լույսերն անջատվում են: Հեռացող ոտնաձայներ: Փակվող կողպեքի ձայն: Դերասանուհին հաղթական վառեց կրակայրիչը, կայրեց սիգարետը, երանությամբ մի երկու ծուխներս քաշեց՝ նույնաման երանությամբ հաստատելով իր մեծակ մնալը:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - (տեքստին նայելով): Տիեզերքն ունի իր էլդոսը, կուզե՞ք՝ ձև ասեք, կուզե՞ք՝ էութ-

յուն, և Արիստոտելն այն անվանում է Միտք, բանականություն, ձևերի ձև: Ինչպես յուրաքանչյուր իրի էյդոս անբաժան է դրանից, այնպես էլ տիեզերական էյդոսն անբաժան է տիեզերքից: Արիստոտելը տիեզերական էյդոսին վերագրում է երկու կարևոր հատկություն, առաջին՝ դա մտածողություն է՝ մտածողության մասին, և երկրորդ՝ տիեզերական էյդոսը սկզբնապատճառ է և առաջնաշարժիչ... Եվ որպես այդպիսին՝ նա Աստված է:

Հերթական ծուխը դուրս փչելուն զուգահեռ վեր կացավ տեղից՝ պայուսակը նախկին տեղում թողնելով: Տեքստը ձեռքին քայլեց բենում՝ տիրոջ իրավունքով:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - (այնպիսի տոնով պիտի խոսի, որ հասկանանք՝ դեր է փորձում, ժամանակ առ ժամանակ տեքստերին է նայելու): Բեմի հիմքը շրջանն է եղել: Մարդիկ գծել են շրջանը, մտել մեջն ու ապրել ԻԲՐ ԹԵ... («Ստենդեր»-ը ընթացքում կտեղաշարժի, կստանա կիսաշրջան, որի մեջ ինքը կմնա:...) ...Սկզբում դրանք սովորական ծեսեր են եղել... լավ որսի կամ անձրևի հույսով... հետո արդեն՝ ինքնության փնտրտուք: Մարդը ստեղծեց աստվածներին... որպեսզի նրանց վերագրի իր տարբեր կերպերը...

«Մտենդերից» առաջինը շրջեց՝ մյուս կողմում ամենասովորական հայելի է:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - (իրեն գննելով հայելու մեջ): ...Օրինակ՝ սիրո աստվածուհին պետք է օգներ պեղելու սիրո երանգները: Այսպես սկիզբ առան երկխոսությունները... հարցերը... պատասխանները... նոր հարցեր... նոր պատասխաններ... (Դադար, բայց այնպես, ասես մոռացել է տեքստը: Նայեց:) Ես չհասցրի քեզ տալ իմ ամենակարևոր հարցը... ինչո՞ւ... (Շայելու մեջ պատասխանը չգտավ: Հետքաշվեց, նոր սիգարետ կայցրեց, ծխում է, ասես՝ հավաքվում, նայում տեքստը: Նայելով մոտենում է ստենդ-հայելուն, շրջում է, տեքստի առաջին թերթիկը ամրացնում է ստենդին:)

Հանդիսատեսն առայժմ չի կառուցվել թերթիկի վրա եղածը:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Հորս վեց ու կես տարեկանում եմ տեսել... Ավելի ճիշտ՝ հինգում, բայց դա միայն մի ժամ է եղել՝ ինչպես մայրս է ասում: Այդ հանդիպումից միայն մի բան եմ հիշում՝ երկաթե վանդակաճաղերով կեղտոտ պատուհան, որի գոգին կանգնած եմ ես ու նետվում եմ հորս բաց գրկի մեջ... առանց մտածելու, երեխայի պարզ անմիջականությամբ, վստահ, որ հայրս դեռ օդում

կրոնի ինձ ու ես հատակին չեմ շրխկա... (Դադար:) Հայրս թաղի նամուս-թասիբով տղերքից էր: Մայրս պատմում է, որ երբ ծնվել եմ, հայրս թաղի տղերքին աչքալուսանքի է տարել՝ պատիվ տալու... Հայրս ուշ էր ամուսնացել ու երևի երջանիկ էր, որ վերջապես ընտանիք ունեցավ, երեխա ծնվեց... Մայրս պատմում է, որ այն ժամանակ, երբ Մարգարյան հիվանդանոց տղամարդու ոտք չէր մտնում, հայրս մինչև մորս պալատ՝ երկրորդ հարկ, վազելով է հասել՝ բժշկին ու բուժքույրերին չգիտեմ ինչպես համոզելով: Մտել է պալատ, տեսել է ինձ, համբուրել է մորս ձակատը, առաջ է եկել, որ ինձ էլ համբուրի, բայց վերջին պահին հետ է քաշվել, միայն լուռ նայել է ու հոտ քաշել... շատ երկար է հոտ քաշել: Մայրս ասում է, որ հորս աչքին առաջին ու վերջին անգամ արցունքի կաթիլ այդ ժամանակ է տեսել: Հորս գնալուց մի ժամ հետո բուժքույրերից մեկը պալատ է բարձրացել ու մորս և պալատի մյուս բոլոր կանանց հորս ուղարկած ծաղիկներն է բաժանել: Հետո, երբ ինձ արդեն տուն են բերել, հայրս թաղի տղերքին տարել է պատիվ տալու: Խմել են, շնորհավորել... ընթացքում անձանոթ մեկը տղերքից մեկին է

մոտեցել, քաշքշել... Հայրս միջամտել է, մի երկու ապտակ հասցրել եկվորին ու հետ է ուղարկել: Բայց թաղի տղան նեղացել է, թե՛ իմ գործնական հարաբերություններն էլ մարդու հետ քո պատճառով փչացան: Հայրս նեղսրտել է, հայիոյել է սրա մարդ ասողին, մի ապտակ էլ սրան է հասցրել ու տուն է եկել: Բայց թաղի տղու կինը վախեցել է, մտածել, որ հորս անունի տեր մարդն ու նրա ընկերները դժվար մի ապտակով բավարարվեն... Դրա համար էլ վեր է կացել, գնացել միլիցիա ու հորս վրա բողոք գրել: (Դադար:) Հորս տարան իմ քառասունքը չլրացած, հինգ տարին կնքեցին գործերի մեջ ու ուղարկեցին Միջին Ասիա: Էդպես անցավ հինգ տարին՝ շաղախված մորս արցունքներով, անձանոթ տղամարդկանց հետևից իմ «պապա» կանչերով ու էլի մի շարք հիշողություններով...

Մոտենալու է հաջորդ ստեղծողին՝ հերթական պարավաճ թերթիկն ամրացնելու:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Իմ հինգ տարին էր լրանում, իսկ հորս գալուն դեռ մի ամսից մի քիչ էլ ավել կար... Չէր դիմացել, ուրիշ մեկի, ով իրեն ինչ-որ չափով նման էր եղել, անձնագիրը վերցրել, փախել էր: Օդանավակայանում, հենց որ

ինքնաթիռը վայրէջք էր կատարել, հորս ձերբակալել էին, մի ամիս պահել էին Երևանում, հետո էլի մի տարով ուղարկել հին տեղը: Այ, հենց այդ մի ամսվա ընթացքում էլ մեր բազմաթիվ ծանոթ-բարեկամներն ամեն ինչ արեցին, որ ես ու մայրս գոնե մի անգամ տեսնենք հորս: Վանդակաձաղով կեղտոտ պատուհանը այդ մի անգամվա հիշողությունն է... (Դադար:)
 Մի տարի ու մի քանի ամիս հետո կայացավ իմ ու հորս առաջին հանդիպումը՝ արդեն ազատության մեջ: Մայրս ինձ իմ ամենասիրուն շորն էր հագրել, գլխիս մեծ, սպիտակ ժապավեն կապել: Հայրս կոկիկ մարդ էր՝ միշտ դասական տաբատ ու վերնաշապիկ... Մայրս հորս հուշեց, որ ինձ այգի տանի՝ կարուսել, պաղպաղակ, քաղցր, գունավոր բամբակ... Ինձ համար տարօրինակ էր անծանոթ տղամարդու հանկարծակի հայտնվելը մեր տանը, ում պապա պիտի ասեի: Պապա, ում մասին էնքան երազել էի, ում ամենասիրածս լուսանկարն էնքան էի համբուրել, որ դեմքի հատվածն իմ թաց համբույրներից պլոկվել էր՝ դեմքի տեղը անկանոն շրջան բացելով... Լուսանկարից, որն այդ օրը այգում արվեց՝ չհաշտված հայացքով մի աղջիկ է նայում՝ փայ-

տե ձիու վրա նստած ու խեղճացած աչքերով ուժեղ մի տղամարդ՝ փայտե ձիուց քիչ հեռու՝ մոլորված կանգնած...

Շրջեց երկրորդ ստենդը, որի վրա քիչ առաջ թերթիկն էր ամրացրել: Հայելի է, սակայն մի փոքր ծուռ և աղճատված է երևում իր պատկերը:
Հեռախոսագանգ: Դուրս եկավ վիճակից, վերադարձավ կյանք: Չայնից հասկացավ, որ հեռախոսը պայուսակի մեջ է: Մոտեցավ, վերցրեց պայուսակը, դանդաղ վերադարձավ՝ ընթացքում հեռախոսը հանելով պայուսակից: Հանելուն զուգահեռ՝ զանգն անջատվեց: Նայեց էկրանին, Էմոցիա չկա՝ բացարձակ չի հասկացվում վերաբերմունքը: Հեռախոսը նույն կերպ զցեց պայուսակի մեջ, պայուսակը՝ հատակին: Նորից սիգարետ կաջրեց:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - (ծխելով նայում է տեքստը, շարունակում): Մեր տանն ու իմ կյանքում հորս գոյության հետ դեռ երկար չհաշտվեցի... ինձ համար օտար մարդ էր՝ իր երկաթյա օրենքներով, կարգ ու կանոնով, սառը տրամաբանությամբ: Ինձ նման զգացմունքային երեխայի համար դա անընդունելի էր, անսիրտ ու չոր: Իր զուսպ սերնդի իսկական գավակն էր հայրս՝ երեխա գրկել, սիրել չունեի... Մորս պատմելով մեզ՝ ինձ ու եղբորս, համբուրում էր, երբ քնած էինք լինում, ինքն

էլ՝ անպայման թեթև գինովցած, բայց դա գիշերները, իսկ ցերեկները սառը պատերազմն իմ ու հորս միջև շարունակվում էր: Ինքը եկել ու իրենով էր լցրել իմ տունը, իմ տարածքը՝ այդպես էլ չբացատրելով, հետս հաշվի չնստելով, թե ո՞ր էր այն բոլոր տարիներին՝ ինձանից հեռու կամ էլ հիմա ինչ իրավունքով էր եկել ու տեր կանգնել մեր տանը, մորս, ինձ...

Հեռախոսազանգ: Ասես չի լսում՝ լրիվ ուրիշ տեղ է:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - (*հայացքը տեքստից չկտրելով*): Ըստ Պլատոնի՝ էդոսների աշխարհը ողջ գոյի օրենքների, սկզբունքների և կանոնների աշխարհն է, միաժամանակ գեղեցկության, բարու և ճշմարտության այն իդեալական աշխարհն է, որին պետք է ձգտի մարդը: Յուրաքանչյուր կենդանի գոյացություն ձգտում է իրեն դրսևորել լիակատար ձևով, ամբողջությամբ արտահայտել իր էությունը, ձգտում է իր կեցության լրիվությանը:

Ստենդեբով շրջանն ավելի սեղմվեց: Հեռախոսազանգն ընդհատվեց:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Առաջին շրջանը շամաններն էին գծել: Նրանք վստահ էին, որ այդ շրջանն ի-

րենց պաշտպանելու է չար ուժերից. ովքեր միշտ խանգարել են մարդկանց ու աստվածների երկխոսությանը... Ու այնտեղ՝ շրջանի ներսում, պաշտպանված ամեն տեսակ միջամտությունից, մարդը՝ փնտրտութների մեջ, իր երկու ԵՍ-երի երկխոսությունն էր շարունակում՝ ես-երից մեկը կոչելով Մարդ, մյուսը՝ Աստված... (*Դադար:*) Մեր տանն իմ ամենասիրելի տարածքը իմ սենյակն էր: Այ, այստեղ լիիրավ տերը ես էի՝ մինչ էն պահը, երբ մի քիչ մեծանալով, հորս ու մորս սենյակից իմ սենյակ տեղափոխվեց եղբայրս: Տարածքս փոքրացավ ու ամփոփվեց վերմակիս տակ: Էստեղ էր, որ պատասպարվելով սկսում էի ապրել «իսկական» կյանքս, էստեղ էր, որ ինձ էր սպասում իմ թագավորությունն ու իմ արքայազնը...

Հեռախոսազանգ: Այս անգամ լսեց, դուրս եկավ շրջանից, վերցրեց, նայեց էկրանին, միացրեց: Ընթացքում խոսելով կմռտենա ստենդին, խոսակցության համարյա ավարտին հերթական թերթիկը կամրացնի ստենդին:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ձայն - (*մի քիչ ուրախ, մի քիչ նեղված*): Բախտս բերեց՝ այս անգամ պատասխանեցիր: Մտածում էի՝ այդպես էլ չներեցիր, որ ներկա չեղա պրեմիերայիդ:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Չէ, ինչ ես ասում, քո գործուղումն ավելի կարևոր էր, իսկ պրեմիերաներ... դեռ կլինեն:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ծայն - *(ընդհատեց, անհանգիստ)*: Լավ, դու, ավելի լավ է, ասա՝ ինչպե՞ս անցավ...

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Հրաշալի... Մի անգամ էլ՝ շնորհակալ եմ, առանց քո օգնության այս դերը չէի ստանա:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ծայն - Դե լավ, լավ... քո տաղանդին շնորհակալ եղիր: Տանն ես:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Չէ, թատրոնում:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ծայն - Թատրոնում...

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - *(ընդհատեց)*: Հա՛, սիրելիս, թատրոնում... Մի քանի կտոր կա... մի խոսքով՝ կան բաներ, որ ավելի լավ կարող էի անել: Հիմա փորձում եմ, ուզում եմ կատարյալ լինել:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ծայն - *(շփոթված)*: Բայց...

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Գիտեմ, գիտեմ, որ արդեն ուշ է, որ դա կարելի էր նաև վաղն անել, բայց... սկսել եմ արդեն ու էլ չեմ կարող կիսատ թողնել: *(Ավելի արագ)*: Համբուրում եմ, ավարտեմ՝ կզանգեմ: *(Արագ անջատեց, որ ավելորդ ոչինչ չլսի)*:

Մի պահ, հեռախոսը սեղմած, կանգնած է: հետո ամրացրած թերթիկը «ձրեց», ինչից ստեղծվեց պատվեց ու հայտնված հայելու

մեջ երևաց դերասանուհու անճառված դեմքը: Արագ շրջեց հայելին, ասես վախենալով իր պատկերից:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Առաջին անգամ սիրահարվեցի մանկապարտեզում: *(Հիշողությունը ժպիտ է բերում)*: Տղան հայ չէր, չեմ էլ կարող ասել, թե ո՞վ էր ազգությամբ, նույնիսկ անունը չեմ հիշում, բայց շատ սիրուն էր՝ մանկական ներկելու գրքերից դուրս թռած իսկական արքայազն: Օրվա ավարտին, երբ դաստիարակչուհիները բոլոր խմբերը միացնում էին իրար՝ սպասելով ուշացող ծնողներին, մենք համբուրվում էինք՝ մեր ու մյուս խմբի երեխաների ուրախ բացականչությունների ու ծափերի ներքո... Համբուրվել կոչվածն էլ մանուկ շուրթերի վախվորած հպումներն էին, որոնք մի անգամ հայտնաբերվեցին հերթապահ դաստիարակչուհիների կողմից ու պատմվեցին մեր մայրերին: Չեմ հիշում կոնկրետ որևէ պատիժ... գուցե եղել է, գուցե՝ ոչ, բայց համբույրները շուտով վերջացան: Տղայի ընտանիքը տեղափոխվեց: Հրաժեշտին շատ գեղեցիկ տորթ կերանք, որի դառնահամը զգացի հաջորդ օրը՝ երբ տղան չեկավ մանկապարտեզ: *(Իրոնիկ ժպիտ)*:

Վերջրեց սիգարետի տուփը:

Դատարկ է: Ճանաչելով կղնի սեղանին, պայուսակից մյուսը կհանի, նույնքան դանդաղ սիգարետը կկայցնի: Ընթացքում՝ տեսքերը:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Առաջին անգամ հորս ծխելուց տեսա պապուս մահանալու գիշերը: Հետո իմացա, որ ժամանակին թունդ ծխող էր եղել: Մեր տունը փոքր էր ու չնայած ես ու մայրս ննջարանում էինք, իսկ հայրս միջանցք էր դուրս եկել, մի գիշերվա մեջ ծխված յոթ տուփ սիգարետի ծուխը ննջարան էլ էր հասել... Ես ու եղբայրս հայրական պապ ու տատ չէինք տեսել՝ վաղուց մահացել էին, նույնիսկ մայրս չէր տեսել: Ու հայրս՝ պահպանողական ու չոր այդ տղամարդը, մորական տատիս ու պապիս մայր ու հայր էր կանչում, սիրում իր ծնողի նման: Հիշում եմ՝ ուտելիքից հրաժարվող տատիս իր ձեռքով էր կերակրում, տատս էլ, ամաչելով, որ փեսան նստել է դիմացն ու գդալ-գդալ կերակրում է՝ սուս ու փուս, տանջվելով կուլ էր տալիս ուտելիքը, որից հրաժարվել էր ամուսնու մահից հետո: Էդպես գդալ-գդալ հայրս մեկ էլ ինձ կերակրեց, երբ մորս հիվանդանոց տարան: Եղբայրս էր ծնվելու: Մորաքույրս եկավ, ուզում էր իրենց տուն տանել, որ հայրս չտանջվի յոթ տարեկան երեխա-

յի ձեռքը, բայց հայրս ինձ չտվեց: Իր ձեռքով եփում էր ձաշը, իր ձեռքով կերակրում, լվանում ու արդուկում շորերս: Եղբայրս գարնանը ծնվեց, բայց այդ օրը ձյուն էր եկել, հայրս ու ես հիվանդանոցի պատուհանի տակ ձնագնդիկներ էինք սարքում ու հայրս նետում էր բարձր՝ չորրորդ հարկ, որ մայրս մոտենար ու պատուհանի մոտ պահեր բարուրի մեջ փաթաթված եղբորս: *(Դադար:)* Հորս իմանալով՝ վստահ էի, որ եղբորս պիտի որ ինձանից շատ սիրեր. իր որդին, իր ծուխը շարունակողը, իր հոր անունը կրողը, իր հոր նման բոյով-բուսով, սիրուն աչքունքով: Իսկ ես նույնիսկ իր մոր անունը չէի կրում, քույրերի մոր անունն էր վրաս դրել: Իր շնորհակալությունն էր երեք քույրերին, ում հետ նույն հորից, բայց տարբեր մորերից էին: Նրանց մայրը չորրորդ երեխայի ժամանակ արյան վարակից էր մահացել ու պապս ստիպված նորից էր ամուսնացել: Մեծ հորաքույրս չորս, փոքրը՝ մեկ տարեկան էր եղել... Իմ տատը՝ Վարդանուշը, Վանի Այգեստանից էր, մեծ գերդաստանից ինքը, քույրն ու եղբայրն էին փրկվել միայն: Պապիս յոթ երեխա նվիրեց, որոնցից ամենափոքրը հայրս էր ու միայն հայրս ողջ մնաց: Բայց ես դա

շատ հետո իմացա: Մեջները խորթություն չկար, երևի դա էր պատճառը, որ երկար ժամանակ չէի հավատում այդ իրողությանը, ինչպես նաև նրան, որ հայրս բանտում էր եղել: Դա էլ շատ հետո իմացա ու, մանավանդ, չէի ուզում հաշտվել, քանի որ պատճառը ես էի եղել, իմ ծնունդը, իմ ծննդյան պատվին կազմակերպված քեֆը...

Սիգարետի կոթուկներով լի մոխրամանը մի կողմ հրեց: Դարձյալ տեքստն է քերթում:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Հիշում եմ՝ հայրս նոր էր եկել, գյուղ պիտի գնայինք: Հայրական տունը հայրս ու հորաքույրներս դեռ չէին վաճառել: Տեղ հասանք կեսօրին, մեծ հորաքույրս արդեն այնտեղ էր, գիտեր մեր գալու մասին, նույնիսկ ջուր էր տաքացրել, որ երկար ճանապարհից տեղ հասած եղբոր աղջկան տաշտի մեջ դնի, լողացնի: Մայրս ինձ սուսուփուս հորաքրոջս հանձնեց: Ծորերս հանեցին, տաշտի մեջ նստեցրին: Հայրս նստած էր թախտին, հայրական տունն ու այգին էր վայելում, շնչում, աչքի տակով էլ ինձ էր նայում ու քթի տակ ժպտում համառ ջանքերիս վրա: Երկու ձեռքով պինդ բռնել էի ներքնաշորս ու աչքերս հորս վրա ոլորած՝ չէի թողնում հանեն

հագիցս: Անգոր արցունքները հավաքվել էին աչքերիս անկյուններում, մինչդեռ հորաքույրս անկեղծ չէր հասկանում պայքարիս համառությունն ու շարունակում էր համոզել, որ լողանալիս բոլոր շորերն են հանում: Ու թեև այդ կովում հաղթողը ես եղա ու ներքնաշորս միայն վերջում՝ մարմնիս փաթաթված սրբիչի տակից համաձայնվեցի հանել, այնուամենայնիվ, հորս չներեցի ու նույնիսկ քաղցր եգիպտացորենը, որ հայրս խորովեց թթի ծառի տակ, կոկորդիս կծիկը չքերեց, չտարավ...

Հերթական քերթիկը՝ հերթական ստեղծին: Ջգուշորեն շրջում է հայելին, որտեղ իր պատկերը էլ ավելի ծամաձուլված է լինելու:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Եթե Պլատոնը այս աշխարհը համարում էր էյդոսների ստվերների աշխարհ, ապա Արիստոտելը դա համարում է իսկական կեցության աշխարհ: Պլատոնը էյդոսները հակադրում էր զգայական-նյութական իրերին, մինչդեռ Արիստոտելը էյդոսները տեղավորում է իրերի մեջ՝ որպես դրանց էություններ:

Տեսավ իրեն, արագ շրջում է, ասես իր պատկերն իրեն ցավեցնում է:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Շամանների գծած շրջանում մարդը հաշտություն էր փնտրում ու սեր, դրա համար էլ ամեն կերպ հաճոյանում էր իր Աստծուն, առանց կասկածելու անգամ, որ իրենք այնքան նման են իրեն: (*Դադար:*) Հայրս երբեք միայն մի գիրք չէր կարդում. ուներ առավոտվա՝ նախաձաշի ժամանակ ընթերցվելիք գիրքը, որը հիմնականում պոեզիա էր և երեկոյան ընթերցանությունների գիրքը, որը կամ պատմական էր, կամ էլ՝ փաստագրական: (*Իրոնիկ ժպիտ ծնվեց:*) Ես անպայման ամենաքիչը չորս գիրք էի վերցնում ու շարում՝ խոհանոցում, որտեղ հայրս սիրում էր առավոտները մի բաժակ մուգ թեյով ու մի կտոր պինդ շաքարով իր պոեզիան կարդալ, հյուրասենյակում, որը երեկոյան ընթերցանության նրա նախընտրելի վայրն էր, իմ սենյակում՝ մահձակալիս կողքին ու պետքարանում... Պետքարանում հայրս պահարանիկ էր սարքել: Մայրս այնտեղ այդ տարածքին համապատասխան ու անհրաժեշտ պարագաներն էր դնում, շաքաթը մեկ էլ իմ՝ այնտեղ հավաքված, գրքերն էր դուրս բերում ու դա անելիս անպայման բարձրաձայն բողոքում էր՝ հոյսով, որ հայրս կմիջամտի: Բայց գրքերի

հարցում հայրս ներողամիտ էր, քթի տակ ժպտալով իր գործերին էր գնում: (*Լրջացավ:*) Հայրս սիրում էր կարդացածս գրքերից հարցեր տալ, վիճել հետս... (*Տեքստը թերթեց, հերթական թերթիկը՝ ստենդին:*) Մի օր մեր տուն մի մարդ եկավ: Հորս երեկոյան ընթերցանության ժամն էր: Լուռ նայեցին իրար, գրկախառնվեցին, մարդը նայեց հորս ձեռքի գրքին, ժպտաց... Հետո, սեղանի շուրջ իմացա, որ հորս հետ ինքն էլ էր եղել Միջին Ասիայի կալանավայրում, հորիցս մի տարի շուտ էր դուրս եկել ու ամենամոտ քաղաքում բնակություն էր հաստատել: Հորս ինքն էր դիմավորել, մի գիշեր պահել իր տանը, հետո ձանապարհել Հայաստան: Հայրս իր հետ երկու ձամպրուկ էր բերել այդ մարդու տուն: Գրքեր էին, կալանավայրի իր գրքերը, որոնք թողել էր հյուրընկալողի տանը՝ ի նշան շնորհակալության...

Հեռախոսագանգ: Նորից նայեց էկրանին, միացրեց:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - (*հեռախոսով, հանգիստ*): Այո, սիրելիս...

ՏՂԱՄԱՐԴՈՒ ձայն - (*ձայնի մեջ ինտրիգ կա*): Դեռ թատրոնում ես:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Դեռ թատրոնում եմ:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ձայն - Ու... դեռ փորձում ես:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Դեռ փորձում եմ:
ՏՂԱՄԱՐԴՈՒ Ծայն - *(չդիմացավ):*

Դու ինձ ոչինչ չունես ասելու... ասենք, օրինակ, որ այսօր...

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - *(ընդհատեց):* Չէ, սիրելիս, ես քեզ ոչինչ չունեմ ասելու:

ՏՂԱՄԱՐԴՈՒ Ծայն - *(հասկացավ՝ հիմա կանջատի):* Մի բռնե՛ք... չանջատեն...

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Իզուր չզանգես, կխոսենք վաղը: *(Արագ անջատեց:)*

Տեքստին նայելով՝ փորձում է կենտրոնանալ: Հեռախոսազանգ: Նույնիսկ չի նայելու դրա կողմը, հայացքը տեքստին է: Ի վերջո զանգն անջատվեց:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Պատանեկան տարիների առաջին չկայացած «լուրջ» սերս կապույտ աչքեր ուներ, բայց դա սկզբում չնկատեցի: Դրսում էինք, ինքը արևային ակնոցով էր, ես էլ պարապմունքի էի գնում: Ժամանակից շուտ էի տեղ հասել ու աննպատակ պտտվում էի շենքի չորս կողմը՝ ժամանակ սպանում: Ինձանից ամենաքիչը հինգ-վեց տարով մեծ էր: Չգիտեմ՝ ինչու կանգնեց, ինչու մոտեցավ, ինչ խոսեցինք, բայց կարծես թե վատ չէր, նույնիսկ այնքան, որ հեռախոսի համար թողեցի: Իսկ հետո, հրաժեշտ տալիս, հանեց ակնոցն ու ես տե-

սա երկնքի պես թափանցիկ կապույտ աչքերը: Երեկոյան, երբ զանգեց, ասացի, որ սխալ է զանգել՝ այս համարով այդպիսի մարդ չկա: Հասկացավ՝ ծանաչել էր ծայնս, բայց էլ չզանգեց, չնայած ծայնը զարմացած էր: Ընդամենը չգիտեր, որ հորս աչքերն էլ էին կապույտ...

Լռեց: Չեռքը նորից սիգարետին տարավ, բայց չկպցրեց: Հայացքը հեռու է: Հետո ասես «միացավ», արագ-արագ տեքստը թերթեց, նայեց:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Մայրս մի անգամ ասաց, որ կապույտ աչքեր չի սիրում ու բացատրեց, որ մինչև ամուսնանալը չի նկատել, ավելին՝ ամուսնանալուց հետո էլ մի որոշ ժամանակ այցն է միայն հասկացել, որ ամուսնու աչքերը կապույտ են: Չէի հավատում, չէի կարող հավատալ... ամեն անգամ նեղվում էր իմ չհավատալուց, ասում, որ ամաչել է ուշադիր նայել տղամարդու աչքերի մեջ: *(Ի վերջո վառեց սիգարետը, մի երկու ծուխ քաշեց:)* Ես առաջինը տղամարդու աչքերին եմ նայում ու ձեռքերին:

Առաջին շրջան՝ աստվածների հետ հաղորդակցվելու, մարդիկ չէին մտնում, միջնորդը շամաններն էին...

Հայացքը կենտրոնացած է: Մի

տեսակ մեխանիկորեն է անցնելու այս կտորը՝ մի պահ մոտենալու է ստենդին՝ հերքական թերթիկն ամրացնելու, հետո ասես հիշելու է հայելիների փաստն ու հետ է քաշվելու:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Հայրս ընդամենը մի քանի ամիս էր, ինչ վերադարձել էր, միմյանց հետ շփվում էինք մորս միջոցով: Մայրս հարևանի տանն էր: Գնացել էր մեր տոնական սփռոցը բերելու՝ հորս մոտ հյուրեր էին գալու: Պարտադրված հյուրեր էին, հայրս առանձնապես ուրախ չէր, բայց պիտի ընդուներ: Ծաբաթ օր էր, կեսօր: Մորս օգնելու համար կարտոֆիլ էի մաքրում, հայրս գնում-գալիս էր, անսպասելի մոտեցավ, նայեց ու հարցրեց՝ դասերդ սովորե՞լ ես: Բացասական պատասխան տվեցի՝ դիմացը կիրակի կար ու, հետո, ես դասերս միշտ էլ հաճույքով... *(Դադար:)* Երկուշաբթի դասվարս մեր տուն եկավ, մտածել էր՝ հիվանդ եմ: Մայրս հաստատեց սուտը, դասվարս հավատաց՝ վերմակիս տակն էի մտել ու նույնիսկ գլուխս դուրս չհանեցի: Կմեռնեի, եթե այտիս վրա կարդար հորս երկար մատների հետքը... Դպրոց գնացի մի շաբաթից՝ հայրս ուժեղ ձեռք ուներ ու... թույլ սիրտ: Մի ամբողջ շաբաթ քրոջ տանն էր մնացել՝ մեր տուն չեկավ, բայց գալուց հե-

տո էլ աչքերիս մեջ չնայեց ու ոչ մի բառ չասաց...

Առաջին շրջան՝ աստվածների հետ հաղորդակցվելու, մարդիկ համառորեն չէին մտնում, սկսել էին կասկածել աստվածների սիրուն...

Երկար դադար:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Տարիներն անցնում էին, կասկածները համոզմունք էին դարձել ու իզուր էր մայրս երդվում, որ մինչև իմ ծնվելը, մինչև հորս բանտ նստելը, նա այդպիսին չէր: Իզուր էր պատմում իրենց ռոմանտիկ ընթրիքների, գիշերային քաղաքում ոտքով անվերջ զբոսանքների, բարձրացած լեռների, հյուսված պսակների մասին... *(Դադար:)* Առաջին շրջանը փոքր էր, բայց հետո մեծացավ, որովհետև ծեսը դառնում էր թատրոն...

Արագ մոտենում է ստենդին, ասես քաջությամբ հավաքած՝ ամրացնում է թերթիկը ստենդին ու շրջում հայելին: Կենտրոնանալով՝ փորձում է ուղիղ նայել իր աղճատված պատկերին՝ զննելով այն:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Երբևէ չեմ երազել դերասանուհի դառնալ, բայց չեմ էլ կարող հաշվել խաղացածս դերերը, որոնց լուռ վկան իմ սենյակի պատերն էին ու պատից կախված հայելին, որի մակերեսին սկսել էի

զննել դեմքիս ցանկացած արտահայտությունը, մկաններիս ամենաաննշան շարժն ու անգամ... լացս: (Դադար:) Ես այլևս իմ կյանքը չէի ապրում, իմ կերպերն ավելին էին, քան ես, ես խճճվել էի ինքս իմ մեջ...

Ուղիղ հայելու մեջ նայելով:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Ծրջանի այն կետը, որը սկիզբն է, նաև ավարտն է և սկիզբն ու ավարտն իրար խառնվելով՝ անվերջ պտտվում էին՝ կրկնելով նույն շրջանը: Իմ բոլոր սերերը հորս նման կապուտաչյա էին, սկսած մանկապարտեզից, վերջացրած նախավերջինով: Երանք բոլորն էլ մեծ, երկար մատներով ուժեղ ձեռքեր ունեին...

Անսպասելի սկսեց քրքջալ՝ հայելու մեջ իրեն նայելով: Մեկեն պոկվեց տեղից, մտեցավ մյուս հայելուն, մյուսին, հաջորդին... Լաց, ծիծաղ, ծամաժողովուն՝ աղճատված դեմքերին նայելով: Այս ամենը կվերաճի ինչ-որ խելահեղ պարի, որը մեկ ասես ծիսապար լինի, մեկ՝ ավանգարդ ինչ-որ բան, օգտագործելով հայելիները՝ դրանց մեջ արտացոլվող իր աղճատված պատկերները: Անսպասելի քարացավ, դադար:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Մտածում էի՝ եթե հեռանամ, շրջանից դուրս կգամ, փակագծերը, սահմանները... Բոլորը հոգս կցնդեն: Այդպես մի օր

կապեցի ձամպրուկս ու... հայրս ոչինչ չասաց, ոչ անիծեց, ոչ էլ օրհնեց: Լուռ բաց թողեց, գիտեր՝ իր արյունն եմ, կանգնեցնել չի լինի... (Այս տեքստն այնպես է ասում, ասես առաջին հերթին իրեն է ուզում համոզել:) Իմ սիրելին սևահեր է, սև աչք-ունքով: Մատները այնքան էլ երկար չեն...

Մտենդ-հայելիները, որոնք քիչ առաջ աջ ու ձախ էր հրել՝ խեղդվողի նման ազատվելով, հիմա նորից հավաքում է շուրջը, փակում իրեն՝ ասես և՛ սաղմ լինի մոր արգանդում, և՛ շաման՝ իր գծած շրջանի մեջ:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - (տոնի շատ կտրուկ փոփոխություն): Ծամանները ամբողջ ճշմարտությունը չէին ասում մարդկանց այն մասին, որ արտաքին շրջանից բացի, կա նաև ներքին շրջան՝ մեր մեջ՝ մեր ներսում, նրանք լռում էին: Աստվածների հետ՝ ինչպես հավասարը հավասարի, կարող էին հարաբերվել միայն այն մարդիկ, ովքեր իրենց ներսում կքանդեին այդ շրջանը...

Անսպասելի լռեց, նստեց հատակին: Մի պահ լուռ է: Մայասում կա մեջը: Ասես գալու է մեկը, ասես զգում է մեկին: Հայացքը մի պահ վերև կբարձրանա, հետո արագ կիջնի: Դժվար կսկսի:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Ես էստեղ եմ, էստեղ... Գիտեմ՝ դու էլ ես էստեղ:

Գիտեմ, լսել ես էն ամենը, ինչ ասել եմ, ինչ չեմ ասել, կռիվս, որ արել եմ, որ չեմ արել, ճի՛շտ, աղերսս, լացս՝ տեսել ես... Դո՛ւ, միայն դո՛ւ գիտես, թե ինչքան սեր կա մեջս կուտակված, չծախսված, չապրած... Էստեղ, ներսում՝ մաշկիս տակ: Ի՛նձ մնաց էր բոլորը՝ չտվեցի, չասեցի, չապրեցի... ու հիմա, երբ էլ ոչ մի վայրկյանով չեմ կարող հետ բերել քեզ՝ նույնիսկ եթե տամ աշխարհի բոլոր գանձերը և նույնիսկ կյանքս... Երբ գիտակցությունը ընդհանրապես հրաժարվում է հասկանալ կատարվածը, իսկ ենթագիտակցությունը՝ ավտոպիլոտը միացրած, անիմաստ շնչել է փորձում՝ շնչել, արտաշնչել, շնչել՝ ապրել, երբ միակ զգացածս դատարկ դատարկությունն է ու չսպառված խեղդող սերը, հանկարծ, միայն էդ պահին եմ հասկացել՝ ինչքան եմ սիրել, ինչքան եմ ուզեցել ասել ու չեմ ասել... Ու հիմա էդ չասված բառերը դուրս են գալիս աչքերիցս՝ արցունքների տեսքով, քթիցս՝ ծխի տեսքով, բռունցքներիս միջով՝ երբ ձեռքում եմ օղբ... Ու հիմա տալիս եմ հարցը՝ ինչո՞ւ... Երբ... ինչպե՞ս...

Լռեց նույնքան անսպասելի, որքան սկսել էր, հետո դանդաղ վեր կկենա հատակից, նույնքան դանդաղ կմտտենա պայտասակին, սիգարետն ու կրակայրիչը մեջը

Կզցի, պայտասակը կվերցնի հատակից:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Բայց ներսի շրջանի մասին Մարդն ինքը պիտի հասկանար: Այդպիսին էր Աստվածների կամքը:

Նույն դանդաղությամբ կուլիսներին քաշելով կրերի զգեստների անիվներով կախիչը, որից բազմաթիվ հագուստներ են կախված:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - (*այլ տոնով*): Որոշեցիր ու գնացիր, նույնիսկ չսպասեցիր, որ հասնեմ քեզ, մի վերջին անգամ տեսնեմ ինձ՝ աչքերիդ անսահման կապույտի մեջ: (*Դադար:*) Ի՛նձ պատժեցիր, թե՛ քեզ... ո՛ւմ ազատեցիր՝ ումի՛ց...

Հագուստն հանում, զգում է կախիչի վրա: Նորից հեռախոսագնոց: Մի պահ ուզեց անտեսել, հետո միտքը փոխեց, մտտեցավ, միացրեց՝ առանց էկրանին նայելու:

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - (*ծայնը սառն է*): Ասա՛...

ՏՂԱՄԱՐԴՈՒ ծայն - (*ուրիշ տղամարդու ծայն, բայց որ միանգամից շատ չտարբերվի*): Ես ուզում էի...

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - (*ընդհատեց*): Չէ, սպասիր, ես եմ ասելու... էլ չեմ կարող լռել ու չեմ ուզում: (*Ծատարագ կկենտրոնանա ու կշարունակի խոսել: Ընթացքում կմիաց-*

նի հեռախոսի բարձրախոսը, կոնի հատակին: Խոսքի ընթացքում կհագնի հագուստը, կոշիկները, ամենաառաջին, նորմալ հայելուն նայելով կհարդարվի՝ դիմահարդարում, սանրվածք:)

Երբ փոքր էի, մտքումս ինձ համար սիրեկան էի ընտրում ու սկսում ապրել: Մտքումս էի ընտրում, էս էի ընտրում... Էն ժամանակ վտիտ էի, ոսկրոտ: Բայց ընտրելուց հետո փոխվեցի, շատ փոխվեցի: Երբեմն նույնիսկ ինձ չէի ճանաչում: Մտածում էի, որ էլ երբեք չեմ կարող այդպիսին լինել: Չեմ կարող կոտրատվել, որովհետև իմ բոլոր հոգսերը ինքս եմ հոգացել: Այնպե՛ս էի ուզում, որ մեկը զբաղվեր ինձնով. սիրեկանս զբաղվում էր: Մտովի նրան փնտրելիս նվազ մի մարմնի էի հանդիպում, որը կնոջ մարմնից մի բանով էր տարբերվում. Դատղամարդու մարմին էր: Ես ուժեղ էի, նա երբեք ինձ չէր դավաճանում, տուն էր գալիս մշտապես ժամը ութին: Ծատ էր աշխատում ու համարյա միշտ հոգնած էր լինում: Բայց տուն մտնելուն պես համբուրում էր այտս: Հետո մենք ընթրում էինք: Նրա սիրած ուտելիքներն իմ չսիրած ուտելիքներն էին, որ ես ամեն օր պատրաստում ու երեկոյան, արմունկներով սեղանին հենված, հետևում էի,

թե ինչպես է հաճույքով ուտում: Հետո հեռուստացույց էինք նայում: Երբ ֆիլմում ինչ-որ բան ինձ հուզում էր, շրջվում էի՝ նրան այդ մասին ասելու ու զարմացած ժպտում. նա համարյա միշտ քնած էր լինում: Անջատում էի հեռուստացույցն ու ոտքերիս ծայրերի վրա մոտենում նրան՝ ուշադիր զննում էի դեմքը, ծնկի գալիս ու զգուշորեն համբուրում ձեռքերը: Հետո՝ քթի ծայրը, ծնոտը, ի վերջո՝ շուրթերը: Ծատ էի սիրում համբուրել նրա ստորին շրթունքը: Ես արթնանում էի, զարմացած նայում ինձ ու ասում, որ քնել է ուզում: Մենք գնում էինք ննջարան, որտեղ նա արագ-արագ հանվում էր ու անկողին մտնում: Անկողնում նրա հետ շատ հաճելի էր, մանավանդ ձմռանը: Ես փոքր ժամանակ ընկել ու ջարդել էի քիթը: Ու դրանից քնած ժամանակ ռունգերից տարօրինակ սուլոց էր լսվում: Ես գլուխս դնում էի նրա կրծքին ու քնում՝ ձայներից թմրած: Առավոտյան նա վաղ էր արթնանում: Ամեն օր փորձում էր այնպես վեր կենալ, որ ինձ չարթնացնի: Բայց իզուր. մինչ նա ծմկոտում էր, ես արդեն խոհանոցում նրա համար սուրճ էի եփում: Խմում էր արագ-արագ՝ բերանն այրելով: Հետո համբուրում էր շուրթերս ու վազում աշ-

խատանքի: Ծաբաթ-կիրակի չէր աշխատում: Ես շատ էի սիրում այդ օրերը: Երբեմն գնում էինք զբոսնելու, երբեմն հյուրեր էինք ընդունում, մեկ-մեկ էլ ինքներս էինք հյուր գնում: Բայց ես շատ էի սիրում այն շաբաթ-կիրակիները, երբ փակվում էինք տանը: Այդ օրերին նա ֆիլմը միշտ էլ մինչև վերջ էր նայում: Հետո ինքն էր անջատում հեռուստացույցն ու ինձ տանում ննջարան: Իսկ երբ արդեն անկողնում էինք լինում, ուշադիր զննում էր դեմքս ու երկար, շատ երկար համբուրում շուրթերս: Հետո գրկում էր ինձ ու ասում, որ իրեն շատ է դուր գալիս իմ վերին շրթունքը, որ ինքն ուղղակի գծվում է այն բանից, որ ես համբուրվում եմ աչքերս բաց, որ թիկունքին շատ հաճելի խուտուտ է զգում իմ մատների պարից ու որ ընդհանրապես ինքն ինձ շատ է սիրում ու որ իրեն շատ լավ է զգում ինձ հետ: Երբեմն նա մեկերկու շաբաթով գործուղման էր մեկնում: Երկու շաբաթը հավասար է երեք հարյուր երեսունվեց ժամի: Այդ ընթացքում ես մեր ապագա երեխայի համար զգեստներ էի կարում, որոնք ժամանակավորապես տիկնիկներիս էի հագնում: Ապրում էինք... Մի անգամ էլ, երբ վերադարձավ հերթական գործուղումից, դուռը

չբացեցի... Ես շատ երկար նայեցի պատուհանից: Դրսում ուժեղ անձրև էր գալիս: Լա կանգնած էր առանց անձրևանոցը բացելու և նայում էր մեր տան պատուհանին: Բայց ես դուռը չէի բացում: Իսկ հետո եկար դու: Ու ինձ նույնիսկ թվում էր, թե վերջապես բացել եմ դուռը... Գիտե՞ս, դու շատ էիր փոխվել ու ես սկսեցի մտածել, որ շփոթել ես դուռը: Միայն թե ես դա հետո հասկացա...

ՏՂԱՄԱՐԴՈՒ ծայն - *(լսվում է բարձրախոս միացրած հեռախոսի էֆեկտով):* Մի րոպե լսեք ինձ, խնդրում եմ... Ես սխալ եմ զանգել, լսո՞ւմ եք, սխալ եմ զանգել: Երևի մի թիվ խառնել եմ՝ համարը հիշողությամբ եմ հավաքել... Այո... Ես հենց սկզբում էի ուզում ասել, երբ լսեցի ձեր ծայնը, բայց դուք սկսեցիք խոսել ու ես ակամայից լռեցի... Ես սխալ եմ զանգել, լսո՞ւմ եք...

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Լսում եմ... *(Արդեն պատրաստ է: Հայելու մեջ մի վերջին՝ ստուգողական հայացք:)* Ես գլխի ընկա դեռ սկզբում...

ՏՂԱՄԱՐԴՈՒ ծայն - Ինչպե՞ս թե... հասկացաք, որ սխալվել եմ ու շարունակեցիք խոսել...

ԴԵՐԱՍԱՆՈՒՇԻ - Ես չէի կարող լռել: *(Ձայնը հոգնած է:)* Ու հետո... *(Ինքնավստահ, հանգիստ:)*

Դուք հավատում եք, որ որևէ կին իրեն ձանաչող որևէ տղամարդու կասեր այն ամենը, ինչ ես ասացի... (Պայուսակն է հավաքում՝ մեջը լցնելով գրիմը, սանրը:)

ՏՂԱՄԱՐԴՈՒ ձայն - (դադարից հետո): Ճիշտն ասած, ես էլ ուրն անց կեսից շուտ տուն չեմ հասնում: Գործուղման էլ եմ գնում մեկ-մեկ... (Մանր ծիծաղ:): Նախկին ընկերուհիս ամեն առավոտ մի տաս րոպե հետս չէր խոսում՝ քնած ժամանակ ֆսֆսացնում, խանգարում էի քնել, բայց, ախր, փոքր ժամանակ քիթս չեմ ջարդել, հաստատ գիտեմ...

ԴԵՐԱՍԱՆՈՒՑԻ - Իսկ ի՞նչ ես սիրում ուտել:

Ընթացքում կուլիսներից դուրս կբերի փոքրիկ ճամպուռ: Գլորելով կբերի, կթողնի բեմում: Ինչ-որ բան կուզի վերցնել պայուսակից, ձեռքը կընկնի գնացքի տամբը:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ձայն - Հիմա արդեն չեմ էլ հիշում: (Տխրեց:): Կերել եմ՝ ինչ պատրաստել է ընկերուհիս: (Բեմից ծաղ:): Հիմա էլ նույնը ինքս եմ պատրաստում...

ԴԵՐԱՍԱՆՈՒՑԻ - (հայացքը գնացքի տոմսին է): Մի երկու ժամից լուսաբացն է... Հենց այդ ժամանակ էլ իմ գնացքը դուրս կգա կայարանից: (Դադար, հետո՝ արագ:): Դա էի ուզում ասել, երբ ընդհատեցիր:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ձայն - Սպասիր... (Ձայնը լարվեց:): Ես երկար վերարկու եմ հագնում՝ սև, նույն գույնի գլխարկ, գուցե ձանապարհեմ քեզ... Վստահ եմ, մի կերպ կգտնենք իրար:

ԴԵՐԱՍԱՆՈՒՑԻ - Դա արդեն ոչ մի նշանակություն չունի, կարևորն այն է, որ դու... որ դու վերջապես հայտնվեցիր... (Շտապով վերցրեց վերարկուն:)

ՏՂԱՄԱՐԴՈՒ ձայն - Խնդրում եմ, էլի մի րոպե...

ԴԵՐԱՍԱՆՈՒՑԻ - Աչքերիդ գույնը... (Մի պահ պիտի վախենա իր գուշակումից:): Կապույտ է, չէ...

ՏՂԱՄԱՐԴՈՒ ձայն - (զարմացած): Հա, կապույտ է:

Դերասանուհին անջատեց հեռախոսը, հետո, որպես արդեն անպետք իր, դրեց հատակին:

ԴԵՐԱՍԱՆՈՒՑԻ - (գնացքի տոմսերը դրեց ճամպուռի վրա): Ձեռքերդ էլ, վստահ եմ, ուժեղ են՝ երկար մատներով...

Մոտեցավ ստեղծ-հայելիներին: Մկսեց զնգալ հատակին մնացած հեռախոսը: Բացարձակ չի մայում հեռախոսի կողմը: Հերթով մոտենում ու միացնում է ստեղծների վրայի լույսերը: Չանգը անջատվեց ու միացավ ինքնապատասխանիչը:

ՀԵՌԱԽՈՍ-ԻՆՔՆԱՊԱՏԱՍԽԱՆԻՉ - (դերասանուհու ձայնով): Ես հի-

մա զբաղված եմ, խնդրում եմ, հաղորդագրություն թողեք կարճ ազդանշանից հետո:

Լավեց կարճ ազդանշանը:
Ստեղծողի լույսերն արդեն միացված են: Տղամարդու խոսելու ընթացքում հերթով շրջելու է ստեղծողը, հանդիսատեսը տեսնելու է հայելիները, որոնց վրա խոշորացված արտացոլվել են թերթիկների վրայի եղածը: Այնտեղ ոչ մի տեքստ էլ չկա: Դրանք գրչով արված գծանկարներ են՝ ըստ մոնոպիեսի նյութի՝ սկիզբ, կուլմինացիա, ավարտ: Ու քանի որ հայելիները ծուռ են ու աղճատված՝ նկարներն էլ հենց այդպիսին են: Սակայն դրանք անպայման պետք է համճարե՞լ նկարներ լինեն: Հանդիսատեսը պիտի վստահ լինի, որ այս դերասանուհին տաղանդավոր է նաև նկարելու հարցում:

ՏՂԱՄԱՐԴՈՒ ձայն - Ես գիտեմ, որ դու զբաղված չես ու գիտեմ, որ լավ էլ լսում ես այն, ինչ հիմա քեզ կասեմ: Դու խելագար ես, ամենախկնական... Ու դու ո՛չ մի դեր էլ չես փորձում: Դու տապալել ես պրեմիերան, դու խաղացել ես այնպես, ինչպես ինքդ ես ուզեցել՝ կերպարի քո մեկնաբանությամբ՝ թքած ունենալով և՛ ռեժիսորի, և՛ դերասանական կազմի վրա: Եվ նույնիսկ պրեմիերայից հետո հրավիրված ժողովի ժամանակ, լսելու ու

ներողություն խնդրելու փոխարեն, քեզ համար նկարել ես... Տեսե՛ք, տեսե՛ք, ուրեմն՝ դու ռեժիսորից ավելի լավ ես հասկանում, թե որտեղից էին գալիս կերպարի կոմպլեքսները ու բնական է, որ այդքանից հետո թատրոնի տնօրինությունը քեզ պետք է դնուրս շարտեր թատրոնից: Դե միացրո՞ւ հեռախոսդ, մենք պետք է խոսենք, լսո՞ւմ ես... Ես...

Դերասանուհին վերջին նախադասության ժամանակ ճամպուկի վրայից վերցնում է տոմսը, վերականուր ճամպուկը գլորելով՝ իջնում է բեմից: Տղամարդու վերջին բառի վրա ճամպուկը հեռախոսի վրայով է գլորում:
Հեռախոսը լռեց:
Բեմի լուսերն անջատվում են: Վառ լուսավորվում են ստեղծողի հայելիների լույսերը՝ նկարների վերևում: Դերասանուհին դառնալով հեռանալու է ելքի կողմը:
Ընթացքում.

ԴԵՐԱՍԱՆՈՒՀՈՒ ձայնը - Եվ եթե զգայելի աշխարհի իրերն առաջանում և ոչնչանում են, ապա մտահասանելի էությունները՝ էյդոսները, անմահ են և միշտ նույնական իրենք իրենց: Դրանք գոյություն ունեն զգայելի իրերից առանձին և անկախ, տարածությունից և ժամանակից անդին՝ ինչ-որ տեղ՝ «ձշմարտության հովտում»:

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



Արմենուհի ՍԻՍՅԱՆ

Մարդկանցից առանձնությունս փնտրելու ձգտումը վերադարձ է դեպի մարդը՝ անցնելով սեփական հոգու ճանապարհով: Բայց պարզվում է՝ մարդուն խանգարողը միայն մարդը չէ. այդ մեծ խանգարողը անգամ ամենահանդուրժող ու բարի էակին վերածում է բռնակալ-սպանողի: Ճանճի դեմ պայքարում մարդը ամենևին էլ հաղթող չի դուրս եկել: Հանձնվել ինչ-որ ճանճի: Սպանել՝ հաստատելու համար սեփական ուժերի հանդեպ հավատը, սպրեցնելու համար մարդու՝ ամենագոր լինելու միջոց: Սպանել և մոռանալ: Կհաջողվի...

ՄՊԱՆԵԼ ԵՎ ՄՈՌԱՆԱԼ

Մենախաղ

Կիսամութ քնն: Մահճակալ, աթոռ, լուսամտիով: Մահճակալի մոտ, գիշերակնոցով կանգնած է համարյա երիտասարդ կին՝ ճանճասպանը ձեռքին: Ծանճի տրոհոց: Աստիճանաբար տրոհոցն ուժգնանում է:

ԿԻՆ - Բզզվա՛վ վերջին անգամ գոյությունը քո, ծանճ, որովհետև մոտ է վախճանդ: Ու մի փնտրիի շուրջը վտանգ, որովհետև ես եմ քո վտանգը: Նայիր՝ բարձր է ձեռքս, կամքս վճռական ու սուրս՝ հատու: Ասում եմ երեսիդ՝ ազնվորեն ու քաջաբար, առանց հետին մտքի կամ թիկունքիցդ գաղտնի հարվածելու: Գուցե սա մեղմացնի հանցանքս: Ուրեմն ընդունիր վախճանդ քաջաբար: Իսկ իմ վախճանից հետո չեն ասի. «Կյանքում մի ծանճ սպանած չկար»: Կար: Եվ դա կանխամտածված սպանություն էր:

Չսիրեց քեզ ողջ իմ ցեղը մարդկային, ու ես չեմ գատվում նրանցից: Ներիր, քեզ համար բաժին չկա իմ մեծ սիրո պաշարից: Գուցե բնագղաբար է հիմա ձեռքս բարձրացել՝ ի նշան քո հանդեպ մարդկության տածած խորը հակակրանքի: Ասում ես, թե դո՛ւ ես սիրում ինձ... Հը՛մ... Գիտեմ, այդ մասին էիր բզզում առավոտյան,

երբ անգամ արևի շողերն իրենց թույլ չէին տալիս արթնացնել ինձ. միայն լուռ սահել էին պատուհանից ներս ու սպասում էին արթնացումիս: Չսովորեցիր բնությունից քաղաքավարի վարվելակերպ, չսովորեցիր: Աներեսաբար բզզում ու բզզում էիր ականջիս: Սերը՝ սեր, բայց ինձ այդպես համառորեն մի սիրիր: Չէիր կարող փոքր-ինչ լուռ տածել սերդ: Չէ, դու մարդ չես դառնա: Եվ, վերջապես, պետք չէ քիթդ խոթել ամեն տեղ, հատկապես շատ ինտիմ տարածք՝ անկողին: Ես մենակ չեմ. քնած եմ՝ իմ մտքերով, երազներով, իմ մերկությամբ... Մինչ դու ականջիս ինձ սիրում-միրում էիր, իմ մեջ հետզհետե արթնանում էր homo-սպանողը, ներսումս ակտիվորեն սկսում էին արտադրվել հակակրանք ծնող հորմոններ, որոնք աստիճանաբար վերածվում էին նողկանքի զգացումի, ապանզուսպ գայրույթի... Սկզբում ես

զգուշացնում եմ ձեռքիս շարժումով, որ փոխադարձ չէ մեր սերը, հեռացիր, բայց դու նորից գալիս ես ու շարունակում մզզալ ականջիս քո սերը: Համբերատար նորից նշան եմ անում՝ մոռացիր ինձ, գնա՛, բայց դու անամոթաբար նորից վերադառնում ես ու այս անգամ արդեն սկսում տզզալ սիրուդ համար...

Ես դեռ տոկում եմ իմ անկողնում: Իմ սիրելի շողերը լուռ հանդարտեցնում են համբերությունս՝ մերթընդմերթ համբուրելով ձակատս: Ես դեռ շարունակում եմ համբերել՝ հանուն արևի: Հանուն արևի շատ բան կարող եմ տանել, անգամ քո տզզոց-սերը: Քո հիմար ու համառ սկզբունքայնությունն ինձ ծայրահեղ լարում է, որովհետև այն արդեն ինքնասածության բութ կրկնություն է հիշեցնում: Սա արդեն լկտիության լուրջ հայտ է: Ոչինչ ինձ այնպես չի բորբոքում, ինչպես տգիտության լկտիությունը. գերլկտիության հետ թևանցուկ են քայլում:

Հիմա հասկանում եմ՝ ինչը պատճառ դարձավ, որ մարդկությունը ատի քեզ. հենց այդ նույն լկտիությունը, որ մթության փարոսի պես միշտ դեպի իրեն է ձգում տգիտությանը:

Ես զգում եմ, թե ուր է տանում քո սի-

րո բզզոցը. դու փափագում ես մարմնիս հպվել... Դե, գիտե՞ս ինչ, դու էիր պակաս, գիտե՞մ քեզ նմաններին... Ուրեմն՝ փախար: Դեպի քո կեղտօրրանը, քանի մարմինս դեռ ընդարմացած է անուշ նիրհից...

Օրվա ոչ մի ժամի մարմինս հանգստի վայելքն այնպես չի զգում, ինչպես վաղ առավոտյան, երբ արթնությունը զգուշորեն հավում է մտքիս առավոտին, իսկ մարմինս նրան լսել-չլսելու է տալիս. չէ, չի արհամարհում կամ ծուլանում: Սեթևեթում է իր վաղորդյան արթնությունը, փայփայում իր խաղաղությունը, արևալույսին հանդիպելուց առաջ վերջին անգամ ձշգրտում է իր գեղեցկությունը՝ անշարժությամբ շրջանակված, և միտքը, խոնարհվելով մարմնական անդորրի առջև, օրորվելով նահանջում է ու նույնպես խաղաղվում նիրհի մեջ... Սրանք ամենաեթանելի փոխըմբռնման պահերն են՝ մարմնի ու մտքի, երբ նինջը՝ սիրով փարատված, կապում է նրանց անուշ թմբիրով ու շոյում այդ միասնությունը... Երանելի, փաղաքո՛ւշ պահեր... Որքան եմ սիրում երկարածգել այդ պահերը... Եվ հանկարծ այդ ժամանակ հայտնվում ես դու՝ տիրոջ իրավունքով, ասես մարմինս՝ որ-

պես Միլոսյան Վեներա, մահձում մեկնվել էր հենց քեզ համար ու միտքս էլ անհանգիստ սպասում էր քո «տըզզ» ազդանշան-երկրպագությանը... Ահա այսպիսի լկտի բարքեր: Դու անում ես քո սև գործը՝ արթնացնում ու ձեռքերդ հրձվալից քսում ես իրար: Դա նույնն է, թե վնասեմ քեզ ու հետո ձեռքերս ծափահարեն...

Հապա քո ձգտումը մաքուր ու բաց տեղերի հանդեպ, օրինակ՝ ճակատի, թևերի, դեմքի, լանջքի... Մաքրասիրություն. ես չեմ հավատում քո մաքրամոլությանը, որովհետև դու ամենևին մաքրակենցաղ չես ու չփորձես ինձ համոզել դրանում: Այստեղ նենգություն կա թաքնված. պարզապես ուզում ես ապականել, կեղտոտել: Իսկ դրա համար քեզ մաքուր տարածքներ են պետք: Տիրել՝ ոչնչացնելու համար: Եվ դեռ առավոտից ականջիս տոգում ես սիրո մասին... Սե՛ր, որն ուզում է կալանել, տիրել, որ ուզում է ջնջել քո եղածն ու հաստատել իրենը... Մի՛ ծիծաղեցրու ինձ... (Ծիծաղում է):

Դա սեր չէ, *ինքնասիրություն* է: Երբ սիրում ես, ամենաքիչը քո մասին ես մտածում: Թե գերակշիռ է սերը ինքդ քո հանդեպ, էլ ի՛նչ սեր հանդեպ մեկ ուրիշը, թե այդ սի-

րո զգացումը չի տիրելու քեզ, այլ դու՝ իրեն, թե նա չի առաջնորդելու քեզ արարքների, թե նա չի մղելու քեզ մեկ ուրիշին հաճույք պատճառելու, տալու և ո՛չ առնելու, նվիրվելու և ո՛չ ակնկալելու, էլ ի՛նչ սեր... Դա, ավելի շուտ, սիրո ռազմավարություն է՝ սեփականացնելու, իրեն ենթարկելու, տիրելու համար, որի արդյունքում սիրո առարկան դառնում է իսկապես առարկա, եթե ոչ՝ զոհ... Սերը ունի մեկ կանոն՝ երջանկացնել սիրելիին: Ինչը հակասում է այդ կանոնին, ուրեմն սիրուց չէ: Եթե դու իմանայիր սիրո մասին, ինչ ես գիտեմ, կերկրպագեի քեզ, կխոսեի քո լեզվով, ինքս կթռչեի քո ետևից, չէ, կձախրեի՛... Եթե դու իմանայիր սիրո մասին, ինչ ես գիտեմ, դու պարզապես ծանձ չէիր լինի...

Իրականում ես ոչինչ էլ չգիտեմ սիրո մասին: (Ի դեպ, սերն էլ իմ մասին չգիտի): Ու ես միակը չեմ: Ճանաչու՛մ ես Էմիլի Դիկկինսոնին. նա էլ չգիտեր, ավելի ճիշտ՝ միայն մի բան գիտեր ու ասում էր. «Սերը ամեն ինչ է և դա միակ բանն է, որ մենք գիտենք սիրո մասին»: Մենք. իմ անունից էլ է ասել, ինչի համար խորապես զգացված եմ: Ծնորհակալություն:

Տզզոցը սաստկանում է:

ԿԻՆ - Ինչպիսի ոգևորություն: Մզոցիդ տոնայնությունը կարծես բարձրացավ: Այս ֆինչ նոտա է... (Փորձում է արտաբերել նույն նոտան: Չի ստացվում, նորից է փորձում:) Ուզում ես բարձրաձայնել սիրո մասին... Խելացի ես. գիտես, որ թե գրավեցիր ականջը, մնացածն արդեն հեշտ է... (Ընդհատվում է, ապա տոգում է նորովի:) Ուզում ես ասել, որ դու ավելին գիտես սիրո մասին: Դու կիմանաս, դե իհարկե, դու այնքան բան ես տեսել: Եվ տեսել ես մոտիկից, ներկա ես եղել, երբեմն էլ՝ մասնակից... Հավատում եմ, հավատում, միայն թե ցած իջիր ոգևորությանդ վերևներից, կամաց բզզա, խնայիր լսողությունս: Չե՞ս տեսնում, նա դեռ շոյվել է ուզում առավոտյան լռության կողմից... Զնքշալի մերձեցում... Մի խանգարիր... (Ճանձը նորից հայտնվում է իր տոգոցով:) Ինչ անհամբեր են ճանձերը, ինչո՞ւ: Մտքով անցածն ու ուզածը տոգոցի հետ մեկտեղ պիտի իրականանա: Ուզածի ու դրա իրականացման միջև հանկարծ ոչ մի տարածություն չմնա: Գուցե վախենում են՝ քամի լինի ու թռցնի իրենց... Իսկ գուցե գնահատում են պահն ու վախենում կորցնել այն, իմաստուն են այն-

քան, որ արժևորում են յուրաքանչյուր ականաբար ու շտապում են ապրել այն՝ լցնելով հենց իրենցով, ուրիշ էլ ինչո՞վ... Համբերությունը կյանք է:

- Ո՛չ,- տոգում է ճանձը,- անհամբերությունն է կյանք: Համբերությունը միայն ժամանակի կորուստ է ու հայտնի չէ՝ էլ ինչերի կորուստ...

Երբեք չփորձեցիր լսել, հանդուրժել, չտարբերեցիր կեղտը մաքուրից, ու՛ր ասես՝ նստեցիր, խառնեցիր իրար սպիտակն ու սևը ու տըճոճ՝ առաջ, ուզում եմ և վերջ, քնած է-քնած չէ, հարմար է-հարմար չէ. սիրում եմ՝ նշանակում է՝ պիտի իմը լինես. հապա անշարժացիր՝ իջնեմ վրադ...

Եվ, ընդհանրապես, թե ուզում ես ավելի հանդուրժող լինեմ քո հանդեպ, բարի եղիր (եթե քեզ համար դժվար չէ բարի լինելը), մի արթնացրո ինձ առաջինը, թո՛ղ այդ գործը այն թևավոր ծվլաններին կամ վերևի հարկում ապրող երկոտանի վայրենիներին, որոնց քայլերն ինձ ռնգեղջյուրների արշավանք են հիշեցնում: Կամ փողոցի սուրացող քառանիվների ազդանշաններին, որոնք հիշեցնում են աշխարհի վերջի գոյության մասին: Միայն մի հիշեցրո, որ դու

բոլորից ավելի մերձ ես գտնվում
ինձ (ես հիասթափվում եմ ինձ-
նից), ու չփորձեն մերձավոր-
մերձավոր խաղալ ինձ հետ,
լսում ես: Ինչքան էլ մերձ գտնվես
կողքիս, ինձ մերձավոր չես դառ-
նա, իսկ ես էլ պարտավոր չեմ սի-
րել բոլոր մերձ գտնվողներին...
Պարտավոր եմ՝ պարտավոր չեմ,
պարտավոր եմ՝ պարտավոր
չեմ... (Մատների վրա հաշվում է:)

Մատներս վերջնական ավար-
տով վկայում են՝ պարտավոր չեմ:

Աստված ասում է՝ սիրիր
մերձավորիդ: Բայց Աստված աս-
ում է նաև՝ սիրիր թշնամուդ, ավելին,
ասում է՝ կարողացիր
սիրել ուրիշին այնպես, ինչպես
քեզ կսիրեիր... Այս ինչ բարդ է ի-
րականում սիրո մեխանիզմը, ար-
դեն ամեն բան սկսեցի խառնել,
մինչդեռ թվում է՝ սիրում ես կամ
չես սիրում՝ վերջ: Կնիքն էլ դրված
է վրան, ահա: Չկա միջինը, չկա
պատճառ ու հետևանք, դրդող
կամ արգելող գործոններ, չկա, ո-
չինչ չկա: Ուրեմն՝ սեր էլ չկա: Չը-
կա, վերջ:

Բայց դու միշտ կաս, ծանձ: Դե ի-
հարկե: Սիրում ենք կամ չենք սի-
րում: Ինչպես որ դու տոգում ես
կամ չես տոգում: Մի՞ տոգա... Այդ-
պես... Ինչ լավ է... Լռիր... Երբևէ
նավարկել ես լուրջան մեջ... Ինչ-

քան եմ սիրում լուրջունդ... Ինչ
գեղեցիկ լռել գիտես... Այդպես
գուցե մոտենաս իմ սիրո մա-
տույցներին... Լռությո՞ւն... Հրա-
շալի է. այսպես մեկ էլ տեսար՝
սիրեմ քեզ... Այդպիսին ենք մենք.
սիրում ենք նրանց, ովքեր չեն
տոգում մեր շուրջ, չեն սիրում
կամ պակաս են սիրում մեզ, և
չենք սիրում շարունակ տոգա-
ցողներին, իրենց սերը անդադար
մեզ շնորհողներին. դա ծանձ-
րացնում է: Կարո՞ղ ես բացատ-
րել՝ ինչու: Ո՞չ... Իսկ ես կարո՞ղ
եմ... (Ձայնը զայրագին հուզված
է:) Իսկ կարո՞ղ ես բացատրել, թե
ինչու չեմ կարող: Ինչու ենք մենք
այդպիսին: Ո՛չ, ո՛չ, ոչինչ մի՛ ա-
սա, ավելի լավ է՝ լռիր...

Զո լուրջունը ինձ անկեղծության է
մղում, տեսնում ես: Լռությո՞ւն... Ա-
մենահրաշալի երաժշտությունը
լուրջունն է: Հրաշալի է. այստեղ
են լուծվում ամենայն ասված ու
չասված, ապրված զգացումներ,
հիացմունք ու հիասթափություն,
անգամ հողմ ու փոթորիկ, ամե-
նայն խորքային ապրում, ի վեր-
ջո, լուրջան մեջ է լուծվում, բոլոր
զգացումներն ապրվում են լուրջ-
յան մեջ... Լռության մեջ ամեն ինչ
կա ու ամեն ինչ լուրջան մեջ է...
Ամեն բան ի վերջո փոխարկվում
է լուրջան: Կատարելությո՞ւն...

Այստեղ եմ ես տեսնում իմ լիացումը, և սահմանները ընկրկում են: Անգամ արժի լռության մեջ մեռնել: Փառահեղ է:

Լռության փոթորիկ... Ասում են՝ կանայք շատախոս են: Երանք պարզապես սիրում են լսել զգացմունքների լեզուն, իսկ որպեսզի լսեն՝ պետք է խոսեցնեն, որպեսզի խոսեցնեն՝ պիտի խոսեն: Աստվածային է լռությունը, որովհետև Աստված ձայնով երբեք չի խոսում: Մի ընդհատիր Աստծո լռությունը...

Մարդիկ անզորությունից են համարում, թե ճանձը «փոքր բան է»․ ասում են՝ «մի ճանձ սպանած չկա», «մի ճանձի չամի» ու նման ճանձոտ արտահայտություններ... Դու ինձ համար մի ամբողջ աշխարհ ես, որը խանգարում է լռությանը, վայելելու լռությունը: Մեկ ճանձ սպանելուն մարդու օրգանիզմում նախորդում է հազարավոր բջիջների ոչնչացում, որոնք նյարդային համակարգն էին ամրապնդում: Մենք զոհաբերություն ենք մատուցում ճանձին: Եվ ոչ բնավ «մեկ ճանձին՝ մեկ բջիջ» արդարացի սկզբունքով. դրանք կարող են լինել տասնյակ, եթե ոչ հարյուրավոր կամ գուցե հազարավոր բջիջներ: Հաստատ: Ահա թե ինչ անհամամասնությոն,

անհավասար իրավիճակներ: Խեղճ մարդ՝ անպաշտպան ու համբերատար: Մարդկությունը, փաստորեն, պարտվողի կարգավիճակում է ճանձերի հետ հակամարտության մեջ: Սակայն մարդը միշտ հետամուտ է արդարության հաստատմանը: Ահա թե երբ է նա ձեռք բարձրացնում: Ահա թե երբ է դառնում սպանող: Ճարահատյալ: Ինքնապաշտպանության բնագոյ ու անհրաժեշտություն: Բայց դա եթե հեշտ լիներ... Հապա փորձիր սպանել ճանձին. նա կամ ձարակորեն կփորձի փախչել, կամ հմտորեն կհիմարացնի քեզ՝ դարձյալ փախչելով: Ու խեղճ մարդը կմնա վիզը այսկողմ-այնկողմ պտտելով, գլուխը օդում տարուբերելով՝ հիպնոսացածի պես ճանձի ետևից մղվել՝ խաղաղություն վերահաստատելու ազնիվ նպատակով: Եթե դու դեռ չես հմտացել ճանձանշանառության մարտարվեստում, ուրեմն պիտի պատրաստ լինես թանկ նյարդերի զոհաբերության՝ ճանձերի աստծուն: Բայց եթե պահի բախտը ժպտա քեզ ու հաջողվի մեկ հարվածով ազատվել նրանից, որպես օրինաչափություն, շուտով կհայտնվի մյուսը՝ քեզ մենակ չթողնելու մտավախությամբ, այն-

պես, որ հանկարծ չզգաս նրա բացակայությունը: Ծանո անդավաճան էակներ են ճանձերը, շանտ...

Պատկում է անկողնում ու փաթաթվում վերմակով:

Տըզզ... Նորից... Իսկ ես քիչ մնաց արդեն լռության դաշինք կապեի հետո: Ես՝ միամիտս, մոլորյալ մարդս, որ քիչ մնաց հավատի վերմակ բացեմ քո առջև, բաց թներովս վստահության ձեռք մեկնեմ քեզ, այն էլ մեկի փոխարեն երկու ձեռք՝ մերկաբաց, սպիտակ՝ որպես հաշտության դրոշ: *(Թևերը պարզում է առաջ):* Փոխարենը ստիպված եմ այս շոգին անգամ պաշտպանել մարմինս քո ոտնձգությունից՝ ծածկել ծածկոցով, իսկ դեմքս... Չէ, չեմ կարող: Չեմ կարող լուսաբացը բաց դեմքով չընդունել, կարևոր չէ, որ աչքերս փակ են, լույսը պիտի հավի դեմքիս, այդպես է մեր պայմանավորվածությունը, այդպիսին է խորհուրդը: Իսկ դու օգտվում ես իմ բաց տեղերից: Ազնիվ է միթե: Եվ, ընդհանրապես, ինչո՞ւ պետք է բացատրեմ քեզ այս ամենը, ինչո՞ւ, գուցե մի քիչ էլ արդարանամ: Օ՛հ, ներեցեք, որ թույլ չեմ տալիս հանգրվանել ձեզ իմ կրծքին (երբեմն նա

տրամադրություն չի ունենում, երբեմն խուսափում է լույսից, երբեմն ամոթխած ծածկվում է շապիկի տակ, ինչ կարող ես ասել, անկանխատեսելի է բնույթը կանացի կրծքի, ներող եղեք): Դե, իսկ դեմքը... Ձեր այցելության նախընտրելի ժամերին աչքերս ներսից փակված են լինում, ներքին հրահանգ կա, իրենք մեղավոր չեն, այտերս ու ձակատս ունկնդրում են ներսից գալարվող արյան հոսքին, իսկ շուրթերս լռությամբ լիցքավորում են ողջ օրվա խոսելիքի պաշարը: Մեծահոգի եղեք, խնդրեմ, ներող, շնորհակալ եմ հավիտյանս հավիտենից...

Ինձ բոլորովին չի հետաքրքրում, որ դու ներշնչվում ես լիքը շուրթերովս: Իմ քիթն էլ ուժգին արտաշնչվում է, որպեսզի դու մղվես իրենից հեռու: Լսիր ուրեմն, եթե դու համարձակվես համբուրել շուրթերս (դրանք միայն սիրո համար են, այն էլ՝ միմիայն իմ սիրո), ես քեզ, ես քեզ... ես կսպանեմ քեզ... Տեսնում ես, բա ինչպե՞ս հասկացար՝ փախար հեռու... Դե իհարկե, դու աներեսի մեկն ես, երևի դրա համար էլ քեզ մշտապես հրապուրում է քնած մարդու երեսը. նորից եկար մերձսահմանային երես... Տըզզ...

և դու հանդգնում ես լռել այտիս վրա... Ուզում ես հաճոյանալ ինձ՝ գիտենալով սերս լռության հանդեպ և օգտվում ես այտիս մեծահոգի սպիտակից: Երբեք, դու արդեն ոտնահարում ես իմ պարզերեսությունը... Վերջ, այլևս վիրավորված է մարդու արժանապատվությունս: Այն պաշտպանելու մի ձև կա՝ սպանել: Այդպես են վարվել ծնողներս, պապերս, նախահայրերս, ողջ մարդկությունը: Չեմ պատրաստվում դեմ տալ մյուս այտս (ես Զրիստոսը չեմ, ինձ շփոթեն), ինչպես և չեմ պատրաստվում շեղվել նախնիներիս որդեգրած ճանապարհից ու... ոտքի եմ ելնում:

Ինձ հետ ոտքի է ելնում մարդկության ողջ արհամարհանքն ու նողկանքը ցեղիդ հանդեպ ու հստակ զգում եմ իմ մեջ հանցագործ դառնալու ողջ ընթացքն ու կրում նրա խարանը: Ինչքան դյուրին է դատել սպանողին: (Երևի ճանձերի աստվածը մի օր պատժեց ինձ՝ զրկելով երջանիկ սիրո զգացմունքի ներկայությունից՝ քո հանդեպ տաժած վերաբերմունքիս համար): Մենք միշտ սպանողն ենք ձեզ, բայց դուք միշտ կաք ու արդյունքում տանջվողը էլի մենք ենք: (Գուցե այն բանի համար, որ սպանում ենք): Մենք

սպանում ենք ձեզ, որպեսզի ինքներս չսպանվենք. գոյության պայքար է, ինքնապաշտպանություն: Ուրեմն՝ ի զեն... (Վերցնում է ժանձասպանն ու առաջ ընկնում): Մենք սպանում ենք ձեզ, որովհետև ձեզ հաջողվում է մեզ հունից հանել: (Ամեն նախադասությանը մեկ հարված է հաջորդում): Մենք սպանում ենք, որովհետև ուզում ենք հաստատել մեր ուժը ձեր հանդեպ: (Հարված): Մենք սպանում ենք, որպեսզի դուք ընդունեք ձեր ոչնչությունը, մինչդեռ դուք հանդգնում եք ձեր աղտոտությունը քսել մեր մարմիններին: Սպանում ենք, որովհետև ճանձասպանի հզոր ճտտոցը ազդարարում է մեր հավատը սեփական ուժերի հանդեպ:

- Որովհետև գերիզոր համարվելու խնդիր ունենք Երկրի վրա:
- Որովհետև հանդգնում եք դառնալ մեզնից առավել լկտի:
- Որովհետև սիրում եք կեղտը առավել, քան մենք ու տարածում եք այն մեզնից արագ:
- Որովհետև ճանձասպանը մեր ձեռքն առնելիս վերականգնվում է մարդու՝ բնության տերը լինելու միջոց: Որովհետև ձեզ հաջողվում է դիպուկ ճշգրտությամբ հասցնել մեզ խելացնորության, երբ փարված

անդորրին՝ ձուլվում ենք նրա հետ՝ նույն ուղղագծում:

Որովհետև դուք համարձակվում եք խաթարել մեր հանգիստը, երբ մենք հավատարմորեն հանձնում ենք մեզ մարդկության համար ի վերուստ սահմանված օրենքին՝ քնին:

Որովհետև ձեզ հաջողվում է հիմարացնել-մոլորեցնել մեզ ու թռչել-փախչել օրհասական պահին:

Որովհետև մեկ դիպուկ հարվածը պարզում է հարց լուծելու կարողության սեփական հանձարի զգացողությունը:

Որովհետև բռնությունն իրականում թուլության հակադեցությունն է ու նրա հաղթահարման անզուսպ փորձը:

Որովհետև ճանձասպանը ձեռքն առնելն անգամ պարզում է կարգուկանոն հաստատելու սեփական անփոխարինելիության գիտակցման հաճույքը:

Որովհետև հարված, և մեր ականջներում տասնապատիկ ավելի բարձր արձագանքում է սեփական ինքնահաստատումը:

Սպանելու կիրքն այդչափ զորեղ չէր լինի իմ մեջ, թե համաձայնեիր բաժան ապրել ինձնից: Սովորիր հեռվից սիրել: Մի՞թե մարդկանց մեջ ապրելը քեզ չսովորեցրեց ոչինչ: Ասենք՝ գերկտիրությունը

հատուկ է հենց մարդկային երեսին: Ապրիր քեզ համար ինչքան ուզում ես՝ լինելով մարմնիցս հեռու, այդժամ գուցե սիրեի ես քեզ: *(Լստում է սեղանի առջև:)*

Այդուհանդերձ, դուք ոչինչ եք ու չի ներվում ձեր համակեցությունը մեր կողքին: Ու որպեսզի չստացվի այնպես, որ դուք հաղթում եք մեզ, կվերցնեմ ձեռքիս տակ եղած երկծալ թուղթը, որի վրա գրում էի համամարդկային ու համայնական սիրո մասին, ու հնարավորինս սադիստորեն կհարվածեմ քեզ: Սիրո հարվածը, ասում են, ուժեղ է լինում... Չէ, սիրո հարվածը, ասում են, պետք է որ սպանի... *(Հարված:)* Դու հաջողեցիր փախչել, դու ինձնից ճարպիկ ես. տգետները միշտ խորամանկ են լինում: Բայց դեռ կգան առավոտներ, լուսաբացներ կգան... *Vivare militara est** ու կյանքը շարունակվում է...

Իսկ ես հիմա անասելի կարոտեցի մեկին, այն մեն-միակին, բախտավոր քաջին, որ Լազար երգեցիկ անունն ունի... Լազար... Ու նրան կփափագեի հիմա տեսնել կողքիս: Ո՛ր ես, անվախ հերոս, Քաջ Լազար, որ մին զարկի՝ ջարդի հազար...

(Մեկուսի:) Իմ գերեզմանին թող ոչ ոք չասի, թե ծանձ անգամ սպանած չկար...

«Սպանած չկամր»... «սպանած չկամր»... Բառերը երբեմն մատնում են մեզ: Նրանք ավելին գիտեն, քան մենք: Նրանք բացապարզում են իրականությունը, ուր իր երեսն այլևս չի կարող թաքցնել խոստովանանքը: Կոչ են անում անկեղծության՝ մերկանալու մինչև վերջ՝ մեզ մեկնելով իրենց հանդերձանքը: «Թե ծանձ անգամ սպանած չկար»: Կխոստովանեմ, թե ինչ եղավ ինձ հետ այն երեկո... (Փոքրինչ մթնում է բեմը:)

Արդեն մթնել էր: Դեռ գրում էի: Գրում էի ծանձերի դեմ ամրագրված մարդկության պայքարի հաստատակամության մասին, հատկապես, որ այդ ընթացքում, որպես հաստատումն գրածիս, հաջողեցրել էի մի լկտի ծանձի մահացու խփել: Անշուշտ, սպանել էի: Աչքերս արդեն փակվում էին: Վերջակետը դրեցի, ծանձի դեմ պայքարի նույնպիսի խրոխտ վճռականությամբ հանվեցի մանրամասնորեն, պառկեցի ու մինչև քիթս փաթաթվեցի տաքուկ վերմակով: Նույնքան մեծ էր վճռականությունս՝ ընկղմվելու Մորփեոս-քնի գիրկը՝ որպես հաղթական ավարտ: Ամեն ինչ օրինաչափ էր ու արդարացի: Քունն էլ արդեն համբուրում էր

միտքս իր թմբիրով: Մկանիս թրթիռն էր, երևի, որ թևիս վրա թեթևակի խտողոց առաջացրեց: Կամ գուցե թևիս մաշկի աղվամազիկը նույն գրգիռի պատճառով թրթռաց: Ինչևէ, թուլանալ է պետք, գրելու ընթացքում լարումս շատ էր, հավանաբար: Դե իհարկե: Վերջ: Քնել:

Նորից կրկնվեց զգացողությունս: Վերմակս հետ տարա թևիս վրայից ու... ձչացի: Քրտինքը պատեց ծակատու: Անհավանական է, անհավատալի է. թևիս վրայով փորձում է իր կենդանությունը հաստատել կիսամեռ, բժժած մի ծանձ... Ջզվանքից սրթսրթալով՝ կտտացրեցի նրան հեռու իմ տարածքից ու մնացի անշարժ՝ տեղումս նստած, ձեռքս՝ անսովոր ծանրացած: Չար երանգ էր, գուցե ես քնած էի: Բայց ո՛չ, որովհետև զգում էի սեփական մարմնիս դողը, իսկ աչքիս առաջ ծալծված վերմակս ուրվագծում էր քիչ առաջ պառկած մարմնիս տեղն ու ձևը: Ախր, ինչպե՞ս կարող էր՝ հենց հիմա, այդ ամենը գրելուց հետո, այն էլ՝ վերմակի տակ, ուր մարմինս անգամ դեռ չէր հասցրել ջերմանալ սեփական շնչառությամբ... Անհավանական է: Սարսափ է, իրական չէ... Այս սենյակում բացահայտ կախար-

դանք կա: Մոգություն է միթե... Ես անկարող էի անկողնուցս վեր կենալ ու լույսը վառել... Մարմինս դեռ շարունակում էր սրթսրթալ, ու ես վախենում էի... Այն ժամանակ դու հաղթեցիր ինձ, ծանձ: Ոչ միայն հաղթեցիր, այլև ծիծաղեցիր ինձ վրա: Ծիծաղեցիր, որովետև ես այլայլված էի, քեզ հաջողվեց վախեցնել ինձ, ու դա ակնհայտ ձշմարտություն է. չեմ կարող ստել ինքս ինձ: Ես դեռ շարունակում էի մնալ նույն դիրքով՝ անշարժ, կարկամած: Միայն գիշերանոցիս ուսաթելը զգուշորեն սահել էր ուսիցս վար, իսկ ես չէի համարձակվում ուղղել այն, ես վախենում էի կայնել սեփական մարմնիս: Ինձ միայն մի բան էր պետք. կարողանալ նախկին դիրքով պառկել ու քնել: Քնել: Չհիշել: Մոռանալ ծանձին:

Բեմը լուսավորվում է. առավոտ է:

Այնուամենայնիվ, կյանքը չավարտվեց. գիշերը լուսացավ և փառք Աստծո, որ գիշերը աշխարհի իմացածս ամենալավատեսական բանն է. անգամ ամենասարսափելի գիշերվա վերջաբանը լուսաբացն է լինում, իսկ այնտեղ ես ամուր եմ, այնտեղ լույս կա: Վերջ սարսափին, այլևս ոչ մի վախ: Ես մոռացա այդ գիշերը,

որն անց էի կացրել ծանձի հետ, այն էլ՝ նույն անկողնում: (Ամենատհաճ գիշերը, որ երբևէ ունեցել եմ անկողնում:) Հիմա էլ ոչինչ չեմ հիշում: Ինչ է ծանձը, որ կարողանա պղտորել կյանքիս ռիթմը, շեղել մարդկության ուշադրությունը հանապազօրյա ընթացքից, ինչ-որ մի ծանձ... Վերջ ծանձաբանությանը: Ոչ էլ արժեր այսքան հիշատակել ծանձի գոյության մասին: Ես թույլ չեմ տա, որ այն աղճատի ոչ միայն իմ գեղագիտական ընկալումները, այլև հոգուս թանկ խաղաղությունը: Անգամ միտքն է ամոթալի, եթե ոչ՝ նվաստացուցիչ: Կյանքը շարունակվում է, և ես այնքան անելիքներ ունեմ...

Ոգևորված անցնում է մագերը հարդարելուն կամ դիմահարդարվում է: Հետո պատրաստվում է նախաճաշել: Քթի տակ ինչ-որ երգ է դնում: Հանդիսավորությամբ վերցնում է գոլալը կամ դանակ-պատառաքաղը, պատրաստվում է ուտել, սակայն զգվանքից ճշում է և ընկրկում. ափսեի մեջ ճանճ կա: Ծանձի տոգոցը ազդարարում է նրա ներկայությունը:

ՃԱՆՃ - Տըրզզզզ...

**Կյանքը պայքար է (լատ.)*

ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ ՄԵՐ ԼԵՂԻՆԱԿԸ



**Սոֆի
ՄԻՐԶՈՅԱՆ**

*Մի պտղունց սեր եմ ուզում
հինավուրց երկրիս ցավերը ամոքելու համար,
ուրիշ ոչինչ...*

ՏՈՒՆՆ ՈՒ ԽԻՂԾԸ ԾԱԽՈՒ ՉԷ

Դրամա երկու գործողությամբ

Գործող անձինք

ՄԱՆԵ

ԱՐՏԱԿ

ՄԻՐՈՒՆ - Մանեի տատը

ՄԱՐԹԱ

ՏԻԳՐԱՆ - Մարթայի ամուսինը

ԳՈԳԻ

ԳՈՀԱՐ - Մանեի քեռու կինը

Մանեն, Արտակը, Մարթան, Տիգրանը և Գոգին համադասարանցիներ են - 33 տարեկան:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Կիսախավար սենյակ, շախ անկյունում՝ բազմոց, աջում՝ սեղանիկ, երկու աթոռ, գրապահարան: Երկու դուռ, մեկը փակում է խոհանոց, մյուսը՝ լոգարան: Բազմոցին կծկված է Մանեն: Դուռը քակում են: Մանեն վախեցած վեր է թռչում, փորձում է տեղից բարձրանալ՝ սահում ընկնում է:

ԱՐՏԱԿ - (դրսից): Մանե, դուռը բաց, բանալի չեմ վերցրել:

Մանեն մի կերպ բացում է դուռը:

ԱՐՏԱԿ - Բեզ արդեն մեռած էի պատկերացնում: Թանգարան մտա, Մանուշն ասաց, որ նոպա ես ունեցել: Տես, է, ինչքան էլ դեղ է կուլ տվել:

ՄԱՆԵ - Գինի լիներ՝ գինի կուլ կտայի:

ԱՐՏԱԿ - Ուզո՞ւմ ես, կանչեմ՝ սրսկեն:

ՄԱՆԵ - Մեռնելն ավելի ծիշտ կլիներ:

ԱՐՏԱԿ - Հասկանո՞ւմ ես, ինչ ես խոսում... Վարագույրներն ինչի ես փակել: (Բացելով:) Բաց թող, աստծո լույսը ներս մտնի՝ տրամադրությունդ էլ կբացվի: Լսիր, իսկապե՞ս նոպա է, թե... Ինչ է եղել վերջապես, խոսիր, հասկա-

նամ: Գիտես, որ ընկերոջ ձեռքը կարող է փշերը սրտից հանել:

ՄԱՆԵ - Լավ ես ասում:

ԱՐՏԱԿ - Ես չեմ ասում, Հելվեցիուսն է ասում:

ՄԱՆԵ - Եթե կարողանամ հիշել, թե ինչ էր Ծեքսպիրն ասում... Հիմա էստեղ (*ցույց տալով գլուխը*) խառնաշփոթ է: Մի բոպե... «Ո՛վ կարող է ավելի նողկալի լինել, քան նա, ով ընկերոջը նետում է անդունդը թշվառության»: Հարյուր տարի առաջ եմ կարդացել, ընդունելության քննությանը: Որտեղից է մեջբերումը:

ԱՐՏԱԿ - Չեմ հիշում:

ՄԱՆԵ - Ասում եմ, չէ՛, իմ հիշողությունը քոնից լավ է: Թասը բեր, գրողը տանի... սիրտս խառնում է:

ԱՐՏԱԿ - Հիմա... (*Վազում է լոգարան, վերադառնում առանց թասի:*) Ծակվել էր, դեն ենք գցել... օգնեմ՝ լոգարան գնանք: (*Ուղեկցում է լոգարան:*)

ՄԱՆԵ - Ներս չգաս...

Քիչ անց վերադառնալով, Մանեն մտաում է բազմոցին:

ՄԱՆԵ - Արևն է երկրագնդի շուրջը պտտվում, թե՛ հակառակը:

ԱՐՏԱԿ - Ըստ Կոպեռնիկոսի՝ հակառակը: Երիկամիդ ցավերի ժամանակ միշտ նույն հարցն ես տալիս: Վիրահատել է պետք:

ՄԱՆԵ - Էլի նույն երգը...

ԱՐՏԱԿ - Ու միշտ՝ քանի խելքի չես եկել: Գույնդ գնաց...

ՄԱՆԵ - (*վատ է զգում*): Ոնց որ մեռնում եմ...

ԱՐՏԱԿ - Դեղերիդ չափը չե՛ս անցել: Հո չէ՛իր ուզում... Բժիշկ կանչեմ...

Մանեն արագ գնում է լոգարան:

ԱՐՏԱԿ - Հիմար... (*Սողայաջուր պատրաստելով՝ տանում է լոգարան, քիչ անց Մանեին գրկած բերում, պառկեցնում բազմոցին, հանում է գլխին փաթաթած սրբիչը:*)

ՄԱՆԵ - (*թույլ ժպտալով*): Չեմ մեռնի, մի վախեցիր:

ԱՐՏԱԿ - (*սրբելով դեմքի քրտինքը*): Արևն է պտտվում երկրագնդի շուրջը, թե՛ հակառակը:

ՄԱՆԵ - Ըստ Կոպեռնիկոսի՝ հակառակը:

ԱՐՏԱԿ - Ուրեմն՝ արդեն լավ ես:

ՄԱՆԵ - Արտակ... Հակոբի հետ ամեն ինչ վերջացած է:

ԱՐՏԱԿ - Այս տարվա մեջ արդեն երրորդ անգամն եմ լսում:

ՄԱՆԵ - Այս անգամ վերջնական: Լիլիի հետ...

ԱՐՏԱԿ - Դրա համար ես հիմարություն արել:

ՄԱՆԵ - Չէ, բախտիս համար:

ԱՐՏԱԿ - Բախտիդ մասին ամեն ինչ գիտեմ:

ՄԱՆԵ - (*զայրոյթով*): Մի բան կամ ինձ հետ կապված, որ չիմանաս:

Ինչո՞ւ ես թանգարան գնացել, ինչո՞ւ ես շարունակ հետապնդում: Բեռիս ես, ինչ է...

ԱՐՏԱԿ - Սկսվեց...

Գրսից՝ տղամարդու ձայն և դռան թակոց:

ՁԱՅԼ - Էս աշխատանքի տեղավորման գրասենյակ չի:

ԱՐՏԱԿ - Չէ, գրասենյակ չի:

ՁԱՅԼ - Բա ճակատագրի փողոցը չի:

ԱՐՏԱԿ - Չէ, ճակատագրի փողոցը չի:

ՁԱՅԼ - Բա ճակատագրի փողոցը ո՞ր կողմն է:

ԱՐՏԱԿ - (*զայրույթով*): Մտեք այգի, հետո՞ ուղիղ կայարան:

ՁԱՅԼ - Ի՞նչ ես ասում:

ԱՐՏԱԿ - (*դուրս գնալով*): Օրը հարյուր անգամ հարցնում են: Ես էդ սլաքը տնկողի հերն եմ անիծել...

Մանեն, կծկված քազմոցի անկյունում, լաց է լինում:

ԱՐՏԱԿ - (*ներս գալով*): Վերջ, սլաքի ուղղությունը փոխեցի, էլ չեն զզվեցնի: (*Նկատելով Մանեի հուզմունքը*;) Նա վաղուց է քեզ խաբում: Չէի ուզում ասել, միևնույն է, չէիր հավատա, ու նորից քեռուդ դերում կհայտնվեի: Լիլիի հոր փողերով են Մոսկվա գնում: Կոմերցիոն ներկայացման հովանավորն է:

ՄԱՍԵ - Ինչի՞ համար եմ անընդհատ սխալվում:

ԱՐՏԱԿ - Հակառակվում ես ծակատագրին, դրա համար: Կարծում ես...

ՄԱՍԵ - (*ընդհատելով*): Մի՞ շարունակիր, գիտեմ: Ճակատս միշտ պատին եմ խփում:

ԱՐՏԱԿ - Երբեք այսքան խելացի չես եղել: Վեր կաց, քեզ կարգի բեր, 10-ի բ-ին ահագանգել եմ, հիմա ուր որ է՝ կգան: Հետո, մոռացել ես, ինչ օր է: Ամեն տարի օգոստոսի քսանյոթին, ով որտեղ էլ լինի... վեր կաց...

ՄԱՍԵ - Ոտքերս չեմ զգում:

ԱՐՏԱԿ - Ո՞նց կարող էիր նման հիմարություն թույլ տալ...

ՄԱՍԵ - Ապրելն իմաստ չուներ:

ԱՐՏԱԿ - Միշտ էլ էգոիստ ես եղել: Գոնե տատիդ խղճայիր:

ՄԱՍԵ - Երբ ցավերը մեղմացան, երկնքում կանաչ ու լուսավոր ծանապարհ բացվեց, թվում էր՝ թռչում եմ վեր, բմբուլից էլ թեթև էի: Մայրս իր մեղմ ժպիտով ընդառաջ եկավ: Զո ձայնից վեր թռա: Եթե դու չլինեիր, գուցե ինձ հետ խոսեր, կամ էլ երևի քնած կմնայի...

ԱՐՏԱԿ - Մայրդ խնայել է քեզ:

ՄԱՍԵ - Նրան շատ եմ կարոտում:

ԱՐՏԱԿ - Եթե մորդ երազում տեսել ես, ուրեմն ամեն ինչ լավ կլինի: Լավ խորհրդատու չեմ, բայց հավատա, ժամանակն ամեն ինչ

կջնջի հիշողությունից: Լերկան կդառնա անցյալ, անցյալը՝ ոչինչ: Թան կուզեն:

ՄԱՆԵ - Բեր: *(Արտակը խոհանոցից բաժակով թան է բերում, տալիս Մանեին:)* Չգվելի է, երբ խաբում են: Եթե ասեր, ավելի ազնիվ կլիներ... Ես կհասկանայի:

ԱՐՏԱԿ - Ոչինչ էլ չէիր հասկանա: Լա ո՛չ քեզ է սիրում, ո՛չ Լիլիին, ոչ էլ քեզնից առաջ՝ Քրիստիկին: Երեսուներեք տարեկան ես դառնում, բայց խելքդ դեռ ջուր է:

ՄԱՆԵ - Ե՛րբ անցավ... Հիսուսի տարիքին եմ, դեռ ոչ ոքի համար ոչինչ չեմ արել: Չարենցն իմ տարիքում «Դանթեական առասպել»-ն ու «Ես իմ անուշ Հայաստանի»-ն արդեն գրել էր:

ԱՐՏԱԿ - Գյոթեն՝ «Երիտասարդ Վերթերի տառապանքները», Պուշկինն իր «Եվգենի Օնեգին»-ը, Ծեքսպիրը՝ «Ռոմեո և Ջուլիետ», Չեխովն էլ՝ պատմվածքների մի ամբողջ շարք...

ՄԱՆԵ - Ծատ լավ համաշխարային գրականություն գիտես: Չարմանում եմ, ինչո՞ւ հրաժարվեցիր համալսարանի դասերից:

ԱՐՏԱԿ - Առաջին հերթին՝ ողորմելի գրողների համար, հետո, մի մոռանա, երկրորդ մասնագիտությամբ հնեաբան եմ և երկրի գաղտնիքները բացահայտելն իմ թուլությունն է: Մարդ չի էլ կարող պատկերացնել, թե պեղում-

ներից հայտնաբերած ամեն մի նմուշ ինչ գաղտնիքներ ունի: **ՄԱՆԵ** - Խմբագրություն մտնլ ես, սցենարի համար ի՞նչ ասացին:

ԱՐՏԱԿ - Մերժեցին: Բերել եմ:

ՄԱՆԵ - Այդպես էլ գիտեի, որ բանի պետք չէ: Տուր, պատռեմ: *(Վերցնելով թղթերը՝ ուզում է պատռել:)*

ԱՐՏԱԿ - Սպասիր... Խմբագիրն ասաց, որ հերոսի հոգեվիճակը ծայրահեղության է հասցված:

ՄԱՆԵ - Էդ խելքը խմբագրին բացատրեցի՞ր, որ էքստրեմալ վիճակներում է հերոսն իրեն բացահայտում:

ԱՐՏԱԿ - Եթե կոնֆլիկտը հերոսների փոխհարաբերության ժամանակ սրվի, լավ գործ կստացվի: Կարելի է աշխատել:

ՄԱՆԵ - Կոնֆլիկտը հերոսների ներաշխարհում է: Մարդը միշտ ինքն իր հետ է պայքարի մեջ՝ զգացմունքի ու բանականության...

ԱՐՏԱԿ - Դրամատուրգիայի օրենքները լավ չգիտեմ, բայց գիտեմ, որ գեղագիտական հայացքներով, ի տարբերություն ինձ, «իզմերից» գերադասում ես սիմվոլիզմը:

ՄԱՆԵ - Ճիշտ է, ի տարբերություն քո ռեալիզմի... քո իրականության ճշմարտացի արտացոլումից սիրոսս խառնում է:

ԱՐՏԱԿ - Լավ, հանգստացի, քեզ չի կարելի հուզվել: Անկեղծ ասած,

շտկելու քիչ բան կա: Երկրորդ գործողության երրորդ արարում նույնիսկ հուզվել էմ:

ՄԱՆԵ - Ինձ ոգևորելու համար ես ասում:

ԱՐՏԱԿ - Չէ, իհարկե: Դու կկարողանաս, ընդամենը կենտրոնանալ է պետք: Ծեքսպիր սիրող մարդը չի կարող խորաթափանց չլինել:

ՄԱՆԵ - Անկեղծ փոխհարաբերության կարոտ եմ քաշում:

ԱՐՏԱԿ - 10-ի բ-ում դրա պակասը չունես: (*Դռան թակոց:*) Ահա և նրանք, քեզ կարգի բեր:

Ներսեմ մտնում Գոգին, Մարթան: Գոգին պայուսակը դնում է հատակին:

ԳՈԳԻ - Ողբերգության ռոգործողությունն ենք փորձում: Հը, ինչ է պատահել... Մանե, դեմքիդ գույն չկա:

ՄԱՆԵ - Մի սկսի, Գոգ, քաղաքի օդից է... արի համբուրեմ: Բա հայրենիք էիր գնացել:

ԳՈԳԻ - Դու չգիտես, ուր էլ լինեմ, էս օրը հենց էստեղ պետք է լինեմ:

ՄԱՐԹԱ - (*գրքերի կապոց ձեռքին*): Էս արդեն ազգի կործանումն է, տեսեք, աղբամանի մոտից ինչ գրքեր եմ վերցրել՝ Տոլսոյ, Կանտ, Թումանյան... Հիշում եմ, հայրս հայ դասականներին ինչ դժվարությամբ բաժանորդագրվեց:

ՄԱՆԵ - Գրքերը քաղաքում վաղուց ավելորդ են դարձել, տեխնիկայի դարում ինչ գրիք, ինչ բան... Ամեն ինչ էդ հրեշի փորն է լցված, մի օր էլ մի ցնդած կոճակը կսեղմի ու...

ՄԱՐԹԱ - Մանե ջան, ինչ է եղել, քեզ էսքան տխուր չեմ տեսել:

ԱՐՏԱԿ - Հիմա էլ չես տեսնի, գիտես, ինչ քեֆ ենք անելու:

ՄԱՆԵ - Բա Տիգրանն ո՞ր է:

ԳՈԳԻ - Զեզ համար անակնկալ ունենք: (*Ուտելիքը դասավորելով սեղանին*;) Լոռվա բնաշխարհից՝ ձեր դատարկ սառնարանի համար: (*Արտակին*.) Պապդ է ուղարկել՝ փող, գինի, վիտամիններ, կեր՝ բկիդ կանգնի: (*Գինի է լցնում, խմում*;))

ՄԱՐԹԱ - Գոգի ջան, լյարդիդ մասին մի մոռացիր:

ԱՐՏԱԿ - Մարթա ջան, սեղանը փռի: Փախլավա բերել ես... Ինչ քեֆ ենք անելու:

ՄԱՐԹԱ - Բա Հակոբն ինչի՞ է ուշանում:

ՄԱՆԵ - Հակոբը մեռել է:

ՄԱՐԹԱ - Արտակ, էս ինչ է ասում:

ԳՈԳԻ - Էստեղ ամեն ինչ խառն է, մենք էլ՝ բանից անտեղյակ: Մանե, թատրոնում գործերը ո՞նց են:

ԱՐՏԱԿ - Թատրոնից վաղուց է դուրս եկել:

ՄԱՐԹԱ - Խելքդ հո չե՞ս թոցրել... Ես էլ որոշել էի աշակերտներին ներկայացման բերել: Գիտես, ինչ

հպարտությամբ եմ պատմում քո մասին: Արդեն գիտեն, որ երազում ես Ժաննա դ' Արկ ու Անտիգոնե խաղալ: Հակոբն է պատճառը:

ԱՐՏԱԿ - Ուրիշ էլ ո՞վ...

ՄԱՐԹԱ - Այդքան դժվարությամբ թատրոն ընդունվեցիր, որ...

ԱՐՏԱԿ - Խանդում էր:

ԳՈԳԻ - Դրա համար թաղեցինք:

ՄԱՆԵ - Հերիք է, նրա մասին էլ չենք խոսում:

ԳՈԳԻ - Բա ո՞նց ես ապրում:

ԱՐՏԱԿ - Օրգանիզմի հաշվին:

ՄԱՆԵ - (*Արտակին՝ խիստ*): Անտեղի կատակ է:

ԱՐՏԱԿ - Ինչքան կարող ես խփել բերանիս: Թող ամեն ինչ իմանան:

ԳՈԳԻ - Հա, թող ասի, եթե դու չես կարող, կամ եթե չես ուզում...

ՄԱՆԵ - Հակոբի հետ ամեն ինչ վերջացած է: Թատրոն էլ կգնամ, հիմարություններիս համար ներողություն կխնդրեմ գեղարվեստական ղեկավարից ու նորից կսկսեմ ապրել ուրիշի կյանքով: Բավարարված եք:

ՄԱՐԹԱ - Թատրոնի հարցում ձիշտ որոշում է, բայց Հակոբի դեպքում...

ՄԱՆԵ - Խնդրում եմ, էլ անունը չտաք: Գոգի, մեր երաժշտությունը կմիացնեն:

ԳՈԳԻ - Էս սհաթիս, գենացվալե:

Գոգին միացնում է երաժշտությունը, բոլորը պարում են, բացի Արտակից: Նա ուշադիր հետևում է Մանեին: Դռան թակոց, Տիգրանը հանդրասավոր ներս է բերում Միրուն տատին:

ՏԻԳՐԱՆ - (*Ճաղկեփունջը մեկնելով Մանեին*): Էս՝ իմ կողմից, Սիրուն տատն էլ՝ քեռանցդ կողմից:

ՍԻՐՈՒՆ - Գեղըմը կյանքս կերաք, հերիք չի, հըմի էլ ըստի:

ՄԱՆԵ - Տատ ջան, էս ո՞նց էղավ, որ տնիցդ դուրս եկար:

ՍԻՐՈՒՆ - Մանե ջան, ուզում եմ վերջին անգամ աչքերս քո մոտ փակեմ:

ՏԻԳՐԱՆ - Սիրուն տատ, սենտիմենտալ չլինենք:

ՍԻՐՈՒՆ - Աման, դենը քաշվի, գիժ մոզի: Սենտիմենտը ինչ մեղքս էր:

ՏԻԳՐԱՆ - (*գրպանից թուղթ է հանում*): Էս էլ բժշկի տված հիվանդության պատմությունը: Կարդամ... կարդում եմ, ուրեմն... պերիկարդիտ... պանկրեատիտ... շաքարային դիաբետ:

ԳՈԳԻ - Էդ դիաբետից մենք էլ ունենք:

ՏԻԳՐԱՆ - Ծարունակեմ...

ԱՐՏԱԿ - (*Տիգրանին*): Իսկական բվեժ ես, տո, պետք չէր միանգամից դրանից սկսել: Բա չենք երգվել իրարից բան չթաքցնել:

ԳՈԳԻ - (*Տիգրանին մի կողմ տանելով*): Տո ախմախ, հիմի Մարթա-

յին ասեմ, որ ճամպրուկդ մեքենայի մեջ է ու պատրաստվում ես փախչել Ռուսաստան:

ՏԻԳՐԱՆ - Գիտի, որ պետք է գնամ, բայց ոչ էսօր:

ՄԱՆԵ - Տատ ջան, էս քո հիվանդության պատմությունը կարդաց:

ՏԻԳՐԱՆ - Բա էլ ո՞ւմ:

ՄԱՆԵ - Կբուժենք, տատ ջան, չվախենաս, դրանք ինչ հիվանդություններ են որ...

ՄԱՐԹԱ - (*Գոգհին՝ թաքուն*): Տեսա՞ր, իրենը մոռացավ... քեռակնոջ մասին թող ոչինչ չիմանա:

ՄԱՆԵ - (*Գոգհին*): Ինչ եք քչփչում:

ՄԱՐԹԱ - Ուզում եմ իմանամ՝ Արտակը դեռ խոհանոցում է քնում: Հիմա երևի տեղը զիջի Սիրուն տատին:

ՄԱՆԵ - Սիրուն տատը իմ կողքին կքնի: Արտակը կմնա իր խոհանոցում:

ՄԱՐԹԱ - Իսկ չի լինի՞, որ հակառակը լինի:

ԱՐՏԱԿ - Մարթա, լավ կանես՝ սեղան բացես:

ՄԱՐԹԱ - (*գնալով խոհանոց*): Գոգի, հորթի միսը բեր:

ԳՈԳԻ - (*արդեն՝ խոհանոցից*): Էստեղ ոտք դնելու տեղ չկա... (*Կաթսաների աղմուկ*;) Արտակի թախտը հենց դռան մոտ է:

ԱՐՏԱԿ - Դու էլ հրի պահարանի կողմը:

ՄԱՆԵ - (*Արտակին*): Երիկամիս թանկարժեք քարերի մասին տառիս ոչ մի խոսք:

ԱՐՏԱԿ - Բա որ նորից նոպադ բռնեց:

ՄԱՆԵ - Մի կերպ կդիմանամ:

ՄԱՐԹԱ - (*խոհանոցից*): Տիգրան, կանաչին, պոմիդորը, էդ եղած-չեղածը բեր խոհանոց:

ՏԻԳՐԱՆ - Բա Գոգին դուրս չգա՞, որ շնչելու տեղ լինի:

ԳՈԳԻ - Արի, արի, մեկումեջ կշնչենք:

ՍԻՐՈՒՆ - (*Տիգրանին, որ վերցնելով մթերքը՝ ուղղվում է խոհանոց*): Տղա, դեղերս դեսը տուր: Անանասի սոկն ո՞ր տարար, դեղից հետո պիտի խմեմ:

ՏԻԳՐԱՆ - Սիրուն տատ, լավ էլ հիշում ես, թե որը որից հետո պիտի խմես: (*Մանեին*.) Վերցրու, տուր, թող խմի: (*Սիրունին*.) Մանեն ո՞նց պիտի քեզ դիմանա:

ԱՐՏԱԿ - Սիրուն տատ, հեչ հիվանդի տեսք չունես, ճիշտ է, որ անունդ դեղձաթուշ են դրել, իսկապես թշերդ ոնց որ դեղձ լինեն՝ կլոր-կարմիր:

ՍԻՐՈՒՆ - Կլորությունն ու կարմրությունը աղջիկ ժամանակներիցն ամնացել, նկարներս շրհանց տամ, հետս վեր եմ կալե: (*Իրերի մեջ փնտրելով*;) Էս մեկը տես... Թե որ էն աշխարհ գնացի՞ էս կքաշեք քարիս:

ԱՐՏԱԿ - (*գննելով լուսանկարը*): Այ տանտ, էստեղ քսան տարեկան ես:

ՍԻՐՈՒՆ - Մեռնողի կամքն է, ոնց ասեմ՝ տհենց կանեք:

ՄԱՆԵ - Տատ, հետդ էլ ինչ ես բերել:

ՍԻՐՈՒՆ - Մեկ էլ մի քանի կարևոր բան:

ՄԱՆԵ - Վախեցնում ես, կարո՞ղ է՝ տնից խռով ես դուրս եկել:

ՍԻՐՈՒՆ - Չէ, այ որդի, տեհա՝ էրեխեքը քաղաք էին գալի, հետները էկա, դեղերը խմելուց հետո բժշկի մոտ չէի էղել: Գնա, էն խաշլամի վրեն գինի լցրու:

ՄԱՆԵ - Բա քեռի՞ն... նրան չէի՞ր կարող քեզ հետ բերել:

ՍԻՐՈՒՆ - Ավտոն խարաք էր էլե: Գնա, մտիկ արա, խաշլամեն չփչացնեն:

ՄԱՆԵ - Տիգրան, բժիշկը տատի համար էլ ի՞նչ ասաց:

ՏԻԳՐԱՆ - (*խոհանոցից*): Ասաց՝ թե որ հորթի միսն ուտի, իսկույն ոտքի կկանգնի: Արի, շարունակի, ես տեղ ունեմ գնալու:

ՄԱՆԵ - Տատ, գնանք խոհանոց, կասես, թե ինչից հետո ինչ ավելացնենք:

ԱՐՏԱԿ - (*Տիգրանին*): Ո՞ր:

ՏԻԳՐԱՆ - Ծանորդի Գագոյի խանութն եմ գնում: Տարուց ավել է՝ բերքս տարել է ու փողը մինչև հիմա չի տալիս: Անընդհատ խաբում է: Տանեմ, բանկի վարկը փակեմ, էնքան ձգձգեց, մինչև տոկոսները ավելացան: Եթե տակն էլ մի բան մնաց...

ԱՐՏԱԿ - Բանկերը թակարդ են ժո-

ղովորդի համար, մեջն ընկար՝ էլ դուրս չես պրծնի:

ՄԱՐԹԱ - Ո՞ր, Տիգրան:

ՏԻԳՐԱՆ - Գնամ փողի հետևից, շուտ կգամ:

ՄԱՐԹԱ - Չի լինի՞ էսօր չգնաս:

ՏԻԳՐԱՆ - Չի լինի:

ԱՐՏԱԿ - Սպասի, ես էլ եմ գալիս:

Արտակն ու Տիգրանը գնում են:

ԳՈԳԻ - (*խոհանոցից դուրս գալով*): Էս ո՞ր թռան:

ՄԱՐԹԱ - (*դուրս գնացողների հետևից*): Տույցերին չխառնվեք:

ԳՈԳԻ - Գնացին հեղափոխականների հետքերով:

ՄԱՐԹԱ - Գնացին փողի հետևից: Սիրտս անհանգիստ է... Գագոյի խանութը շամ է հեռու:

ԳՈԳԻ - Մի երկու կանգառ հազիվ լինի: Դե, ես էլ գնացի, մինչև խաշլաման եփվի՝ կգամ:

Մանեն ու Սիրունը գալիս են խոհանոցից:

ՄԱՆԵ - (*Գոգիին*): Դո՞ւ ուր...

ՄԱՐԹԱ - Ժամադրված է:

ՍԻՐՈՒՆ - Էն անտերովը...

ՄԱՐԹԱ - (*Մանեին*): Տատի ասած՝ «կամպուտրովն» է ծանոթացել:

ՍԻՐՈՒՆ - Ամբողջ ծամփեն զահլես տարավ:

ՄԱՆԵ - Զաղաքում ով ինչ գործ ուներ՝ էսօրվան էր թողել:

ՍԻՐՈՒՆ - Հեյ գիդի ջահելություն...

գեղի ձորափեշին մի պոպոքի ծառ կա, չեմ իմանում, տեհել եք, թե չէ, շատ մութանաթ տեղ է: Ես ու Քնարը միշտ էնտեղ էինք երազում: Մի օր հոտիցը թմրեցինք ու չեմ էլ հիշում, թե տակին ինչքան քնեցինք: Աչքս բացեցի տեհա՝ Քնարը չկա, ահն ընկավ սիրտս... Խի՛ հիշեցի... հա՛, Սերոժի տղի հետ էդ պոպոքի տակին էինք ժամադրվում... մի օր էլ տեհա...

ՄԱՐԹԱ - Տատ, Սերոժի տղի հետ էիր ժամադրվում, բայց ո՞նց եղավ, որ Լևոն պապի հետ ամուսնացար: Սպասիր, չպատմես, մինչև շալը բերեմ, օգեմ ոտքերիդ:

ՍԻՐՈՒՆ - Մեզ ո՞վ էր հարցնում: *(Մանեն ցավից կծկվում է:)* Մանե ջան, ընչի՞ գույնդ թռավ, լավ չե՞ս:

ՄԱՆԵ - Չէ, տատ ջան, լավ եմ, դու պատմի:

ՍԻՐՈՒՆ - Հա՛, մեկ էլ տեհա, պապը հորթն առաջը օգած տնկվեց ծառի կողքին, սիրտս էն հանգի քլքլաթաց, հենց իմացա՝ Սերոժի տղեն է: Մեկեն մոտ եկավ, ուսերս պինդ բռնեց, դեմ արավ ծառին, էդ է՝ ուզում էր պաչի, տեհանք հորթը աչքերը զլած մեզ էր մտիկ անում: Ամաչեցինք, չէ՛ բա, հմիկվա աղջկերանց պես, աշխարհն էլ տեսնի՝ ամոթ չունեն:

ՄԱՐԹԱ - Սիրուն տատ, դարը փոխվել է:

ՍԻՐՈՒՆ - Չի փոխվել, է, շուռ է եկել:

ՄԱՐԹԱ - Այ տատ, ով ում ուզում է, որտեղ ուզում է, թող էնտեղ էլ համբուրի, դրա մեջ ի՞նչ վատ բան կա որ...

ՍԻՐՈՒՆ - Աման, դենը գնա: Գնա, խաշլամին մտիկ տուր:

Մարթան ժպտալով գնում է խահանգ:

ՄԱՆԵ - Ոնց եմ անուշ ձենիդ կարոտել, մորս երգը կերգե՛ս: *(Գրկելով տատին՝ զլուխը թաքցնում է նրա գոգի մեջ:)*

ՍԻՐՈՒՆ - Թե որ լաց չըլես...

ՄԱՆԵ - Չէ, լաց չեմ ըլի... Գոգից մորս հոտն եմ առնում...

Սիրունը երգում է, Մանեն ու Մարթան միանում են նրան:

ՄԱՐԹԱ - *(երգի ավարտից հետո):* Սիրուն տատ, բա Քնարը ի՞նչ եղավ:

ՍԻՐՈՒՆ - Վա՛յ, թաղվեր Քնարը, հա... Լևոնը որ ուզում էր ինձ պաչի, ինքը ծառի ծերիցը ձեն տվեց. «Տղա Լևոն, հըմի ի՞նձ ես սիրում, թե՛ Սիրունին, ասա, թե չէ ինձ ցած կօգեմ»: Էդ պահին շվարած պապը ի՞նչ իմանար՝ ում էր սիրում: Լուսադեմին Վարսիկի հետ նամակ էր դրգել, ետ տվի առանց կարդալու: Մերս լավաշ էր թխում, գնդի գնալու յետը մին էլ տեհա՝ մեկը թաքուն քաշ տվեց ծաղկած լիմոնների արանքը, պաչեց ու

փախալ: Ամոթից օթախիցը դուրս չէի գալիս: Չէ բան, հմիկ-վանները:

ՄԱՐԹԱ - Հիմա ո՞նց է, այ տատ:

ՍԻՐՈՒՆ - Էդ անտերովն, էլի, կամ-պուտրովը:

ՄԱՐԹԱ - Էդ կոմայուտորի հետ ես էլ համաձայն չեմ, տատ:

ՍԻՐՈՒՆ - Էդ անտերի մեջ ինչ ֆինտ ու ֆլուշկա ասես՝ չկա: Ծավարշի աղջիկը դրանո՞վը չգնաց Ամերիկա:

ՄԱՆԵ - Հասմիկը սովորելու գնաց, տան:

ՄԱՐԹԱ - Մանե ջան, լավ հիշեցրեց տատը, Հասմիկից ծանրոց ու նամակ եմ ստացել: *(Փնտրում է պայուսակի մեջ, հիշելով:)* Հան, տվեցի Գոգիին, կարդաց, դրեց գրպանը, կգա՝ կկարդանք: Էս ինչի՞ են ուշանում:

ՍԻՐՈՒՆ - Թե էլը ծուռ սասունցու արինը մեջը եռաց, արծանք:

ՄԱՐԹԱ - Հենց քաղաք եմ մտնում՝ վախենում եմ:

ՄԱՆԵ - Ինչի՞ց ես վախենում:

ՄԱՐԹԱ - Չգիտեմ, վախենում եմ, է-սօրվա, վաղվա, մնացած օրերի համար:

ՍԻՐՈՒՆ - Էսքան բան ով տեսնի, որ չվախենա:

ՄԱՆԵ - Հիմա... *(Չանգում է բջջայինով:)* Անջատված է:

ՄԱՐԹԱ - Արտակին գանգիր:

ՄԱՆԵ - *(համար հավաքելով):* Արտակն էլ չի պատասխանում: Մի

քիչ հետո նորից կփորձենք: *(Դրսից աղմուկ է լսվում:)* Ահա և նրանք:

Ներս է մտնում Գոգին:

ՄԱՐԹԱ - Դու ես, Գոգի:

ԳՈԳԻ - Հա, նախագահին էիք սպասում: Էս տղերքը չե՞ն էկել:

ՄԱՐԹԱ - Չէ, չկան: Խանութի տեղը գիտե՞ս:

ԳՈԳԻ - Գիտեմ, բայց արժի՞, որ գնամ, ուր որ է՝ կգան:

ՍԻՐՈՒՆ - Կգան, էլի, ինչի՞ եք անհանգստանում: *(Գոգիին.)* Դու էն ասա, աղջիկը ո՞նցն էր:

ԳՈԳԻ - Է, տատ, կիսատկլոր:

ՍԻՐՈՒՆ - Խանչ, թե որ աղջկա պորտը բաց էլավ, էդ ջանը գաղտնիք չունի: Մեր ժամանակն ուրիշ էր:

Մանեն, Մարթան ու Գոգին նստում են միմյանց ու ժպտում:

ՍԻՐՈՒՆ - *(այդ նկատելով՝ զայրացած):* Ամոթ-աբուռը լավ բան է, տղամ:

ԳՈԳԻ - Հա էլի, այ տատ, ես էլ մտածեցի, որ տկլոր ջանի մեջ հոգի փնտրելը անտեղի ժամանակի կորուստ է ու թռա, մանավանդ, որ զրույցներս ոչ մի թեմայով չզարգացան: Էս տղերքը ի՞նչ եղան, զանգել է՞ք... *(Համար է հավաքում:)* Չի պատասխանում, չլինի՞ խառնվել են ցուցարարներին: Ժողովուրդը

նախագահի նստավայր էր գնում: Ավելի շատ ուստիկան կար, քան ժողովուրդ:

ՄԱՆԵ - Ես էլ սկսեցի անհանգստանալ: Կուսակցությունների կռիվը իրենց ինչ խելքի բանն է: Ժողովրդի հավատը վաղուց են սպանել ու էլի անտեղի գոռոռում են:

ՄԱՐԹԱ - Փիլիսոփայության դասախոսիս հիշեցի. «Հեղափոխությունը սկսում են հանձարները, իրականցնում են ֆանատիկոսները, օգտվում են սրիկաները»:

ԳՈԳԻ - Նորից կխառնվեն, ու էլի անտեղի ծեծ ու ջարդ...

ՄԱՐԹԱ - Աշակերտներիս միշտ ասում եմ, որ բնության մեջ ամենակարևորը մարդն է: Ու ոչ մի հեղափոխություն անմեղ թափվող արյուն չարժե:

ՍԻՐՈՒՆ - Այ բալամ, բա էս ծուռ աշխարհքը ո՞նց շտկենք:

ԳՈԳԻ - Ամեն մեկս՝ մեր սիրով, խղճով ու հայրենասիրությամբ:

ՍԻՐՈՒՆ - Դրա պակասիցն է, էլի, էս երկիրը պատառ-պատառ ըլլմ:

ԳՈԳԻ - Որտեղ գնամ փնտրելու... խանութից դուրս եկած կլինեն:

ՄԱՆԵ - Բարիկադներում:

ՄԱՐԹԱ - *(Մանեին):* Թող կատակներդ: *(Գոգիին.)* Խանութ գնա, սիրտս վկայում է՝ էնտեղ կլինեն:

Բացվում է դուռը, ներս են գալիս Տիգրանն ու Արտակը: Տիգրանի

ճակատը քերծված է, վերնաշապիկը՝ արնոտ: Արտակի վերնաշապիկը պատռված է:

ԳՈԳԻ - Մանեն ծիշտ ասաց, որ բարիկադներում եք:

ՄԱՐԹԱ - Ինչ է եղել...

ՄԱՆԵ - Որտեղ էիք, ո՞ւմ հետ եք կռվել...

Մարթան յոդ ու բամբակ է բերում:

ՏԻԳՐԱՆ - *(զսպված զայրույթով):* Ում մոտ ինչքան փող կա, հավաքեք:

ՄԱՐԹԱ - Խնդրում եմ... հանգստացիր, Տիգրան... *(Բամբակով փորձում է մաքրել նրա արնոտ ծակատը:)*

ՏԻԳՐԱՆ - Ոչ մեկդ փող չունե՞ք: Երկրի մտավորականությունը խարխափում է աղքատության մեջ: Նրանցից մեկը ես՝ ողորմելի, ստորացած, որ ինժեների դիպլոմով քրտինք է թափում՝ հող մշակում, արցունքով ջրում, որ մի փալաս վաշխառուի առաջ վիզ ծռի իր փողը վերցնելու համար: Ինչ եք քարացած դեմքիս նայում: Ուզում եք շարունակեմ էսպես ապրել: Էս տգետների, ագահների, էս վաշխառուների երկրում: *(Մոտենում է սեղանին, իրար վրա մի քանի բաժակ գինի է խմում:)*

ԱՐՏԱԿ - Հիմա կգնանք ու ցուցա-

րարներին կմիանանք, ինչի՞ համար ես ուզում փախչել:

ՏԻԳՐԱՆ - Շուտ մոռացար 2008-ի մարտի մեկը:

ԱՐՏԱԿ - Չեմ մոռացել, վեց ամիս նստեցինք, կարծես մենք էինք մարդկանց ձակատին կրակել:

ՏԻԳՐԱՆ - Ո՞ւմ կամ ինչի՞ համար պայքարեմ: Հայաստանից անունն է մնացել: Ամեն ինչ ծախել են: Անկախությունը ինչ տվեց, կասե՞ք:

ԳՈԳԻ - Կազինոներ, ռեստորաններ, հյուրանոցներ, բանկեր, որոնք սնկերի պես աճեցին ժողովրդից վերջին ունեցածը խլելու համար:

ՏԻԳՐԱՆ - Գյուղերում մարդ չի մնացել:

ՍԻՐՈՒՆ - Էս երկիրը միայն ելքի դուռ ունի, հա՛մ փախչում են ու փախչում:

ՄԱՐԹԱ - Բայց դրսում էլ փողը ծառերից կախված չէ, որ գնաս ու հավաքես: Ուր էլ գնաս՝ օտար ես:

ԱՐՏԱԿ - Իսկ ո՞ւմ համար էր անկախության համար թափված արյունը:

ՏԻԳՐԱՆ - Դու մնա ու վայելի քո անկախությունը: Կյանքիդ լավագույն կեսը ապրել ես ու դեռ ոչինչ չունես, քարորդ դար էլ կապրես ու էլի ոչինչ չես ունենա:

ԳՈԳԻ - Ճիշտ է, ոչ տուն, ոչ սառնարան ոչ էլ շուն... Պեղումների համար ինչքան փող ես ստանում,

պրոֆեսոր ջան: Ներիր, իհարկե, որ հարցնում եմ, հարցը Տիգրանին է պետք, որ իր գնալն արդարացի:

Արտակը լուռ է:

ՄԱՆԵ - (*Արտակին ակնարկելով*): Ամաչում է պետության փոխարեն:

ԳՈԳԻ - Մեկ-գրո՜ հօգուտ Տիգրանին:

ՏԻԳՐԱՆ - (*Մանեին*): Դո՛ւ ինչի ես հասել, ո՞ւմ համար ես հոգիդ մաշում, երբ ծափեր ու ծաղիկներ չկա: Էս երկրի համար արվեստ կոչվածը պղպջակ է, հասկացե՞ք:

ՄԱՆԵ - Մեկ հանդիսատեսի համար էլ կարելի է հոգի մաշել, եթե նա հավատում է քեզ: Մարդը պետք է մաքրագործվի: Իմ վարձատրությունը Աստծո կողմից է:

ԳՈԳԻ - Մանե ջան, Աստծո վարձատրության մասին կառավարությունն արդեն գիտի, դրա համար ձեզ աշխատավարձ չի տալիս: Ում հոգին էլ որ պետք է մաքրվի՝ թատրոն չի սիրում ու չի գնում:

ՏԻԳՐԱՆ - Փակեց ակադեմիան, գիտահետազոտական ինստիտուտները, մշակույթը թաղեց աղբի մեջ, ծախեց ազգային ռեսուսներն ու երկիր ձակատին գրեց. «Ես անգրագետ եմ»: Հիմա էլ ցույցերին գլուխ ջարդեմ, որ մի

սրիկային փոխարինեմ մյուսով...
Ո՞ւմ ապացուցեմ, որ հին ազգ
ենք, խոր արմատներ ունենք:
«Ձայն բարբառոյ յանապատի»:

ԳՈԳԻ - Տասը-զրո՝ հոգուտ եվրոհա-
մակարգի և համաշխարհային
գլոբալիզացիայի:

ԱՐՏԱԿ - Մեր ապրանքը հոգին է, ո-
րը գին չունի:

ՏԻԳՐԱՆ - Կասեն՝ որտեղ է էս ազ-
գի հոգին, խիղճը: Չկա, մեռած է:

ԳՈԳԻ - Տեսնում ես, ամենակարևո-
րը չունենք, թե չէ էնտուզիազմ,
պատրիոտիզմ ո՞ւմ մոգոնաճն է:

ՄԱՐԹԱ - Տիգրան, խնդրում եմ... ու-
զում ես՝ տուն գնանք...

ՏԻԳՐԱՆ - Որ փակվես քո տասը
քառակուսու մեջ, չլսես-չտեսնես
էս բարոյագուրկ աշխարհի կեղ-
տե՛րը: Հեռու գնա, դու ավելի ես
տանջում քո հնազանդությամբ:
(Հրելով Մարթային:) Հերիք է
ազդես խղճիս:

**Մարթան ետ-ետ է գնում, ընկնում
է, Մանեն օգնում է նրան բարձ-
րանալ, հետո մոտենում է Տիգրա-
նին ու ապտակում է:**

ՏԻԳՐԱՆ - (սթափվելով): Ներիր,
ծնունդդ հարամեցի:

ԳՈԳԻ - (փորձելով թուլացնել լար-
ված հրավիճակը): Գենացվալե,
կովի գործ կար՝ զանգեիք:

ՍԻՐՈՒՆ - (սաստող): Գենացվալե
Գոգի...

ԳՈԳԻ - Հասկացա, Սիրուն տատ,
փոքրուց էլ ինձ չես սիրել:

ՏԻԳՐԱՆ - (հանդարտվելով՝ Սիրու-
նին): Մի բան կտամք ուտեմ:

**Մարթան մոտենում է Տիգրանին,
մաքրում է շրթունքի չորացած
արյունը, նա համբուրում է Մար-
թայի ձեռքը: Նստում են սեղանի
շուրջ:**

ՄԱՐԹԱ - Գոգի, Հասմիկի նամակը
կկարդամ:

ԳՈԳԻ - Անգիր հիշում եմ: (Դան-
դաղ:) Իմ շատ սիրելիներ, այսօր
ստացա առաջին աշխատա-
վարձս, յուրաքանչյուրիդ որպես
թալիսման 50 դոլար եմ ուղար-
կում: Նյութական առումով վի-
ճակս բավարար է, հոգևորի
պակասը շատ է: Ջորջից վերջ-
նականապես բաժանվեցի: Չեմ
ուզում դատել, Աստված նրա
հետ: Գոգիից տեղեկություն չու-
նեմ: Հասկանում եմ, որ նեղացած
է, բայց ինչքան ժամանակ է
պետք մեղավորիս ներելու հա-
մար: Գոգիս արդեն տասնհինգ
տարեկան է, հայեցի չկարողացա
դաստիարակել, որտեղ եմ սխալ-
վել՝ չգիտեմ: Լուսաբացս մարա-
թոնի է նման՝ շարունակ վազում
եմ: Այս խելահեղ աշխարհը ի՞նչ
պիտի տա ինձ՝ չգիտեմ: Կարոտել
եմ մեր սարերին, քարափներին,
դեղձաթուշ տատի թանապուրին:

Եվ, վերջապես, 10-ի բ-ին: Գրկում ու համբուրում եմ... Վերջակետ:

ՄԱՆԵ - *(Գոգհին):* Տղայի անունը Գոգի է դրել... Դու էլ պակաս մեղավոր չէիր, նույնիսկ հրաժեշտ չտվեցիր:

ԳՈԳԻ - Սիրուն տատի խոսքով՝ կամպուտրովը արդեն ծանոթացել էր պարոն Ջորջի հետ: Գործազուրկ Գոգին նրա ինչի՞ն էր պետք: Եթե սիրեր, ոչ մի տեղ էլ չէր գնա: Սիրուն տանտ, հավատում ես, առանց Լոռվա աշխարհի մի ժամ էլ չեմ ապրի: Էս հայրենասիրություն չի, է, չգիտեմ թե ինչ է:

ՍԻՐՈՒՆ - Արուն է, որդի, արուն:

ԱՐՏԱԿ - Գոգի, ինձ մեկ-մեկ թվում է, որ դու հոր կողմից էլ վրացի չես:

ԳՈԳԻ - Քնար տատիս գաղտնիքներն էլ Սիրուն տատի ծոցումն են պահված, ինչ իմանաս...

ՍԻՐՈՒՆ - Տեգորս կնգա մատանին դրին մատս՝ խոսկապ արին: Քնարը մտահան չէր ըլըմ:

ՄԱՆԵ - Տատ, բա Սերոժի տղեն:

ՍԻՐՈՒՆ - Կորավ: Քնարը Լևոնին շատ էր սիրըմ: *(Գոգհին.)* Ծուռ էլ էր, հա... Թե քեռին Թիֆլիս չտաներ՝ քարափիցը ցած կընկներ: Իսկական սերը տհենց կըլի, թե չէ հմիկվանները սերը շփոթել են սեքսի հետ ու...

ԱՐՏԱԿ - *(ծիծաղելով):* Տատ ջան,

ասածներիդ մեջ ճշմարտություն կա...

ՍԻՐՈՒՆ - Քա՛ խաչ, բա ընչի՞ եք ռեխներդ բացել, ձեր լեզվովն եմ խոսում:

ՏԻԳՐԱՆ - Մի տեսակ կաշկանդված ասացիր: Մի անգամ էլ չե՞ս ասի: *(Փորձում է համբուրել Սիրուն տատի այտերը:)*

ՍԻՐՈՒՆ - Դենը գնա, տամբաթ անտեր: *(Գոգհին.)* Տատդ թունդ էր սիրում, Գոգի ջան:

ՄԱՆԵ - Բա հետո՞, տանտ, հետո ի՞նչ եղավ:

ՍԻՐՈՒՆ - Հետո մի սիրուն արբեշում տղա գիրկը՝ Թիֆլիսիցը հետ էկավ:

ԳՈԳԻ - Գրկինը հե՞րս էր...

ՍԻՐՈՒՆ - Հա, Ծալիկոն:

ԳՈԳԻ - *(խորամանկ):* Լևոն պապը շուտ-շուտ էր գնում մոտը:

ՍԻՐՈՒՆ - Էդ թող ես իմանամ:

ԳՈԳԻ - Հա... դրա համար մեզ չէիր սիրում:

ՍԻՐՈՒՆ - Գոգի ջան, տատիդ հետ խոռվ էինք: Մի յետ էլ մերան չեմ տվել:

ԳՈԳԻ - Մենակ էդ չի, է, մեզ էլ հայաթիցն ես վնոնդել:

ՍԻՐՈՒՆ - Մի յետ ծառի տակին տխուր նստած տեհա, խոսեցի, հիշեցիք, խնդացիք, գլխովն անցածը պատմեց, լաց էղանք, ընդով յետը հորդ շատ սիրեցի:

ԳՈԳԻ - Գլխովն անցածի մասին մեզ չե՞ս պատմի:

ՍԻՐՈՒՆ - Չէ, էն, ինչ գիտեմ, ինձ հետ գերեզման կիջնի:

Լավում է գնացքի ձայնը, բոլորը լուռ լսում են:

ՏԻԳՐԱՆ - Փող տվեք՝ գնամ: Նայեք, գործերս վերցրել եմ... (Ճամայրուկից թղթեր, գծագրեր է հանում:) Անքուն գիշերների աշխատանք է, սա է իմ գործը, իմ տարերքը, սրանք ինքնապաշտպանական հրթիռների նախագծերն ու հաշվարկներն են, էստեղ պետք չեն, չորս տարի պահելուց հետո հետ են ուղարկել, բայց ես գիտեմ, որ Ռուսաստանում սրանց մեծ գումարներ կտան: Չորս տարի առաջ պետք է դուրս գայի էս նախագծերով, հասկանում եք: Չորս տարի անիմաստ կորցրի:

Սիրուն տատը գնում է խոհանոց, վերադառնալով՝ գումար է տալիս Տիգրանին:

ՍԻՐՈՒՆ - Վեր կալ, գնա:

Բոլորը զարմացած նրան են նայում:

ՄԱՐԹԱ - Վայ, էս ինչ ես ասում, Տիգրան, ո՞նց թե՛ փող տվեք, գնամ... ո՞նց կարող ես գնալ: Բա ես, երեխեքը, ծնողներդ... Տունն ինձ վրա մի թող, մենակ չեմ կարող:

ՏԻԳՐԱՆ - Վերջապես մի օր գնալու եմ, թե՛ չէ...

ՍԻՐՈՒՆ - Թող գնա, որդի՛, տասը շունչ մի տան մեջ չի ըլի:

ՄԱՐԹԱ - Ի՞նչ ես ասում, տատ, միշտ դու ես դեմ եղել, հիմա ո՞նց... տասը շունչ, տուն, դպրոց, երկնքի երեսին փռած հող ու այգի, ո՞նց կարող է թողնի ու գնա, ես ո՞նց եմ անելու...

ՍԻՐՈՒՆ - Վարկերով ապրել էլ չի ըլի, թող բախտը փորձի:

ՏԻԳՐԱՆ - Ինչի՞ համար ես տեսարան սարքում, երկար ժամանակով չեմ գնում: Գործերս կստացվի, կգամ ձեր հետևից:

Մարթան մտռեմում է գրապահարանին, դրամ է հանում, տալիս է Տիգրանին: Գոգին դուրս է վազում:

ԱՐՏԱԿ - (գրպաններում փնտրելով գնում է խոհանոց, վերադառնում): Վերցրու, քիչ է, գիտեմ, բայց... (Հանելով ձեռքի ժամացույցը:) Սա էլ վերցրու, Ռուսաստանում կարգին փող կտան:

ՄԱՆԵ - Մարթա, Հասմիկի ուղարկած հիսուն դոլարը բերել ես:

ՄԱՐԹԱ - Սիրուն տատի մոտ է:

ՍԻՐՈՒՆ - Հա, բոխչիս միջին է: Բեր, Մանե քան:

Մանեն Սիրունի հագուստների մեջ փնտրում է գումարը:

ԳՈԳԻ - (վերադառնալով, փող է տալիս): Վերցրու, մեքենայի մեջ էր...

ՏԻԳՐԱՆ - Ամպայման կվերադարձնեմ, խոստանում եմ: Սիրուն տատ, Արտակ, Մանե, Գոգի... հարազատներս, սիրտս վկայում է, ամեն ինչ լավ է լինելու, կտեսնեք:

Երաժշտություն: Մանեն սկսում է պարել իրենց ավանդական պարը, նրան են միանում Արտակը, Գոգին, Տիգրանը, Մարթան: Բեմը մթնում է, լսվում է հեռացող գնացքի ձայնը:

ԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Նույն սենյակն է:

ՄԱՆԵ - *(ներս մտնելով):* Տատ, որտե՞ղ ես: *(Գնում է խոհանոց:)* Տա՛տ...

ՍԻՐՈՒՆ - *(դրսից ներս մտնելով):* Ըստի եմ:

ՄԱՆԵ - Ո՛ր էիր գնացել:

ՍԻՐՈՒՆ - Ճակատագրի փողոցին էի մտիկ տալի:

ՄԱՆԵ - Եվ ի՞նչ, տվեցիր:

ՍԻՐՈՒՆ - *(մտախոհ):* Դու՞ր կայարան, ընդով յետը հույսի երկիր:

ՄԱՆԵ - Աշխարհում ապահով անկյուն չի մնացել, որ բախտդ էնտեղ փորձես: Լորոություններ լսի ու դողա վաղվա օրվա համար: Հույսի ոչ մի նշույլ: Դեղերդ խմե՛լ ես:

ՍԻՐՈՒՆ - Մի բան էլ ավել:

ՄԱՆԵ - Տա՛տ, մի բան հարցնեմ:

ՍԻՐՈՒՆ - Ասա:

ՄԱՆԵ - Ինչի՞ որոշեցիր, որ հենց ես պիտի քեզ խնամեմ, ուրիշ թող չունենա:

ՍԻՐՈՒՆ - Հենց թեկուզ նրա համար, որ տակաշորերդ շատ եմ լվացել: Էն ժամանակը էդ փամփերսիցը չկար:

Լսվում է գնացքի ձայնը:

ՍԻՐՈՒՆ - Սպասո՞ւմ ես, որդի:

ՄԱՆԵ - Սպասում եմ:

ՍԻՐՈՒՆ - Ո՛ւմ:

ՄԱՆԵ - Գողոյին:

ՍԻՐՈՒՆ - Էդ էլ ուրիշ շան որդի՞ է:

ՄԱՆԵ - *(գրկում է տատին):* Մերս, հերս, քո՛րս, աշխարհս...

ՍԻՐՈՒՆ - Դենը գնա՛, տամբաթ անտեր, շնչահեղձ եմ ըլլմ:

ՄԱՆԵ - Դու հիմա հանգիստ պառկի, մի երկու տող գրեմ, քանի գլխիցս խելառ մտքերս չեն թռել: *(Գրելով:)* Գողոն կգա, տատ, Գողոն հույսն է, որին համբերատար սպասում են, բայց շաբաթվա դր օրը...

ՍԻՐՈՒՆ - Հա, գրի, Կոպեռնիկոս ջան... Ախր, պառկում եմ թե չէ,

ջանս խոնավություն է քաշում:

ՄԱՆԵ - Հայրս էս կիսավեր տունը թողեց՝ ոչ գրանցում, ոչ փաստաթուղթ... Պարկով փող է պետք օրինականացնելու համար, չհաշված ամուր նյարդերը: *(խորամանկ ժպտով):* Տուն ու տեղիդ, հող ու ջրիդ չե՞ս կարոտում... ինչի՞ չես խոսում, էլի ինչ է արել հարսդ...

Գալիս է Արտակը:

ԱՐՏԱԿ - Բարև, տանտ, էս քո դիետիկ հացը, կաթը, էս էլ՝ դեղերդ:

ՍԻՐՈՒՆ - Ապրես, մատաղ, գնամ, կաթը դնեմ կրակին:

ԱՐՏԱԿ - Ինչի՞ էր տխուր:

ՄԱՆԵ - Հող ու ջրին կարոտել է:

ԱՐՏԱԿ - Երբ է ուզում գնալ, թող ասի՝ կտանենք:

ՄԱՆԵ - Չի կարող գնալ:

ԱՐՏԱԿ - Հիվանդության պատճառով:

ՄԱՆԵ - Ուրիշ պատճառ կա, չի ուզում ասել:

ԱՐՏԱԿ - Եթե չի ուզում՝ մի ստիպիր:

ՄԱՆԵ - Իմանամ՝ հարսը խաթրին կպել է... հոգին կհանեմ... Պիեսի ութ էջը պատրաստ է, կկարդամ: *(Թղթերը տալիս է, Արտակը բռնում է նրա ձեռքը, Մանեն հետ է քաշվում):*

ԱՐՏԱԿ - *(շփոթված):* Ասել եմ, չէ՛, տասնհինգ էջից հետո կերևա ասելիքդ, էստեղ հինգ էջ է: *(Նորից*

բռնելով նրա ձեռքը): Մանե...

ՄԱՆԵ - Ոչինչ մի ասա... ոչինչ չեմ ուզում...

ԱՐՏԱԿ - Մեր մանկությունից ոչինչ չե՞ս հիշում:

ՄԱՆԵ - Հիշում եմ, ձեր կարմրամորուս ալյուրի:

ԱՐՏԱԿ - Իսկ պոզերին կապած դեղին ժապավենները... Հիշում ես, որտեղ էր ամենաշատը արածում:

ՄԱՆԵ - Եկեղեցու բակում:

ԱՐՏԱԿ - Չատիկին, ժամերգությունից հետո ժապավենները ծառին կապելու փոխարեն այժի պոզերին կապեցինք... հետո չե՞ս հիշում, թե ինձ ինչ խոստացար:

ՄԱՆԵ - *(խուսափուկ):* Չեմ հիշում:

ԱՐՏԱԿ - Որոշեցինք աշխարհից գաղտնի պահել մեր երազանքը, բայց դու միամտաբար խոստովանեցիր՝ ասացիր...

ՄԱՆԵ - *(կտրուկ):* Չեմ հիշում:

ԱՐՏԱԿ - Հետո քո գրնգուն քրքիջը միացավ եկեղեցու զանգերին ու ձուլվեց հիշողությանս, որից մինչև հիմա չեմ կարողանում ազատվել:

ՄԱՆԵ - Չեմ հիշում, ոչինչ չեմ հիշում:

ԱՐՏԱԿ - Ես եմ մեղավոր, էս, ողորմելի ապուշս...

ՍԻՐՈՒՆ - *(ներս մտնելով):* Մանե ջան, ձնշումիս դեղը տուր:

ՄԱՆԵ - Լավ չե՞ս... պառկի, հիմա կբերեմ:

Արտակը Սիրունին օգնում է պառկել, Մանեն գնում է խոհանոց:

ՍԻՐՈՒՆ - Արտակ տղա, օվկիանոսից դենը ինչ խաբար:

ԱՐՏԱԿ - Ոչ մի խաբար:

ՍԻՐՈՒՆ - Բա էրեխիդ հետ էդ անտերո՞վն էլ չես խոսում:

ԱՐՏԱԿ - Չէ, մոտ չեն թողնում:

ՍԻՐՈՒՆ - Էդ կնգանդ սիրտը քարիցնա՞:

ԱՐՏԱԿ - Փափուկ սիրտ չի էլ ունեցել: Բաժանվեց գնաց, տատ, էլ ինչ կին...

ՍԻՐՈՒՆ - Ինչ էլ հեշտ ես ասում: Բա դու հե՞չ մեղավոր չէիր:

ԱՐՏԱԿ - Առանց դրա ո՞նց կլինի, սկզբում աշխատանք չունեի, հետո փողն էր քիչ, հետո՝ կենցաղային վեճեր, հետո... մի խոսքով, չդիմացա:

ՍԻՐՈՒՆ - Թե որ սիրեիր՝ կդիմանալիր:

ԱՐՏԱԿ - Երկու թանկ մարդ եմ կորցրել, որոնց չեմ կարող գրկել, մեկը՝ օվկիանոսից դենը, մյուսը՝ կողքիս:

Մանեն, բաժակը ձեռքին, խոհանոցի շեմին կանգնած լսում է նրանց:

ՍԻՐՈՒՆ - Տամբաթ անտեր, չէիր կարող մի գիշեր թախտիցը վեր ընկնեիր դուզ Մանեի անկողինը:

ՄԱՆԵ - *(առաջ գալով)*: Տատ, ոնց որ արդեն լավ ես, հա՛մ:

ՍԻՐՈՒՆ - *(խաղում է)*: Չէ, Մանե ջան, ջուրը դեսը տուր: *(սմում է դեղը)*

ԱՐՏԱԿ - Գնամ, պեղումների թույլտվության նամակը տանելու եմ նախարարություն: *(Գնում է)*

ՄԱՆԵ - Ինչ էիր խոսում Արտակի հետ:

ՍԻՐՈՒՆ - Հե՛չ, ասում էի, սիրուն տղա ես, ուսումն ու խելքդ՝ տեղը, ինչի՞ չես ամուսնանում:

ՄԱՆԵ - Եվ ինչ պատասխանեց:

ՍԻՐՈՒՆ - Ասաց՝ աղջկերանցիցը կուշտ եմ, հիմի խաչքարերին եմ սիրահարված:

ՄԱՆԵ - Քարերի շունչն ավելի տաք է, բնությունից շատ ենք հեռացել, ոչ շնչառությունն ենք զգում, ոչ ձայնն ենք լսում... Ցավագրկող չունես, ոնց որ լավ չեմ: *(Ցավից կծկվելով նստում է հատակին)*

ՍԻՐՈՒՆ - Ինչ էլավ, բալես, ձեն հանի:

ՄԱՆԵ - Երևի մրսել եմ... հիմա կանցնի:

ՍԻՐՈՒՆ - *(փնտրում է դեղատուփի մեջ)*: Ա՛ն, խմի... Աստված ջան, օգնի մինուժարիս... բժիշկ կանչեմ:

ՄԱՆԵ - Թե որ աստված չհասավ, ընդով յետը բժշկին կկանչես: Հիմա օգնի պառկեմ: *(Սիրունը Մանեին պառկեցնում է բազմոցին, նստում է կողքը)*: Մի քիչ քնեմ, չվախենաս... հիմա կանցնի:

ՍԻՐՈՒՆ - Դու քնի, չեմ վախենա:

Մանեն բռնում է տատի ձեռքը, փակում է աչքերը: Սիրունը սրբում է Մանեի քրտնած ճակատը, ստուգում սրտի աշխատանքն ու պառկում է ուտքերի տակ:

Պատկեր երկրորդ

ՄԱՆԵ - (բացելով աչքերն ու տեսնելով կույզ եկած տատին): Հերս...

ՍԻՐՈՒՆ - (փակ աչքերով): Մերս...

ՄԱՆԵ - Զնորս...

ՍԻՐՈՒՆ - Աշխարհս: (Գրկում են իրար:)

ՄԱՆԵ - Տանտ, քո կանաչ-կարմիր աշխարհիցը էլի մի բան կպատմես:

ՍԻՐՈՒՆ - Մի յետ...

ՄԱՆԵ - Էդ քո լինում-չի լինումն է:

ՍԻՐՈՒՆ - Հա, իմ հեքիաթի էլած-չէլածը: Ուրեմն, մի յետ պապո թութո թափ տվեց ու գեղի էրեխեքին հավաքեց բոլորը: Ասեց՝ ով շատ թութո հավաքեց ու լցրեց դազանը, նրա համար պահած նվեր ունեմ: Նրանց մեջ Գոգին էր, Արտակը, Անդոյի թոռ Մանուշն ու էլ՝ միտս չեն, թե ովքեր... դու մեջներին չէիր: Գոգին ավելի շատ ուտում էր: Պապո նրա ամանը թաքուն թութո էր լցնում: Հետո էնպես էղավ, որ ամենաշատ թութոը Գոգիի թասում էր: Պապո Գոգիին

գովեց, պինդ պաչեց շիրտս բերանն ու թերթով փաթաթած նվերը դրեց գիրկը, թե բա՛ չբացես, տուն կտանես, հետո մտիկ կտաս...

ՄԱՆԵ - Բա չիմացար՝ մեջն ինչ էր:

ՍԻՐՈՒՆ - Ես թաքուն մտիկ տվի... (Լռում է:)

ՄԱՆԵ - Ինչ էր:

ՍԻՐՈՒՆ - Զնարի համար՝ սիրուն ծաղկավոր շոր, Ծալիկոյի համար՝ փող, Գոգիի համար էլ՝ ոտնաման:

ՄԱՆԵ - Դու ինչ արիր:

ՍԻՐՈՒՆ - Որ դրեց Գոգիի գիրկը՝ լաց էղա: (Հուզվում է:)

ՄԱՆԵ - Տատ ջան, դու աշխարհի ամենաբարի մարդն ես:

ՍԻՐՈՒՆ - Ամենաբարի մարդը պապո էր: Մեկ-մեկ որ հետը կռվում էի գլուխը ծակ բարության համար, ասում էր՝ ես մարդկանց եմ լավություն անում, Աստված՝ ինձ: Նրան սիրելով չեմ առել, բայց հետո շատ եմ սիրել... Արտակը էդ խալխին որ առավ՝ մոր ուզելովն էղավ: Հիմի ուզում է կյանքը շտկի:

ՄԱՆԵ - Ամեն շտկելուց էլի սխալ ենք թոյլ տալիս ու ձիշտն ու սխալը փնտրելով՝ ժամանակն ենք կորցնում: Վերջ, չեմ ամուսնանալու:

ՍԻՐՈՒՆ - Էլ չասես: Բա մի գանգուր էրեխա չըլի՞ գիրկդ:

ՄԱՆԵ - Ամուսնության միակ ուրա-

խությունը էդ գանգուր լակոտն է:
Ուտելու ի՞նչ կտաս:

ՍԻՐՈՒՆ - Խաշաճ բազուկ:

ՄԱՆԵ - Աղքատի կերակուր:

ՍԻՐՈՒՆ - Լավ է մարդ աղքատ ըլի
ու խիղճն էլ՝ հանգիստ:

ՄԱՆԵ - Իսկ որ հարուստ լինի, խիղ-
ձը հանգիստ չի՞ լինի:

ՍԻՐՈՒՆ - Փողը խղճի հետ խաղաղ
չի ըլըմ:

ՄԱՆԵ - Իմաստուն տատս...

**Մանեն զնում է խոհանոց, Սիրու-
նը սեղան է պատրաստում: Դռան
թակոց:**

ՍԻՐՈՒՆ - Դուռը բաց է:

Ներս է մտնում Գոհարը:

ԳՈՇԱՐ - Բարև ձեզ, տիկին Սիրուն:
(*Չննելով սենյակը:*) Լավ էլ տուն
է, քաղաքին կպած, կայարանին
էլ՝ մոտ: Տեսնում եմ, լավ ես տե-
ղավորվել, որ չես ուզում տուն
գալ:

ՍԻՐՈՒՆ - Ինչի՞ համար ես էկել:

ԳՈՇԱՐ - Դու լավ գիտես գալուս
պատճառը:

ՄԱՆԵ - (*խոհանոցից*): Տատ, աղը
նոր ես դրել:

ՍԻՐՈՒՆ - (*Գոհարին*): Գնա՛, քանի
աչքը չի առել քեզ:

ԳՈՇԱՐ - Առանց մեզ ամեն ինչ որո-
շել էք: Գիտեմ, ինչի համար ես
փաստաթղթերը հավաքել, եկել:
Ի՞նչ ես արել տան սեփականաշ-

նորիման գրքույկը: Դու նվիրատ-
վություն անելու իրավունք չունես:

ՍԻՐՈՒՆ - Գնա՛:

ԳՈՇԱՐ - Տունն էլ, հողերն էլ ամուս-
նուս են պատկանում: Դավիթն է
տան տերը: Երեխաներս օրինա-
կան են, իրավունք չունես նրանց
զրկել ժառանգությունից: Իմ ունե-
ցածը բիծը չի վայելելու...

Ներս է մտնում Մանեն:

ՄԱՆԵ - (*տեսնելով Գոհարին*): Ա՛յ
քեզ պատվավոր հյուր:

ԳՈՇԱՐ - Չէիր սպասում:

ՄԱՆԵ - Կանխագում էի: Ինչո՞ւ ես
ժամանել:

ԳՈՇԱՐ - Մի ձևացրու, իբր ոչինչ
չգիտես:

ՄԱՆԵ - Ինչի՞ մասին... Հուսամ, քե-
ռիս ողջ-առողջ է:

ԳՈՇԱՐ - Զեռու առողջության մա-
սին մտածողը նրան թիկունքից
չի հարվածի: Անմարդկային չի
լինի ո՛չ նրա, ո՛չ նրա ընտանիքի
հանդեպ:

ՄԱՆԵ - Ինչի՞ մասին է խոսում,
տատ: (*Գոհարին.*) Առաջին օր-
վանից քեռուս կյանքը դժոխքի ես
վերածել, դեռ մարդկությունից ես
խոսում: Զո մարդկային վերա-
բերմունքից պապիս տունը
քայքայվեց, քո բարեսիրտ վերա-
բերմունքից մեծ քեռիս ընտանի-
քով Ռուսաստան փախավ, մայրս
քո մեծահոգությունից... կյանքին

վերջ տվեց: Ո՞ւմ չես ցավեցրել և ո՞ւմ մոտ ես մարդկությունից խոսում:

ԳՈՐԱՐ - Մայրդ սիրո հողի վրա է ինքնասպան եղել, ինձ չմեղարես:

ՍԻՐՈՒՆ - Լռե՛ք:

ՄԱՆԵ - Մայրս մեկ տղամարդու է սիրել, դու՛ տասնմեկը՝ բարոյականի դիմակով: Ծիծաղելի է, երբ անբարոյականը կույս է խաղում:

ԳՈՐԱՐ - Մայրդ բարոյականի համբավ չունե՛ր:

ՄԱՆԵ - Դու ի՞նչ գիտես մորս մասին:

ՍԻՐՈՒՆ - (յացակումած): Հերիք է...

ՄԱՆԵ - Սպասիր, տատ, հիմա իմ խոսելու հերթն է: (Գոհարին.) Ասում ես՝ սիրո՞ հողի վրա է ինքնասպան եղել... Ճիշտ է, նա հորս շատ է սիրել, ես մեծ սիրո ծնունդ եմ, ու եթե հայրս չի հասցրել օրինականացնել իրենց կապը, դա չի նշանակում, որ ես բիժ եմ: Ծատ անգամ ես այդ բառը շարտել մորս երեսին: Խեղճուկրակ մայրս լուռ կուլ է տվել: Հիմա էլ քեռուս վաստակածն ես մսխում:

ՍԻՐՈՒՆ - Քեռուդ ու էրեխանց խաթեր լեզուս լալացել է:

ԳՈՐԱՐ - Դե, ուրեմն էդ էրեխանց խաթեր կտակդ գրի Դավիթիդ անունով:

ՍԻՐՈՒՆ - Ես իրեքն ունեմ՝ Աշոտս, Դավիթս ու Մանես:

ԳՈՐԱՐ - Թոռներիդ՝ Ծուշանին ու Հասմիկին մոռացար:

ՍԻՐՈՒՆ - Չեմ մոռացել, լավ է, որ քեզնիցը մազ չունեն:

ԳՈՐԱՐ - Աշոտը ոչնչի կարիք չունի, թող ինձ շնորհակալ լինի, որ Ռուսաստանում առոք-փառոք ապրում է: Քսանհինգ տարի է՝ Հայաստան ոտք չի դրել, ցանկություն էլ չունի գալու: Հազար անգամ էլ ասել է, որ տան կարիքը չունի:

ՍԻՐՈՒՆ - Թե որ բաժին չի ուզում՝ Դավիթիս խաթը է: Անջուր ջրաղացն իր տան մեջ գերի է: Քանի՞ յետ ես ասել, որ տունը ծախելու ես:

ԳՈՐԱՐ - Տուն ծախելու միտք չունեմ: Եթե Ծալիկոյի Գոգիից ես իմացել՝ սուտ է:

ՄԱՆԵ - Ո՞ւմ տունն է ծախում, տատ:

ՍԻՐՈՒՆ - Պապենական տունը:

ՄԱՆԵ - Մեր տո՞նը, պապիս սարքած տո՞նը.. (Գոհարին.) Դու որտեղ էիր, երբ էնտեղ մի ամբողջ գերդաստան էր ապրում, թոնրատուն սարքում, այգի հիմնում: Քեզ չի հաջողվի խլել իմ, Ծուշանի, Հասմիկի, մեր մանկության մաքուր հիշողությունները: Տատ, քեռին ի՞նչ է ասում:

ՍԻՐՈՒՆ - Լուռ է: Դրա համար եմ տանջվում:

ՄԱՆԵ - Պարզ է, խոսելու համարձակություն չունի: (Գոհարին.) Ուզածդ ի՞նչ է:

ԳՈՐԱՐ - Գիտեմ, որ փաստաթղթերը հավաքած Երևան է եկել ժա-

ռանգության հարցերով: Եթե չի գրել, թող աչքիս առաջ կտակը գրի:

ՄԱՆՆԵ - Որ հետո մեր աչքի առաջ տունը ծախեն:

ՍԻՐՈՒՆ - Տունն ու խիղճը ծախու չի, թե տունդ ծախեցիր՝ հիշողությունդ կկորցնես, թե խիղճդ ծախեցիր՝ հոգիդ: Էս է իմ կտակը:

ՄԱՆՆԵ - Կեցցես, տատ: *(Գոհարհն.)* Տան իրավունքները քեռուն է պատկանում, երբ ինքը ներկա կլինի, այդ ժամանակ էլ հարցը կլուծենք: Հիմա հեռացիր:

ԳՈՇԱՐ - Հարցեր լուծողը դու չես: Ես դեռ կգամ, ու մենակ չեմ գա: *(Գնում է:)*

Պատկեր երրորդ

Քազմոցին պառկած է Սիրունը, մերս է մտնում Մանեն:

ՍԻՐՈՒՆ - Քեռուդ զանգ ես տվել:

ՄԱՆՆԵ - Հա, կարձ խոսեց, երևում է՝ հարսդ մոտն էր: Դեղիդ ժամն է, խմիր:

ՍԻՐՈՒՆ - Դենը տար: Ցերեկը աչքս կապվ թե չէ՝ հերանցս թախումին տեհա. Ավետիքն էր, Մագթաղը, Մկրտիչը, պապուդ ձենը լսեցի, կանչում էին... Թե որ մեռնեմ, ինչ է լինելու քեռուդ հալը:

ՄԱՆՆԵ - Գոհարը կմխիթարի: *(Դեղը մեկնելով:)* Դու չէի՞ր ասում, որ մեռնողի հետևից մարդ չի մեռնում:

ՍԻՐՈՒՆ - Հոգուս հեն ես խաղում...

ՄԱՆՆԵ - Հերանցդ թախումին առաջին անգամ չէ, որ տեսնում ես: *(Ձեռքը նրա ծակատին դնելով:)* Ու ջերմություն չունես:

ՍԻՐՈՒՆ - Էն տղեն քանի գիշեր է՝ տուն չի գալիս, տեղն էրևում է:

ՄԱՆՆԵ - Ընկերը հինգ օրով Եվրոպա է մեկնել, նրա տանն է մնում:

ՍԻՐՈՒՆ - Նրա տունը ըստի չի՞:

ՄԱՆՆԵ - Էստեղ է, էս խոնավ ու կիսաքանդ տունը:

ՍԻՐՈՒՆ - Էս խոնավ տան մեջ քեզ չեմ թողնի, Մանե ջան:

ՄԱՆՆԵ - Ինձ քեռու տնից ոչինչ պետք չէ, մենակ մանկությանս հուշերը չկորցնեմ: Էնտեղ մորս օրորոցն է, քո կոմոդը: Հիշում ես, ինչքան էի մտնում կոմոդի դարակները: Պապը թավշյա կոորով փաթաթած Աստվածաշունչը էնտեղ էր պահում: Մինչև հիմա դարակների հոտն առնում եմ:

ՍԻՐՈՒՆ - Լավ էլ միտող է:

ՄԱՆՆԵ - Հա, մանկությունից շատ բան եմ հիշում:

ՍԻՐՈՒՆ - *(խորամանկ ժպտալով):* Բա ընչի՞ էիր տղին խաբում, թե բան չես հիշում:

ՄԱՆՆԵ - Արտակի հետ կապված ոչինչ չեմ հիշում, նրանց այծից բացի:

ՍԻՐՈՒՆ - Այծին մեր թոնրատունն էին կապում: Կարոտել եմ մեր դուռ ու երդիկին:

ՄԱՆՆԵ - Կուզեն, Արտակին ասեմ՝

տանի: Կգնաս, քեռուն, էրեխեքին
կտեսնես ու էլի հետ կգաս:

Միրունը տխուր հոգոց է հանում:
Ներս է մտնում Արտակը:

ԱՐՏԱԿ - (մրգերի տոպրակը դնելով
սեղանին): Բարև ձեզ: Տատ ջան,
հնց ես, քեզ վիտամիններ՝ Ա, Բ,
Ց... և Օ, Ֆ: Մանե, հյութ սարքի,
ես ու տատը խմենք:

ՍԻՐՈՒՆ - Ո՛ր էիր, մահը դուս թա-
կում է, գնացել ես ու քանի օր է՝
չկաս:

ԱՐՏԱԿ - Մեռնելը ձեռաց բան չի,
տատ:

ՍԻՐՈՒՆ - Մեռնողն իր վերջը գգում
է:

ՄԱՆԵ - Արտակ, նամակ ունես, հի-
մա բերեմ: (Գնում է խոհանոց:)

ՍԻՐՈՒՆ - (կամաց): Արտակ տղա,
տնիցը երկար մի բացակայի:

ԱՐՏԱԿ - Կարոտե՛լ էիք:

ՍԻՐՈՒՆ - Մանեն մի յետ քնած ժա-
մանակը անունդ տվեց:

ԱՐՏԱԿ - Չեմ հավատում: Անցյալը
մոռացվել է:

ՍԻՐՈՒՆ - Դու նորից սկսի:

ՄԱՆԵ - (գալիս, մեկնում է ծրարը):
Վերցրու:

ԱՐՏԱԿ - Վերջապես... Նախարա-
րությունից է, շատ դանդաղ են
աշխատում:

ՍԻՐՈՒՆ - Տղա, սուրճ կխմես:

ԱՐՏԱԿ - Դու կեփե՛ս, տատ:

ՍԻՐՈՒՆ - Հա՛, տամբաթ անտեր:
(Գնում է խոհանոց:)

ԱՐՏԱԿ - (դեպի խոհանոց): Դառը,
տատ: (Բացում է ծրարը, կար-
դում, մոայլվում է:)

ՄԱՆԵ - Լուրջ բան է:

ԱՐՏԱԿ - (ձմրթելով նամակը՝
շարտում է): Արգելում են պեղում-
ները շարունակել, ես ձե՛ր... ցնդել
են, բթացել... Ո՛ր ենք գնում, ին-
չո՞ւ չենք ուզում ապացուցել, որ
մեր երկիրը եգիպտական բուրգե-
րից առաջ էլ քաղաքակրթություն
է ունեցել: Պարզվում է՝ տաս տա-
րի իզուր եմ... (Վերցնելով նամա-
կը, գնում է:)

ՍԻՐՈՒՆ - (ներս գալով): Էդ ընչի՞
գժվեց:

ՄԱՆԵ - Վերջ, խաչ քաշեց դիսեր-
տացիայի վրա: Երկրին գիտնա-
կաններ պետք չեն: Ի՞նչ տեսակ
ազգ ենք, տատ:

ՍԻՐՈՒՆ - Մենք մեր աչքը հանող
ազգ ենք, որդի: Սուրճն էլ չխմեց...
ետ կգամ:

**Մանեն մտնում է գրասեղանի ա-
ռաջ, սկսում է գրել:**

Չորրորդ պատկեր

ԱՐՏԱԿ - (փակում է ծամպրուկը):
Վերջ, ավարտվեց կենվորիս
կարգավիճակը: Պիտերում նոր
կյանք կսկսեմ:

ՄԱՆԵ - Բետոնն շաղախից:

ԱՐՏԱԿ - Այս անգամ որոշել եմ կա-
նանցից սկսել:

ՄԱՆԵ - Միշտ էլ կնամուլ ես եղել:

ԱՐՏԱԿ - Մինչև այստեղ տեղափոխվելը: Երկու տարուց ավել է՝ ասկետի կյանքով եմ ապրում:

ՄԱՆԵ - Այստեղ՝ այո, իսկ ընկերոջդ տան վրա կասկածներ ունեմ:

ԱՐՏԱԿ - Ուզում ես ասել, որ... Գուցե դեռ կարելի է... *(Գրկում է Մանեին:)*

ՄԱՆԵ - Սերը տիեզերական գաղափար է, ես ու դու դրանից բան չենք հասկանում:

ԱՐՏԱԿ - Ես սիրում եմ...

ՄԱՆԵ - *(կտրուկ):* Գնա, եթե ուզում ես փրկել սերը:

Արտակը, վերցնելով ճամպրուկը, գնում է: Լսվում է հեռացող գնացքի ձայնը:

ՄԱՆԵ - *(մեկուսի):* Հիշում եմ, լսում ես, քեզ հետ կապված ամեն ինչ եմ հիշում: Ակացիայի ծառն եմ հիշում, որի տակ առաջին անգամ համբուրվեցինք, կակաչներից վառվող սարալանջն եմ հիշում, եկեղեցու բակն եմ հիշում, որտեղ ձեր կարմրամորուս այծի մոտ սիրտս քեզ բացեցի ու երբ այժը քո նվիրած ծաղկեփունջը կերավ՝ ծիծաղից խեղդվեցինք: Հիշողությանս մաքուր էջերին է գրվել, չի՛ մոռացվի, լսում ես, չի՛ մոռացվի...

ՍԻՐՈՒՆ - *(ներս մտնելով):* Ինչի՞ հետ չպահեցիր:

ՄԱՆԵ - Աստծուն էլ չեմ կարող խոստովանել, տատ:

Գալիս են Մարթան ու Գոգին:

ԳՈԳԻ - Չհասցրինք, հա՛մ...

ՄԱՐԹԱ - Նրա համար փախլավա էի թխել: *(Մանեին.)* Զո մի խոսքը կարող էր ամեն ինչ փոխել:

ՄԱՆԵ - Գոնե դուք ինձ մի մեղադրեք:

ՄԱՐԹԱ - Բայց այդ ամենը այնքան վաղուց էր...

ԳՈԳԻ - Արժե՛ր ջահելության սխալներին այդքան նշանակություն տալ:

ՄԱՆԵ - *(նկատելով տատի հուզմունքը):* Ամեն ինչ լավ է, դու մի հուզվիր: *(Սիրունը ծանր է շնչում:)* Գոգի, բժիշկ կանչիր:

Գոգին վազում է դեպի դուռը:

ՍԻՐՈՒՆ - Պետք էի, Գոգի ջան, ոչ մի տեղ չգնաս:

Մարթան ու Մանեն Սիրունին օգնում են պառկել:

ՄԱՆԵ - Մարթա, դեղը բեր... Աստված ջան, հասի տատիս... *(Գոռում է:)* Գոգի, բժիշկ... Տատ ջան, ինձ մենակ չթողնես:

ՍԻՐՈՒՆ - Թե Աստված չհասնի՝ ընդով յետը կանչի, Գոգի ջան:

ՄԱՆԵ - *(դեղը վերցնելով Մարթայից):* Տատ ջան, խմի:

ՍԻՐՈՒՆ - *(դեղը խմելուց հետո):* Գո-

զի ջան, կողքիս էղեք: Բարձր թի-
կունքիս տակ դիր:

ՄԱՆԵ - *(Մարթային):* Արտակի
բարձր խոհանոցում է, բեր: Տատ
ջան, քեզ հետ մի բան պատահի,
քեռուն ինչ եմ ասելու... աչքերդ
բաց, տատ ջան, չփակես, ո՞վ
պիտի ինձ համար երգ մրմնջա,
հեքիաթ պատմի... տանտ ջան,
խնդրում եմ, ինձ անտեր չթող-
նես, տատ ջան...

ՍԻՐՈՒՆ - *(շունչը տեղը բերելով):*
Լավ եմ, Մանե ջան, ինչի՞ համար
ես լաց ըլըմ:

ՄԱՆԵ - Լաց լինելու քի՞չ բան կա...
Քեզ համար լաց չեմ լինում, մորս
համար, հորս, հայի բախտի ու
աշխարհի ցավի համար եմ լաց
լինում:

ՍԻՐՈՒՆ - Էդ սիրուն աչքերիցդ ար-
ցունք մի թափի, դեռ կդիմանամ:
Գոգի, Մարթա, մոտ նստեք, թե

որ աչքերս փակեմ, հանկարծ
չվախենաք, ուզում եմ քնեմ:

ՄԱՆԵ - Հա, դու քնի, չենք վախենա:

**Տատը բռնում է Մանեի ձեռքը և
աչքերը փակում: Մանեն սրբում է
նրա քրտնած ճակատը, ստու-
գում սրտի աշխատանքն ու
կծկվելով ոտքերի տակ՝ երգ է
մրմնջում, նրան եմ միանում
Մարթան ու Գոգին:**

**Բեմը լուսավորվում է, բազմոցին
քնած են Մարթան, Գոգին, Մա-
նեն:**

ՄԱՆԵ - *(արթնանալով՝ վախեցած):*
Տատ ջան, աչքերդ բաց, մեզ
խնայի, աչքերդ բաց, հերս, մերս,
քո՞րս...

ՍԻՐՈՒՆ - *(բացելով աչքերը):* Աշ-
խարհս...

**Բոլորը միասին գրկում են Սիրուն տատին:
Լսվում է հեռացող զնացքի ձայնը:**

**Նամակ Ռուսաստանից - Իմ շատ սիրելիներ, աշխարհի ոչ մի անկյունում մեր
արևի տաքությունը չկա, կարոտում եմ...**

**Նամակ Ամերիկայից - Իմ շատ սիրելիներ, հայրենիքիս զուլալ ջրին, խրխուր
հողին ու թավ կանաչին կարոտում եմ...**

**Նամակ Պետերբուրգից - Իմ շատ սիրելիներ, աշխարհում Մանեի խոնավա-
համ տնից ուրիշ լավ տեղ չկա, կարոտում եմ... դիմավորեք:**

Ազոտա ԿՐԻՍՏՈՑ ՀԱՄԱՃԱՐԱԿ¹

Գործող անձինք
ԲԺՇԿՈՒՀԻ
ՓՐԿՈՂ
ՓՐԿՎԱԾ
ՀՐՇԵՁ 1
ՀՐՇԵՁ 2
ՀԱՄՈՉՈՂ
ՏՂԱՄԱՐԳ 1
ՏՂԱՄԱՐԳ 2
ՀԱՂԹԱՆԳԱՄ

Տեսարան 1

Բժշկուհի, Փրկող, Փրկված:

*Բենը ներկայացնում է բժշկական կաքինեյր՝ քավական անխնամ վիճակում:
Բժշկուհին նստած է գրասեղանի մոտ: Հիսուն տարեկան կին է՝ վայր պահ-
պանված: Առջևը դրված է կարմիր գինու շիշ:*

ԲԺՇԿՈՒՀԻ - Ամպեր են: Միայն ամպեր: Չկա տխմար նարնջագույն արևամուտը, և մնացյալը: Ատում եմ բնության գեղեցկությունը: Միայն գարշելի եղանակ եմ սիրում: Անձրև, մառախուղ, քամի, ցեխ, մի խոսքով, գարշանք: (Լցնում է բաժակը և խմում:) Առողջ լինենք: Ատում եմ առողջությունը: Գինին շատ վատ է առողջության համար: Ծուխը՝ նույնպես: (Ծխախոտ է վառում:) Եվ որքան պիտի սա տևի... Ոչ մի

հաճախորդ: Մարդ չկա: Ոչ մի հիվանդ: Միայն մեռելներ: Ինչ են, ի վերջո, հիվանդները: Չափա տանողներ: Մարդիկ պետք է կամ լավ առողջություն ունենան, կամ սատկեն: Խնամել նրանց: Բուժել: Ինչի՞ համար: Առանց այն էլ շատ են: (խմում է:) Բժշկություն, ծիծաղս մի բերեք: Դա ընդամենը անգինա բուժելու համար է: Բայց անգինան ինքն իրեն էլ կարող է բուժվել: (խմում է:) Ինչ լուրջություն է: Հարց եմ տալիս՝ արդյոք ձյուն

կգամ... Հարց եմ տալիս, թե ինչու եմ այդ հարցը տալիս: Ձյուն կգամ, թե՛ չի գա... Հարց եմ տալիս, ի դեպ, թե ինչո՞ւ եմ նորից այդ հարցը տալիս, ինչ ուզում է լինի: (Դուռը ծեծում են:)
Գնա՛, ուրիշ տեղ բուժվիր: Դա ինձ չի վերաբերում: Ձեր անգինաններն ինձ չեն վերաբերում: Դա ինքն իրեն է բուժվում: (Ավելի ուժգին են ծեծում:)
Ասալիրին խմե՛ք: Հրաշալի միջոց է: Ամեն ինչի համար էլ լավ է: Եթե՛ չի օգնում, ուրեմն, ոչինչ չի օգնի: (Շատ ավելի ուժգին են ծեծում:)
Լավ, եղա՛վ, կարող եմ ձեզ հակաբիոտիկ սրսկել: Դա էլ լավ է՝ հակաբիոտիկը: Ոչնչացնում է միկրոբները, վիրուսները, բացիները, ամեն ինչն է ոչնչացնում: Հաբեր ընդունելով, հետույքին սրսկելով, ներերակային ձանապարհով...

Դուռն աղմուկով բացվում է:
Մտնում է Փրկողը՝ երիտասարդ աղջկա գրկած, նրան զգուշորեն դնում է բժշկական բազմոցին:
Մըբում է ճակատը:

ԲԺՇԿՈՒՇԻ - Դա ի՞նչ է:
ՓՐԿՈՂ - Աղջիկ է, մի գեղեցիկ, երիտասարդ աղջիկ, որին գտա անտառում կախված:
ԲԺՇԿՈՒՇԻ - Ընդամենը դա՞ գտաք:
ՓՐԿՈՂ - Ինչպե՛ս թե «ընդամենը»:

Ես սունկ հավաքելու չէի գնացել:
ԲԺՇԿՈՒՇԻ - Իսկ ի՞նչ էիք հավաքում, ի՞նչ էիք փնտրում:
ՓՐԿՈՂ - Ծառ՝ միզելու համար: Ահա թե ինչ էի փնտրում:
ԲԺՇԿՈՒՇԻ - Ծառն այնքան էլ դժվար չէ գտնել անտառում:
ՓՐԿՈՂ - Այո, դա այնքան էլ դժվար չէ... Բայց գրողը տանի՛: Մարդ հարցնի...
ԲԺՇԿՈՒՇԻ - Գրողը տանի՛: Դուք ասացիք՝ գրողը տանի՛:
ՓՐԿՈՂ - Այո: Բայց ձեզ ի՞նչ եղավ:
ԲԺՇԿՈՒՇԻ - Պաշտում եմ «գրողը տանի»-ն: Պաշտում եմ այդ արտահայտությունը: Ցավոք, հաճախ չես լսի: Գրողը տանի՛: Հի՛-հի:
ՓՐԿՈՂ - Լավ կլիներ մի բան անելիք այդ խեղձ աղջկա համար:
ԲԺՇԿՈՒՇԻ - Ուրիշներ չկայի՞ն:
ՓՐԿՈՂ - Ի՞նչ:
ԲԺՇԿՈՒՇԻ - Կախվածներ: Անտառում:
ՓՐԿՈՂ - Չգիտեմ: Լա միակն էր, որին տեսա, և որին... փրկեցի: Ինչո՞ւ: Պիտի որ ուրիշներն էլ լինե՞ին:
ԲԺՇԿՈՒՇԻ - Անտառը լիքն է դրանցով: Լիքն է կախվածներով: Պարզ է՝ մարդիկ տեսնում են միայն ջահելներին ու գեղեցիկներին: Միշտ նրանց են փրկում: Եվ երբեք ոչ մի պառավ, տգեղ կամ փսլնքոտ: Երբե՛ք:

ՓՐԿՈՂ - Բայց սա միակն էր, որ տեսա: Ես ում ասես կփրկեի:

ԲԺՇԿՈՒՇԻ - Դա հիմարություն է: Պետք չէ ում ասես փրկել: Ի դեպ, դուք իրավունք չունեք ամեն պատահածին փրկելու:

ՓՐԿՈՂ - Ինչպե՞ս թե: Դա իրավունք չէ, դա պարտականություն է:

ԲԺՇԿՈՒՇԻ - Տրա-լա-լա-լա, տրա-լա-լա: Եվ ի՞նչ կուզեիք, որ նրան անեմ:

ՓՐԿՈՂ - Նրան պետք է իսկապես փրկել, վերջնական: Վերադարձնել կյանքին, ապագային:

ԲԺՇԿՈՒՇԻ - Նա փայտացել է:

ՓՐԿՈՂ - Բոլորովին: Նա շնչում է: Դուք բժիշկ եք, չէ՞:

ԲԺՇԿՈՒՇԻ - Էի, էի: Բայց այլևս հիվանդներ չունեմ: Միայն մեռելներ են: Եվ անգինաներ: Այս խոնավ եղանակի պատճառով է: Կուզեի՞ք մի բաժակ խմել: *(Ելնում, գնում է բաժակը ողողելու:)*

ՓՐԿՈՂ - Ոչ, ոչ, շնորհակալ եմ: Որևէ բան արեք այս հմայիչ աղջկան:

ԲԺՇԿՈՒՇԻ - Հմայի՛չ, հմայի՛չ... Միշտ գեղեցիկ կանանց են...

ՓՐԿՈՂ - Դուք կարծում եք՝ տեսնում էի, որ նա գեղեցիկ է: Լեզուն դուրս էր ընկել: Ուտքից գլուխ կապտած էր:

ԲԺՇԿՈՒՇԻ - Զզվանքս եկավ: *(Փրկվածին նայելով:)* Նա այլևս կապտած չէ... հիմա:

ՓՐԿՈՂ - Իսկապես: Նա դեռ ողջ է: Սիրտը բաբախում է:

ԲԺՇԿՈՒՇԻ - Չի կարելի վստահել սրտի բախոցին:

ՓՐԿՈՂ - *(բռնում է Բժշկուհու խալաթից):* Եթե հենց հիմա որևէ բան չանեք, ես կջարդեմ ձեր կեղտոտ ռեխը:

ԲԺՇԿՈՒՇԻ - Հանգիստ, հանգիստ:

ՓՐԿՈՂ - Գոնե քննեք նրան:

ԲԺՇԿՈՒՇԻ - Եթե շատ եք ուզում... *(Բռնում է աղջկան:)* Ծնչառությունը կանոնավոր է, սրտի բախոցը՝ բավական հուսադրող... Ի՞նչ գեղեցիկ ծծեր են:

ՓՐԿՈՂ - Է... այդ ի՞նչ եք անում:

ԲԺՇԿՈՒՇԻ - Բռնում եմ, ի՞նչ եմ անում: Ուզում էիք, չէ՞, որ նրան քննեմ: Գեղեցիկ է ջահելությունը:

ՓՐԿՈՂ - *(մի կողմ է հրում Բժշկուհուն):* Այլևս նրան չդիպեք: Այս կողմերը պոլիկլինիկա չկան:

ԲԺՇԿՈՒՇԻ - Ոչ պոլիկլինիկա, ոչ էլ հիվանդանոց: Այս կողմերը ինձնից բացի ոչինչ չկա: Տես, է, աչքերը բացեց:

ՓՐԿՈՂ - *(մոտենում է Փրկվածին):* Գեղեցիկ, կապույտ աչքեր: Սքանչելի են:

ԲԺՇԿՈՒՇԻ - Բիչ առաջ նա լրիվ կապույտ էր, և դուք չէիք գտնում, որ դա սքանչելի է:

ՓՐԿՈՂ - Վհրո՛կ: Ես նրան անմիջապես կտանեմ այստեղից:

ՓՐԿՎԱԾ - Չեմ ուզում, որ ինձ տանեն: Ես ինձ այստեղ լավ եմ զգում: Պատկած: Ես շատ լավ եմ:

ԲԺՇԿՈՒՇԻ - Տեսնում եք:

ՓՐԿՎԱԾ - Որտեղ եմ ես: Սա է հանդերձյալ աշխարհը:

Բժշկուհին քննադատում է:

ՓՐԿՈՂ - Ոչ, դուք դեռ հողի վրա եք: Դուք ապրում եք: Այդ ես եմ ձեզ փրկել:

ՓՐԿՎԱԾ - Ա՛յ քեզ ավանակ:

ՓՐԿՈՂ - Ներեցե՛ք:

ԲԺՇԿՈՒՇԻ - Դուք ձիշտ լսեցիք: Նա ասաց. «ավանակ»:

ՓՐԿՎԱԾ - Եսասեր, կեղծավոր, տխմար, ինքնակոչ, սաղմ:

ՓՐԿՈՂ - Ե՛ս:

ԲԺՇԿՈՒՇԻ - Դուք: Ճիշտ այդպես:

ՓՐԿՈՂ - Ինչո՞ւ:

ՓՐԿՎԱԾ - Որովհետև:

ԲԺՇԿՈՒՇԻ - Որովհետև խառնվում եք ձեզ չվերաբերող գործերին:

ՓՐԿՈՂ - Ե՛ս: Ե՛րբ: Ինչպե՛ս:

ՓՐԿՎԱԾ - Հիմա ես ուզում եմ քնել:

ՓՐԿՈՂ - Նա կարծես թե ավելի լավ է զգում:

ԲԺՇԿՈՒՇԻ - Տեսնում եք: Ինքն իրեն լավացավ: Ինչպես միշտ:

ՓՐԿՈՂ - Ինչպես մի՞շտ: Հիմա ես ի՞նչ պիտի անեմ:

ԲԺՇԿՈՒՇԻ - Թողնենք՝ քնի:

ՓՐԿՈՂ - Այդ: Ես կսպասեմ:

ՓՐԿՎԱԾ - Կարիք չկա: Ես մենակ

լավ էլ քնում եմ:

ԲԺՇԿՈՒՇԻ - Դուք կարող եք այդ ընթացքում գնալ տեղեկացնել իշխանություններին:

ՓՐԿՈՂ - Հեռախոս կա՞ այստեղ:

ԲԺՇԿՈՒՇԻ - Հեռախոսը խաթարված է:

ՓՐԿՈՂ - Որևէ բան կա՞ այստեղ, որ խաթարված չէ, այս կեղտոտ ծակուռում:

ԲԺՇԿՈՒՇԻ - Չկա: Ամեն ինչ խաթարված է:

ՓՐԿՈՂ - Բայց ինչո՞ւ, Տեր Աստված...

ԲԺՇԿՈՒՇԻ - Դուք կարող էին փոխարենը ասել. «Գրողը տանի»...

ՓՐԿՈՂ - Բայց ի՞նչ է այստեղ կատարվում, վերջ ի վերջո:

ԲԺՇԿՈՒՇԻ - Առանձնապես ոչինչ: Գրեթե բոլորը մահացել են, ինքնասպան են եղել:

ՓՐԿՈՂ - Գրեթե բոլորը: Բայց... ի՞նչ պատճառով:

ԲԺՇԿՈՒՇԻ - Չգիտենք: Պատճառ չկա: Դա համաճարակ է:

ՓՐԿՈՂ - Համաճարամի... Ինքնասպանությամբ:

ԲԺՇԿՈՒՇԻ - Այդ: Ինքնասպանության վիրուս, միկրոբներ: Համաճարակ: *(Երկու բաժակ է վերցնում, մեկը տալիս է Փրկողին:)* Չեք ուզում:

ՓՐԿՈՂ - Այդ ի՞նչ եք խմում:

ԲԺՇԿՈՒՇԻ - Կարմիր գինի: Տեղա-

կան: Մառանը լիքն է: Ուզում եք:
Առանձնապես մի բան չէ:
ՓՐԿՈՂ - Ուրիշ ոչինչ չունե՞ք: Մի
որևէ... թունդ խմի՞չք:
ԲԺԵԿՈՒՇԻ - Հի-հի: Ուրիշ բան չկա:
Կամ սա եք խմում, կամ ոչինչ:
ՓՐԿՈՂ - *(վերցնում է բաժակը և
զզվանքով խմում)*: Եվ ո՞ր իշխա-
նություններին է պետք տեղեկաց-
նել:
ԲԺԵԿՈՒՇԻ - Ինքնասպանություն-
ների հանձնաժողովին: Ամեն
անգամ, երբ մի փրկված է հայտ-
նաբերվում, դա նրանց հե-
տաքրքրում է:
ՓՐԿՈՂ - Իսկ մյուսները նրանց չեն
հետաքրքրում:
ԲԺԵԿՈՒՇԻ - Այո, իհարկե: Նրանք
բոլորին են քննում, համոզվելու
համար, որ իսկապես մեռած են:
Բայց փրկվածները նրանց ա-
ռանձնապես են հետաքրքրում:
ՓՐԿՈՂ - Ինչո՞ւ:
ԲԺԵԿՈՒՇԻ - Որպեսզի նրանց հար-
ցեր տան: Մեռածներին՝ չեն կա-
րող:
ՓՐԿՈՂ - Եվ որտե՞ղ է գտնվում այդ
հանձնաժողովը:
ԲԺԵԿՈՒՇԻ - Դիմացի բիստրոյում:
Հրշեջներն են դրանով զբաղվում:
ՓՐԿՈՂ - Հրշեջները:
ԲԺԵԿՈՒՇԻ - Այո, հրշեջները:
Նրանք շատ լավն են: Հիմար են,
բայց արդյունավետ: Սկզբում մեզ

հոգեբույժներ էին ուղարկում,
բայց նրանք բոլորն ինքնասպան
եղան:
ՓՐԿՈՂ - Հոգեբույժները:
ԲԺԵԿՈՒՇԻ - Է, հա: Դա ձեզ զար-
մացնում է: Ութ հոգի էին: Հրշեջ-
ները երբեք ինքնասպան չեն
լինում, նրանք չափազանց կազ-
մակերպված են: Ի դեպ, ինչպե՞ս
կարողացաք մտնել այս կեղտոտ
ծակուռը:
ՓՐԿՈՂ - Մեքենայով: Ճամփաբա-
ժանին սխալվեցի: Նույնիսկ չգի-
տեմ, թե որտեղ եմ:
ԲԺԵԿՈՒՇԻ - Ավելի լավ ձեզ համար:
Մեր ծակուռը կարանտինի մեջ է:
Ոչ ոք այստեղ չի մտնում, ոչ ոք
այստեղից դուրս չի գալիս:
Երթևեկությունը շեղված է: Դուք
արգելափակոցը չտեսա՞ք:
ՓՐԿՈՂ - Ոչ, ոչինչ չտեսա: Ինչո՞ւ:
ԲԺԵԿՈՒՇԻ - Ոչ ոք չի կարող այս-
տեղ մտնել՝ համաձարակի պատ-
ժառով:
ՓՐԿՈՂ - Իսկ ինչպե՞ս եք սնունդ
հայթայթում:
ԲԺԵԿՈՒՇԻ - Հրշեջներն են բերում
արգելափակոցի մոտից:
ՓՐԿՈՂ - Կրկնում եմ. ես ոչ մի ար-
գելափակոց չտեսա:
ԲԺԵԿՈՒՇԻ - Տարօրինակ է: Բոլոր
դեպքերում, դուրս գալիս կտես-
նեք: Իմիջիայլոց, դուրս գալու
մասին պետք չէ անգամ երազել:

ՓՐԿՈՂ - Ի՞նչ: Ես չեմ կարող այստեղից դուրս գալ: Բայց ես գործեր ունեմ, պարտականություններ ունեմ:

ԲԺՇԿՈՒՇԻ - Իհարկե, իհարկե:

ՓՐԿՈՂ - Ի՞նչը «իհարկե, իհարկե»:

ԲԺՇԿՈՒՇԻ - Ոչինչ: Դուք հիմա վարակված եք ինքնասպանության վիրուսով: Եթե այստեղից դուրս գաք, կվարակեք ամբողջ երկիրը: Աշխարհը: Գնացեք, հրշեջներին կանչեք:

ՓՐԿՈՂ - Ի՞նչ պիտի անեն:

ԲԺՇԿՈՒՇԻ - Մահվան հաստատում:

ՓՐԿՈՂ - Բայց նա մեռած չէ:

ԲԺՇԿՈՒՇԻ - Ուրեմն, հարցաքննում:

ՓՐԿՈՂ - Հրշեջները:

ԲԺՇԿՈՒՇԻ - Այո, հրշեջները: Հարցաքննում, հոգեվերլուծություն, նույնիսկ հերձում: Իրենց Աստծո տեղ են դրել, այդ հրշեջները:

ՓՐԿՈՂ - Համենայնդեպս, պետք է թույլ տան, որ դուրս գամ այստեղից:

ԲԺՇԿՈՒՇԻ - Ոչ մի դեպքում: Բայց եթե ձիշտ է, որ այլևս արգելափակոց չկա...

ՓՐԿՈՂ - Ոչինչ չկա:

ԲԺՇԿՈՒՇԻ - Հավանաբար բոլորը կախվել են անտառում... կամ խեղդվել իրենց մեքենաների գազից, կամ էլ... ատրձանակվել...

ՓՐԿՈՂ - Ո՞ւմ մասին եք խոսում:

ԲԺՇԿՈՒՇԻ - Արգելափակոցի մենթերի: Մենթերը նույնքան հիմար

են, որքան հրշեջները, բայց շատ ավելի զգայուն:

ՓՐԿՈՂ - Դուք մոլորության մեջ եք: Մենթերը՝ զգայուն:

ԲԺՇԿՈՒՇԻ - Եվ որքան: Նրանք պայծառատես են, նահատակ, ճնշված, մեղավոր: Նրանք սուկալիորեն սիրո կարիք են զգում:

ՓՐԿՈՂ - Դա հուզիչ է: Ուրեմն, այլևս արգելափակոց չկա: Մնացել են միայն հրշեջները: Գնամ փնտրեմ նրանց: Որտեղ կարող են լինել այս ժամին:

ԲԺՇԿՈՒՇԻ - Դիմացի բիստրոյում: Արդեն ասել եմ ձեզ:

ՓՐԿՈՂ - Դեռ բաց է:

ԲԺՇԿՈՒՇԻ - Միշտ բաց է:

ՓՐԿՈՂ - *(կռանում է Փրկվածի վրա, քնքշանքով նայում նրան)*: Հրեշտակի պես է քնել: Երկու թուփից կվերադառնամ և հետը կմեկնեմ այստեղից հեռու:

ԲԺՇԿՈՒՇԻ - Նրա հետ: Դա ինձ շատ կզարմացներ:

ՓՐԿՈՂ - Ես նրան սիրում եմ:

ԲԺՇԿՈՒՇԻ - Ա՛հ:

ՓՐԿՈՂ - Այո: Ինձ ոչինչ չի կանգնեցնի:

ԲԺՇԿՈՒՇԻ - Օ՛, սեր: Ես էլ եմ եղել ջահել ու գեղեցիկ:

ՓՐԿՈՂ - Չի՛ կարող պատահել:

ԲԺՇԿՈՒՇԻ - Ինչպես բոլորը: Նա էլ մի օր կդառնա...

ՓՐԿՈՂ - Դա այնքան էլ շուտ չի լինի:

ԲԺԵԿՈՒՇԻ - Եթե իմանայիք, թե ժամանակը որքան արագ է անցնում:

ՓՐԿՈՂ - Գնամ հրշեջներին փնտրեմ, քանի որ պետք է:

ԲԺԵԿՈՒՇԻ - Դա պետք է, պետք է:

Փրկողը դուրս է գալիս:

Տեսարան 2

Բժշկուհի, Փրկված:

ՓՐԿՎԱԾ - Գնաց այդ ավանակը:

ԲԺԵԿՈՒՇԻ - Այո, վերջապես:

ՓՐԿՎԱԾ - *(վեր է կենում):* Մի բաժակ ինձ համար կգտնվի:

ԲԺԵԿՈՒՇԻ - Անշուշտ: *(Գինի է լցնում այն բաժակի մեջ, որից արդեն խմել էր Փրկվողը: Երկու կանայք խմում են:)*

ՓՐԿՎԱԾ - Վերջում, կարծեմ, դուք սկսեցիք ողբալ ձեր ջահելությունը:

Երկար լռություն: Փրկվածը, բաժակը ձեռքին, քայլում է:

ՓՐԿՎԱԾ - Սա ձեզ դժուր է գալիս:

ԲԺԵԿՈՒՇԻ - Ես ինձ հարցեր չեմ տալիս: Խմում եմ այն, ինչ կա:

ՓՐԿՎԱԾ - Գինին նկատի չունեմ: Դա իրոք խմելու բան չէ: Նկատի ունեմ լռությունը:

ԲԺԵԿՈՒՇԻ - Ընդհանրապես լռությունը:

ՓՐԿՎԱԾ - Ոչ: Հատկապես մեր լռությունը:

ԲԺԵԿՈՒՇԻ - Այո: Ինձ դուր է գալիս: Այն մի որակ ունի... լռության առանձնահատուկ մի որակ:

ՓՐԿՎԱԾ - Այլևս ոչ: Վերջ տվեք ձեր բարբաջանքին:

ԲԺԵԿՈՒՇԻ - Ես բարբաջում եմ:

ՓՐԿՎԱԾ - Եվ մոռացաք բաժակս լցնել: *(Գինի է լցնում իր բաժակը: Լռություն:)* Հնարավոր չէ՞ ավելի արագ:

ԲԺԵԿՈՒՇԻ - Ի՞նչը:

ՓՐԿՎԱԾ - Հո չե՞նք կարող հավերժորեն այստեղ միասին մնալ:

ԲԺԵԿՈՒՇԻ - Ճիշտ է: Ես գնացի: *(Բացում է պատուհանը:)*

ՓՐԿՎԱԾ - Ձեզ հետաքրքրող բան կա՞ դրսում:

ԲԺԵԿՈՒՇԻ - Ոչ: Չկա: Ի՞նչը կարող է ինձ հետաքրքրել դրսում:

ՓՐԿՎԱԾ - Որ այդպես է, փակեք պատուհանը, ցուրտ է:

ԲԺԵԿՈՒՇԻ - Տո՛ւրտ է: Ե՛րբ: Այստեղ: Դ՛նւրսը:

ՓՐԿՎԱԾ - Ձեր կատակները դառնում են միօրինակ: Միշտ նույնն են:

ԲԺԵԿՈՒՇԻ - Ձերը՝ նույնպես: Նվիրում եմ ձեզ իմ օրացույցը: Վերցրեք:

ՓՐԿՎԱԾ - Ինչի՞ն է պետք: Որ իմանամ, թե այսօր ինչ օր է:

ԲԺՇԿՈՒՇԻ - Այսօր երեքշաբթի է:

ՓՐԿՎԱԾ - Ինչ կարևոր է:

ԲԺՇԿՈՒՇԻ - Ոչ մի կարևորություն:

Դա միշտ էլ կարող է պետք գալ:
Մինչև նրանց գալը կարող եք
ծխել: (Ոտքը զգում է պատուհա-
նից դուրս:)

ՓՐԿՎԱԾ - Դուք կարող եք կոտր-
վածք ստանալ ցատկելիս:

ԲԺՇԿՈՒՇԻ - Հենց դա է ինձ մտա-
հոգում: Այնքան էլ բարձր չէ: Իսկ
եթե նետվեմ:

ՓՐԿՎԱԾ - Փորձեք:

Բժշկուհին պատուհանից դուրս է
ցատկում: Անկման աղմուկ,
լռություն: Փրկվածը լցնում է իր
բաժակը: Նստում է Բժշկուհու
բազկաթռփին:

ՓՐԿՎԱԾ - Նա ցատկեց: Եվ այսօր
երեքշաբթի է: Ինչպես միշտ:
(Խմում է, սիգարետ վառում:) Նա
իսկապես ցատկեց: Նա դուրսն է,
ամեն ինչից դուրս: Եվ միշտ
միևնույն կերպ է ավարտվում՝
կյանքը:

Լավում է հրշեջ մեքենայի շչակը:
Փրկվածը ճերմակ խալաթ է
զգում վրան:

Տեսարան 3

Փրկված, Հրշեջ 1, Հրշեջ 2,
Փրկող: Մտնում են Հրշեջ 1-ը և
Հրշեջ 2-ը:

ՀՐՇԵՋ 1 - Բարև, բժիշկ:

ՀՐՇԵՋ 2 - Ինքնասպանն ո՞ր է:

ՓՐԿՎԱԾ - Հենց նոր պատուհանից
ցատկեց:

ՀՐՇԵՋ 1 - Ախ, այդպես: Ուրեմն,
նրան չե՞ն փրկել:

ՀՐՇԵՋ 2 - Գնամ տեսնեմ՝ իսկապես
մեռած է, թե՞ ոչ:

Հրշեջ 2-ը դուրս է գալիս, ներս է
մտնում Փրկողը:

ՓՐԿՈՂ - Հրշեջն ո՞ր վազեց: Բժիշ-
կը որտե՞ղ է:

ՀՐՇԵՋ 1 - Նա չէ՞ բժիշկը:

ՓՐԿՈՂ - Ոչ: Սա նա է, որին փրկե-
ցի:

ՀՐՇԵՋ 1 - Ախ, այդպես: Ուրեմն,
բժիշկը դուք եք:

ՓՐԿՈՂ - Ոչ, ես չեմ: Ո՞ր է նա:

ՀՐՇԵՋ 1 - Այսպիսով, ո՞վ է ցատկել
պատուհանից դուրս:

ՓՐԿՈՂ - Ինչ-որ մեկը ցատկել է
պատուհանից: Բայց դա շատ
վտանգավոր է: Մենք երրորդ
հարկում ենք:

ՓՐԿՎԱԾ - Նա չի ցատկել: Նա նետ-
վել է:

ՀՐՇԵՋ 1 - Նետվել է: Ո՞վ:

ՓՐԿՈՂ - Նետվել է: Ուրեմն...

ՓՐԿՎԱԾ - Դե, հա՛: Լավ, ես գնում եմ տուն:

ՀՐԾԵՔ 1 - Այլևս «տուն գնալ» չկա:

ՓՐԿՈՂ - Մի բոպե, մի բոպե: Ես պատասխանատու եմ ձեզ համար: Ես փրկել եմ ձեր կյանքը:

ՀՐԾԵՔ 1 - Լա հիվանդ էր:

ՓՐԿՎԱԾ - Ես էի հիվանդ:

ՓՐԿՈՂ - Ոչ: Ես նրան ծառից հանեցի: Ահա նրա պարանը, գրպանումս է:

ՓՐԿՎԱԾ - Դա բախտ է բերում:

ՀՐԾԵՔ 1 - Դա ձեր պարտականությունների մեջ չի մտնում: Այդ մենք ենք մարդկանց հանում պարանից:

ՓՐԿՈՂ - Ինչ եք ասում: Բիստրոյում գինի խմելիս: Եվ շատերին եք հանել:

ՀՐԾԵՔ 1 - Դա կախված է եղանակից: Նայած թե ինչ եղանակ է:

ՓՐԿՈՂ - Բայց ո՞ր է գնացել բժշկուհին:

ՓՐԿՎԱԾ - Պատուհանից ցած:

ՓՐԿՈՂ - Բժշկուհին նետվել է պատուհանից: Ինչո՞ւ:

ՓՐԿՎԱԾ - Որ ինքնասպան լինի, այսպես ասած:

ՀՐԾԵՔ 1 - Ուրեմն, դա ինքն է... Բժշկուհին է ցատկել պատուհանից: Իսկ դո՞ք: Դուք, այսպես ասած, կախվածն եք:

ՓՐԿՎԱԾ - Դա է, որ կա:

ՀՐԾԵՔ 1 - Ախ, այդպես: Ուրեմն, հի-

մա պետք է գնալ գտնել Համոզողին:

ՓՐԿՈՂ - Դա ո՞վ է:

ՀՐԾԵՔ 1 - Համոզողը: Որը համոզում է:

ՓՐԿՈՂ - Ո՞վ է ում համոզում:

ՀՐԾԵՔ 1 - Նրան: Նա պիտի նրան համոզի:

ՓՐԿՎԱԾ - Ինչո՞ւ:

ՀՐԾԵՔ 1 - Որոշ բաների անօգտակարության մեջ: Կներեք: Ինքնասպանության: Ոչ-ինքնասպանության: Այո, հենց դա է: Որ այլևս չկախվեք:

ՓՐԿՈՂ - Ո՞ր է այդ մարդը:

ՀՐԾԵՔ - Դա մարդ չէ: Դա Համոզող է: Նախկինում նա հոգեբույժ էր:

ՓՐԿՈՂ - Ես կարծում էի, թե դրանից այլևս չունեք:

ՀՐԾԵՔ 1 - Դա վերջինն էր: Մենք նրան Համոզող անվանեցինք:

Տեսարան 4

Փրկող, Փրկված, Հրշեջ 1, Հրշեջ 2, Տղամարդ 1, Տղամարդ 2, Բժշկուհի (դիակի տեսքով):

Ներս է մտնում Հրշեջ 2-ը, որից հետո Տղամարդ 1-ը և Տղամարդ 2-ը, որոնք պատգարակի վրա բերում են Բժշկուհուն:

ՀՐԾԵՔ 2 - Պատգարակը դրեք այնտեղ, անկյունում:

ՓՐԿՈՂ - Հուսով եմ՝ լուրջ բան չկա, հնարավոր է նրան փրկել:

ՓՐԿՎԱԾ - Այլևս փրկելու բան չկա:
Լա նետվել է ցած:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Լա գլխի վրա է վայրէջք կատարել:

Տղամարդիկ անփութորեն դնում են պատգարակը:

ՓՐԿՈՂ - Եվ, այնուամենայնիվ, նա մեռած չէ:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Լավ էլ մեռած է:

ՓՐԿՈՂ - Գուցե սիրտը դեռ բաբախում է: Եթե սիրտը կանգ չի առել, ուրեմն, ամեն ինչ լավ է: *(Կռանում է դիակի վրա, բարձրացնում սավանը, որով ծածկված է:)* Բայց... նա գրեթե գլուխ չունի:

ՀՐԾԵՋ 1 - Ուրեմն, ինքնասպանը Բժշկուհին է, հը՞, այդպե՞ս է: *(Տեղավորվում է գրասեղանի մոտ, ձեռքի պայուսակից մի թուղթ հանում:)*

ՀՐԾԵՋ 2 - *(դիմելով երկու տղամարդկանց):* Դուք կարող եք գնալ, շնորհակալություն:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Ծնորհակալություն: Հենց այդպե՞ս: Ընդամենը:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Դիակը երրորդ հանրկ բարձրացնելուց հետո՝ «դուք կարող եք գնալ, շնորհակալություն»:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Բացի այդ, նա սուկալի ծանր էր:

ՓՐԿՈՂ- Ինչ են ուզում սրանք:

ՓՐԿՎԱԾ - Փող, էլ ի՞նչ:

ՓՐԿՈՂ - Փող են ուզում:

ՓՐԿՎԱԾ - Ուրիշ ի՞նչ կարող էին ուզել: Գործ արեցին, չէ՞:

Փրկողը մի թղթադրամ է տալիս երկու տղամարդկանց:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Ծնորհակալություն, պարոն: Դուք լավ պարոն եք:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Ծնորհակալություն, պարոն: Դուք հազվագյուտ պարոն եք:

ՀՐԾԵՋ 2 - Եվ կուղարկեք ինձ մոտ Համոզողին, եղա՞մ: Լա պետք է որ քիստրոյում լինի:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Կասենք:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Որ նրան ուղարկեն:

Տղամարդ 1-ը և Տղամարդ 2-ը դուրս են գալիս:

Տեսարան 5

Հրշեջ 1, Հրշեջ 2, Փրկող, Փրկված, Բժշկուհի (դիակը):

ՀՐԾԵՋ 1 - Այստեղ կտրտե՞նք:

ՀՐԾԵՋ 2 - Իմաստ չունի: Լա արդեն բավական կտրտված է:

ՀՐԾԵՋ 1 - Ի՞նչ անենք հետը:

ՀՐԾԵՋ 2 - Թող մնա իր տեղում: Մենք չենք շտապում:

ՀՐԾԵՋ 1 - Իսկապես, ինչո՞ւ թռավ այդ բժշկուհին:

ՓՐԿՎԱԾ - Օ, ամեն անգամ ինձ տեսնելիս նա այդպես է անում: Լավ, ես գնացի:

ՓՐԿՈՂ - Ո՛չ, ո՛չ: Ես ձեզ համար պատասխանատու եմ:

ՀՐԾԵՁ 2 - Դուք պետք է սպասեք Համոզողին:

ՓՐԿՎԱԾ - Դա պարտադիր է:

ՀՐԾԵՁ 2 - Այսպես ասած: Համենայնդեպս, այս երեկո ուրիշ անելիք չունենք:

ՀՐԾԵՁ 1 - Մինչ այդ, կարող ենք մեր զեկուցագիրը պատրաստել:

ՀՐԾԵՁ 2 - Ի՞նչ զեկուցագիր:

ՀՐԾԵՁ 1 - Նրա վերաբերյալ: Նրա, որը չի մեռել:

ՀՐԾԵՁ 2 - Դու զեկուցագրերի մուրացք ունես: Նա կախվել է, և նրան հանել են պարանից:

ՓՐԿՈՂ - Դա ես էի, որ...

ՀՐԾԵՁ 1 - Լռե՛ք: Հարց թիվ 1. Պատճառը:

ՓՐԿՎԱԾ - Ինչպե՞ս թե՛ պատճառը:

ՀՐԾԵՁ 1 - Ոչինչ չգիտեմ: Այստեղ գրված է. «Պատճառը»: Պատճառը, էլի:

ՓՐԿՎԱԾ - Ինչի՞ պատճառը: Փրկելու:

ՀՐԾԵՁ 1 - Ոչ: Կախվելու: Կախվելու պատճառը:

ՓՐԿՎԱԾ - Մեռնելու համար:

ՀՐԾԵՁ 1 - Ինչո՞ւ մեռնել:

ՓՐԿՎԱԾ - Զահլաս գնացել է:

ՀՐԾԵՁ 1 - Ինչի՞ց:

ՓՐԿՎԱԾ - Հրշեջներից: *(Գինի է լցնում է բաժակը, հարմար տեղավորվում բազմոցին:)*

ՀՐԾԵՁ 1 - Նա ուզում է մեզ վիրավորել:

ՀՐԾԵՁ 2 - Հոգ չէ:

ՀՐԾԵՁ 1 - Այո, ճիշտ է: Ուրեմն, մի խոսքով, ես կարող եմ իմ զեկուցագրի մեջ ինչ ասես գրել:

ՓՐԿՎԱԾ - Ո՛ւմ համար է զեկուցագիրը:

ՀՐԾԵՁ 1 - Հարցաթերթիկի համար: Ես պիտի լրացնեմ:

ՀՐԾԵՁ 2 - Ինչպես միշտ:

ՀՐԾԵՁ 1 - Ուրեմն, ինչպես միշտ: Դա ձանձրալի է:

ՀՐԾԵՁ 2 - Ձանձրալի է, ձանձրալի է: Դու պարտավոր չես:

ՀՐԾԵՁ 1 - Պարտավոր չեմ: Հեշտ է ասել:

Հրշեջ 1-ը գրում է, Հրշեջ 2-ը թոթվում է ուսերը, հետո դիմում Փրկողին:

ՀՐԾԵՁ 2 - Դուք որտեղի՞ց ընկաք:

ՓՐԿՈՂ - Ես չեմ ընկել:

ՀՐԾԵՁ 2 - Առայժմ: Դուք որտեղի՞ց դուրս եկաք:

ՓՐԿՈՂ - Ի դեպ, ես կուզեի դուրս գալ այս կեղտոտ ծակուռից:

ՀՐԾԵՁ 2 - Անկարելի է:

ՓՐԿՈՂ - Եվ ինչո՞ւ:

ՀՐԾԵՁ 2 - Որովհետև անկարելի է:

ՓՐԿՈՂ - Տեսնում եմ:

ՀՐԾԵՁ 2 - Դուք ոչինչ էլ չեք տեսնում:

ՓՐԿՈՂ - Տեսնում եմ: Նրան: Գուցե

ես ոչ մի ուրիշ բան չեմ տեսնում, բայց նրան տեսնում եմ:

ՀՐԾԵՔ 2 - Դա հաշիվ չէ: Նա ընդամենը տեսիլք է, կատարելապես տեսլական:

ՓՐԿՈՂ - Նա այդպիսի տեսք չունի:

ՀՐԾԵՔ 2 - Հա, տեսքը: Դա ոչ մի կապ չունի այս դեպքերի հետ:

ՓՐԿՈՂ - Ո՞ր դեպքերի:

ՀՐԾԵՔ 2 - Հատուկ մասնավոր դեպքերի:

Տեսարան 6

Նախադրյունները և Համոզողը:

ՀԱՄՈՁՈՂ - Բարի օր, այդ ես եմ: Ձեզ պետք եմ:

ՀՐԾԵՔ 2 - Ծառ ուշացրիք ձեր գալը: Դուք բացակա էիք:

ՀԱՄՈՁՈՂ - Ես բացակա չէի, ես դուրսն էի:

ՀՐԾԵՔ 2 - Ինչո՞ւ էիք դուրսը:

ՓՐԿՎԱԾ - Որովհետև երեքշաբթի է:

ՀԱՄՈՁՈՂ - Ես ոչինչ չեմ նկատել: Ուրեմն, դա՞ է պատճառը: Ծնորհակալ եմ:

ՓՐԿՈՂ - Ոչինչ չեմ հասկանում: Հետո՞ ինչ, որ երեքշաբթի է:

ՓՐԿՎԱԾ - Դա վերջին օրն է չորեքշաբթիից առաջ: Ջոկեցի՞ք:

ՀԱՄՈՁՈՂ - Բացի այդ, ես հիվանդ եմ:

ՀՐԾԵՔ 1 - Նա միշտ հիվանդ է: Հատկապես այստեղը, չէ՞: Գլուխը:

ՀԱՄՈՁՈՂ - Հնարավոր չէ՞ միշտ չլինել հիվանդ, մարմեղանդ:

ՀՐԾԵՔ 1 - Այդ ես եմ մարմեղանդ:

ՀԱՄՈՁՈՂ - Չէ, դա հանգի համար էր:

ՀՐԾԵՔ 1 - Հոգուս հետ եք խաղում: Ձեր այդ կոնֆիտյուրը ոչ մի հանգի հետ չի բռնում:

ՀՐԾԵՔ 2 - Եղավ, եղավ... Ահա մի փրկված ձեզ համար:

ՀԱՄՈՁՈՂ - Սե՛ռը:

ՀՐԾԵՔ 1 - Սե՛ռը: Միայն դա է նրանց հետաքրքրում:

ՀԱՄՈՁՈՂ - Փրկվածի սեռը:

ՀՐԾԵՔ 2 - Դուք նրան չեք տեսնում:

ՀԱՄՈՁՈՂ - Ոչ: Բարեբախտաբար:

ՀՐԾԵՔ 2 - Իգական:

ՀԱՄՈՁՈՂ - Ամուրի՞ է:

ՀՐԾԵՔ 2 - Կարծում եմ:

ՀԱՄՈՁՈՂ - Պետք է դրանում համոզված լինել: Ես իմ մասնագիտությանը լրորջ եմ վերաբերում: Ես գիտակցում եմ իմ պատասխանատվությունը: Դուք ինձ նշանակել եք համոզող, և դուք պիտի կրեք դրա հետևանքները, իսկ հետևանքները կլինեն լուրջ, պարոնայք հրշեջներ, շատ լուրջ, ես ուզում եմ դրանով ասել, որ...

ՀՐԾԵՔ 2 - Բավական է:

ՀՐԾԵՔ 1 - Ինչ ասա՞ց:

ՀՐԾԵՔ 2 - Ձեր քաղաքացիական կացությունը, օրիորդ:

ՓՐԿՎԱԾ - Ամուսնացած չեմ:

ՀԱՄՈՁՈՂ - Դուք համոզված եք դրանում:

ՓՐԿՎԱԾ - Լիովին:

ՓՐԿՈՂ - Լավ զուգադիպություն է: Ես էլ եմ ամուրի:

ՀԱՄՈՁՈՂ - Խոսքը ձեր մասին չէ: Առայժմ: Ծնողները:

ՓՐԿՎԱԾ - Ինչպես բոլորը:

ՀԱՄՈՁՈՂ - Ինչ ծնողներ ունեք:

ՓՐԿՎԱԾ - Հայր և մայր:

ՀԱՄՈՁՈՂ - Եվ Սուրբ Հոգի՛: Ոչ, դա ուրիշ բան է: Ինքնասպանության պատճառը:

ՓՐԿՎԱԾ - Չգիտեմ:

ՓՐԿՈՂ - Դա... գուցե... համաձայնակն է:

ՀԱՄՈՁՈՂ - Դարձյալ դուք: Չենք կարող ամեն բան դնել համաձայնակի ուսերին: Մյուս կողմից, որտեղից հայտնվեց այդ համաձայնակը: Հարցեր, որ շատ հեռու են տանում: Եվ քանի որ ոչ ոք չի կարող այդ հարցերին պատասխանել, պարզեցնում են: Պատճառն անհայտ է՝ դա գոյություն ունի: Այստեղ, գրքում: *(Գրպանից գիրք է հանում: Փնտրում է էջը: Կարդում է առանց համոզման:)* Մի հուսահատվեք: Կյանքը երջանկության աղբյուրն է: Երջանկությունը հասանելի է բոլորին: Պետք է օգտվել կյանքից: Դուք երիտասարդ եք, ապագան ձերն է: Ժամանակը կբուժի վերքերը: Բոլոր ձմեռներին հաջորդում է գարունը:

Ամեն մի ցավ իր դարմանն ունի: Դուք դեռ կարող եք երջանիկ լինել: Դուք... դարձյալ կգտնեք... տեղը... հասարակություն... կատարել... պարտականություն: Ծրագրեր կազմեք, նպատակ ունեցեք... պայքարեք... հաջողություն... հավատ ձեր հանդեպ... լավատես... հաջողություն: Էջ ութսունչորս, հավելված: *(Փնտրում է գրքի մեջ:)* Ահա... Մտածեք ձեր ծնողների մասին: Երանց խորը վիշտ մի պատճառեք:

ՀՐԾԵՔ 2 - Դա՛մ է ամբողջը:

ՀԱՄՈՁՈՂ - Դա էլ քիչ չէ:

ՀՐԾԵՔ 2 - Լսեցի՞ք:

ՓՐԿՎԱԾ - Բա ո՞նց, իհարկե: Այս էլ որերորդ անգամ...

ՀԱՄՈՁՈՂ - Խնդրե՛մ: Դուք համոզված եք:

ՓՐԿՎԱԾ - Ինչպե՛ն կարող եմ չլինել:

ՀՐԾԵՔ 1 - Ձեկուցագիրը պահանջում է շիտակ պատասխան:

ՓՐԿՎԱԾ - Ես կատարելապես համոզված եմ:

ՀՐԾԵՔ 1 - Ինչո՞ւմ:

ՓՐԿՎԱԾ - Ձեր ուզած ամեն ինչում:

ՀՐԾԵՔ 1 - Ուրեմն, լավ է:

ՀՐԾԵՔ 2 - Դուք կարող եք գնալ:

ՓՐԿՎԱԾ - Ո՛ւր:

ՀՐԾԵՔ 2 - Ուր որ կուզեք:

ՓՐԿՎԱԾ - Կարո՞ղ եմ անտառ վերադառնալ:

ՓՐԿՈՂ - Դե, ոչ... գծվել էք, ինչ է: Հիմա ես ձեզ հսկելու եմ:

ՓՐԿՎԱԾ - Վերադարձրեք իմ պարանը:

ՓՐԿՈՂ - Նա գիժ է:

ՓՐԿՎԱԾ - Դա իմ պարանն է, չէ՛:

ՀԱՄՈՁՈՂ - Ճիշտ է, դա իր պարանն է:

ՓՐԿՈՂ - Ես ձեզ համար պատասխանատու եմ:

ՀԱՄՈՁՈՂ - Ո՞ւմ տեղն է իրեն դրել այս տիպը:

ՓՐԿՈՂ - Եկե՛ք: Գնանք մի քիչ զբոսնենք:

ՓՐԿՎԱԾ - Ո՞ր ենք գնալու:

ՓՐԿՈՂ - Այլուր: Հեռու այստեղից:

ՓՐԿՎԱԾ - Որ ի՞նչ անենք:

ՓՐԿՈՂ - Որ լիքը հետաքրքիր բաներ անենք: Ձեզ համբուրեմ, օրինակի համար:

ՓՐԿՎԱԾ - Մեզ իրար չեն ներկայացրել:

ՓՐԿՈՂ - Ես ձեզ սիրում եմ:

ՓՐԿՎԱԾ - Հենց այդպե՛ս, միանգամից, սեր առաջին հայացքից:

ՓՐԿՈՂ - Այո, և ընդմիշտ:

ՓՐԿՎԱԾ - (եթե հնարավոր է՝ երգելով):

*Եվ կանցնի հավերժական սերը
Մի քանի օրում մի քանի ամսում
Մի քանի տարում և կգա
մեկ ուրիշը
Ինչ-որ տեղից ոչ մի տեղին
որևէ տեղից
Եվ երգում է կյանքը քամին
և երգում է սերը*

*Եվ գալիս է ժամանակը մահվան
տազնապի*

*Եվ անցնում է հավերժությունը
և անցնում է սերը*

*Եվ ժամանակն է անցնում և
կյանքն է անցնում*

*Ժամանակը խաղում է
հավերժության հետ*

Ամպերը խաղում են արևի հետ

*Սիրահարները խաղում են
իրենց սրտերի հետ*

*Կյանքը խաղում է նրանց
սիրո հետ*

*Եվ երգում է կյանքը քամին
և երգում է սերը*

*Եվ գալիս է ժամանակը
մահվան տազնապի*

*Եվ անցնում է հավերժությունը և
անցնում է սերը*

*Եվ ժամանակն է անցնում և
կյանքն է անցնում:*

ՓՐԿՈՂ - Գնացի՛նք, սիրելիս:

Փրկողը և Փրկվածը դուրս են գալիս:

Տեսարան 7

Հրշեջ 1, Հրշեջ 2, Համոզող, Բժշկուհի (դիակը):

ՀՐՇԵՋ 1- (փորձում է երգել՝ հեծկլ-տալով): Երգում է կյանքը... սերը... հավերժությունը...

անհետանում է... տագնապը... մահը... Դա գեղեցիկ է, տխուր և հրաշալի:

ՀՐԾԵՋ 2 - Յնդեցի՛ր, ինչ է:

ՀԱՄՈՂՈՂ - Նա պարզապես վարակվել է:

ՀՐԾԵՋ 1 - Վարակվել եմ: Ես: Ասացեք, խնդրեմ, Համոզող:

ՀԱՄՈՂՈՂ - Խնդրեմ:

ՀՐԾԵՋ 1 - Ինչ:

ՀԱՄՈՂՈՂ - Դուք ինձ ասացիք՝ սացեք խնդրեմ, ես էլ ասում եմ՝ խնդրեմ:

ՀՐԾԵՋ 1 - Նա ինձ կխենթացնի:

ՀԱՄՈՂՈՂ - Նշանակում է, կրկնակի աշխատանք կատարեցի:

ՀՐԾԵՋ 2 - Համոզող: Դուք աղջկան շատ բան չասացիք:

ՀԱՄՈՂՈՂ - Դա ամենն է, ինչ գրված է անհայտ պատճառների վերաբերյալ: Այս գրքում: Իսկ հիմա պետք է այստեղից բացակայեմ այլուր գնալու համար, և հնարավորին չափ շուտ:

ՀՐԾԵՋ 1 - Բավականն է, հասկացա՛ք: Թքած ունեմ ձեր բացակայությունների վրա, ձեր այլուրների և ձեր երեքշաբթիների վրա: Հասկացա՛ք:

ՀԱՄՈՂՈՂ - Կան նաև հինգշաբթիներ: Բայց դրանք ավելի քիչ են:

ՀՐԾԵՋ 1 - Ավելի քիչ են: Հինգշաբթիները:

ՀՐԾԵՋ 2 - Ձեռ քաշի՛ր: Քայլիր միշտ առանց:

ՀԱՄՈՂՈՂ - Նա միշտ չի քայլում: Երբեմն նաև նստում է, կանգնում, պառկում և... (Նկատում է դիակը:) Տես, է, նա նորից է ցատկել:

ՀՐԾԵՋ 1 - Դա ձեզ չի վերաբերում:

ՀԱՄՈՂՈՂ - Երբ ինչ-որ բան ինձ վերաբերի, ես ձեզ գրավոր կհայտնեմ: Առայժմ: Ես պետք է այդ տիպին բռնեմ, այդ Փրկողին:

Համոզողն ուզում է դուրս գալ, սակայն Փրկողն ու Փրկվածը մերս են մտնում:

Տեսարան 8

Հրշեջ 1, Հրշեջ 2, Համոզող, Բժշկուհի (դիակը), Փրկող, Փրկված:

ՓՐԿՎԱԾ - Թողեք ինձ: Հանգիստ թողեք:

ՓՐԿՈՂ - Օ, ոչ, ես ձեզ չեմ թողնի: Նա չի ուզում, որ իր հետ մնամ:

ՀԱՄՈՂՈՂ - Ուրեմն, մի մնացեք իր հետ:

ՓՐԿՈՂ - Ես պատասխանատու եմ այս աղջկա համար: Ես փրկել եմ նրա կյանքը:

ՀԱՄՈՂՈՂ - Հետո ի՛նչ: Դուք միակը չեք:

ՓՐԿՈՂ - Ես չեմ ուզում, որ նա երկրորդ անգամ ինքնասպան լինի:

ՀՐԾԵՋ 2 - Նա նորից ինքնասպան

չի լինի: Համոզողը նրան համոզեց:

ՓՐԿՈՂ - Նա ուզում է ևս մեկ անգամ կախվել: Նա ինձ ասաց այդ մասին:

ՓՐԿՎԱԾ - Դա ընդամենը հոգու հետ խաղալու համար էր:

ՀՐԾԵՋ 1 - Համոզող, դա ձեր սխալի հետևանքն է: Դուք նրան այնքան էլ լավ չհամոզեցիք:

ՀԱՄՈՋՈՂ - Լսեք, փոքրիկս, դուք Էդիպոսի բարդույթն ունեք: Դուք ինձ նույնացնում եք ձեր հոր հետ, որին միշտ ատել եք, ինչպես Բոլորին, և փոխանցում եք ձեր բարդույթն ինձ, քանզի ձեզ թվացել եմ վերադաս մի ուժ:

ՀՐԾԵՋ 1 - Ի՞նչ ասաց:

ՀՐԾԵՋ 2 - Հոգեբույժն է, որ դարձյալ խոսեց նրանում: Մինչդեռ՝ լավ խլացրել էինք:

ՀՐԾԵՋ 1 - Չզվեցի՞նք: Ի՞նչ ենք անում:

ՀԱՄՈՋՈՂ - Ես կարող եմ ևս մեկ անգամ կարդալ այն, ինչ արդեն կարդացի:

Համոզողը փնտրում է իր գրքում: Նրա թիկունքում երկու հրշեջները դավ են նյութում: Հրշեջ 1-ը ցույց է տալիս իր ատրճանակը, Հրշեջ 2-ը ժխտական նշան է անում: Հրշեջ 1-ը մահակ է ցույց տալիս, Հրշեջ 2-ը համաձայնության նշան է անում:

ՀՐԾԵՋ 2 - Բայց... ինչպես որ հարկն է, եղավ:

ՀԱՄՈՋՈՂ - Մի հուսահատվեք: Կյանքը երջանկության աղբյուրն է: Ժամանակը կբուժի վերքերը: Բոլոր ծմեռներից հետո գալիս է գարու...

ՀՐԾԵՋ 1 - (բարձրացնում է մահակը): Գնացի՞նք:

ՀՐԾԵՋ 2 - Դա ինձ թվում է անհրաժեշտ, կասե՛ի՝ նույնիսկ անխուսափելի:

ՀՐԾԵՋ 1 - Այսի՞նքն:

ՓՐԿՈՂ - Ի՞նչ եք ուզում անել:

ՀՐԾԵՋ 2 - Դե՛:

ՀԱՄՈՋՈՂ - ...Ամեն ցավ իր դարմանն ունի: Դուք դեռ կարող եք...

Հրշեջ 1-ը հարվածում է: Համոզողը տապալվում է:

ՀՐԾԵՋ 2 - Եղավ:

ՀՐԾԵՋ 1 - Կարող ես չկասկածել:

ՓՐԿՈՂ - Դուք... մարդասպաններ եք:

ՓՐԿՎԱԾ - Դե ոչ: Սրանք հրշեջներ են:

ՀՐԾԵՋ 1 - Կտրտե՞նք:

ՀՐԾԵՋ 2 - Վաղը: Դիր նրան մյուսի կողքը:

ՀՐԾԵՋ 1 - Դիր նրան, դիր նրան... Ծղոտ հո չի՞:

ՀՐԾԵՋ 2 - Ես չասացի, թե ծղոտ է: Բարշ տուր անկյունը:

Հրշեջ 1-ը քարշ է տալիս Համոզողին և դնում Բժշկուհու կողքին:

ՓՐԿՈՂ - Աչքերիս չեմ հավատում: Եկեք, նստում ենք մեքենասս և գնում այստեղից:

ՓՐԿՎԱԾ - Դա ձեր սևեռուն գաղափարն է:

Փրկողը և Փրկվածը դուրս են գալիս:

Տեսարան 9

Հրշեջ 1, Հրշեջ 2, Հաղթանդամ, Տղամարդ 1, Տղամարդ 2, գումարած դիակները:

Մտնում է Հաղթանդամը՝ վզակոթերից բռնած Տղամարդ 1-ուն և Տղամարդ 2-ին:

ՀԱՂԹԱՆԴԱՄ - Այս երկու արարածները...

ՏՂԱՄԱՐԴ 1 ԵՎ ՏՂԱՄԱՐԴ 2 - Բարև բոլորին:

ՀԱՂԹԱՆԴԱՄ - Սրանք ձեր գործակալներն են:

ՀՐԾԵՋ 1 - Եթե կուզեք...

ՀՐԾԵՋ 2 - Դա խոսելու ձև է:

ՀԱՂԹԱՆԴԱՄ - Մի փոքր գործ կա կարգավորելու:

ՀՐԾԵՋ 2 - Ինչ եք նորից արել:

ՀԱՂԹԱՆԴԱՄ - Զարուքանդ են արել իմ բիստրոն:

ՀՐԾԵՋ 1 - Ես հիմա զեկույց կգրեմ:

ՀՐԾԵՋ 2 - Դուք վնասից հատուցում

կատանաք: Հիմա դրանով կգրադվենք:

ՀԱՂԹԱՆԴԱՄ - Հուսով եմ: Թե ոչ՝ կփակեմ: Չկա բիստրոն՝ չկա շտաբը: Պարզ է:

ՀՐԾԵՋ 2 - Պարզ է:

ՀԱՂԹԱՆԴԱՄ - Ես ձեզ վստահում եմ: Դուք միշտ լավ հաճախորդ եք եղել՝ հրշեջներդ: Հետևաբար՝ վստահում եմ: Բայց արագացրեք: Հաշիվը կներկայացնեմ, և առարկություն չլինի, հա՛: Պարզ է:

ՀՐԾԵՋ 2 - Պարզ է: Ամեն ինչ պարզ է: Հանգիստ եղեք: Այդ հարցն իսկույն կկարգավորենք:

ՀՐԾԵՋ 1 - Զեկուցագիրն անեմ:

ՀՐԾԵՋ 2 - Եթե ուզում ես...

ՀՐԾԵՋ 1 - Ուզում եմ:

ՀԱՂԹԱՆԴԱՄ - Զեկուցագիրն ինչիս է պետք... Զիչ հետո կգամ փողս ստանալու:

ՀՐԾԵՋ 2 - Պարզ է, պարզ է:

Հաղթանդամը դուրս է գալիս:

Տեսարան 10

Հրշեջ 1, Հրշեջ 2, Տղամարդ 1, Տղամարդ 2, գումարած դիակները:

ՀՐԾԵՋ 2 - Ինչ է տեղի ունեցել բիստրոյում:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Դե, մի բաժակ խմեցինք:

ՀՐԾԵՋ 2 - Մի՛:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Դե, ասենք երկու կամ երեք:

ՀՐԾԵՋ 2 - Ո՞վ է ձեզ համար վճարել:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Ինքներս: Բսան ֆրանկ ունեինք:

ՀՐԾԵՋ 2 - Ո՞վ է ձեզ փող տվել:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Դուք լավ գիտեք: Այն մարդը, որ քաճի հետ է ֆոֆոում:

ՀՐԾԵՋ 2 - Հոգիներ փրկո՞ղը: Բայց նա պարտավոր չէր: Բսանը՝ շատ է: Ծանո-շատ է ձեզ համար:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Այն դեպքում, երբ այսքան դիակներ ենք քարշ տալիս... Եվ երբեք մեզ ոչինչ չի վճարվել...

ՀՐԾԵՋ 2 - Անցանք առաջ: Ուրեմն, դուք երեք բաժակ եք խմել: Եվ երրորդ բաժակից հետո ինչ տեղի ունեցավ:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Մենք դեռ տասը ֆրանկ ունեինք:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Ուզում էինք կիսել: Պետք էր մանրել: Մի բաժակ էլ պատվիրեցինք:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Հետո՞ մեկն էլ, որովհետև նախորդը խցանի համ ուներ: Մենք չէին կարող հեռանալ այդ վատ համը բերաններիս: Հաջորդ բաժակը խցանի համ չուներ: Դե, մենք էլ նորից պատվիրեցինք...

Դադար:

ՀՐԾԵՋ 1 - Ծարունակե՞ք:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Մենք չէինք կարող շարունակել: Այլևս փող չունեինք:

ՀՐԾԵՋ 2 - Ուրեմն, ինչ արեցիք:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Նա բաժակը շարտեց երեսիս: Ահա...

ՏՂԱՄԱՐԴ 1 - Իսկ նա մի աթոռ վերցրեց և ջարդեց գլխիս: Ահա... այստեղ... ուռել է:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Այնուհետև վերցրինք ու ջարդեցինք՝ ինչ ձեռքներիս տակ ընկավ:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Այո՞, մի ահավոր կռիվ էր:

ՀՐԾԵՋ 1 - Ո՞ւմ դեմ:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Ինչպե՞ս թե՛ ում դեմ:

ՀՐԾԵՋ 2 - Ուրիշ մարդ կա՞ր բիստրոյում:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Չեմ կարծում: Որքան հիշում եմ՝ չկար, տիրոջից բացի: Նա մեզ չխանգարեց:

Տեսարան 11

Նախորդները, հետո՝ Փրկող և Փրկված:

Փրկողը մտնում է Փրկվածի հետ:

ՓՐԿՎԱԾ - Ինչ կաչուն տիպ է այս մարդը: Ուզում է, որ կյանքս պատմեմ:

ՓՐԿՈՂ - Նա սքանչելի է: Եվ եղանակն է փոխվում: Երկինքը բացվում է, մի հսկա լուսին է հայտնվել, որ գնալով նվազում է:

ՓՐԿՎԱԾ - Ուզում է նվազի, ուզում է վազի: *(Գինի է լցնում և խմում:)*

ՓՐԿՈՂ - Դուք շատ եք խմում: Դա լավ չէ առողջության համար: Դրանից զատ, այդ գինին շատ վատն է:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Ծատ վատ գինի գոյություն չունի:

ՓՐԿՎԱԾ - Է, ձեզ ինչ: Նստեք ձեր մեքենան ու ռադ եղեք այստեղից: *(Երկու բաժակ է մեկնում երկու տղամարդկանց:)*

ՓՐԿՈՂ - Հա՛, իհարկե, իմ մեքենան: Ես չեմ գտնում իմ մեքենան:

ՀՐԾԵՋ 1 - Ինչ մեքենա:

ՓՐԿՈՂ - Իմ մեքենան: Այստեղ գալուց կանգնեցրի ճիշտ տան առջև: Այլևս չկա:

ՀՐԾԵՋ 2 - Դա մեզ չի վերաբերում:

ՓՐԿՈՂ - Պետք է գտնել:

ՀՐԾԵՋ 2 - Ոչ ոք ձեզ չի խանգարում:

ՓՐԿՈՂ - Դուք չե՞ք ուզում ինձ օգնել:

ՀՐԾԵՋ 2 - Մենք մեքենաներով չենք զբաղվում: Ուրիշ գործեր ունենք անելու:

ՀՐԾԵՋ 1 - Մենք համաձայնակով ենք զբաղված:

ՀՐԾԵՋ 2 - Դա ձեր անձնական գործն է՝ ձեր և ձեր մեքենայի միջև: Մենք՝ հրշեջներս, դրա հետ ոչ մի կապ չունենք:

ՀՐԾԵՋ 1 - Եթե ուզում եք, ես կարող եմ մի զեկուցագիր ներկայացնել:

ՀՐԾԵՋ 2 - Չէ մի, երկու-երեք հատ

ներկայացրո՛ւ: Իր մեքենան: Խնթ է այս տիպը:

ՓՐԿՈՂ - Լավ: Գնամ նորից փնտրեմ: Դուք ինձ կընկերանա՞ք, օրիորդ:

ՓՐԿՎԱԾ - Այսօր արդեն բավական քայլել եմ:

ՓՐԿՈՂ - Ես կվերադառնամ: Սպասեք ինձ այստեղ:

ՓՐԿՎԱԾ - Բա ո՞նց, սպասում եմ: Անհամբեր:

Փրկողը դուրս է գալիս:

Տեսարան 12

Նախորդները, Փրկողից զատ:

ՀՐԾԵՋ 2 - *(դիմելով երկու տղամարդկանց):* Ուրեմն, հատուցելու համար ձեր պատճառած վնասները...

ՏՂԱՄԱՐԴ 1 - Ինչ պիտի անենք:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Պատրաստ ենք ձեզ ծառայել, պարոն:

ՀՐԾԵՋ 2 - Վերադառնում եք բիստրո, երկու թունդ սուրճ վերցնում, և սա: *(Ատրձանակ է տալիս երկու տղամարդկանց:)*

ՏՂԱՄԱՐԴ 1 - Սա վճարելու համար է:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Ինչո՞ւ չէ: Այսպիսի խաղալիքը մի երկու հարյուր կարծենա:

ՀՐԾԵՋ 2 - Ոչ, տալիս եմ, որ կրակեք:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Ինչի՞ վրա: Մենք ար-
դեն ամեն ինչ ջարդուփշուր ենք
արել:

ՀՐԾԵՋ 2 - Ոչ թե ինչի, այլ ո՞ւմ վրա:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Այլևս ոչ ոք չկա:

ՀՐԾԵՋ 2 - Բիստրոյի տերը կա, չէ՞:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Նա այնքան էլ չար չէ:

ՀՐԾԵՋ 2 - Ուրեմն, պիտի վճարեք
պատճառած վնասների համար:
Ծշերի, բաժակների, աթոռների,
հայելիների...

ՏՂԱՄԱՐԴ 1 - Փող չունենք:

ՀՐԾԵՋ 1 - Հենց դրա համար եմ
ատրճանակը տալիս:

**Հրշեջը 2-ը նորից է մեկնում ատր-
ճանակը, երկու տղամարդիկ
ընկրկում են:**

ՏՂԱՄԱՐԴ 1 - Մենք սրանից օգտ-
վել չգիտենք:

ՀՐԾԵՋ 1 - (վերցնում է ատրճանա-
կը): Դա դժվար չէ: Սեղմում եք
այստեղ: (Կրակոց:) Կներեք, ինչ-
որ մեկին արթնացրի՞:

ՀԱՄՈՋՈՂ - (վեր է կենում): Այո,
ինձ: Սիգարետ ունե՞ք:

ՀՐԾԵՋ 1 - (նրան սիգարետ է տա-
լիս և կրակվառիչ): Ահա թե ինչ է
լինում, երբ նրանց չեն կտրտում:

ՀՐԾԵՋ 2 - Ահա թե ինչ է լինում, երբ
նրանց լավ չեն սատկացնում:
Դուք երկուսդ գնացեք ձեր
պարտքերը վճարեք այս ատրճա-
նակով, բայց դրանից առաջ մի

պտույտ կատարեք գյուղամիջով՝
տեսեք արդյոք որևէ բան շարժ-
վում է:

ՀԱՄՈՋՈՂ - Հավատացեք ինձ, ո-
չինչ չի շարժվում:

Տեսարան 13

**Նախորդները, գումարած Փրկո-
ղը:**

Մտնում է Փրկողը՝ այլայլված:

ՓՐԿՈՂ - Ասես... ասես... գյուղն
այլևս չկա... այլևս տներ չկան... ոչ
մի տեղ... ոչ ոք չկա...

ՓՐԿՎԱԾ - Ձեր մեքենան գտա՞ք:

ՓՐԿՈՂ - Իմ մեքենան: Ոչ, չեմ գտել:
Ես ոչինչ չեմ գտել: Այլևս ոչինչ
չկա, այս տնից գատ:

ՀՐԾԵՋ 2 - Եվ բիստրոյի՞ց:

ՓՐԿՈՂ - Այո, բիստրոն տեղում է:
Դրանից գատ՝ ոչինչ, ոչինչ... Ո-
չինչ:

ՓՐԿՎԱԾ - Կարձես թե ցնորվում է:

ՓՐԿՈՂ - Այո, ցնորվում եմ: Տեսնել
այդ սրբած տարածքը, ավերված,
առանց տների, առանց ծառերի,
առանց բլուրների...

ՀԱՄՈՋՈՂ - Հանգիստ: Դուք երբեք
արդյունաբերական գոտի չե՞ք
տեսել:

ՓՐԿՈՂ - Դուք բոլորդ խենթ եք, ինչ
է: Գժեր, մարդասպաններ, հան-
ցագործներ:

ՀՐԾԵՋ 2 - Լավ, լավ: Ձայնդ կտրիր: Ուրեմն, դուք երկուսդ կգբաղվեք բիստրոյով և մի պտույտ կկատարեք՝ տեսնելու համար՝ արդյոք որևէ մեկը կա՞:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Իսկ եթե կա, ինչ ենք անում:

ՀՐԾԵՋ 1 - Սեղմում եք այստեղ:

ՀՐԾԵՋ 2 - Չդիպչեն: Հիմա էլ մյուսին կարթնացնեն:

ԲԺԵԿՈՒՇԻ - *(վեր է կենում):* Էս ոնց եմ հարբել, զանգս ոնց ա ցավում: Էլ կարմիր գինի չկա՞: *(Գտնում է շիշը, խմում է:)*

ՀՐԾԵՋ 2 - Տեսնո՞ւմ ես:

ՀՐԾԵՋ 1 - Բայց ես չկրակեցի:

ՀՐԾԵՋ 2 - Արդյունքը նույնն է:

ՀՐԾԵՋ 1 - Որովհետև չկտրտեցինք, սրան էլ:

ՀՐԾԵՋ 2 - Գնացեք, տղաներ, վերցրեք այս ատրճանակը և արեք ինչ ասացի: *(Ստիպում է Տղամարդ 1-ին վերցնել ատրճանակը:)*

ՏՂԱՄԱՐԴ 1 - Դա ինձ բոլորովին դուր չի գալիս: Այնքան էլ զվարճալի չէ:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Դիակ քարշ տալը՝ հասկացանք, բայց դիակ դարձնելը...

ՀԱՄՈՂՈՂ - Հիմա, ինչ է, պիտի ձևեր թափե՞ք: Դուրս այստեղից: *(Հրում է երկու տղամարդկանց դեպի ելքը: Նրանք դուրս են գալիս:)*

Տեսարան 14

Նախադրյունները՝ երկու Տղամարդուց բացի:

ՀԱՄՈՂՈՂ - *(Հրշեջ 1-ին դիմելով):* Դուք:

ՀՐԾԵՋ 1 - Ես:

ՀԱՄՈՂՈՂ - Վերցրեք այս փոքրիկ ռումբը: Կպայթեցնեք բիստրոյում: Պետք է որ այդ երկու տիպերը ներսում լինեն: Եվ, իհարկե, տերը, ինչպես հասկանում եք:

ՀՐԾԵՋ 1 - Ճիշտ այդպես: *(Դուրս է գալիս ռումբը ձեռքին:)*

ՀՐԾԵՋ 2 - Իսկ նա, ես ինչ եմ անում:

ՀԱՄՈՂՈՂ - Կարծում եմ, ձեր կարիքն այլևս չունենք: Ծնորհակալ ենք: *(Ատրճանակի կրակոցով տապալում է Հրշեջ 2-ին:)*

ԲԺԵԿՈՒՇԻ - Այստեղ կտրտենք նրան:

Բողոքը խենթի պես ծիծաղում են՝ Փրկողից բացի:

ՓՐԿՈՂ - Անկարելի՛ է:

ՓՐԿՎԱԾ - Լավ էլ կարելի է: Իսկ մյուս հրշեջը:

ՀԱՄՈՂՈՂ - Նա հօդս կցնդի իր ռումբի հետ միասին:

ՓՐԿՎԱԾ - Այսպիսով, վերջացրինք:

Փրկվածն անհետանում է, Համոզողը՝ հարմար տեղավորվում:

ՀԱՄՈՂՈՂ - Մեզ մնում է ուղղաթիռին սպասել:

ՓՐԿՈՂ - Կարո՞ղ եմ գնալ:
ՀԱՄՈՋՈՂ - Անշուշտ: Ի՞նչ եք կարծում:
ՓՐԿՈՂ - Այն ամենից հետո... որ այստեղ կատարվեց... ես նույնիսկ չգիտեմ... ասես մի մղձավանջ լինի:
ԲԺՇԿՈՒՇԻ - Հենց դա է, որ կա, դա է, որ կա:
ՓՐԿՈՂ - Ասես մղձավանջ լինի, երբ չկա... Նա: Բայց... ո՞ր է նա: Գնա՞ց:
ՀԱՄՈՋՈՂ - Ո՞ւմ մասին եք խոսում, իմ խեղճ տղա:
ՓՐԿՈՂ - Այն երիտասարդ անձնավորության, որին փրկեցի... որն այստեղ էր...
ԲԺՇԿՈՒՇԻ - Հա՛-հա, հի՛-հի: Խոսքն իմ մասին է:
ՓՐԿՈՂ - Ո՛չ, ձեր մասին չէ: Այլ ջահել աղջկա՛:
ՀԱՄՈՋՈՂ - Նա երևի տեսիլքներ ունի:
ՓՐԿՈՂ - Դա տեսիլք չէր: Ես շոյել եմ նրա մազերը... Նրա կապույտ աչքերը ես դեռ տեսնում եմ...
ԲԺՇԿՈՒՇԻ - Իմի պե՛ս:
ՓՐԿՈՂ - Ո՛չ: (Դադար:) Այո, մի քիչ ձերի պես: Բայց ո՞ր է նա:
ԲԺՇԿՈՒՇԻ - Այստեղ: Գեղեցիկ են, չէ՞, իմ կապույտ աչքերը:
ՓՐԿՈՂ - Ոչ, գեղեցիկ չեն:
ԲԺՇԿՈՒՇԻ - Մինչդեռ նույնն են: Այն, ինչ մնում է՝ աչքերն են: Մազերը ձերմակում են, դեմքը՝

կնձռոտվում, մարմինը՝ էլ չխոսենք:
ՀԱՄՈՋՈՂ - Դա ձեզ բավարարում է որպես բացատրություն:
ՓՐԿՈՂ - Բոլորովին: Որտե՞ղ է նա:
ԲԺՇԿՈՒՇԻ - Ես այստեղ եմ: Այստեղ ուրիշ մարդ չկար:
ՓՐԿՈՂ - Գնամ փնտրեմ: Ես կգտնեմ նրան: Ես կմեկնեմ նրա հետ, ես կհեռանամ այս խենթերի աշխարհից:
ՀԱՄՈՋՈՂ - Դա հենց այն է, ինչ պատրաստվում ենք անել: Ձեզ մնում է միայն մեզ հետ ուղղաթիռ նստել:
ՓՐԿՈՂ - Ո՛չ առանց նրա:
ՀԱՄՈՋՈՂ - Բայց նա այստեղ է: Մի քիչ ձերացել է, այդքան մի բան:
ԲԺՇԿՈՒՇԻ - Ծատ հեռու չենք գնում: Մինչև մոտակա գյուղը:
ՓՐԿՈՂ - Ինչի՞ համար:
ՀԱՄՈՋՈՂ - Համաճարակը տարածելու: Դուք կլինեք առաջինը խմբում:
ՓՐԿՈՂ - Ի՞նչ խումբ:
ԲԺՇԿՈՒՇԻ - Ինքնասպանների, ուրիշ էլ ի՞նչ: Դուք, ուրեմն, մինչև հիմա ոչինչ չէք հասկացել:
ՓՐԿՈՂ - Ոչ: Ոչինչ:
ՀԱՄՈՋՈՂ - Մենք գյուղից գյուղ ենք գնում՝ ձեզ նման որևէ վարակվածի հետ: Նա փոխանցում է վիրուսը բոլորին, և երբ այլևս մարդ չի մնում, վերացնում ենք գյուղը: Դա հեշտ է:

ՓՐԿՈՂ - Բայց... Ի՞նչ նպատակով:

ՀԱՄՈՁՈՂ - Պետք է տեղ ազատել:
Գործարանների, մայրուղիների,
զանազան բազաների համար:

ԲԺԵԿՈՒՇԻ - Ուղղաթիռն ուր որ է՝
կգա:

ՀԱՄՈՁՈՂ - Ցավում եմ, սիրելիս,
ուղղաթիռում ընդամենը երկու
տեղ կա:

ԲԺԵԿՈՒՇԻ - Ի՞նչ եք ուզում ասել:

ՀԱՄՈՁՈՂ - Դուք ավելորդ եք: Դուք
ազատված եք գործից, մենք այլևս
ձեր կարիքը չունենք: Ծնորհակալ
ենք ձեր համագործակցության
համար: *(Ատրճանակի կրակոցով
տապալում է Բժշկուհուն:)*

Տեսարան 15

**Համոզող, Փրկող, Տղամարդ 1,
Տղամարդ 2, Փրկված:**

**Մտնում են Տղամարդ 1-ը և Տղա-
մարդ 2-ը:**

ՏՂԱՄԱՐԴ 1 - Բարև բոլորին:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Ներողություն ենք
խնդրում ձեզ անհանգստացնելու
համար:

ՀԱՄՈՁՈՂ - Բայց ինչպե՞ս
պատահեց:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Ի՞նչը, պարոն:

ՀԱՄՈՁՈՂ - Որ դուք այստեղ եք:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Մենք ծրագրով նա-
խատեսված չէինք:

ՀԱՄՈՁՈՂ - Դուք... ըրը... վերջաց-

րի՞ք... ձեր... պարտքերի խնդիրը:
ՏՂԱՄԱՐԴ 1 - Մենք չէ, Հրշեջը դա
արեց: Նա մի ռումբ գցեց բիստ-
րոյում:

ՀԱՄՈՁՈՂ - Դուք ներսում չէի՞ք:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Ամենևին: Մենք մեր
շրջայցն էինք կատարում, բա-
րեխղճորեն:

ՀԱՄՈՁՈՂ - Ուրեմն, միայն բիստրո-
յի տնրն է հոդս ցնդել:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Եվ Հրշեջը, որ ռում-
բը գցեց: Ծատ վատ գցեց՝ հետը
պայթեց:

ՓՐԿՈՂ - Դա նախատեսված էր: Դա
մի ռումբ էր, որի հետ միասին են
պայթում:

ՀԱՄՈՁՈՂ - Իսկ դո՞ւք:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Մենք: Մենք նայում
էինք: Դա շատ հետաքրքիր էր:

ՀԱՄՈՁՈՂ - Ինչ-որ բան չստացվեց,
բայց ոչինչ: Մենք ուղղաթիռով
կգնանք և սրանց կթողնենք այս-
տեղ:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Ո՞ր ուղղաթիռով: Այն,
որ ուզում էր վայրէջք կատարել:

ՀԱՄՈՁՈՂ - Դուք տեսա՞ք: Որտե՞ղ է:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Փոսի մեջ: Ծարքից
դուրս է եկել:

ՀԱՄՈՁՈՂ - Ի՞նչ եք ուզում ասել:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Մեզ մի ատրճանակ
տվեցին, որպեսզի կրակենք այն
ամենի վրա, ինչ շարժվում է: Ուղ-
ղաթիռը շարժվում է, չէ՞:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Այլևս չի շարժվում,
քանի որ խփել ենք:

ՀԱՄՈՁՈՂ - Միայն թե չասեք, որ ուղղաթիռը կործանել եք:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Բայց շարժվում էր: Դե, մենք էլ կրակեցինք: Անձնակազմի վրա... շարժիչի վրա...

ՀԱՄՈՁՈՂ - Դուք խփեցիք:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Օդում: Ինչպես մի բաղի: Դա շատ զվարճալի էր:

ՀԱՄՈՁՈՂ - Ապուշներ:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Այն, ինչ մեզ միշտ ասում են... վաղուց ի վեր: Զզվել ենք արդեն: Գնացինք:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Ուրիշ ինչ կարող ենք այստեղ անել: Ոչ դիակ կատեղափոխելու, ոչ էլ՝ բիստրո:

ՓՐԿՈՂ - Ասացեք, դուք... պատահաբար... որևէ տեղ... մի երիտասարդ աղջիկ չտեսա՞ք, որը...

ՏՂԱՄԱՐԴ 2 - Էհ... Գիտեք, այս մառախուղը...

ՓՐԿՈՂ - Մառախուղ կամ, հիմա:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Այլևս լուսին չկա: Աստղեր չկան:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Բայց մենք կարող ենք ձեզ ատրճանակ տալ:

Տղամարդ 2-ը գցում է ատրճանակը Փրկողի առջև, որը վերցնում է և նայում: Բեմի խորքում հայտնվում է Փրկվածը: Նա ժպտում է:

ՀԱՄՈՁՈՂ - Ո՛ր եք գնում, դուք երկուսդ:

ՏՂԱՄԱՐԴ 1 - Ուղիղ՝ դաշտերի միջով, մառախուղի միջով:

ՀԱՄՈՁՈՂ - Ուտքո՞վ:

ՏՂԱՄԱՐԴ 2 - Ուտքով, ոտաբորիկ, ինչպես միշտ:

Երկու տղամարդիկ դուրս են գալիս: Փրկողը նայում է Փրկվածին:

ՓՐԿՎԱԾ - Դե... Եկեք... Եկեք...

ՓՐԿՈՂ - Այո:

Փրկողը դանդաղ բարձրացնում է ատրճանակը, կրակում իր սրտին, վայր է գցում ատրճանակը և, ձեռքերը պարզած դեպի Փրկվածը, առաջանում է: Նրանք գրկախառնվում են:

ՀԱՄՈՁՈՂ - Իսկ նա: (Բուլդոզերի աղմուկ:) Բուլդոզերները գալիս են: (Աղմուկն ուժգնանում է: Բացելով դուռը և գիշերվա մեջ գոռալով:) Կանգ առե՛ք: Կանգ առե՛ք:

Դղրդյուն: Խավար:

ՓՐԿՎԱԾ - Բարի գիշեր, ողջ մնացածներ:

Ֆրանսերենից թարգմանեց Անահիտ ԹՈՓՉՅԱՆԸ²

1. Éditions du Seuil, 2007

2. Անահիտ ԹՈՓՉՅԱՆ, հայերեն թարգմանության համար:

ԴՐԱՄԱՍՏՈՒՐԳԻԱ

գրական-գեղարվեստական հանդես

ISSN 1829-0701

© «Դրամաստուրգիա», 2015
Տպագրվել է պետական աջակցությամբ

Խմբագիր՝
ԿԱՐԻՆԵ ԽՈՒՐՄԻՆՅԱՆ

Կազմը և էջադրումը՝
ՆԱՌԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ

Նյութերն ընդունվում են մեքենագիր կամ շարվածքով:
Բնագրերը չեն վերադարձվում:

Հանդեսում տպագրված պիեսների բեմադրությամբ շահագրգիռ
թատրոնները դրանց օգտագործման թույլտվության համար
դիմեն անմիջական իրավաստերերին՝ հեղինակներին:

Խմբագրության հասցեն՝
Երևան, Օրբելի 18/6, հեռ. 22-76-08

Ստորագրված է տպագրության 02.07.2015
Գինը՝ պայմանագրային:

Գրանցման վկայական՝ 01Մ 000089

Չափը՝ 70x100, 1/16: Ծավալը՝ 10 տպ. մասուկ:
Թուղթը և տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 500 օրինակ:

Տպագրվել է
«Վան ԱՐՅԱՆ» ՍՊԸ-ը՝
ՀԳՄ «Լ. Զ. ՍՈՒՐՄԵԼՅԱՆ» տպագրատանը: